# ԵՐԿՈՒ ԽԱՉԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀ



ՂԵՒՈՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ

**ՂԵՒՈՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ**

**Սրբոց Հրեշտակապետաց Վանքի Տեսուչ**
**Աստուածաբանութեան Դոկտոր**

# ԵՐԿՈՒ ԽԱՉԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀ

**ՍՐԲՈՑ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ՎԱՆՔ**
**ԵՐՈՒՍԱՂԷՄ**
**2016**

Գրքի հրապարակութիւնը կարելի եղաւ մեկենասութեամբ
Տիար Անդրոնիկ Ջիանգիրեանի եւ Տիար Գարեգին Գրիգորեանի:

WEB - www.ghevondvardapet.com
FB - Ghevond Vardapet
TW. - @GhevondVardapet
E-mail: fr.ghevond@gmail.com

Թարգմանիչ՝ Նազիկ Յովհաննիսեան
Դասական ուղղագրութիւն՝ Նազարէթ Չափապարեան

© Ղեւոնդ Վարդապետ Յովհաննիսեան

ՏՊԱՐԱՆ
«ՆՈՅ»

# ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

**Հայոց եղեռնի 100-րդ տարելիցին**

Վերջին ժամանակներս, շփուելով յետսովետական սփիւռքի հայ երիտասարդ սերնդի հետ, որը ձեւաւորուել է վերջին երկու տասնամեակներում յետսովետական տարածքում եւ Ռուսաստանում՝ Սպիտակի երկրաշարժից, Արցախի ազատագրական պատերազմից, սումգայիթեան եւ Բաքուի ջարդերից, Հայաստանի շրջափակումից յետոյ, օրըստօրէ աւելի էի համոզւում, որ նրան, ով չգիտի իր ժողովրդի եւ նրա նշանաւոր որդիների պատմութիւնը, չգիտի Հայ Եկեղեցւոյ դաւանանքը եւ նրա հնադարեան աւանդութիւնները, շատ հեշտ է խաբել եւ վերջնականապէս պոկել արմատներից:

Այդ պատճառով գիրք գրելու միտք ծագեց, որը կ'օգնէր այդ հայերին գտնելու հայկական հոգիները որսացողների առաջադրած հարցերի ճիշտ պատասխանները եւ, այդպիսով, զոհ չդառնալու նրանց ստի: Գիրքը գրելը որոշ պատճառներով մշտապէս յետաձգւում էր: Գուցէ դա Աստծոյ կամքն էր: Երկարատեւ մտորումներից եւ աղօթքներից յետոյ, որոշեցի վէպ գրել՝ հարցերին առաւել տպաւորիչ պատասխանելու համար: Եւ չնայած գլխաւոր հերոսը՝ վասպուրականցի հայերի ժառանգը, մտացածին է, բայց եւ այնպէս, նա հաւաքական կերպար է: Այդ պատճառով էլ զարմանալի չի լինի, եթէ սփիւռքի շատ հայեր հերոսի մէջ տեսնեն իրենց:

Մանուկ հասակում Հայ Եկեղեցում կնքուած հերոսը իր Ես-ի փնտռտուքների ժամանակ հարկադրուած է լինում անգիտակցաբար հրաժարուելու իր արմատներից եւ ռուս ուղղափառութիւն ընդունելու: Հերոսի նոր հաւատքը հաստատելու եւ ամրապնդելու համար նրա հոգեւոր դաստիարակները որոշում են նրան ուղարկել Երուսաղէմ՝ ներկայ գտնուելու զատկական Լուսաւորեայի արարողութեանը: Բայց Սուրբ Երկրում նա հանդիպում է հայ վարդապետի եւ իր ազգականներին, որոնց շնորհիւ էլ իմանում է իր ընտանիքի, Հայոց Եղեռնի մասին ողջ ճշմարտութիւնը եւ, վերջիվերջոյ, ապաշխարելով վերադառնում իր Մայր Եկեղեցու գիրկը…

Գրքի ռուսերէն տարբերակը տպագրուել է Երուսաղէմում 2014 թուականին: Բազմիցս վերահրատարակուել է

Ռուսաստանում եւ մեծ արձագանք գտել: Կարեւոր գտանք նաեւ հայերէնի թարգմանել եւ հրապարակել…

**Աստուած ձեզ պահապան**
**Ի Քրիստոս սիրով՝**
**Ղեւոնդ Վարդապետ,**
**Երուսաղէմ, 2016 թ.**



**Օգնեա՛ Հոգիդ Սուրբ**
**Աստուած Ճշմարիտ**
**Աղօթիւք Սրբոյն Վարդանայ**
**Զօրավարին**

# Ո՞Վ ԵՄ ԵՍ

— Տէ՛ր Աստուած, ո՞վ եմ ես: Արմատներս որտեղի՞ց են: Այո՛, ես հայ եմ, բայց հոգով, գուցէ, աւելի ռու՞ս, քան հայ:

Վարդանն արդէն որերորդ օրն է՝ այս հարցերն է ուղղում ինքնիրեն՝ այդպէս էլ պատասխաններ չգտնելով: Ազգականներ չկան, որոնց կարողանայ հարցնել. միայն հայրն ու մայրն են, բայց նրանք երբեք չեն խօսում այդ մասին: Ասես արգելուած լինեն այդ թեմաները: Այդ պատճառով էլ Վարդանը երբեք չի էլ փորձել հօրը հարցնել կամ գուցէ այլեւս չի էլ ցանկացել: Իսկ մայրն էլ մանկատանը մեծացած ռուս է…

— Վարդա՛ն, Վարդա՜ն: Դու նորից չկաս. ի՞նչ է քեզ հետ կատարւում: Ցա՛ծ իջիր երկնքից:

Կոլեան էր՝ Վարդանի մտերիմ ընկերը եւ գործընկերը: Նա անհանգստանում էր Վարդանի համար, որը վերջերս՝ աշխատանքի ժամին, յաճախ էր խորասուզւում մտքերի մէջ:

— Լսի՛ր, ամսի երեքի համար տոմսեր եմ վերցրել մեր սիրելի «Մաշինայ Վրեմենի»[1] խմբի համերգի համար, կը գա՞ս:

— Ժամանակի մեքենա՞յ: Ա՛յ թէ ժամանակի մեքենայ լինէր. ես ամէն ինչ կ'իմանայի: Կո՛լեա, դու հասկանու՞մ ես: Ամէն ինչ կը պարզէի, ամէն ինչ:

— Վարդա՛ն, ի՞նչ է, վերջնականապէս խելքդ թռցրի՞ր: Ի՞նչ ժամանակի մեքենայ: Ես մեր սիրելի խմբի մասին… Ցա՛ծ իջիր վերջապէս երկնքից: Վե՛րջ: Այս հինգշաբթի՝ երեկոյեան եօթին, համերգի ենք գնում:

— Ների՛ր, Կո՛լեա, չեմ հասկանում, թէ ինչ է կատարւում հետս:

— Դու ի՞նչ է, սիրահարուե՞լ ես: Ապա խոստովանի՛ր. ո՞վ է, որտեղի՞ց, անունն ի՞նչ է, ընկերուհի ունի՞: Ընկերոջս համար տոմսն անգամ կը զոհաբերեմ…

— Չէ՛ մի, ի՞նչ սիրահարուել,- ժպտալով եւ շիկնելով ընդհատեց Կոլեային Վարդանը:

— Մոռանանք: Ասում ես՝ հինգշաբթի՝ երեկոյեան եօթի՞ն: Ների՛ր, չեմ կարող. մենք ընտանեկան աւանդական ընթրիք ունենք: Ինքդ էլ գիտես՝ մայրս հարիսա պիտի պատ-

[1] Հայերէն՝ «Ժամանակի Մեքենայ» ռուսական էստրադային խումբ:

րասփի: Նոյնիսկ եթէ աշխարհը շուռ գայ, չեմ կարող չգնալ: Ի դէպ, մայրս, ինչպէս միշտ, քեզ էլ է հրաւիրում:

— Վարդա՛ն, սիրելի՛ս, հարիսա, որ քեզնից պակաս չեմ սիրում, յետոյ էլ կարող եմ ուտել, դե եթէ պահէք ինձ համար, իսկ ահա համերգի չգնալ չեմ կարող: Տոմսերը մեծ դժուարութեամբ եմ ձեռք բերել, ինքդ էլ հասկանում ես…

Վարդանը եւ Կոլեան հասակակիցներ էին. ծնուել էին 1980 թուականին, սովորել էին նոյն դասարանում, միասին ծառայել բանակում, անգամ ինստիտուտն էին միասին աւարտել: Երկուսն էլ յայտնի ծրագրաւորողներ էին քաղաքում. աշխատանք շատ կար: Երկուսն էլ երազում էին իրենց բիզնէսը հիմնել, իսկ յետոյ արդէն՝ ամուսնանալ: Անգամ լրջօրէն մտածում էին նոյն օրն ամուսնանալու մասին… Բիզնէսը հիմնեցին, եւ լիակատար երջանկութեան համար մնում էր միայն հարսնացուներ գտնել …

Վարդանը շատ վաղ էր արթնանում, թէեւ մշտապէս ուշ էր պառկում քնելու: Նախաճաշում էր ու շտապում՝ աշխատանքի: Բայց հինգշաբթի՝ մարտի երեքին, չէր ուզում վեր կենալ եւ աշխատանքի գնալ… Հոգին ճչում-աղաղակում էր, սակայն ոչ ոք չէր լսում…

— Աստուա՛ծ իմ, ո՞վ եմ ես: Այս տարի կը դառնամ 31 տարեկան, իսկ ես, ասես առանց արմատների բոյս, ապրում և շնչում եմ միայն օդով: Եթէ Դու գոյութիւն ունես, օգնի՛ր գտնել պատասխանները:

— Վարդա՛ն, որդի՛ս:

Վարդանին մի պահ թուաց, թէ Աստուած պատասխանեց իրեն. նա սարսափեց, սակայն նախաճաշելու կանչող մօր ձայնն էր:

— Վե՛ր կաց, աշխատանքից ուշանում ես: Նախաճաշն արդէն վաղուց պատրաստ է:

— Մա՛մ ջան, այսօր աշխատանքի չեմ գնալու. ուզում եմ մի քիչ քնել:

Մարիան առանց դուռը թակելու ներս խուժեց որդու սենեակ:

— Ի՞նչ է պատահել, որդի՛ս, հիւա՞նդ ես: Արդէն քանի օր է՝ նկատում եմ, որ ինչ-որ բան է կպարւում. աշխատավայրում որեւէ բա՞ն է եղել:

— Դէ չէ՛, մա՛մ, ամէն ինչ լաւ է, ես առողջ եմ. ուղղակի չեմ ուզում աշխատանքի գնալ:

— Ի՞նչ է, լա՞ց ես եղել, գուցէ սիրահարուե՞լ ես:

— Ի՞նչ էք բոլորդ մի գլուխ՝ սիրահարուե՞լ ես, սիրահարուե՞լ ես. աշխատավայրում Կոլեան իր հարցերով հանգիստ չի տալիս, դու էլ՝ տանը: Ամէն ինչ լաւ է:

— Ների՛ր, որդի՛ս, չէի ուզում նեղացնել:

— Մա՛մ, ներողութիւն մի՛ խնդրիր. այդ դու՛ ինձ ներիր. կոպիտ էի քեզ հետ: Պարզապէս ինչ-որ ծանրութիւն է ճնշում հոգիս:

— Եւ դեռ ասում ես՝ ամէն ինչ լաւ է: Դու միշտ կիսել ես ինձ հետ մտահոգութիւններդ: Խօսի՛ր ինձ հետ եւ կը թեթեւանաս. ես կը հասկանամ քեզ, որդի՛ս:

— Մա՛մ, ես էլ չեմ հասկանում, թէ ինչ եմ ուզում. գլուխս լի է հարցերով, հոգիս ճչում-աղաղակում է, պատասխաններ չեմ գտնում: Ո՞վ եմ ես, մա՛մ:

— Ինչպէ՞ս թէ՝ ով. դու իմ որդին ես:

— Մա՛մ, ես չեմ կատակում. ուզում եմ գտնել իմ ԵՍ –ը. հա՞յ եմ, թէ՞ ռուս: Ուզում եմ արմատներս գտնել, բայց դրանք չկան. գուցէ դրանք ընդհանրապէս չեն էլ եղե՞լ:

— Այդպէս մի՛ խօսիր: Դու հայ ես, թէեւ երակներումդ հոսող արիւնը կիսով չափ ռուսական է: Դու Վարդան Սարգըսեանն ես:

— Մա՛մ, դու ինձ չես հասկանում:

— Ո՛չ, հենց ե՛ս կարող եմ քեզ հասկանալ. մի ժամանակ ես էլ էի այդպէս տառապում: Մինչ օրս չգիտեմ, թէ ովքեր են ծնողներս: Ասում են՝ ինձ մանկատանն են թողել: Երբ մեծացայ, աւարտեցի ինստիտուտը, աշխատանքի անցայ, այդ ժամանակ էլ սկսուեցին տառապանքներս. տեղս չէի գտնում. ոչինչ չէր յաջողւում:

— Եւ ի՞նչ:

— Ի՞նչը ինչ: Յիշում ես ընկերուհուս՝ մօրաքոյր Անահիտին, Լենինականից:

— Այո՛:

— Ինչպէս գիտես, մենք համակուրսեցիներ էինք: Նա Հայաստանից եկել էր մեր քաղաք՝ բուհ[2] ընդունուելու: Աւարտեցինք ինստիտուտը, նա վերադարձաւ Լենինական, բայց կապը չընդհատուեց: Յաճախ էինք միմեանց նամակներ գրում:

---

[2] Բարձրագոյն Ուսումնական Հաստատութիւն:

Ես կիսում էի նրա հետ մտահոգութիւններս, պատմում էի, թէ ինչ ծանրութիւն է ճնշում հոգիս: Եւ մի անգամ նա ինձ հրաւիրեց իրենց տուն՝ մի փոքր ցրուելու, իրավիճակը փոխելու: 1978 թուականի ամռանը արձակուրդ ձեւակերպեցի և գնացքով ուղեւորուեցի Լենինական:

— Ա՛, ուրեմն հայրիկի հետ հենց այդ ժամանակ էլ ծանօթացա՞ք:

— Այո՛: Նրանք հարեւաններ էին եւ ընկերութիւն էին անում ընտանիքներով: Կարելի է ասել՝ ինչպէս մի մեծ ընտանիք: Խոստովանում եմ՝ հօրդ տեսնելուն պէս անմիջապէս մինչեւ ականջներս սիրահարուեցի, դէ, բնականաբար, հայրդ նոյնպէս: Ինչպէս ասում են, սէր՝ առաջին հայեացքից:

Մարիան կարմրեց, հայեացքը շրջեց՝ փոքր-ինչ անյարմար զգալով, եւ ցանկացաւ վեր կենալ մահճակալից, բայց որդին թոյլ չտուեց.

— Մա՛մ ջան, շարունակի՛ր. դու ինձ երբեք այդ մասին չես պատմել: Տեսնում ես՝ զուր չէր, որ աշխատանքի չգնացի:

— Իսկ Կոլեային զգուշացրե՞լ ես, որ չես գնալու, թէ չէ ամօթ է: Ի դէպ, չե՞ս մոռացել նրան հարիսա ուտելու հրաւիրել:

— Զանգահարել եմ, նա գիտի, որ չեմ գնալու: Այսօր համերգի է գնալու, այդ պատճառով էլ մեր տուն չի գալու. խոստացել է վաղը գալ, եթէ իր համար հարիսա պահենք:

— Իհարկէ կը պահենք:

— Մա՛մ:

— Դէ ի՞նչ ասեմ: Երբ ծանօթացայ Կարապետի հետ, ամէն ինչ մոռացայ… Մոռացայ տառապանքներս:

— Ուզում ես ասել, որ ես էլ սիրահարուե՞մ:

— Չէր խանգարի. շուտով 31-դ կը լրանայ, իսկ մենք, իմիջիայլոց, թոռներ ենք ուզում:

— Մա՛մ, ամէն ինչ իր ժամանակին, բայց խոստանում եմ, որ թոռներ շատ կը լինեն:

— Տա՛ Աստուած: Դէ լաւ, որդի՛ս, վե՛ր կաց, մի տես՝ ժամը քանիսն է: Ես դեռ հարիսա պիտի եփեմ. ինքդ էլ գիտես՝ ինչ քրտնաջան աշխատանք է:

— Մա՛մ ջան, այս անգամ կ'օգնեմ քեզ:

— Ա՛խ, ծոյլի՛կս, դէ վե՛ր կաց, թէ չէ հօրդ առանց հարիսայի կը թողնենք:

Մարիան խոհանոց գնաց: Վարդանը հոգում թեթեւութիւն զգաց: Խոհանոց մտնելով՝ տեսաւ, որ մայրը ինչ-որ բան է շշնջում՝ կաթսային թեքուած:

— Մա՛մ, էդ ի՞նչ ես շշնջում՝ կաթսային թեքուած, գուցէ ինչ-որ կախարդական խոսքե՞ր: Ես էլ մտածում եմ, թէ ինչու է հարիսան միշտ այնպէս համով ստացւում, որ մատներդ էլ հետը կ'ուտես:

— Տէ՛ր Աստուած, ների՛ր: Ի՞նչ կախարդական խօսքեր: Ես աղօթում եմ:

— Ի՞նչ, աղօթու՞մ ես, երբուանի՞ց:

Վարդանը տարակուսեց. սա յայտնագործութիւն էր իր համար: Իսկ Մարիան, խաչակնքելով կաթսան, շարունակեց խառնել հարիսան:

— Աղօթել, հարիսա եփել եւ շատ այլ բաներ ինձ սովորեցրել է քո հօր տատը՝ մեծ տատդ. նրա անունը Նեկտար էր: Սուրբ անձնաւորութիւն էր, հրեշտակ:

— Մա՛մ, վերջնականապէս խճճուեցի:

— Վարդա՛ն, արի հարցերը թողնենք յետագային: Աւելի լաւ է՝ խառնես, թէ չէ քո պատճառով հարիսան կը խանձրահամի:

Կարապետ Ակոպովիչը վաղ եկաւ եւ որդուն տանը տեսնելով՝ անչափ զարմացաւ: Նա, ինչպէս եւ Մարիան, վարժուել-ընտելացել էր որդուն գիշերները կամ տօն օրերին տեսնելու, իսկ եթէ Վարդանը տանն էր մնում, ապա սենեակից դուրս չէր գալիս եւ ժամերով նստում էր համակարգչի առջեւ:

Ընթրիքը, ինչպէս միշտ, «պաշտօնական» էր: Սեղանի շուրջը լռութիւն էր տիրում: Այս անգամ հարիսան Վարդանին աւելի համեղ թուաց, քանի որ ինքն էլ էր մասնակցել եփելուն: Նա անգամ որոշեց, որ իր ապագայ կնոջը նոյնպէս կը սովորեցնի հարիսա եփել, ավելի ճիշտ՝ մայրը կը սովորեցնի: Սակայն Վարդանն անհանգիստ էր. չէր համբերում, թէ երբ է մայրը շարունակելու իր պատմութիւնը: Նա պատրաստ էր ամէն ինչ հաւաքել սեղանից, նոյնիսկ լուանալ ամանեղէնը. այդպէս էլ արեց՝ ամէն ինչ շատ արագ աւարտելով և զարմացնելով անգամ հօրը.

— Ի՞նչ է կատարւում. աշխատանքի չի՞ գնացել, ինչ-որ բա՞ն է պատահել:

— Եղել է այն, ինչ պիտի լինէր: Քանի անգամ եմ խնդրել քեզ, որ խօսես որդուդ հետ: Պատմի՛ր նրան ընտանիքի մասին… Երեխան տառապում է:

— Երեխայ չէ, կը կողմնորոշուի:

— Բայց ի՜նչ դաժան ես, անհոգի՛ մսագործ: Ներէ՛ր, Կարապե՛տ, ներէ՛ր, հարազա՛տս:

Մարիան հեկեկաց եւ փարուեց Կարապետին: Նա էլ գրկեց Մարիային եւ արտասուեց:

— Ներէ՛ր, սիրելի՛ս:

— Դու՛ ինձ ներիր, սիրելի՛ս: Իրաւացի ես, անհոգի մըսագործ եմ դարձել… Վաղուց արդէն ձեռքերս են վիրահատում, ոչ թէ ես: Դէ լա՛ւ, գնամ դասախօսութեան նախապատրաստուեմ: Այսօր յոգնել եմ. ծանր վիրահատութիւն էր…

— Դէ գոնէ այս անգամ խօսի՛ր հետը:

— Չեմ կարող, մի՛ խնդրիր. ինքդ էլ գիտես, թէ այդ խօսակցութիւնն ինչ է նշանակում ինձ համար:

— Նրա համար էլ է ցաւոտ: Խօսի՛ր, ինքդ էլ կը թեթեւանաս…

Կարապետը գնաց իր սենեակ. Վարդանն այդ ժամանակ խոհանոցում ամաններն էր լուանում, չէր լսել ծնողների խօսակցութիւնը: Մարիան, մտքերով տարուած, չնկատեց որդու՝ սենեակ մտնելը:

— Մա՛մ, ի՞նչ է պատահել: Արտասուե՞լ ես, ու՞ր է հայրիկը: Երեւի կրկին դասախօսութեա՞ն է նախապատրաստւում:

— Մի փոքր. պարզապէս հարցերովդ անցեալը յիշեցրիր, դե՛հ, ես էլ յուզուեցի: Իսկ օրը հօրդ համար ծանր էր, եւ նա յոգնել է. վաղը դասախօսելու է ինստիտուտում…

— Դէ իհա՛րկէ: Կարապետ Յակոբի Սարգսեանը յայտնի անձնաւորութիւն է, Ռուսաստանի վաստակաւոր դոկտոր-պրոֆեսոր, էլ չեմ ասում՝ նշանաւոր վիրաբոյժ, գրքերի եւ յօդուածների հեղինակ, մարդկութեան փրկի՛չ, իսկ այ ընտանիքի մասին…

Վարդանի խօսքերից զգացւում էր, որ վիրաւորուած է հօրից. պատրաստւում էր շարունակել, բայց մայրն ընդհատեց նրան.

— Տո՛նդ փոխիր: Չե՞ս ամաչում, ինչպէ՞ս ես խօսում հօրդ մասին: Այո՛, նա լաւ վիրաբոյժ է եւ շատ կեանքեր է փրկել: Պէտք է հպարտանաս, որ այդպիսի հայր ունես: Դու չգիտես, թէ ինչ ծանրութիւն է ճնշում նրա հոգին, աւելի ծանր, քան քոնն է,

և այդ պատճառով չհամարձակուես նրա մասին վատ արտայայտուել…

Վարդանը մօրն այդպիսին երբեք չէր տեսել. անգամ վախեցաւ: Նա արագ մօտեցաւ եւ ամուր գրկեց մօրը:

— Մա՛մ ջան, ների՛ր յիմարիս, չէի ցանկանում քեզ վրշտացնել:

— Հօ՛րդ խղճայ: Ինչպէ՞ս ես վարւում. արհամարհում ես, չես ուզում շփուել, խուսափում ես…

— Մա՛մ, այդ մասին երբեւէ կը խօսենք: Խնդրում եմ, պատմի՛ր մեծ տատիս՝ Նեկտարի մասին:

— Վարդա՛ն, դէ ինչ կարելի է պատմել հրեշտակի մասին. նա սուրբ հոգու տէր մարդ էր: Երբ առաջին անգամ նրան տեսայ, ինձ թուաց, թէ հրեշտակ եմ տեսնում: Նոյնիսկ պապանձուեցի. նա ամբողջովին փայլում էր, աչքերն անչափ բարի էին, բայց եւ՝ ցաւով ու տառապանքով լեցուն: Իսկ ամենակարեւորը, Վարդա՛ն, երբ նրան տեսայ, գտայ հարցերիս բոլոր պատասխանները:

— Ինչպէ՞ս թէ:

— Մի՛ հարցրու… Չեմ կարող բացատրել… Բառեր չեմ գտնում…

— Իսկ Նեկտարը ծնունդով որտեղի՞ց էր, Լենինականի՞ց:

— Ո՛չ, վանեցի էր, Արեւմտեան Հայաստանից, որ այժմ Թուրքիա է:

— Վանեցի՞:

— Նա Վան քաղաքից էր: Գիտեմ միայն, որ ամուսնու հետ փախել էր Վանից, երբ թուրքերը սկսել էին Հայոց Եղեռնը: Ամուսինը հաւանաբար զոհուել էր, իսկ ինքը որդու՝ Յակոբ պապիդ հետ յայտնուել էր Սովետական Հայաստանում:

— Այո՛, ես ծնուել եմ Եղեռնի օրը՝ ապրիլի 24-ին… Մա՛մ, իսկ չէի՞ր կարող ինձ մէկ ուրիշ օր ծնել:

— Որդի՛ս, Աստծու կամքն է. կեանքը շարունակւում է: Գիտե՞ս՝ երբ ծնուեցիր, Նեկտար տատիկն անչափ ուրախացաւ, որ հենց այդ օրը ծնուեցիր:

— Ինչու՞:

— Ինչու՞, որովհետև ՄԵՆՔ՝ ՀԱՅԵՐՍ, անտեսելով ամէն ինչ, ապրելու ենք՝ երբեք չմոռանալով մեր անցեալը:

— Մա՛մ, սա ի՞նչ է. չէ՞ որ հայ չես: Այդ ինչպէ՛ս ես խօսում՝ ՄԵ՞ՆՔ:

— Այո՛, ես ՀԱՅՈՒՀԻ եմ. եւ հպարտ եմ: Հայ լինելը միայն երակներումդ հոսող հայկական արիւնով չէ. ես հոգով եմ հայուհի:

— Մա՛մ, լրջօրէ՞ն ես խօսում. այդ դէպքում ինչու՞ մինչեւ հիմա ինձ ոչինչ չէք ասել, ինչու՞ են ինձ փանջում իմ ԵՍ-ի մասին հարցերը:

— Եւ իրօք, գուցէ Աստծու կամքն է, որ ինքդ գտնես քո ԵՍ-ը եւ այլեւս երբեք չկորցնե՛ս: Չգիտեմ, որդի՛ս… Գուցէ գտնես, ինչպէս՝ ես, երբ ժամանակը գայ. յուսով եմ՝ Տէրը չի լքի:

— Ես էլ յոյս ունեմ: Պատմի՛ր, իսկ ինչպէ՞ս ամուսնացար:

— Արձակուրդս աւարտուեց, ես տուն վերադարձայ: Մի կողմից ուրախ էի, որ գտայ հարցերիս պատասխանները, միւս կողմից՝ տխուր. կարօտում էի Կարապետին: Եւ ահա 1979 թուականի ապրիլին դուռս թակեցին: Բացում եմ եւ ու՞մ եմ տեսնում. քիչ մնաց՝ ուշաթափուեմ:

— Ու՞մ:

— Ինչպէ՞ս թէ՝ ու՞մ: Կարապետին՝ ծաղիկներով, եւ ընկերուհուս՝ Անահիտին: Կարապետը եկել էր՝ ձեռքս խնդրելու:

— Ի՞նչ ես ասում, մա՛մ:

— Դեռ չէր հասցրել ասել, որ ցանկանում է ինձ խնդրել՝ ամուսնանամ իր հետ, ես ուրախութեամբ ասացի՝ ԱՅՈ՛, շուտով գրանցուեցինք զագսում[3]: Հարսանիքը համեստ էր:

— Հայրիկը մնաց, որ քեզ հե՞տ ապրի:

— Ո՛չ, նա վերադարձաւ Հայաստան. գործեր ունէր: Անահիտը մնաց, որպէսզի օգնի իրերս հաւաքել, բայց հայրդ պէտք է վերադառնար իմ հետեւից:

— Ուրեմն դու մեկնեցիր Հայաստա՞ն:

— Այո՛, համարեայ մէկ ամսից հայրդ վերադարձաւ, և մենք գնացքով մեկնեցինք Լենինական: Սակայն, ցաւօք, հօրդ ընտանիքը սկզբում ինձ չընդունեց …

— Ինչպէ՞ս թէ՝ քեզ չընդունեցին:

— Անահիտն ինձ պատմել է, որ Կարապետի՝ ինձ հետ ամուսնանալու որոշումը ընտանիքը կտրականապէս մերժել է,

---

3 Կառավարական պսակ:

բայց Կարապետն արդէն որոշումն ընդունել էր եւ չէր պատրաստւում հրաժարուել. նրան աջակցել-պաշտպանել էր Նեկտար տատը:

— Իսկ ինչու՞ քեզ չէին ընդունում:

— Ես օտար էի, հայուհի չէի, այդ պատճառով: Նրանց կարելի է հասկանալ. հայկական աւանդական ընտանիք էր: Անգամ երբ Լենինական հասանք, ընտանիքից ոչ ոք չեկաւ մեր տուն. հայրդ այդ ժամանակ բնակարան էր վարձել: Միայն Նեկտար տատդ եկաւ և մնաց՝ մեզ հետ ապրելու:

— Եւ ի՞նչ, այդպէս էլ չհաշտուեցի՞ք:

— Միայն այն ժամանակ, երբ դու ծնուեցիր: Թէեւ հայրըդ չէր ուզում, որ ընտանիքը գայ, բայց ես եւ Նեկտար տատը յամառեցինք: Երբ լրացաւ քո 40-րդ օրը, տատը որոշեց քեզ կնքել, ինձ էլ հետը: Մեզ կնքեցին Էջմիածնում: Կնքահայրը ճեմարանի սաներից էր:

— Ուրեմն դու՞ էլ ես կնքուել Հայ Եկեղեցում:

— Իհարկէ, կնքուելուց յետոյ ես գտայ իմ ԵՍ-ը, եւ դրա համար էլ քեզ լաւ եմ հասկանում: Ամէն կիրակի գնում էինք Լենինականի Եօթ Վէրք եկեղեցի՝ Պատարագի, եւ հաղորդւում էինք, իսկ ամիսը մէկ անգամ կիրակի եւ տօն օրերին անպայման տատիկի հետ՝ Էջմիածին:

— Ի՞նչ են նշանակում հաղորդութիւնը եւ Պատարագը:

— Այդ մասին երբեւէ կը խօսենք: Եւ ահա քո կնունքին ամբողջ ընտանիքը հաւաքւում է մեր տանը: Եկել էին քո Յակոբ պապը, Յասմիկ տատը, Աւետիս հօրեղբայրը եւ Հռիփսիմէ հօրաքոյրը, նաեւ ընկերուհիս՝ Անահիտը, ամուսնու հետ: Նրանք Երեւանից էին եկել. Անահիտն ամուսնացել էր Երեւանում: Մի լաւ ուրախացանք…

— Իսկ ինչո՞վ էր զբաղւում Յակոբ պապս:

— Պապդ լաւ ոսկերիչ էր, իր գործի վարպետ: Իմ բոլոր զարդերը նրա ձեռքի գործն են, եւ ես դրանք պահում եմ իմ ապագայ հարսիկի համար:

— Օhօ՜, մի տես է, փիկնօջս բախտն ինչպէս է բերում:

— Դա Նեկտար տատիկի ցանկութիւնն էր: Ի դէպ, ես նրան տատիկ չէի ասում, այլ Նեկտար մայրիկ՝ մամա: Նա ամէն ինչ էր ինձ համար. շատ բան է սովորեցրել:

— Մա՛մ, բայց դու հայերէն չգիտես, ինչպէ՞ս էիք շփւում:

— Ազնուօրէն ասած՝ նոյնիսկ չեմ էլ մտածել: Երբեմն մենք ժամերով խօսում էինք, արտասւում միասին, ծիծաղում. նա՝ հայերէն, ես՝ ռուսերէն, եւ ամէն ինչ հասկանում էինք: Չեմ կարող բացատրել: Նա է ինձ սովորեցրել գրաբար «Հայր մեր» աղօթքը, եփել քո սիրելի հարիսան ու սպասը եւ շա՜տ բաներ:

— Ուրեմն, երբ հարիսա եփելիս շշնջում էիր, ասում էիր «Հայր մեր»-ը գրաբա՞ր:

— Այո՛, ես միշտ եմ աղօթում եւ ոչ միայն հարիսա եփելիս: Երբ դու և հայրդ աշխատանքի էք գնում, երբ դու սովորում էիր, բանակում էիր: Այլ աղօթքներ չգիտեմ, երեւի պէտք էլ չեն. այդ աղօթքում ամէն ինչ կայ, ինչ հասարակ մահկանացուն պիտի խնդրի Աստծուց. այդպէս է ինձ սովորեցրել Նեկտար մայրիկը: Գլխաւորը հաւատն է, ոչ թէ բառերը: Նրա հետ նոյնիսկ պահք էի պահում: Ամէն չորեքշաբթի եւ ուրբաթ նա ընդհանրապէս ոչինչ չէր ուտում, Մեծ Պահքին՝ միայն հաց եւ աղ, իսկ ինձ թոյլ չէր տալիս խստօրէն պահք պահել: Մինչ այժմ էլ պահք եմ պահում, բայց Մեծ Պահքը դժուար է: Յուսով եմ՝ Աստուած կը ների ինձ…

— Մա՛մ, կեցցե՛ս. դէ իսկ եկեղեցի դու չես գնում, որքան ես գիտեմ. թէ՞, այնուամենայնիւ, մեզնից թաքուն գնում ես. թէ չէ մայրիկս շա՛տ գաղտնիքներ ունի:

— Ո՛չ, չեմ գնում. մենք հայկական եկեղեցի չունենք, բայց արդէն կառուցւում է: Տա՛ Աստուած, խոստանում են՝ մէկ տարի յետոյ կը գործի:

— Լսել եմ շինարարութեան մասին: Ես նկատի ունէի՝ ռուսական եկեղեցի չե՞ս գնում:

— Ո՛չ:

Մարիան այնպէս կտրուկ պատասխանեց, որ որդին անգամ զարմացաւ…

— Իսկ ինչու՞:

— Մի՛ հարցրու. երբեւէ ինքդ կը հասկանաս…

— Չեմ հարցնի… Ի դէպ, մա՛մ, իսկ ինչու՞ ես հարիսա եփում տարին մէկ անգամ  հինգշաբթի օրը և այն էլ տարբեր ամիսների:

— Այդպիսի սովորութեւն կար Նեկտար մայրիկի ընտանիքում: Նրանք հարիսա էին եփում Սուրբ Վարդանի տօնին, որ համընկնում է Մեծ Պահքին նախորդող վերջին հինգշաբթի օրուան: Հավաքւում էր ամբողջ ընտանիքը: Այս տարի Մեծ Պահքն սկսւում է մարտի եօթին: Դէ հաշուի՛ր:

— Իսկ որտեղի՞ց գիտես՝ երբ է սկսւում Պահքը:

— Մօրդ գաղտնիքներից է: Կատակում եմ, որդի՛ս. մօրաքոյր Անահիտից… Չյոգնեցի՞ր լսելուց:

— Չէ՛, ի՞նչ ես ասում, իսկ ո՞վ է Սուրբ Վարդանը:

— Հայ Եկեղեցու սրբերից է. նա զօրավար էր, որը հինգերորդ դարում պատերազմում էր պարսիկների դէմ՝ պաշտպանելով հայոց քրիստոնէական հաւատքը: Զոհուել է անհաւասար ճակատամարտում…

— Հասկանալի է, իսկ որտեղի՞ց են եկել Յակոբը եւ Նեկտար մայրիկը:

— Չգիտեմ, թէ յատկապէս որտեղից էին Հայաստան եկել Յակոբը եւ Նեկտար մայրիկը, բայց 1952-ին Յակոբն ամուսնանում է քո Յասմիկ տատիկի հետ: Յաւօք, ընտանիքում ոչ ոք, անգամ հայրդ, չէր խօսում անցեալից, գիտեմ սակայն, որ նրանք ապրելիս են եղել Էջմիածնում, եւ միայն 1968 թուականին են տեղափոխուել Լենինական: Չեմ կարող ասել, թէ ինչու: Հայրդ ծնուել է 1953-ին, հօրեղբայր Աւետիսը՝ 1955-ին, իսկ հօրաքոյր Հռիփսիմէն՝ 1960-ին: Ի դէպ, գեղեցկուհի էր:

— Մա՛մ, իսկ ինչու՞ հայրիկը չի ասել ինձ այդ մասին:

— Որդի՛ս, ինձ թւում է՝ ամէն ինչ իր ժամանակն ունի: Այսպիսի բաներ: Ի դէպ, Նեկտար մայրիկի մօր անունն էլ է եղել Մարիա, բայց հայերէն այն հնչում է՝ Մարիամ: Նեկտար մայրիկն ինձ անուանում էր Մարիամս, այսինքն՝ իմ Մարիամ:

— Իսկ ե՞րբ մահացաւ Նեկտար մայրիկը:

— 1982 թուականին՝ յունուարի վեցին, 90 տարեկան հասակում: Հայերը Քրիստոսի Ծննդեան տօնը նշում են յունուարի վեցին: Յունուարի հինգին հայրդ մեզ տարաւ Էջմիածին. իջեւանեցինք Նեկտար մայրիկի ընկերուհու տանը, որը, որքան յիշում եմ, նոյնպէս ծնունդով վանեցի էր: Ներկայ գտնուեցինք երեկոյեան պատարագին, հաղորդութիւն ստացանք. նոյնը եւ՝ յունուարի վեցին:

— Ես է՞լ հաղորդութիւն ստացայ:

— Իհարկէ, տուն վերադարձանք երեկոյեան: Տատիկը գնաց Յակոբենց տուն ու նստեց-մնաց մինչեւ ուշ գիշեր: Երբ վերադարձաւ, ամբողջովին փայլում էր: Քնելուց առաջ, ինչպէս միշտ, աղօթեց, յետոյ մեզ կանչեց եւ ասաց…

Մարիան հեծկլտաց, Վարդանից ջուր խնդրեց ու խմելով շարունակեց.

— Եւ ասաց մեզ, որ իր ժամանակը եկել է. Տէր Աստուած Յիսուս Քրիստոսը կանչում է իրեն: Մենք փորձեցինք ասել, որ նա՝ մայրիկը, դեռ պէտք է ամուսնացնի Վարդանին, բայց նա խնդրեց իրեն չընդհատել: Երբ խօսում էր, ամբողջովին լուսաւորւում էր, եւ թւում էր՝ իրօք տեսնում է Տիրոջը: Նաեւ ասաց, որ իր սիրելի ամուսինը՝ Վարդանը, սպասում է իրեն:

— Ահա՜ թէ ինչ, իմ անունը Նեկտար մայրիկի ամուսնու անու՞նն է:

— Այո՛, դա նրա խնդրանքն էր:

— Հետաքրքիր է, իսկ ո՞վ էր մեծ պապս:

— Չգիտեմ, Վարդա՛ն, յետոյ Նեկտար մայրիկը խնդրեց քեզ բերել: Երբ քեզ բերեցի, նա, պարանոցից հանելով արծաթեայ խաչը, խաչակնքեց բոլորիս եւ այն կախեց կրծքիցդ: Խաչի վրայ հայերէն գրուած էր՝ «**ԱՍՏՈՒԱ՛Ծ, ՊԱՀԵԱ՛ ՋՎԱՐԴԱՆ**»: Ինչպէս մայրիկն ասաց, դա ամուսնու խաչն էր:

— Իսկ հիմա ո՞րտեղ է:

Մարիան, ոչինչ չպատասխանելով, սենեակից դուրս եկաւ: Վարդանը սպասումից քարացել էր: Նրան թւաց, որ մի ամբողջ յաւերժութիւն անցաւ, մինչ մայրը վերադարձաւ՝ մի փոքր տուփ ձեռքին:

— Մա՛մ, թու՛յլ տուր՝ ես բացեմ:

Վարդանը սրտի թրթիռով բացեց տուփը. խաչը նրա ձեռքին էր: Հակառակ երեսին հայերէն մակագրութիւն էր: Վարդանը հայերէն չգիտէր, որ կարդար «**ԱՍՏՈՒԱ՛Ծ, ՊԱՀԵԱ՛ ՋՎԱՐԴԱՆ**» բառերը: Այդ պահին նա երեւի զգում էր այն, ինչ մայրն էր զգացել՝ առաջին անգամ Նեկտար մայրիկին տեսնելով:

— Մա՛մ, սա ի՞նչ թել է:

— Նարօտ է կոչւում. միահիւսուած կարմիր եւ սպիտակ թելեր են, իսկ թէ ինչու՛, չգիտեմ:

— Իսկ ինչո՞ւ ես հենց հիմա տալիս այս խաչը:

— Նեկտար մայրիկի կամքն է. երբ նա դրեց խաչը փոքրիկ կրծքիդ, դու արթնացար եւ սկսեցիր զարմացած նայել Նեկտար մայրիկին. անգամ մենք հօրդ հետ ապշեցինք. այնպիսի զգացողութիւն էր, որ տեսնում էիր այն, ինչ Նեկտար մայրիկը: Նա ասաց, որ երբ ժամանակը գայ, տանք այդ խաչը իր Վարդանին: Ես եւ հայրդ ցանկացանք իմանալ, թէ երբ է գալու այդ ժամանակը, եւ նա պատասխանեց, որ երբ Վարդանը սկսի փնտռել իր ճանապարհը, հենց այս խաչն էլ կ'օգնի նրան

գտնել այն. դա կը լինի խաչի ճանապարհը: Մենք այն ժամանակ չհասկացանք և զարմացանք, իսկ Նեկտար մայրիկը, գրկելով հորդ, ականջին ինչ-որ բան շշնջաց: Յետոյ ինձ գրկեց եւ հայերէն ինչ-որ բան ասաց՝ յիշատակելով Կարապետ անունը: Ես բառերը չհասկացայ, բայց սիրտս յուշեց Նեկտար մայրիկի խնդրանքը. նա խնդրում էր, որ պահպանեմ ու պաշտպանեմ Կարապետին:

— Իսկ յետո՞յ:

— Յետոյ նա գնաց եւ պառկեց իր անկողնում: Խաչակնքուեց… Եւ հեռացաւ մեզնից… Նա պարզապէս քնեց՝ հոգին Տիրոջն աւանդելով… Սու՜րբ անձնաւորութիւն…

Լռութիւն փիրեց… Մարիան հոգու խորքում ուրախ էր, որ օգնեց որդուն՝ պատմելով այն ամէնը, ինչ գիտէր, և որ տուեց խաչը: Բայց եւ անհանգստանում էր ամուսնու համար, որի հոգին նոյնպէս ճնշւում էր ծանրութիւնից: Մարիան, ինչպէս միշտ, մտածում էր, թէ արդեօք ինչ էր ասել Նեկտար մայրիկը Կարապետին…

Վարդանին թւում էր, որ երազ է տեսնում. ականջին անընդհատ հնչում էին մօր խոսքերը. «**Երբ Վարդանը սկսի փնտռել իր ճանապարհը, հենց այս խաչն էլ կ'օգնի նրան գտնել այն. դա կը լինի խաչի ճանապարհը**»…

Որդու եւ մօր մտածմունքներն ընդհատեց հեռախօսազանգը: Վարդանի ընկերն էր՝ Կոլեան: Մայրը, հասկանալով, որ զանգահարողը Կոլեան է, համբուրեց որդուն եւ ասաց.

— Ողջո՛յնս հաղորդիր Կոլեային, ասա՛, որ վաղը սպասում ենք իրեն: Բարի՛ գիշեր, որդի՛ս:

— Շնորհակալութիւ՛ն, մայրի՛կ, բարի՛ գիշեր:

— Ինչու՞ ես այդքան վաղ պառկել քնելու. հեռախօսազանգերին էլ երկար ժամանակ չես պատասխանում:

— Դէ չէ՛, քնած չեմ: Ինչպիսի՞ն էր համերգը, ու՞մ հետ գնացիր:

— Մենակ:

— Ինչպէ՞ս թէ՝ մենակ:

— Տոմսը վաճառեցի աւելի թանկ, քան երկուսն էի գնել. այնպէս որ անվճար ներկայ գտնուեցի համերգին:

— Ի՛նձ շնորհակալութիւն յայտնիր, որ չեկայ: Լսի՛ր, մայրիկը ողջոյն է հաղորդում եւ վաղը սպասում քեզ՝ հարիսայի:

— Անպայման կը գամ, իսկ վաղը գրասենեակ գալո՞ւ ես:

— Ո՛չ, ուզում եմ մի փոքր հանգստանալ. աշխատանքը պանը կ՚աւարտեմ:

— Շա՛տ բարի, խնդիր չկայ: Լսի՛ր, իսկ ես նորութիւն ունեմ:

— Ի՞նչ է պատահել:

— Վաղը կը գամ, կը պատմեմ. ուզում եմ մօրաքոյր Մարիային էլ պատմել:

— Դէ՛հ, ուրեմն մինչ վաղը:

— Մինչ վաղը:

Վարդանն աշխատանքի ժամանակ չունէր. նա ցնցուած էր: Ձեռքին ամուր բռնել էր ԻՐ խաչը, իսկ ականջին անվերջ հնչում էին մօր խօսքերը. «**Երբ Վարդանը սկսի փնտռել իր ճանապարհը, հենց այս խաչն էլ կ'օգնի նրան գտնել այն. դա կը լինի խաչի ճանապարհը**»… Այդպէս էլ քնեց:

Մարիան, իր սենեակ մտնելով, պեսաւ ամուսնուն՝ սեղանի առջեւ քնած: Նա զգուշօրէն արթնացրեց ամուսնուն…

— Սիրելի՛ս:

— Ժամը քանի՞սն է:

— Տասներկուսն անց կէս…

— Արդէն ուշ է, իսկ ես պէտք է վաղ արթնանամ: Անկողի՛նս գցիր:

— Անկողինդ վաղուց պատրաստ է, սիրելի՛ս: Ինձ մի քանի րոպէ կը փրամադրե՞ս. ուզում եմ հետդ խօսել:

— Դէ՛հ, հիմա՞ ինչ, նորից Վարդանը…

— Այո՛, ես նրան ամէն ինչ պատմեցի եւ տուեցի Նեկտար մայրիկի խաչը:

— Ի՞նչ:

— Ինչ լսեցիր: Ես նրան ամէն ինչ պատմեցի եւ տուեցի Նեկտար մայրիկի խաչը:

Մարիան այնքան վճռական էր, որ Կարապետը ոչինչ չկարողացաւ ասել…

— Նա հիմա համարեայ ամէն ինչ գիտի: Տեսնէի՛ր նրա աչքերը: Ասես ուսերիցս ծանր բեռ ընկաւ: Փա՛ռք Աստծուն:

— Բայց…

— Բայց ի՞նչ, սիրելի՛ս, խաչը տալու ժամանակը եկաւ, ես էլ տուեցի այն, ինչպէս որ ցանկանում էր Նեկտար մայրի-

կը… Սիրելի՛ս, ասա՜ ի՞նչ ասաց նա այն օրը: Ես երբեք չեմ հարցրել քեզ, խնդրում եմ, ասա՛:

— Կարեւոր չէ:

— Ո՛չ, կարեւոր է, ասա՛. դու իրաւունք չունես մեզ հետ այդպէս վարուելու. յանուն Նեկտար մայրիկի՝ ասա՛:

Կարապետն արտասուեց եւ գրկեց Մարիային: Նա հեկեկում էր՝ չկարողանալով խօսել: Մարիան սեղմեց նրան իր կրծքին եւ նոյնպէս հեկեկաց…

— Նա ասաց… Նա ասաց ինձ… Որ… Ասաց, որ իմ որդին Վարդանին կը գտնի Երուսաղէմում… Ների՛ր… Ների՛ր նրանց…

— Ո՞ւմ ներես… Չհասկացայ…

— Նա խնդրում էր, որ ես ներեմ հօրս, եղբօրս եւ քրոջս՝ մեր տուն չգալու, հարսանիք չանելու համար… Բայց ես չներեցի նրանց… Չարութեամբ էի լցուած նրանց դէմ… Չլսեցի նրան… Կորցրի նրանց բոլորին… Անիծում եմ ինձ յամառութեանս եւ զոռոզութեանս պատճառով… Նրանց վերադարձնել այլեւս չի լինի…

— Սիրելի՛ս, մի՛ տանջիր քեզ. Աստուած կը ների:

— Աստուա՞ծ: Իսկ ո՞րտեղ էր Նա Եղեռնի ժամանակ, Սպիտակի երկրաշարժի ժամանակ, արցախեան պատերազմի ժամանակ, ո՞րտեղ էր Նա: Աստուած մոռացել է հայերին, իսկ դու ասում ես, որ կը ների: Խնդիրն այն է՝ կը կարողանա՞մ արդեօք ես ներել Նրան. ու՞մ է պէտք այս կեանքը:

— Այդպէս մի՛ խօսիր. իրաւացի չես, Աստուած չի մոռացել հայերին: Եթէ Աստուած չլինէր, իմ կեանքում չէր լինի Նեկտար մայրիկը. նրա կենդանի մնալը, իր հաւատով եւ կեանքով մեզ ոգեշնչելը վկայում է, որ Աստուած կայ և չի լքել մեզ՝ հայերիս:

— Բայց չէ՞ որ հայուհի չես:

— ՀԱՅՈՒՀԻ եմ, եւ ինչպէս տեսնում եմ, առաւել հայուհի եմ, քան դու հայ: Եթէ չես հասկանում Աստծու գթասրտութիւնը, քո զոռոզութիւնից է. դու կուրացել ես, և քեզնից բացի ոչ ոքի չես տեսնում:

— Ես ապրում եմ յանուն քեզ և Վարդանի:

— Ո՛չ, դու չես ապրում յանուն մեզ, դու չես հասկանում. դու տանջում ես մեզ զոռոզութեանդ պատճառով: Մենք քեզ սիրում ենք, իսկ դու փախչում ես՝ քեզ ամբողջովին նուիրելով աշխատանքի, ինչպէս ջայլամը, որ թաքցնում է գլուխը աւազի

մէջ: Նոյնիսկ Վարդանը, որ ուզում էր բժիշկ դառնալ, քո պատճառով չդիմեց բժշկական: Նա չէր ուզում քեզ նման անհոգի մսագործ դառնալ:

— Իրաւացի ես. ես անհոգի մսագործ եմ:

— Ների՛ր նրանց, յանուն Նեկտար մայրիկի խոնարհուի՛ր Տիրոջ առջեւ: Խնդրում եմ, սիրելի՛ս:

— Ես վաղուց եմ ներել նրանց, բայց հպարտութիւնը եւ յամառութիւնս…

— Գիտեմ, որ դու յամառ ես ու հպարտ:

— Ինքս ինձ չեմ կարողանում ներել, սիրելի՛ս: Եւ սա է ինձ խանգարում խոնարհուել Տիրոջ առջեւ. գիտակցում եմ, որ արդարացի չեմ՝ ասելով՝ ո՞րտեղ էր Աստուած… Բայց ի՞նչ անեմ: Ի՞նչ էի անելու, եթէ դու չլինէիր: Գիտե՞ս, երբեմն թւում է, որ Նեկտար մայրիկը մեզ երբեք չի լքել… Նրա մայրական հոգատարութիւնը եւ սէրը միշտ քո մէջ եմ տեսնում…

— Նեկտա՛ր մայրիկ:

— Նա քեզ շատ էր սիրում, պաշտպում էր, նոյնիսկ երբեմն խանդում էի քեզ նրա պատճառով… Բայց ես նրան չլսեցի…

— Սիրելի՛ս, ամէն ինչ իր ժամանակն ունի. գլխաւորն այն է, որ արտայայտուեցիր, եւ յուսով եմ՝ թեթեւացար…

— Այո՛, թեթեւացայ. շնորհակալ եմ քեզ:

— Փա՛ռք Աստծու. խօսի՛ր որդուդ հետ. նա կը կարողանայ քեզ հասկանալ:

— Համաձայն եմ, բայց մի փոքր ժամանա՛կ տուր. ինձ ժամանակ է պէտք…

— Սիրելի՛ս, իսկ ի՞նչ նկատի ունէր Նեկտար մայրիկը:

— Ինչի՞ մասին ես հարցնում:

— Դէ՛, երբ քեզ ասաց, որ որդիդ կը գտնի Վարդանին Երուսաղէմում…

— Ազնուօրէն ասած՝ ինքս էլ չգիտեմ:

— Հաւանակա՞ն է, որ նրանք եղել են Երուսաղէմում… Իսկ քեզ չե՞ն պատմել, թէ որտեղից են Հայաստան եկել Նեկտար մայրիկն ու նրա որդին՝ Յակոբը:

— Ո՛չ, ընտանիքում երբեւէ չեն խօսել: Երեւի ինչ-որ բան էր եղել, որ չէին ուզում կամ անգամ վախենում էին երեխաներին պատմել:

— Երեւի սովետների պատճառով:

— Գուցէ. յուսով եմ՝ Վարդանը խաչի օգնութեամբ կը գտնի հարցերի բոլոր պատասխանները… Խնդրում եմ, մի՛ ասա նրան մեր խօսակցութեան մասին…

— Չեմ ասի, սիրելի՛ս, բայց խոստացի՛ր, որ անպայման կը խօսես նրա հետ. երեխան տանջւում է:

— Խոստանում եմ, սիրելի՛ս:

— Շնորհակալութի՛ն: Դէ՛, արդէն ուշ է, դու պէտք է վաղ արթնանաս: Սիրում եմ քեզ:

— Ես էլ եմ սիրում իմ Մարիամին: Բարի՛ գիշեր:

— Բարի՛ գիշեր:

Սարգսեան ամուսինները, թերեւս, երբեք հոգով այդքան թեթեւացած չէին եղել. ինչպէս ասում էր Նեկտար մայրիկը. «*Սուրբ Վարդանը երբեք չի լքի մեզ*»:

— Վարդա՛ն, աշխատանքից ուշանում ես: Վե՛ր կաց, որդի՛ս:

— Մա՛մ, այստեղ եմ:

— Նստի՛ր, նախաճաշը պատրաստ է, բայց չի երեւում, որ աշխատանքի ես շտապում:

— Իրաւացի ես. այսօր էլ աշխատանքի չեմ գնալու: Կոլեան արդէն գիտի: Տանը կ'աւարտեմ աշխատանքը, խնդիր չկայ:

— Դէ լա՛ւ, դու գիտես. փոքր չես:

Նախաճաշելուց յետոյ նրանք սենեակ անցան:

— Մա՛մ ջան:

— Դէ ի՞նչ:

Վարդանն ամբողջ գիշեր ձեռքին էր պահել իր խաչը, իսկ հիմա մօր աչքի առջեւ այն պարանոցը գցելով՝ ասաց.

— Յուսով եմ՝ շարունակութիւն կը լինի՞:

— Ա՛յ, դու խորամանկ, ես էլ մտածում եմ, թէ ինչու որդիս աշխատանքի չի գնում…

— Մա՛մ, իսկ Նեկտար մայրիկի լուսանկարը կա՞յ:

— Ցաւօք, նա լուսանկարուել չէր սիրում…

— Իսկ հայրիկի ընտանիքի լուսանկարնե՞րը:

— Չեն պահպանուել…

— Ինչո՞ւ, ի՞նչ էր պատահել:

— Ամէն ինչ հերթով…

— Ինչ որ ասես: Իսկ ի՞նչ գիտես Յասմիկ տատիկի մասին:

— Ոչինչ: Գիտեմ միայն, որ նա ինձ նման տնային տնտեսուհի էր: Սարգսեանների ընտանիքում կանայք պէտք է տնային տնտեսուհի լինեն. ինչպէս ասում էր Նեկտար մայրիկը, ամուսինը տան դրսի պատն է, իսկ կինը՝ ներսի. կինը պետք է պահպանի ընտանեկան օջախը, իսկ ամուսինը փայտ բերի:

— Օ՛, իմաստուն է ասուած:

— Նա երբեք ոչինչ հենց այնպէս չէր ասում:

— Իսկ հօրեղբա՞յրս եւ հօրաքո՞յրս:

— Ի՞նչ անհամբերն ես. Աւետիս հօրեղբայրդ զինուորական էր, սպայ, որքան յիշում եմ, մայոր: Հռիփսիմէ հօրաքոյրդ՝ հայոց լեզուի և գրականութեան ուսուցչուհի: 1985 թուականին հօրեղբայրդ ամուսնացաւ Արմինէի հետ, մէկ տարի անց ծնուեց որդին՝ Յակոբը: Հօրաքոյրդ 1987 թուականին ամուսնացաւ Արսէնի հետ, և մէկ տարի անց նոյնպէս որդի ունեցաւ՝ Արմէնին…

— Իսկ ինչպէ՞ս նրանք զոհուեցին. գիտեմ, որ 1988 թուականի դեկտեմբերի 7-ին Սպիտակի երկրաշարժն էր…

— Տէ՛ր Աստուած, հանգստութի՛ն տուր նրանց հոգիներին: Հռիփսիմէ հօրաքոյրդ որդու հետ հիւրընկալուել էր Յակոբ պապիկի տանը, երբ տեղի ունեցաւ հրէշաւոր երկրաշարժը… Աւետիս հօրեղբայրդ զօրծուղման էր, իսկ Հռիփսիմէի ամուսինը՝ զործարանում. նա ինժեներ էր: Բոլորը զոհուեցին…

— Իսկ Աւետիս հօրեղբօր ընտանի՞քը…

— Նրանք ապրում էին Յակոբ պապիկի հետ:

— Մա՛մ, ինչո՞ւ է մեր՝ հայերիս բախտն այսպիսին:

— Օ՛հ, չգիտեմ, որդի՛ս. անքննելի են Աստծու ճանապարհները:

— Իսկ մենք ո՞րտեղ էինք:

— Մե՞նք. մենք Նեկտար մայրիկի մահից անմիջապէս յետոյ՝ մէկ-երկու ամսից, Հայաստանից տեղափոխուեցինք իմ հայրենիք՝ Ռուսաստան:

— Եթէ մնայինք, ապա…

— Ամէն ինչ Աստծու կամքն է:

— Յիշում եմ՝ հայրս բժիշկների մի խմբի հետ անմիջապէս մեկնեց Հայաստան: Ես այն ժամանակ երկրորդ դասարանում էի. դպրոցում տաք հագուստ էինք հաւաքում և շատ այլ բաներ: Յիշում եմ՝ բոլորին ասում էի, որ հայրս հերոս է, մեկնել

է Հայաստան՝ մարդկանց փրկելու, եւ որ ես էլ եմ նրա նման բժիշկ դառնալու …

— Այո՛, այդպէս էր… Նա շատերին փրկեց, նրա ձեռքերը հրաշքներ էին գործում… Միայն թէ…

Մարիան, խորասուզուելով մտքերի մէջ, լռեց:

— Միայն թէ՝ ի՞նչ:

— Հայրդ գտել էր հայրական տունը, աւելի ճիշտ՝ աւերակները: Պեղումների ժամանակ գտել էին քրոջը՝ Հռիփսիմէին, որը դեռ կենդանի էր: Հայրդ ամէն ինչ արել էր՝ նրան փրկելու համար, բայց նա մահացել էր վիրահատական սեղանին՝ հօրդ ձեռքերին: Հայրդ մինչեւ հիմա չի կարողանում իրեն ներել…

— Իսկ Աւետիս հօրեղբա՞յրը:

— Նա գործուղումից վերադարձաւ եւ իր զինուորների հետ մասնակցեց փրկարարական աշխատանքներին: Հայրդ ասում էր, որ նա իրեն արիաբար էր պահում: Նա էլ հենց յուղարկաւորել էր քրոջը. հայրդ չէր կարողացել. շատ վիրահատութիւններ էր ունեցել… Ոչինչ չի պահպանուել. ընտանեկան բոլոր լուսանկարները, փաստաթղթերը, ամէն ինչ մնացել է հողի տակ…

— Իսկ գերեզման կա՞յ:

— Խեղճերը նոյնիսկ գերեզման չունեն, միայն Հռիփսիմէն ունի: Նոյնիսկ Նեկտար մայրիկի գերեզմանը չի պահպանուել…

— Մա՛մ, իսկ ինչո՞ւ ինձ չէք պատմել այդ մասին:

— Դու չէիր հարցնում, իսկ հօրդ համար դա մինչ օրս ցաւոտ թեմա է…

— Ինչո՞ւ:

— Հասկանում ես… Հայրդ չարութեամբ էր լցուած ընտանիքի դէմ, քանի որ նրանք դէմ էին մեր ամուսնութեանը, չեկան մեր տուն, եւ եկան միայն այն ժամանակ, երբ դու ծնուեցիր: Բայց նրանք զղջում էին. ես գաղտնի էի հանդիպում նրանց հետ, եւ հօրդ չէի պատմում: Երբ հայրդ հերթապահում էր հիւանդանոցում, ես ու Նեկտար մայրիկը գնում էինք նրանց տուն: Շատ էինք մտերմացել: Իսկ Նեկտար մայրիկի մահից յետոյ հայրդ ասաց, որ այլեւս անելիք չունենք Հայաստանում, պէտք է հեռանալ: Որքան էլ  համոզեցի, մէկ էր: Նա յամառ էր ու հպարտ եւ չկարողացաւ ներել նրանց… Նոյնիսկ եղբօր եւ քրոջ

հարսանիքներին չմասնակցեց: Ընկերուհուս՝ Անահիտի միջոցով ես տեղեակ էի նրանցից, նրանք՝ մեզնից…

— Գուցէ դա է պատճառը, որ նա սակաւախօս է եւ չի ուզում խօսել ընտանիքի, անցեալի մասին:

— Հնարաւոր է, որդի՛ս… Նա չի կարողանում ներել իրեն, փառապում է եւ տեղը չի գտնում…

— Հասկանալի է:

— Նաեւ Աւետիս հօրեղբայրը…

— Այո՛, գիտեմ, որ նա զոհուել է Ղարաբաղում:

— Հայրդ նրան համոզում էր, որ տեղափոխուի մեզ մօտ, բայց նա այդպէս էլ չհամաձայնուեց: Այդ ժամանակ սկսուեց Ղարաբաղի ազատագրական շարժումը. հօրեղբայրդ առաջիններից մէկն էր, որ գնաց Ղարաբաղ-Արցախ՝ կռուելու: Հետախուզական խմբի հրամանատար էր: Նա նոյնիսկ մասնակցել էր Շուշի քաղաք-ամրոցի ազատագրմանը, որտեղից 1992 թուականի փետրուարից «Գրադ» կայանքներից ուժգնօրէն հրետակոծւում էր Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտը: Շուշիի ազատագրումն անչափ կարեւոր էր հայերի համար. այն մտայնութիւնը կար, որ ով տիրում է Շուշիին, նա տիրում է Ղարաբաղին: Քաղաքն անառիկ էր, բայց 20 տարի առաջ զրոհի էին գնում իրենց գիտակցաբար զոհաբերող մարդիկ: Մայիսի ութին սկսւում է «**Հարսանիք Լեռներում**» գործողութիւնը, որը ղեկավարում էր գեներալ-լեյտենանտ Արկադի Տէր-Թադեւոսեանը՝ լեգենդար Կոմանդոսը: Իսկ արդէն մայիսի իններին Շուշին ազատագրուած էր…

— Իսկ ինչու՞ «**Հարսանիք Լեռներում**»:

— Ազնուօրէն ասած՝ երբեք չեմ մտածել եւ չգիտեմ էլ… Գուցէ այն պատճառով, որ այնտեղ՝ լեռներում, մինչ օրս զուտ հայկական հարսանիքներ են լինում:

— Մա՛մ, ինչքա՜ն բան գիտես:

— Հայերը պէտք է ճանաչեն իրենց հերոսներին:

— Իսկ հօրեղբա՞յրս:

— Շուշին ազատագրելու ժամանակ նա ծանր վիրաւորւում է, բայց շուտով վերադառնում է մարտական դիրքեր: Զոհւում է 1994 թուականի յունուարի պասնվեցին՝ Աղդամը գրաւելու ժամանակ. փրկում է ընկերոջը, ինքը՝ զոհւում: Յետմահու պարգեւատրւում է Արցախի բարձրագոյն պարգեւներով՝ «**Ոսկէ Արծիւ**» եւ առաջին աստիճանի «**Մարտական Խաչ**» շքանշաններով: Նրան յուղարկաւորում են Երեւանում՝ Եռա-

բլուրում, որտեղ հանգչում են արցախեան պատերազմի մարտիկները: Ցիշու՞մ ես՝ հայրիկը գնացել էր՝ պարզեւները սպանալու:

— Այո՛:

Վարդանը նայեց պատին. երեւացող տեղում՝ գեղեցիկ շրջանակների մէջ, փակցուած էին այդ պարգեւները… Հօրեղբայր Աւետիսի՝ արցախեան պատերազմի հերոսի յիշատակը… Վարդանը միշտ հպարտանում էր, որ այդպիսի հօրեղբայր ունի: Նոյնիսկ մի անգամ, այդ պարգեւները կրծքին, դպրոց էր գնացել, որի համար էլ հայրը պատժել էր նրան…

Մինչ Վարդանը խորասուզուած էր մտքերի մեջ, Մարիան աննկատ խոհանոց գնաց՝ հարիսան փաքացնելու… Լռութիւնն ընդհատեց զանգը, այս անգամ՝ դրան զանգը…

— Ես կը բացեմ դուռը, Վարդա՛ն, երեւի Կոլեան է:

Դրան շեմին կանգնած էր Կոլեան՝ ձեռքին ծաղիկների մի փունջ, որոնք այդքան սիրում էր Վարդանի մայրը:

— Ձեզ համար է, մօրաքոյր Մարի՛ա ջան:

— Դու ինձ երես ես տալիս: Սենեա՛կ անցիր, իսկ ես սեղանը գցեմ:

— Ես նորութիւն ունեմ. դուք կ’ուրախանաք:

— Ի՞նչ ես ասում, դէ ուրեմն, կը պատմես, երբ սեղան նստենք:

Վարդանը Կոլեային դիմաւորեց սենեակում՝ գլուխը հպարտօրէն բարձր, որպէսզի վերջինս տեսնի իր նոր խաչը:

— Սա ի՞նչ խաչ է, ո՞րտեղից է:

— Սա իմ նախնիների խաչն է, իմ մեծ պապ Վարդանի: Խնդրեմ, նայի՛ր, հայերէն գրուած է՝ «**ԱՍՏՈՒԱԾ, ՊԱՀԵԱ՛ ՋՎԱՐԴԱՆ**»:

— Օհօ՛, ի՜նչ անսովոր խաչ է, ի՜նչ գեղեցիկ տառեր են: Իսկ ո՞րտեղ էր այն մինչեւ հիմա:

— Երկար պատմութիւն է. մի օր կը պատմեմ…

— Տղանե՛ր, խոհանո՛ց եկէք:

Վարդանը եւ Կոլեան իրար նայեցին: Նրանց աչքերում մի հարց էր առկայծում՝ ո՞վ է առաջինը, եւ նրանք փոքր երեխաների նման վազեցին խոհանոց:

— Զգո՛յշ, զգո՛յշ. միայն այդ էր պակաս՝ խոհանոցս ջարդուփշուր անէք: Ոնց որ երեխաներ…

— Մա՛մ, չէ՞ որ մեր ծնողների երեխաներն ենք:

— Ձեր ամուսնանալու ժամանակն է, իսկ դուք այստեղ խաղեր էք խաղում: Դէ լա՛ւ, նստեցէ՛ք…

— Մարի՛ա մօրաքոյր, իսկ ես գտել եմ իմ կէսին:

— Օho՛, կեցցե՛ս, ոչ թէ ոմանց նման:

Մարիան նայեց Վարդանին:

— Մա՛մ, դէ նա կատակում է. մինչեւ երէկ երեկոյ ոչ մէկը չկար. թէ՞ նա այսքան ժամանակ ինձնից թաքցնում էր: Դէ՛հ, խոստովանի՛ր:

— Չեմ կատակում, լրջօրէն եմ ասում. երէկ էլ քեզ ասացի, որ նորութիւն ունեմ:

— Կո՛լեա, տղա՛ս, պատմի՛ր, մի՛ տանջիր ինձ:

— Դէ ի՞նչ ասեմ: Երէկ՝ համերգի ժամանակ, ծանօթացայ մի գեղեցկուհու հետ. նա ՀԱՅՈՒՀԻ է: Մարի՛ա մօրաքոյր, Դուք չէք պատկերացնում. երազանքս էր ծանօթանալ հայուհու հետ:

— Յիշում եմ, յիշում եմ… իսկ անունն ի՞նչ է:

— Անի, ինչպէս որ Արեւմտեան Հայաստանի քաղաքը:

— Ոմանց բախտը բերում է, չէ՞:

— Վարդա՛ն, մի՛ նախանձիր Կոլեային: Դէ՛հ, պատմի՛ր:

Կոլեան շողացող աչքերով սկսեց պատմել, թէ ինչպէս է ծանօթացել Անիի հետ, թէ ինչ գեղեցկուհի է իր Անին՝ չանտեսելով եւ ոչ մի մանրուք:

— Օ՜հ, Կո՛լեա, այնքան գրաւիչ էիր պատմում, որ չնկատեցիք էլ, թէ ինչպէս կերանք հարիսան, իսկ դու դեռ չես էլ փորձել: Տու՛ր՝ նորից տաքացնեմ:

— Ո՛չ, պէտք չէ:

— Դէ՛հ, ուրեմն կե՛ր:

Լռութիւն տիրեց. Կոլեան ուզում էր արագ ուտել հարիսան, որպէսզի շարունակի իր պատմութիւնը: Իսկ Վարդանը մտածում էր հարազատների մասին…

— Մա՛մ, ահա թէ ինչ եմ մտածում…

— Ի՞նչ:

— Իսկ կարելի՞ է նրանց համար ինչ-որ բան անել:

— Ո՞ւմ համար:

— Դէ Յակոբ պապիկի, Յասմիկի, Աւետիսի, Հռիփսիմէի, Նեկտար մայրիկի…

— Ես մշտապէս աղօթում եմ նրանց համար եւ տարին երկու անգամ յունուարի վեցին եւ դեկտեմբերի եօթին գաթայ

եմ թխում եւ բաժանում քաղցած աղքատներին: Այդպէս է ինձ սովորեցրել Նեկտար մայրիկը. նա ասում էր, որ աղքատները ամենահզօր բարեխօսներն են Աստծու առջեւ, եւ դրա համար էլ նրանց պէտք է կերակրել…

— Լսել եմ, որ կարելի է եկեղեցում ինչ-որ արարողութիւն կամ աղօթք պատուիրել, գիտե՞ս՝ խօսքն ինչի մասին է:

— Այո՛, հոգեհանգստեան արարողութիւն, բայց մենք չունենք հայկական եկեղեցի:

— Իսկ ի՞նչ է, ռուսական եկեղեցում չի՞ կարելի:

— Ո՛չ:

— Ինչպէ՞ս թէ՝ ո՛չ, ինչու՞:

— Պարզապէս ռուսական եկեղեցում չեն աղօթում հանգուցեալ հայերի համար. նրանց համար հայերը հերետիկոսներ են…

— Մա՛մ, դու ինձ ընդհանրապէս խճճեցիր, բայց հայերն էլ են քրիստոնեաներ:

— Չգիտեմ, թէ ինչու, որդի՛ս… Չեն ընդունում, եւ վերջ: Պէտք չէ այդ խնդրանքով դիմել նրանց. աւելի լաւ է՝ զաթայ թխեմ, գնա՛, բաժանի՛ր աղքատներին…

— Ներեցէ՛ք, որ խառնւում եմ խօսակցութեանը: Մեր համադասարանցին մեր եկեղեցու քահանաներից է. կարող ենք նրան խնդրել:

— Իսկ ո՞վ է նա:

— Ի՞նչ է, Վարդա՛ն, չե՞ս յիշում մեր Դանեային: Նա մի քանի տարի առաջ է քահանայ դարձել:

— Դանկա-աթէի՞ստը:

— Հենց նա:

— Ո՞րտեղից իմանայի. չէ՞ որ նա մոլի աթէիստ էր: Մա՛մ, յիշո՞ւ մ ես նրան:

— Դա այն տղա՞ն է, որին դուք միշտ պաշտպանու՞մ էիք: Նրա անուն-ազգանունը, եթէ չեմ սխալւում, Դանիիլ Անդրէ՞եւ էր:

— Այո՛, այո՛, չեմ կարող հաւատալ:

— Ես էլ չհաւատացի, երբ խանութում տեսայ նրան պարեգօտով:

— Ե՞րբ է եղել. դու ինձ ոչինչ չես պատմել:

— Դե մի քանի օր առաջ էր, պարզապէս մոռացել եմ քեզ ասել: Ի դէպ, քեզնից էր հարցնում, հրաւիրեց երկուսիս իր

մօտ՝ Սուրբ Թովմայի եկեղեցի: Այնպէս որ առիթ կայ գնալու եւ միաժամանակ խնդրելու, որ աղօթի քո հարազատների համար: Այնուամենայնիւ, մեր համադասարանցին է, յանուն հին ընկերութեան չի մերժի:

— Մա՛մ, բայց Կոլեան իրաւացի է. կարելի է փորձել, եւ միաժամանակ կը տեսնենք մեր նախկին աթէիստին…

— Օ՛հ, չգիտեմ էլ ինչ ասել…

— Ի դէպ, ես էլ կը խնդրեմ աղօթել իմ Անիի հօր համար. նա զոհուել է 1988 թուականի դեկտեմբերի եօթին՝ Սպիտակի երկրաշարժի ժամանակ…

— Իսկ Անին ինչպէ՞ս է կենդանի մնացել:

— Մարի՛ա մօրաքոյր, նա մօր հետ հրաշքով է փրկուել: Ազգականներից ոչ ոք չի մնացել, բոլորը զոհուել են: Անին ծնուել է 1988 թուականի ամռանը: Մայրը դստեր հետ դուրս է եկել զբօսնելու… Երկրաշարժի ժամանակ նրանք փողոցում են եղել, այդպէս էլ փրկուել են… Իսկ թէ ինչպէս են յայտնուել այստեղ, դեռ չեմ հասցրել հարցնել:

— Այդ ժամանակ զոհուել են նաեւ հօրեղբայր Կարապետի բոլոր հարազատները… Տէ՛ր Աստուած, խաղաղութի՛ւն տուր նրանց հոգիներին…

— Ներեցէ՛ք, չգիտէի…

Լռութիւն տիրեց, եւ իւրաքանչիւրը խորասուզուեց մտքերի մեջ… Լռութիւնը խախտեց Վարդանը.

— Կո՛լեա, այդքան գիտես Անիի մասին, իսկ քո մասին հասցրի՞ր պատմել:

— Նաեւ քո մասին, ձեր ընտանիքի ու հրաշալի հարիսայի մասին:

— Այդ ե՞րբ հասցրիր:

— Մենք այսօր էլ ենք հանդիպել. ես աշխատանքի չեմ գնացել:

— Մա՛մ, տեսնո՞ւմ ես այս ընկերոջը:

— Կո՛լեա, իսկ ինչո՞ւ նրա հետ չեկար:

— Ուզում էի, բայց անյարմար զգացի:

— Քո խօսքերի՛ց ամաչիր. դու հօ գիտես, թէ ինչպէս ենք քեզ սիրում: Քանի դեռ ծնողներդ արշաւախմբի աշխատանքների են մասնակցում, ծնողներդ մենք ենք՝ ես եւ Կարապետը. յուսով եմ՝ դեռ չե՛ս մոռացել:

— Մա՛մ, մի՛ շփոթեցնի տղային:

— Մարի՛ա մօրաքոյր, չեմ մոռացել, համաձայն եմ Ձեզ հետ. մեղաւոր եմ: Առաջին իսկ յարմար առիթի դէպքում կը գամ նրա հետ:

— Դէ լաւ է:

— Դէ՛հ, ժամանակն է. գրասենեակում շատ գործ կայ: Վարդա՛ն, վաղը քո հետեւից կը գամ, եւ կը գնանք Դանկայի մօտ…

— Հեռախօսով կը պայմանաւորուենք:

— Մարի՛ա մօրաքոյր, ինչպէս միշտ, հարիսան հիանալի էր:

— Շնորհակալութիւ՛ն, ահա՛, վերցրու՛ հետդ, տանն էլ կ՚ուտես:

— Շնորհակալութի՛ւն:

Կոլեան վերցրեց իր բաժինն ու արագ դուրս վազեց: Մարիան մնաց խոհանոցում՝ ամանները լուանալու եւ ընթրիք պատրաստելու: Իսկ Վարդանը գնաց իր սենեակ եւ նստեց համակարգչի առջեւ. գործ շատ կար… Կարապետը վերադարձաւ սովորականի նման երեկոյեան… Կեանքը շարունակւում էր…

Առաւօտեան Վարդանը, ինչպէս միշտ նախաճաշելով, տանից դուրս եկաւ: Նրա հետեւից եկաւ Կոլեան: Ամբողջ ճանապարհին նրանք չխօսեցին: Եկեղեցու մօտ նրանց դիմաւորեց Տէր Դանիիլը: Համադասարանցիները վերյիշեցին դպրոցական տարիները… Վարդանին եւ Կոլեային հետաքրքիր էր, թէ ինչպէս է Դանկա-աթէիստը քահանայ դարձել…

— Դէ այն ժամանակ բոլորն էին աթէիստ:

— Բայց դու մարտնչող աթէիստ էիր:

— Մեզանից միայն դու էիր պնդում, որ Աստուած չկայ:

— Այո՛, բայց հոգու խորքում հաւատում էի Նրան…

Վարդանն ու Կոլեան զարմացան եւ համարեայ միաժամանակ հարցրին.

— Ինչպե՞ս թէ հաւատում էիր:

— Հաւատում էի, որ գոյութիւն ունի Մէկը, Որին բոլորը Աստուած են կոչում, սակայն վիրաւորուած էի Նրանից:

— Դա՛նեա՞:

— Կո՛լեա, ոչ թէ Դա՛նեա, այլ Տէ՛ր Դանիիլ:

— Վարդա՛ն, նա չի վիրաւորւում, երբ իրեն Դանեա են ասում: Ճիշդ չէ՞մ, Դա՛նեա:

— Դէ չէ՛, չեմ վիրաւորւում, պարզապէս այդպէս է ըն-դունուած՝ քահանային Տէր Հայր ասել…

— Դէ լա՛ւ, տեսնում եմ, որ դուր չի գալիս: Ներիՙր, Տէ՛ր Դանիիլ, բացատրի՛ր մեզ՝ մեղաւորներիս, ինչու՞ էիր վիրա-ւորուած Աստծուց:

— Յիշու՞մ էք՝ շուն ունէի:

— Ինչպէ՛ս թէ՝ յիշում ենք: Անունը Լադա էր, խեղճը մեքենայի տակ ընկաւ…

— Դէ հա՛, նա միանգամից չսատկեց: Ես աղօթում էի՝ խնդրելով Աստծուն, որ նա չմեռնի… Ասում էի, որ իբր եթէ Նա գոյութիւն ունի, ապա թող շունը չմեռնի… Բայց շունը… Յետոյ ես բոլորին ասում էի, որ Աստուած չկայ:

— Մանկական վիրաւորանք:

— Այո՛, բայց այդ վիրաւորանքը աճում էր ժամանակի ընթացքում, մինչեւ ծանօթներիս մօտ չհանդիպեցի Հայր Դմիտրի Եգորովին: Այն ժամանակ մի լաւ վիճեցինք… Նա Աստծու գործած հրաշքների բազմաթիւ օրինակներ նշեց նաեւ մեր օրերում… Բայց ինձ վրայ ամենահզօր ազդեցութիւնը գործեց սուրբ կրակը, որ Երուսաղէմում հրաշքով վառվում է յոյն պատրիարքի աղօթքով… Ոչինչ չկարողացայ պատասխա-նել Հայր Դմիտրիին… Դէ՛հ, որպէսզի ձեզ չձանձրացնեմ, շուտով նա ինձ մկրտեց եւ դարձաւ խոստովանահայրս, յետոյ հոգեւոր ճեմարան, եւ ահա հիմա ես Տէր Դանիիլն եմ… Նրա օրհնութեամբ գիրք եմ գրում ուղղափառ հրաշքների եւ սրբու-թիւնների մասին…

Տէր Դանիիլի խօսելու ողջ ընթացքում Վարդանը մտա-ծում էր միայն իր հարազատների համար աղօթելու մասին… Նրա ձեռքին անուններով մի թղթիկ էր՝ Սարգսեանների ընտանիք, Նեկտար, Վարդան, Յակոբ, Յասմիկ, Աւետիս, Հռիփսիմէ, Արմինէ եւ Յակոբ, Արսէն եւ Արմէն: Թղթիկը նկատեց նաեւ Տէր Դանիիլը:

— Տէ՛ր Դանիիլ, մի խնդրանք ունեմ:

— Ուրախ կը լինեմ օգնել, Վարդա՛ն:

— Կարո՞ղ ես աղօթել իմ հարազատների համար. ահա՛ անունների ցուցակը:

— Աւելացրո՛ւ նաեւ իմ Անիի հօր անունը՝ Արսէն:

Վարդանը, գրանցելով նաեւ Արսէն անունը, թուղթը փոխանցեց Տէր Դանիիլին: Վերջինս վերցրեց և սկսեց բարձրաձայն կարդալ.

— Սարգսեանների ընտանիք, Նեկտար, Վարդան, Յակոբ, Յասմիկ, Աւետիս, Հռիփսիմէ, Արմինէ եւ Յակոբ, Արսէն եւ Արմէն, Արսէն:

Տէր Դանիիլը գլուխը խոնարհեց եւ լռեց…

— Տէ՛ր Դանիիլ, ինչ-որ բան այն չէ՞:

— Վարդա՛ն, ների՛ր, բայց ես չեմ կարող աղօթել նրանց համար. նրանք ուղղափառ չեն…

— Ինչո՞ւ:

— Նրանք ուղղափառ չեն:

— Բայց քրիստոնեայ են:

— Վարդա՛ն, մայրդ իրաւացի էր: Աւելի լաւ էր՝ գաթայ թխէր, եւ մենք էլ եկեղեցու մօտ աղքատներին բաժանէինք, այլ ոչ թէ կանգնէինք այստեղ եւ լսէինք Տէր Հօրը:

— Կո՛լեա, ճի՛շտ հասկացիր: Ըստ կանոնի՝ ես չեմ կարող աղօթել հայերի համար. նրանք հերետիկոսներ են, քանի որ միաբնակութիւն (մոնոֆիզիտութիւն) են դաւանում. նրանք հեռացել են Տիեզերական Եկեղեցուց…

— Հերետիկոսն ինքդ ես. հայերն առաջինն են 301 թուականին քրիստոնէութիւն ընդունել. նրանց Աստուածաշունչը «Թարգմանութիւնների Թագուհի»-ն է, նրանց այբուբենը՝ աստուածատուր…

— Չեմ ժխտում այդ ամէնը, բայց 451 թուականին իրենց նեղ ազգային հայեացքների պատճառով ընկան հերետիկոսութեան գիրկը:

Վարդանը Կոլեայի եւ Տէր Դանիիլի վիճելու ողջ ընթացքում կանգնել էր քարացած: Մի կողմից, լսելով նրանց, ուզում էր հասկանալ իւրաքանչիւրին, իսկ միւս կողմից՝ նորանոր հարցեր էին ծագում, եւ նա ուզում էր սպանալ դրանց պատասխանները: Սակայն հարցեր տալուն իր մարտնչող վէճով խանգարում էր Կոլեան: Նա աւելին գիտէր հայերի եւ Հայ Եկեղեցու մասին, քան Վարդանը: Իր գիտելիքները նա քաղում էր հայ ռուսալեզու կայքերից եւ փորումներից, որտեղ հայուհի հարսնացու էր որոնում: Նա այնքան էր սիրահարուած ամէն հայկականի, որ անգամ ցանկանում էր մկրտուել Հայ Եկեղեցում, քանի որ կնքուած չէր: Նրա երազանքն էր մկրտուել հենց Էջմիածնում:

— Կո՛լեա, դադարեցրո՛ւ վիճել Տէր Հօր հետ: Նա հաւատում է այն ամէնին, ինչ ասում է, դու հաւատում ես քո ասածին, ես ուզում եմ ինքս գլուխ հանել: Տէ՛ր Դանիիլ, իսկ կարելի՞ է ծանօթանալ Հայր Դմիտրիի հետ:

— Վարդա՛ն, ի՞նչ է, խելքդ թռցրե՛լ ես. նրանք քեզ հերետիկոս են համարում, իսկ դու ուզում ես շփուե՛լ նրանց հետ:

— Կո՛լեա, դա իմ ճանապարհն է, եւ ես ինքս պէտք է այն անցնեմ:

— Ինքդ, ուրեմն ինքդ, չեմ խանգարի քեզ:

— Դէ ի՛նչ, Տէ՛ր Դանիիլ, կը ծանօթացնե՞ս:

Կոլեան առանց հրաժեշտ տալու գնաց դէպի մեքենան, իսկ Տէր Դանիիլն անչափ ուրախացաւ՝ լսելով Վարդանի խնդրանքը…

— Յանուն Քրիստոսի՝ հենց վաղը՝ երեկոյեան, ես նրա մօտ՝ վանք եմ գնում՝ խոստովանութեան, մէկ-երկու օր խոսկալու, քանի որ Մեծ Պահքն է սկսւում… Եթէ ուզում ես, հետեւիցդ կը գամ:

— Տէ՛ր Դանիիլ, ահա իմ այցեքարտը, զանգահարի՛ր ինձ:

— Տէ՛րը փրկի:

Տէր Դանիիլն օրհնեց Վարդանին. Կոլեան սպասում էր մեքենայի մէջ: Ամբողջ ճանապարհին նրանք լուռ էին… Կոլեան զղջում էր, որ Վարդանին ծանօթացրեց նախկին աթէիստի հետ…Վարդանն էլ ուզում էր ընկերոջը բացատրել, բայց բառեր չէր գտնում խօսակցութիւնը սկսելու համար… Վերջապէս, մտքերը հաւաքելով, նա սկսեց.

— Կո՛լեա ջան, մի՛ նեղացիր ինձնից… Ինձ ճի՛շտ հասկացիր…

— Իսկ ի՞նչ հասկանամ. զղջում եմ, որ քեզ քարշ տուեցի Դանկայի մօտ… Աւելի լաւ էր…

— Ո՛չ, ընդհակառակը, մի՛ զղջայ. ես շնորհակալ եմ քեզ՝ այս հանդիպման համար: Դա իմ ճանապարհն է, իմ խաչի ճանապարհը:

— Ի՞նչ ճանապարհ. ի՞նչ ես ասում:

— Ահա այս խաչը, իմ նոր խաչը. սա պատկանում էր իմ մեծ պապ Վարդանին, եւ այն ինձ փոխանցել է նրա կինը՝ մեծ պապս՝ Նեկտարը…

— Եւ ի՞նչ:

— Ես երկու տարեկան էի, երբ նա խաչը փոխանցել է ծնողներիս եւ ասել, որ երբ Վարդանը սկսի փնտռել իր ճանապարհը, ապա հենց այս խաչը կ'օգնի նրան գտնել այն, և դա կլինի նրա խաչի ճանապարհը:

— Այդ դէպքում ես ոչինչ չեմ կարող ասել. քո բնաւորութիւնն այդպիսին է, յամառ: Մշտապէս դո՛ւ ես ուզում հասկանալ, այլոց չես վստահում:

— Բնաւորութիւնս այդպիսին է, բայց սա այլ դէպք է: Հաւատա՛ ինձ, այնպիսի զգացողութիւն է, որ այս խաչն է ինձ ուղղորդում…

— Առեղծուածային ինչ-որ բան է:

— Ահա եւ հասանք: Կը մտնե՞ս մեզ մօտ:

— Ո՛չ, Անիս սպասում է:

— Տեսնում եմ, որ մինչեւ ականջներդ սիրահարուած ես: Նոյնիսկ կարմրեցիր, եւ աչքերդ փայլեցին, երբ նրա մասին ասացիր: Ե՞րբ ես ծանօթացնելու:

— Մի օր կը ծանօթացնեմ: Կը տեսնենք, թէ ինչպէս կը խօսես, երբ ինքդ սիրահարուես: Դէ լա՛ւ, ամէն ինչ կարգին է: Իմացի՛ր՝ ինչ էլ լինի, եղբայրդ միշտ կողքիդ է:

— Չեմ էլ կասկածում. փոխադարձաբար: Կրկի՜ն շնորհակալութիւն: Ողջո՛յն Անիին:

Կոլեան ժպտաց եւ սլացաւ իր Անիի մօտ, իսկ Վարդանն ուրախ-ուրախ տուն բարձրացաւ…

Մարիան սպասում էր որդուն, իսկ Կարապետը, ինչպէս միշտ, սենեակում դասախօսութեան էր նախապատրաստւում: Վարդանն ուրախ էր, որ շուտով կարող է ստանալ իր անվերջանալի հարցերի որոշ պատասխաններ, բայց եւ այնպէս անհանգստանում էր, թէ ինչ կասի մայրը. չէր ուզում նրան վշտացնել…

— Դէ ի՞նչ, որդի՛ս, ի՞նչ ասաց Դանեան:

— Մա՛մ, իրաւացի էիր. նոյնիսկ ընկերութիւնը դեր չըխաղաց: Տէր Դանիիլը հրաժարուեց աղօթել, որովհետեւ ըստ կանոնի՝ նրան չի թոյլատրւում…

— Ես զգուշացնում էի…

— Բայց գիտե՞ս ինչ, ի՞նչ ասեմ քեզ:

— Ինչ որ կայ, ասա՛:

— Վաղը՝ երեկոյեան, Տէր Դանիիլի հետ երկու օրով գընալու եմ նրա խոստովանահօր մօտ: Ես բազմաթիւ հարցեր ունեմ նրան ուղղելու, որոնց դու չես կարող պատասխանել…

Մարիան զգուշացաւ… Վարդանի պատասխանը նրան դուր չեկաւ…

— Իսկ քեզ պէ՞տք են նրա պատասխանները. ինչքան պատասխաններ ես գտնում, այնքան նոր հարցեր են ծագում. շուտով բոլորովին կը խճճուես… Ինձ դուր չի գալիս մտադրութիւնդ…

— Մա՛մ, մի՛ մտահոգուիր. ես հաւատում եմ, որ Վարդանի եւ Նեկտարի խաչը ինձ կ'ուղղորդի. դա իմ ճանապարհն է, որը ե՛ս պէտք է անցնեմ:

— Քո հաւատով թող քեզ տրուի: Յուսով եմ: Աստուա՛ծ քեզ օգնական:

— Մա՛մ, ների՛ր, ուզում եմ մենակ մնալ, մտքերս ի մի բերել… Հայրիկին ինքդ ասա՛, որ երկու օր տանը չեմ լինելու:

— Որդի՛ս, չեմ խանգարի: Բարի՛ գիշեր:

— Բարի՛ գիշեր, մա՛մ ջան:

Վարդանը համբուրեց մօրը եւ ամուր-ամուր գրկեց նրան… Մարիան սենեակում մենակ մնաց… Ծանրութիւնը ճնշում էր հոգին. նա վախենում էր այդ ուղեւորութիւնից…

## «ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ»

Ժամանակը շատ արագ թռաւ, եւ Վարդանն արդէն սլանում էր Հայր Դմիտրիի մօտ: Տէր Դանիիլն ամբողջ ճանապարհին պատմում էր իր գրքի մասին. այն ուղղափառ սրբութիւնների եւ հրաշքների մասին էր: Խօսում էր ուղղափառութեան կարեւորութեան մասին, որ իբր այդ հրաշքներն ապացուցում են ուղղափառութեան ճշմարտացիութիւնը. սա էր գիրքը գրելու նպատակը… Իսկ ամենակարեւոր հրաշքը Տէր Դանիիլի համար՝ սուրբ կրակի հրաշքն էր, որն իջնում է Երուսաղէմում: Եւ կեանքում նրա գլխաւոր երազանքը այն տեսնելն է. դրա համար էլ նա Երուսաղէմ ուխտագնացութեան համար ինչ-որ ձեւով պէտք է օրհնութիւն խնդրի խոստովանահօրից: Վարդանը նաեւ իմացաւ, որ Ջափիկն այս տարի համընկնում է իր ծննդեան օրուան՝ ապրիլի 24-ին: Այս տեղեկութիւնը Վարդանի համար մի ինչ-որ հրաշք էր, որի մասին չէր ուզում ասել Տէր Դանիիլին. գուցէ նա իրեն չհասկանար: Այս ամէնի մէջ նա տեսնում էր իր խաչի ճանապարհը…

Ճանապարհի մէկ ժամը շատ արագ անցաւ. արդէն վանք էին մտնում, որտեղ նրանց էր սպասում վանքի վանահայր Հայր Դմիտրի Եգորովը… Խոշոր կազմուածքի տէր մի մարդ, նախկին սպայ՝ սպիտակ փոքրիկ մօրուքով, մոտ վաթսուն տարեկան, լրջախոհ հայեացքով… Տէր Դանիիլը մօտեցաւ՝ օրհնութեան, նրան հետեւեց եւ Վարդանը… Վարդանը եւ Տէր Դանիիլը միասին տեղաւորուեցին վանքի հիւրանոցի սենեակներից մէկում…

— Վարդա՛ն, Հայր Դմիտրին քեզ կ'ընդունի վաղը՝ ուխտաւորների նախաճաշից յետոյ, թէեւ վաղը Մեծ Պահքի առաջին օրն է. նա առաջին երեք օրը ոչ ոքի չի ընդունում. քեզ համար պատիւ կը լինի… Նոյնիսկ ինձ չի ընդունի… Դրա համար հիմա եմ գնում, այնպէս որ քեզ մենակ եմ թողնում սենեակում: Այնուհետեւ կը գնամ ժամերգութեան: Մի՛ փխրիր…

— Ես էլ կը հանգստանամ. շատ եմ յոգնել… Բարի՛ գիշեր:

— Տէ՛րը փրկի:

Վարդանը մենակ մնաց փոքրիկ սենեակում… Առաւօտեան հինգին նրան արթնացրեց Տէր Դանիիլը.

— Դէ վե՛ր կաց, Վարդա՛ն, շուտով ժամերգութիւնը կը սկսուի. պատրաստուի՛ր:

— Իսկ ի՞նչ պէտք է անել:

— Լուացուի՛ր, հագնուի՛ր, եւ գնանք…

5:30-ին նրանք արդէն փաճարում էին՝ ի պապիւ «Սուրբ Աստուածածնի՝ Տաճարին Ընծայման»: Եկեղեցում շատ հոգեւորականութիւն և ժողովուրդ կար: Չնայած իրադրութիւնը Վարդանին անսովոր էր, այդուհանդերձ եկեղեցին նրան դուր եկաւ շքեղութեամբ եւ հոգեւորականութեան երգեցողութեամբ…Բոլորը կանգնած էին վայելուչ կերպով, ոմանք ծնկի էին եկել, ոմանք անընդհատ ծնրադրում եւ խաչակնքւում էին… Մոմեր, կանթեղներ, խունկ… Նա չնկատեց էլ, թէ ինչպէս ժամանակը սահեց-անցաւ… Թւում էր, թէ երկնքում է, եւ հենց այդ ժամանակ էլ Տէր Դանիիլը նրան ուշքի բերեց.

— Վարդա՛ն, Վարդա՛ն, ժամերգութիւնն աւարտուեց, գնանք սեղանատուն. շուտով նախաճաշն է, բայց եթէ չես ուզում, կարող ես և չնախաճաշել…

— Դէ ո՛չ, շատ եմ ուզում ուտել… Իսկ ժամը քանի՞սն է:

— Առաւօտեան ութը: Այդ դէպքում նախաճաշից յետոյ հետեւիցդ կը գամ, եւ մենք կը հանդիպենք Հայր Դմիտրիի հետ. նա արդէն քեզ է սպասում …

Վարդանը սովոր էր նախաճաշելու եւ առանց նախաճաշի չէր կարող: Մայրն առանց նախաճաշելու նրան երբեք փանից դուրս չէր թողնի, այնպէս որ նախաճաշելը սովորութիւն էր: Սեղանատանը շատ ուխտաւորներ կային Ռուսաստանի տարբեր ծայրերից. Վարդանն անգամ երեխաների նկատեց… Սեղանատանը սպասարկում էին հենց ուխտաւորները. այդպիսին էր նրանց աշխարհանքը…

— Ների՛ր՝ ստիպւեցի սպասել:

— Ոչի՞նչ, Տէ՛ր Դանիիլ:

— Դէ՛հ, ինչպիսի՞ն էր նախաճաշը, համե՞ղ էր:

— Այո՛, շատ համեղ էր:

— Կը թողնեմ քեզ Հայր Դմիտրիի հետ. ես գործեր ունեմ…

— Իսկ որտե՞ղ է նա:

— Հիւրանոցում է սպասում. դուք կը շփուէք մեր սենեակում… Ահա եւ հասանք… Օրհնեցէ՛ք, Հա՛յր Դմիտրի:

— Տէ՛րը կ՚օրհնի:

— Դէ՛, ես ձեզ մենակ թողնեմ: Փրկի՛ր, Տէ՛ր:

Տէր Դանիիլն արագ հեռացաւ, իսկ Վարդանը եւ Հայր Դմիտրին սենեակ մտան… Նրանք լուռ նստել էին դէմ դիմաց… Լռութիւնը խախտեց Հայր Դմիտրին.

— Դե՛հ, ի՞նչ է քեզ տանջում, ի՞նչ ես ուզում:

— Հարցեր շատ կան, սակայն ինձ համար կարեւոր է մէկը՝ ինչո՞ւ ուղղափառները չեն կարող աղօթել հանգուցեալ հայերի համար: Դուք նրանց հերետիկոսնե՞ր էք համարում: Ինչո՞ւ. չէ՞ որ մենք էլ ենք քրիստոնեայ, ինչպէս եւ բոլորը:

— Քիչ է լինել քրիստոնեայ, պէտք է նաեւ ուղղափառ լինել:

— Ինչպէ՞ս թէ, ի՞նչ է քրիստոնէութիւնը եւ ուղղափառութիւնը տարբե՞ր հասկացութիւններ են:

— Ուղղափառութիւնը քրիստոնէութեան մաքրութիւնն է:

— Իսկ ի՞նչ է, հայերի հաւատքը մաքուր չէ՞:

— Կարելի է ասել՝ այո՛:

— Բայց չէ՞ որ հայերը հաւատում են Քրիստոսին:

— Հաւատում են, բայց՝ ոչ ճիշտ, այդ պատճառով էլ նրանց հաւատքը չի կարող մաքուր՝ ուղղափառ լինել:

— Իսկ ի՞նչ է, հայերի հաւատքը մի՞շտ է այդպիսին եղել:

— Ո՛չ, հինգերորդ դարում նրանք հեռացան ուղղափառութիւնից, երբ չընդունեցին 451 թուականին կայացած Քաղկեդոնի IV Ժողովը:

— Ի՞նչ Ժողով:

— Առաքեալներից յետոյ բազմաթիւ կեղծ վարդապետներ էին գալիս: Նրանք իւրովի էին ընկալում առաքելական ուսմունքը: Եկեղեցին մշտապէս պայքարում էր կեղծ վարդապետների դէմ: Գումարւում էին Տիեզերական Ժողովներ, որոնք բանադրում էին կեղծ ուսմունքը, եւ այդպիսով պահպանում ու պաշտպանում քրիստոնէութեան մաքրութիւնը, այսինքն՝ ուղղափառութիւնը: Քանի դեռ հայերն ընդունում և ճանաչում էին այդ Ժողովները, մնում էին ուղղափառութեան գրկում: Այդպէս նրանք ընդունեցին առաջին երեք Ժողովները, սակայն չորրորդ դարի առաջին կէսին յայտնուած հերետիկոս Եւտիքեսը համարում էր, որ Քրիստոսը միայն մէկ՝ աստուածային բնութիւն ունի: IV Ժողովը հանդէս եկաւ նրա հերետիկոսութեան դէմ, նզովեց եւ որոշեց, որ Քրիստոսը ոչ թէ մէկ, այլ երկու բնութիւն ունի:

— Ձեր կարծիքով հայերն ընդունում են Քրիստոսի միայն մե՞կ բնութիւնը:

— Այո՛, եւ դրա համար էլ կոչւում են միաբնակներ:

— Բայց ի՞նչ տարբերութիւն՝ երկու թէ մէկ բնութիւն. գլխաւորը Քրիստոսին հաւատալն է:

— Տարբերութիւնն ահռելի է. եթէ հայերի նման ընդունենք միայն աստուածային բնութիւնը, նշանակում է՝ Քրիստոսը մարդ չեղաւ, եւ այդ պատճառով էլ մեր փրկութիւնը երեւութական է: Աստուած իր էութեամբ եւ բնութեամբ չի կարող մեռնել, իսկ ըստ հայերի՝ նա մեռնում է, սակայն դա անհնարին է:

— Իսկ ի՞նչ է, հայերը չե՞ն հասկանում դա:

— Հպարտութիւնից կուրացած՝ չեն կարողանում տեսնել նոյնիսկ պարզ ճշմարտութիւնը:

— Իսկ ո՞րն է հայերի հպարտութիւնը:

— Նրանք, ելնելով քաղաքական եւ իրենց նեղ ազգային նկատառումներից, չընդունեցին Քաղկեդոնի Ժողովը. նրանց թւում էր, որ եթէ ընդունեն Ժողովը, կը յայտնուեն Բիւզանդիայի կամ Հռոմի իշխանութեան ներքոյ, դրա համար էլ որոշեցին, որ աւելի լաւ է հետեւել միաբնակութեանը, քան ուղղափառութեանը: Անգամ չմասնակցեցին Ժողովին:

— Եւ միա՞յն:

— Ո՛չ, հայերը յունարէն լաւ չգիտէին, եւ սկզբում ճիշտ չէին հասկացել Ժողովի որոշումը. նրանց թուացել էր, որ Ժողովն է ընկել հերետիկոսութեան գիրկը… Բայց յետագայում գլուխ բարձրացրեց նրանց հպարտութիւնը:

— Դէ լա՛ւ, իսկ աւելի որոշակի ինչպէ՞ս է դրսեւորւում նրանց միաբնակութիւնը: Դէ չընդունեցին Ժողովը, յետոյ ի՞նչ:

— Նրանք չեն խոստովանում Քրիստոսի երկու բնութիւնները, այլ միայն մէկը. դա նրանց հաւատամքում կայ: Եւ ամենագլխաւորը՝ Երեքսրբեանն է, որին նրանք յաւելում են՝ «*որ խաչեցար վասն մեր*»:

— Ի՞նչ Երեքսրբեան:

— Դա հոգեւոր երգ է՝ «*Սուրբ Աստուած, Սուրբ և Հզօր, Սուրբ և Անմահ, ողորմեա՛ մեզ*». այն ուղղուած է Սուրբ Երրորդութեանը: Եւ քանի որ հայերը հաւատում են, որ Քրիստոսի մէջ մէկ բնութիւն է եւ այն էլ աստուածային, ապա եւ աւելացրեցին՝ «*որ խաչեցար վասն մեր*»:

— Այսինքն՝ դուրս է գալիս, որ խաչուել է ողջ Սուրբ Երրորդութիւնը:

— Կեցցե՛ս. արդէն հասկանում ես: Դուրս է գալիս, որ Քրիստոսի մէջ խաչուել ու չարչարուել էր Աստուածութիւնը, այլ ոչ թէ մարդկութիւնը, իսկ սա միաբնակութիւն է:

— Չգիտեմ էլ ինչ ասել…

— Հասկանում եմ քեզ, բայց սա դեռ ամէնը չէ: Հայերն այդպէս էլ չցանկացան ուղղափառութիւն ընդունել: Ուղղափառները փորձեր էին անում, բայց ամէն ինչ զուր էր: Իրենց յամառութեան պատճառով նրանք չընդունեցին նաեւ յաջորդ երեք Ժողովները՝ այդպիսով փակելով ուղղափառութեան գիրկը վերադառնալու դռները:

— Իսկ ինչի՞ մասին էին այդ Ժողովները:

— 553 թուականին տեղի ունեցաւ Կոստանդնուպոլսոյ Ժողովը: Հայերը ուղղափառութիւն ընդունելու հնարաւորութիւն ունէին, սակայն նրանք նորից չեն ընդունում: Յետոյ, հայերը ընկնում են մէկ այլ հերետիկոսութեան՝ միակամութեան (մոնոֆելիտութեան) գիրկը, այսինքն՝ նրանք իրենց ճշմարտացիութիւնն ապացուցելու համար սկսում են դաւանել Քրիստոսի միայն մէկ՝ Աստուածային կամք ունենալը և այդպիսով հաստատում են իրենց միաբնակութիւնը: Դրա համար էլ 681 թուականին տեղի է ունենում VI Ժողովը, որի ժամանակ բանադրւում է միակամութիւն նոր հերետիկոսութիւնը: Հայերն այս անգամ էլ չեն զղջում… Տեսնո՞ւմ ես՝ ինչպէս է հպարտութիւնը մարդուն զգում խաւարի մէջ:

— Բայց անհնար է, որ գոնէ մի մարդ Հայաստանում չհասկանար այս պարզ ճշմարտութիւնը:

— Դէ ի՞նչ կարող է անել հասարակ մարդը, եթէ Եկեղեցու հովուապետերն այդպիսին են: Դու իրաւացի ես, մի՛ մտահոգուիր. մշտապէս եւ բոլոր ժամանակներում գտնուել են հայեր, որոնք, հասկանալով միաբնակութեան մոլորութիւնը, ուղղափառութիւն են ընդունել: Նրանց համար գլխաւորը հոգու փրկութիւնն էր, յաւերժութիւնը, ոչ թէ ազգային հպարտութիւնը: Մի քանի փասնեակ հայ ուղղափառ բիւզանդական կայսրեր կան: Անգամ Ռուսիոյ սուրբ մեծ իշխան Վլադիմիրի կինը՝ իշխանուհի Աննան, ուղղափառ հայուհի էր:

— Չի կարող պատահել:

— Ամէն ինչ կարող է. Աստուած մեծ է. Նա սիրում է բոլորին և չի ցանկանում մեղաւորների կործանումը. ամբարտաւաններին ընդդիմանում է, խոնարհներին՝ տալիս Իր շնորհը:

— Չգիտէի այս ամէնը:

— Փա՛ռք Աստծու, շատ հայեր են ուղղափառութիւն ընդունում եւ մեր օրերում: Ես շատ հայ հոգեզաւակներ ունեմ՝ հոգեւորականներ, վանականներ, և անգամ եպիսկոպոս կայ: Այստեղ՝ վանքում, մի քանի վանական կայ, եւ նոյնիսկ Երուսաղէմում՝ աբեղայ Հայր Վադիմը:

— Իսկ ի՞նչ եղաւ VII Ժողովը:

— 787 թուականին գումարւում է Եօթներորդը՝ ընդդէմ պատկերամարտութեան: Ժողովը նշում է՝ քանի որ Քրիստոսը մարդ էր, ապա թոյլատրելի են Քրիստոսի պատկերները և սրբապատկերները: Պատկերամարտիկները հիմնականում միաբնակներ էին, որոնք չէին ընդունում Քրիստոսի մարդկային բնութիւնը, այդ պատճառով էլ չէին ընդունում ո՛չ սրբապատկերներ, ո՛չ էլ Քրիստոսի պատկերներ… Ուղղափառութիւնը շատ սրբապատկերներ, պատկերակալներ ունի, որ հայերը չունեն: Մենք նոյնիսկ ունենք սրբապատկերների տօներ, կան հրաշագործ սրբապատկերներ: Մարդիկ ապաքինւում են, սրբապատկերներից մեռոն է ծորում… Հայ Եկեղեցին չունի այս ամէնը: Հաւատա՛ խօսքիս…

— Ոչինչ չունեմ ասելու: Իսկ կարող էք ասել՝ ինչո՞ւ են Հայ Եկեղեցին կոչում նաեւ գրիգորեան:

— Դէ,՛ որովհետեւ հայերը քրիստոնէութիւնն ընդունել են Սուրբ Գրիգոր Լուսաւորչից, որքան յիշում եմ, 301 թուականին, դրա համար էլ՝ գրիգորեան:

— Այո՛, Դուք ճիշտ էք, 301 թուականին: Նրանք առաջինն են, որ քրիստոնէութիւն են ընդունել:

— Պարզ ճշմարտութիւն է՝ առաջինները վերջիններ կը լինեն …

Վարդանը լիովին ջախջախուած էր: Նա արդէն սկսում էր զղջալ, որ չլսեց Կոլեային: Գուցէ աւելի լաւ կը լինէր, որ չիմանար այս ամէնը, իսկ գուցէ դա Տիրոջ կամքն է: Նա պէտք է իմանար ճշմարտութիւնը. գուցէ Տէրն ի՞նքն է ուղղորդում իրեն: Իսկ գուցէ նաեւ իր խա՞չը: Այդ դէպքում ի՞նչ են լինելու իր հարազատների հոգիները: Վարդանը ոչ մի կերպ չէր ցանկանում ընդունել, որ իր հարազատները չեն փրկուելու… Իսկ

միգուցէ նրանք բոլորը ուղղափա՞ռ էին, բայց ո՛չ, Նեկտար մայրիկը Հայ Եկեղեցի էր յաճախում, այնտեղ աղօթում…

— Իսկ կարո՞ղ էք հայերի ուղղափառ չլինելու էլի օրինակներ բերել:

— Օրինակները բազմաթիւ են…

— Օրինակ…

— Օրինակ՝ հայերը չունեն Ապաշխարութեան Սուրբ Խորհուրդը. նրանք չեն խոստովանւում, ինչպէս՝ ուղղափառները:

— Իսկ ինչպէ՞ս պէտք է խոստովանուել:

— Դէ՛, մարդը պէտք է անհապաղ խոստովանի քահանային ամէն մի մեղք, իսկ յետոյ եպիտիմիա ստանայ:

— Իսկ ի՞նչ է եպիտիմիան:

— Դա իւրատեսակ պատիժ է, որ սահմանւում է խոստովանութիւնից յետոյ, ինչպէս օրինակ՝ պահեցողութիւնը, աղօթքը եւ բարեպաշտութեան այլ գործեր… Հայերն այսպիսի բան չունեն:

— Պահեցողութիւն եւ աղօթք չունե՞ն, ինչպէ՞ս թէ:

— Նկատի ունեմ եպիտիմիա հասկացութիւնը, իսկ աղօթքը եւ պահեցողութիւնը առանց ապաշխարանքի ցանկալի չեն Աստծուն:

— Հասկանալի է…

— Չկայ նաեւ վանականութիւն. իսկ եթէ չկայ վանականութիւն, ուրեմն չկան եւ աղօթողներ, իսկ եթէ չկայ աղօթքի կեանք, չեն կարող լինել եւ սրբեր: Հայ Եկեղեցում անգամ սրբեր չկան… Աւելի ճիշտ՝ մինչեւ IV Ժողովը կային, իսկ քանի որ հայերը հեռացան ուղղափառութիւնից, ապա հեռացան նաեւ Սուրբ Հոգու շնորհից: Սրբերը հենց նրանով են սուրբ, որ նրանց մէջ է բնակւում Սուրբ Հոգին… Ուրեմն եւ հետեւութիւնե՛ր արա…

— Մի՞թէ ոչ մէկը չկայ:

— Չկայ, որովհետեւ սրբերի գործերն են խօսում հենց իրենց մասին:

— Ինչպէ՞ս թէ:

— Նրանք հրաշքներ էին գործում, նրանց աղօթքներով մարդիկ էին ապաքինւում, սա էլ ապացուցում էր նրանց սրբութիւնը… Հրաշքների մասին հարցրու՛ Տէր Դանիիլին… Նա կը պատմի…

— Գիտեմ. նա գիրք է գրում հրաշքների մասին…

— Հարցրու՛, հարցրու՛ նրան…

— Իսկ ինչո՞ւ են հայերը Սուրբ Ծնունդը նշում յունուարի 6-ին, իսկ ուղղափառները՝ յունուարի 7-ին:

— Ահա՛, բոլոր քրիստոնեաները, հայերից բացի, Սուրբ Ծնունդը նշում են դեկտեմբերի 25-ին (յունուարի 7-ին), պարզապէս ոմանք նշում են յուլեանական, իսկ միւսները՝ գրիգորեան օրացոյցով: Այդպէս էլ Մկրտութեան փօնը բոլորը նշում են յունուարի 6-ին (յունուարի 19-ին), բայց ոմանք՝ յուլեանական իսկ միւսները՝ գրիգորեան օրացոյցով:

— Իսկ ի՞նչ կապ ունեն օրացոյցները:

— Օրացոյցնե՞րը. անչափ կարեւոր է, թէ յատկապէս ո՛ր օրացոյցով են նշւում փօները: Եթէ կարեւոր չլինէր, Տէրը սուրբ կրակը կ'ուղարկէր նաեւ նոր օրացոյցով: Սուրբ կրակը հաստատում է յատկապէս յուլեանական, այլ ոչ թէ գրիգորեան օրացոյցի կարեւորութիւնը: Եթէ Տիրոջն այդպէս է ցանկալի, ովքե՞ր ենք մենք, որ փոխենք օրացոյցը:

— Այո՛, իրաւացի էք. ովքե՞ր ենք մենք…

— Հայերը նաեւ շատ այլ բաներ են փոխել… Օրինակ՝ Պատարագի ժամանակ գինուն ջուր չեն աւելացնում, օգտագործում են անթթխմոր հաց:

— Որքա՞ն կարեւոր է դա:

— Անչափ կարեւոր է. ուղղափառութեան համար ամէն ինչ կարեւոր է: Պատարագի ժամանակ գինուն ջուր չաւելացնելն ու անթթխմոր հաց օգտագործելը հաւաստում են, որ նրանք չեն ընդունում Քրիստոսի մարդկային բնութիւնը: Ջուրը, ի դէպ, մենք երկու անգամ ենք ջուր աւելացնում, եւ թթխմորը վկայում են յատկապէս այն, որ Քրիստոսը մարդկային բնութիւն ունի: Հասկանո՞ւմ ես, նրանց բոլոր խնդիրները միաբնակութիւն ընդունելու պատճառով են… Եւ դրա համար էլ ամէն ինչ փոխեցին իրենց յարմար ձեւով՝ իրենց մոլորութիւնն արդարացնելու համար:

— Բառեր չեմ գտնում:

— Էլ չեմ ասում այն մասին, որ սխալ են խաչակնքւում. նրանք՝ ձախից աջ, իսկ ուղղափառները՝ աջից ձախ: Ա՛յ այսպէս…

Վարդանը գլուխը խոնարհեց. նա վերջնականապէս ջախջախուած էր… Հայր Դմիտրին զգում էր մօտալուտ յաղթանակը, ուղղափառութեան յաղթանակը: Նա դեռ երկար էր

պատմում Վարդանին ուղղափառութեան, Աստծու՝ ի փառս ուղղափառութեան գործած հրաշքների մասին… Նա հրաշալիօրէն էր կարողանում համոզել նորեկներին. զուր չէր բանակում երկար տարիներ քաղաքական հարցերով տեղակալ եղել: Դեռեւս չէր եղել մի որեւէ դէպք, որ Հայր Դմիտրին չկարողանար համոզել «հերետիկոսին» եւ չդարձնէր ուղղափառութեան դաւանանքի: «Հերետիկոսներին» փրկելը համարելով իր առաքելութիւնը՝ կտրականապէս խուսափում էր, սակայն, «խելացի հերետիկոսների» հետ (ինչպէս ինքն էր նրանց անուանում) հանդիպումներից. նրանք կարող էին վիճաբանել Հայր Դմիտրիի հետ եւ պաշտպանել իրենց հաւատքը: Նա գտնում էր, որ այդպիսիք արդէն կորսուած են ուղղափառութեան համար, և չարժէ ժամանակ վատնել…

Վարդանն էլ մտածում էր իր հանգուցեալների մասին. նրան հանգիստ չէր տալիս այն միտքը, որ իր հարազատները մահացել են՝ ուղղափառ չլինելով… Երբ Հայր Դմիտրին պատմում էր հրաշքի հերթական պատմութիւնը, Վարդանը ընդհատեց նրան՝ հարցնելով.

— Հա՛յր Դմիտրի, ներեցէ՛ք, որ ընդհատում եմ Ձեզ. հարց ունեմ:

— Լսում եմ:

— Իսկ ի՞նչ կը լինի այն հայերի հետ, որոնք մահացել են՝ ուղղափառ չլինելով: Նրանք կը փրկուե՞ն, թէ՞ ոչ:

— Փրկութիւնը միայն ուղղափառ եկեղեցւոյ մէջ է, բայց կախուած է նրանից, թէ նրանք լսե՞լ են արդեօք ուղղափառութեան մասին, թէ՞ ոչ: Եթէ լսել են եւ չեն ընդունել, արդէն հասկանալի է…

— Իսկ եթէ չեն լսե՞լ:

— Դէ՜հ… Ուրեմն… Փրկուելու հաւանականութիւն կը լինի, բայց նրանք չեն լինի այն փառքի մեջ, ինչ ուղղափառները…

— Այդ դէպքում կարո՞ղ էք աղօթել իմ հարազատների համար: Ազնւօրէն ասած՝ չգիտեմ՝ նրանք լսե՞լ են ուղղափառութեան մասին, թէ՞ ոչ…

— Ո՛չ, չեմ կարող, քանի որ, ըստ կանոնի, սահմանուած չէ:

— Այդ դէպքում ի՞նչ անեմ:

— Մտածիր հիմա քո՛ հոգու մասին:

— Ինչպէ՛ս մտածեմ հոգուս մասին. ինձ թւում է, որ դա քրիստոնէաբար չէ:

— Բայց իբրեւ ազգական՝ ինքդ կարող ես աղօթել Աստծուն:

— Ինչպէ՛ս թէ, ուրեմն ինքս կարո՛ղ եմ նրանց համար աղօթել Աստծուն, եւ Նա կը լսի՞:

— Ոչ ոք չի արգելում աղօթել, պարզապէս Եկեղեցին չի աղօթում հանգուցեալ հերետիկոսների համար:

— Իսկ աղօթքից բացի ինչո՞վ կարող եմ օգնել նրանց. մայրս զաթայ է բաժանում քաղցածներին. դա ճի՞շտ է:

— Գաթայ լաւ է, բայց եթէ ցանկանում ես օգնել, պէտք է մտածես հոգուդ փրկութեան մասին: Ահա այսօր դու իմացար ուղղափառութեան ճշմարտութիւնը: Այժմ ընտրութիւնը քոնն է, եւ շատ բան կախուած է քո ընտրութիւնից: Եթէ շատ հայերի նման ընդդիմանաս ճշմարտութեանը, ինչպէ՛ս ես պատկերացնում, որ Աստուած լսի քեզ: Չէ՞ որ Նա ընդդիմանում է ամբարտաւաններին, իսկ խոնարհներին՝ տալիս Իր շնորհը. կարող ես նաեւ Աստծուն զայրացնել: Ահա 1915 թուականին Աստուած պատժեց հայերին նրանց հպարտութեան պատճառով: Եթէ ժամանակին ուղղափառութիւն ընդունէին, Տէրը չէր ուղարկի այլազգիներին…

— Դուք ուզում էք ասել, որ Հայոց Եղեռնը Աստծու պատիժն է, որովհետեւ նրանք ուղղափառութիւն չընդունեցի՞ն:

— Հենց այդպէս:

— Բայց ինչպէ՛ս կարող է լինել. չէ՞ որ Աստուած…

— Տէրը սիրում է բոլորին. իսկ ում սիրում է, նրան էլ խելքի բերելու համար պատժում է, որպէսզի փրկի հոգիները:

— Բայց ինչպէ՛ս կարելի է խելքի բերել զոհուածներին. նրանք արդէն զոհուել են: Ըստ Ձեզ՝ նրանք չեն փրկուի. այդ դէպքում ո՞րն է հայրական պատժի իմաստը:

— Դա յաջորդ սերունդներին խելքի բերելու համար է, օրինակ, նաեւ՝ քեզ: Իսկ փրկութեան առումով՝ գուցէ հենց նրանց մահը նրանց փրկութեան պատճառ դառնայ…

— Նշանակում է՝ եթէ ուղղափառութիւն չընդունեմ, ինձ պատի՞ժ է սպասում:

— Աւելին, քան պատիժ. խնդիրը հոգու փրկութիւնն է, յաւերժութիւնը: Մտածի՛ր՝ ոչինչ պատահականօրէն չի լինում… Այսօր քո այստեղ լինելը եւ ուղղափառութեան մասին լսելը այն բանի վկայութիւնն են, որ Տէրը կանչում է քեզ եւ բացում

ճշմարտութիւնը. Նա չի ցանկանում քո կործանումը, այլ ցանկանում է քո փրկութիւնը: Եւ, այդուհանդերձ, որոշողը դու ես:

— Իսկ կարելի՞ է մտածել Ձեր խօսքերի մասին:

— Իհա՛րկէ, դու նոյնիսկ կարող ես մնալ վանքում, որքան կամենաս: Ես քեզ կը ծանօթացնեմ մեր հայ վանականների հետ. լաւ տղաներ են:

— Անչափ շնորհակալ եմ:

— Ի փառս Աստծու. ի դէպ, Վարդա՛ն, մի խնդրանք ունեմ:

— Լսում եմ Ձեզ:

— Լսել եմ, որ լաւ ծրագրաւորող ես:

— Լաւ թէ վատ՝ չգիտեմ... Բայց ուրախ կը լինեմ Ձեզ օգնել:

— Մի՛ յուզուիր. ոչ թէ ինձ, այլ վանքին. ուզում ենք վանքի կայքէջ ստեղծել, կ'օգնե՞ս մեզ:

— Իհա՛րկէ:

— Դէ՛, այդ դէպքում քեզ մօտ կ'ուղարկեմ Հայր Նիկոլային. նա է զբաղւում կայքէջով եւ մեր համակարգիչներով...

Հայր Դմիտրին օրհնեց Վարդանին եւ դուրս եկաւ սենեակից: Չորս ժամից աւելի էր անցել... Վարդանը չհաւատաց ականջներին՝ լսելով Հայր Դմիտրիի խնդրանքը: Հայերի մասին դառը ճշմարտութիւնն իմանալուց յետոյ նա կենդանացաւ, աչքերը փայլեցին. պատրաստ էր ամէն ինչ անել վանքի համար: Նա արդէն համոզուած էր, որ Տէրն է իրեն բերել այստեղ: Նոյնիսկ յիշեց Նեկտար մայրիկի խօսքերը՝ «**հենց այս խաչն էլ կ'օգնի նրան գտնել այն. դա կը լինի խաչի ճանապարհը**»... Այդ պահին սենեակ մտաւ Տէր Դանիիլը եւ զարմացաւ՝ տեսնելով ուրախութիւնից փայլող Վարդանին...

— Վարդա՛ն, տեսնում եմ, որ խօսակցութիւնը յաջող էր:

— Շնորհակալութի՛ւն, Տէ՛ր Դանիիլ, եթէ դու չլինէիր...

— Ի փառս Աստուծոյ. տեսա՞ր, թէ ինչ իմաստուն խոստովանահայր ունենք. նա սուրբ մարդ է:

— Նա էլ հենց կարողացաւ պատասխանել իմ շատ հարցերի...

— Վարդա՛ն, գնանք սեղանատուն, կը ճաշես...

— Իսկ ինչպէ՞ս գտնեմ Հայր Նիկոլային...

— Հայր Դմիտրին ինձ բակում ասաց, որ նրան կ'ուղարկի մեզ մօտ… Ի դէպ, նա հայ է…

— Օ՛, ուրեմն խօսելու բան կը լինի…

— Դէ՛, դա ինքներդ կ'որոշէք: Գնանք…

Վանական ճաշից յետոյ Տէր Դանիիլը Վարդանի համար շրջայց կազմակերպեց վանքի տարածքում… Շուրջբոլորը անդորր ու հանգստութիւն էր, բազմաթիւ ուխտաւորներ շփւում էին վանականների հետ… Վարդանը վաղուց այսպէս չէր հանգստացել. միշտ աշխատանք ու աշխատանք… Նոյնիսկ վանքի օդն էր նրան արբեցրել… Ժամը հինգին մօտ նրանք մօտեցան Կազանեան տաճարին՝ կառուցուած ի պատիւ Կազանի[4] Աստուածածնի սրբապատկերի: Սկսւում էր երեկոյեան ժամերգութիւնը… Վարդանը, չնկատելով անգամ, արդէն խաչակնքւում էր ուղղափառների նման՝ աջից ձախ… Ժամերգութեան երեք ժամը աննկատ անցաւ…

Ժամերգութեան աւարտից յետոյ, Վարդանին մօտեցաւ Նիկոլայ վանականը: Քիչ անց նրանք ձայնագրման ստուդիայի նմանութեամբ սարքաւորուած սենեակում էին, որտեղ կային նաեւ երկու համակարգիչ, անկիւնում՝ եռոտանու վրայ՝ տեսախցիկ, եւ շատ գրքեր… Հայր Նիկոլայը թղթին էր յանձնել վանքի ապագայ կայքէջի ողջ կառուցւածքը, մնում էր միայն ստեղծել կայքէջը: Հայր Նիկոլայը Վարդանին մանրամասնօրէն բացատրեց կայքէջի նպատակը… Այն, սակայն, գլխաւորապէս նախասահմանուած էր ոչ ուղղափառների շրջանում քարոզչական գործունէութիւն ծաւալելու համար:

Վարդանը Հայր Նիկոլայից ընդհանուր առմամբ իմացաւ նաեւ վանական կեանքի մասին… Իմացաւ, որ մինչ ուղղափառութիւն ընդունելը Հայր Նիկոլայի, ինչպէս եւ նրա պապի անունը Յակոբ է եղել: Նա Երեւանից է, բայց աշխատանք փնտռելով՝ յայտնուել է Ռուսաստանում: Մասնագիտութեամբ ձայնային ռեժիսոր է եւ պրոֆեսիոնալ լուսանկարիչ: Ռուսաստանում աշխատել է փոփ-աուդիոյ ստուդիայում… Հինգ տարի առաջ ստուդիան Հայր Դմիտրիից վանքի տաճարները լուսանկարելու պատուէր է ստացել… Ահա այսպէս էլ Հայր Նիկոլայը ծանօթացել է Հայր Դմիտրիի հետ: Այդ ժամանակաշրջանում նրա հոգեվիճակը ծանր է եղել, քանի որ ավտո-

[4] Կազան՝ քաղաք Ռուսաստանում:

վթարից զոհուել էին նրա ծնողները: Հայր Դմիտրին օգնել է նրան յաղթահարելու այդ հոգեվիճակը: Մի քանի ամիս անց նա ուղղափառութիւն է ընդունել եւ մկրտուել Ալեքսեյ անուամբ, իսկ մէկ տարի յետոյ՝ դարձել վանական եղբայր, երկու տարի առաջ էլ՝ կուսակրօնութեան ուխտ ընդունել Նիկոլայ անուամբ… Անցեալ տարի Հայր Դմիտրիի հետ նոյնիսկ Երուսաղէմում ներկայ է գտնուել սուրբ կրակի իջմանը: Վարդանը զարմանքով էր լսում Հայր Նիկոլային՝ կլանելով ամէն մի բառ…

— Վարդա՛ն ջան, ներիՙր ինձ, բայց պէտք է աղօթելու գնամ, իսկ դու առաւօտեան պէտք է վաղ արթնանաս. այնպէս որ ես՝ խուց, դու՝ հիւրանոց…

— Այդ Դուք ինձ ներեցէ՛ք. հարցախեղդ արեցի: Պարզապէս շատ հետաքրքիր էր Ձեզ լսել: Եթե ժամանակ ունենաք, գուցէ վաղը կրկի՞ն հանդիպենք:

— Անպայման: Տէ՛րը փրկի:

— Օրհնեցէ՛ք:

— Տէ՛րը կ’օրհնի:

Երեկոյեան՝ փասնմեկին մօտ, Վարդանն իր սենեակում էր: Տէր Դանիիլը դեռ չէր վերադարձել… Վարդանն անչափ փպաւորուած էր Մեծ Պահքի առաջին օրուանից. այդ օրը դեռ երկար կը յիշի… Նա արդէն լիովին համոզուած էր, որ Տէրն Ինքն է իրեն բերել այս վանքը՝ այս սուրբ մարդկանց մօտ… Բայց և համոզուած էր, որ Տէրը կը լսի հարազատների համար իր աղօթքները: Հոգում անդորր եւ խաղաղութիւն էր, թէեւ օրուայ տեղեկութիւնների առատութիւնից գլխում ամէն ինչ իրար էր խառնուել… Նա ուզում էր զանգահարել մօրը, ամէնը պատմել, սակայն որոշեց, որ աւելի լաւ կը լինի՝ երես առ երես, իսկ կը զանգահարի վաղը, որպէսզի շնորհաւորի նրան Մարտի ութի առթիւ… Արդէն պատկերացնում էր, թէ ինչ տեսք է ունենալու վանքի կայքէջը, եւ անգամ մտովի քննարկում էր այդ խնդիրը Կոլեայի հետ…

— Վարդա՛ն, վե՛ր կաց, արդէն ժամը հինգն է. շուտով ժամերգութիւնն է:

— Տէ՛ր Դանիիլ, իսկ ե՞րբ ես եկել, ե՞րբ եմ ես քնել՝ չեմ էլ յիշում… Այսպիսի բան ինձ հետ երբեք չէր եղել…

— Եկել եմ գիշերը՝ երկուսին… Դէ՛հ, երէկ ինչպէ՞ս անցաւ օրը:

— Փա՛ռք Աստծուն ամէն ինչի համար. չեմ կարող բացատրել:

— Նախաճաշից յետոյ պէտք է վերադառնանք:

— Վա՛յ, իսկ ես պայմանաւորուել եմ Հայր Նիկոլայի հետ: Գործեր ունենք… Կարո՞ղ եմ մի երկու օր էլ մնալ. Հայր Դմիտրին ինձ առաջարկում էր…

— Դէ՛հ, եթէ Հայր Դմիտրին օրհնել է, ապա կարելի է: Ուրեմն կը վերադառնամ շաբաթ երեկոյեան, կիրակի՝ Պապարազից յետոյ, քեզ կը վերցնեմ:

— Համաձայն եմ:

Ժամերգութիւնը նոյնպէս արագ անցաւ… Նախաճաշից յետոյ Վարդանը զանգահարեց մօրը, շնորհաւորեց Մարտի ութի առթիւ՝ ներողութիւն խնդրելով, որ այդ օրը նրա կողքին չի լինելու, եւ զգուշացրեց, որ կը վերադառնայ կիրակի օրը, քանի որ իր մասնագիտութեամբ շատ աշխատանքներ կան, եւ պէտք է օգնի վանքին… Յետոյ զանգահարեց Կոլեային եւ խնդրեց, որ գնի մօր սիրած ծաղիկները եւ իր անունից փոխանցի նրան… Տեղեկացրեց նաեւ, որ գործերի բերումով մինչեւ կիրակի կը մնայ վանքում…

Դեռեւս փաճարում ժամերգութիւնից յետոյ նա պայմանաւորուել էր Հայր Նիկոլայի հետ, որ նախաճաշից յետոյ կը գնա նրա աշխատասենեակ…

— Օրհնեցէ՛ք, Հա՛յր:

— Տէ՛րը կ'օրհնի: Վարդա՛ն, ծանօթացի՛ր, Հայր Գէորգին է: Նա էլ է Հայաստանից. լենինականցի է, շինարար, հիւսն, մի խօսքով՝ ամէն բանի վարպետ:

— Օ՛, Դուք էլ օրհնեցէ՛ք, Հա՛յր:

— Տէ՛րը կ’օրհնի:

— Ի՜նչ առաւօտ է. միանգամից երկու օրհնութիւն ստացայ հայերից: Ներեցէ՛ք, Հա՛յր Գէորգի, կարո՞ղ էք համառօտակի պատմել, թէ ինչպէս էք հանգել ուղղափառութեան, վանականութեան, եթէ, իհարկէ, դժուար չէ:

— Ի փա՜ռս Աստծու: Ես մանկապան սան եմ, անունս Յովհաննէս էր… 1988 թուականին՝ երկրաշարժի ժամանակ, կորցրի երկու փոքրիկ որդիներիս… Ինձ ու կնոջս համար Հայաստանում մնալը ծանր էր… Տեղափոխուեցինք Ռուսաստան… Երեխաներ այլեւս չունեցանք, աւելի ճիշտ՝ չէինք ուզում… Ապրում էինք վախով և չէինք կարողանում այն յաղթա-

հարել…Շուտով կինս հիւանդացաւ. քաղցկեղ յայտնաբերեցին. ինչ ասես, որ չփորձեցինք… Ամէն ինչ զուր էր… Կինս մահացաւ, ես էլ չէի ուզում ապրել… Այն ժամանակ բնակարաններ էի վերանորոգում: Աստծու կամքով Հայր Դմիտրիի հոգեզաւակներից մէկի բնակարանն էի նորոգում, երբ եկայ կանխավճար ստանալու, այնտեղ էլ հանդիպեցի Հայր Դմիտրիին: Մէկ ամսից ուղղափառութիւն ընդունեցի, մկրտուեցի Անատոլի ուղղափառ անուամբ: Երբ վերանորոգումն աւարտեցի, վանք գնացի՝ խոստովանահօրս մօտ: Տասը տարի առաջ կուսակրօնութեան ուխտ ընդունեցի Գէորգի անուամբ:

— Ուզում եմ հարցնել Ձեզ՝ Հա՛յր Նիկոլայ եւ Հա՛յր Գէորգի, մինչ ուղղափառութիւն ընդունելը որեւէ բան գիտէի՞ք Հայ Եկեղեցու, նրա վարդապետութեան եւ աւանդութիւնների մասին:

Հարցն այնքան շփոթեցրեց վանականներին, որ նրանք նոյնիսկ իրար նայեցին՝ մտածելով, թէ ինչ պատասխանեն: Վարդանն անգամ զղջաց, որ հարցրեց… Պատասխանեց Հայր Նիկոլայը, որին անձայն, միայն գլխի շարժումով համաձայնեց Հայր Գէորգին…

— Կարեւոր չէր իմանալ՝ որն է Հայ Եկեղեցու հերետիկոսութիւնը, կարեւոր էր ճշմարտութիւնը ճանաչել, որը միայն ուղղափառութեան մէջ է: Աւելի լաւ է՝ մեզ հարցնես ուղղափառութեան մասին, քանի որ փրկութիւնը միայն ուղղափառութեան մէջ է:

— Ներեցէ՛ք յիմար հարցիս համար: Այդ դէպքում ես շատ հարցեր ունեմ, ինքներդ ասացիք…

— Ի փա՛ռս Աստծու:

Այսպէս էլ անցնում էին օրերը: Վարդանը շատ բան իմացաւ վանականների հետ զրոյցներից: Կայքէջի մասին արդէն մոռացել էին… Խօսում էին հաղորդութեան, առաքինութիւնների, պահեցողութեան, մեղքերի, վանականութեան մասին…Վարդանն անգամ հասցրեց կարդալ Մաքսիմ Գրեկի «**Ընդդէմ Հայկական Չարադաւանութեան**» աստուածաբանական աշխատութիւնը…

Նա արդէն մտածում էր այդ հայերի նման վանական դառնալ, բայց բարձրաձայնել չէր ուզում… Հայր Նիկոլային, իբրեւ հրաշքի ականատեսի, հարցնում էր սուրբ կրակի

մասին… Շատ բան իմացաւ ու պարզեց: Հայրը ցոյց տուեց Սուրբ Երկրի բազմաթիւ լուսանկարներ, որոնք հենց ինքն էր լուսանկարել ապագայ կայքէջի համար: Ինչպէս Հայր Նիկոլայը ասաց, իր եւ Հայր Դմիտրիի համար Ասփծու պարզեւ էր անմիջականօրէն կանգնել Տիրոջ Գերեզմանի մուտքի շեմին: Նրանից իմացաւ Տիրոջ Գերեզմանի տաճարի ճեղքուած սեան մասին: Հայերն իրաւունք չունէին Գերեզմանից սպանալու կրակը. նրանք այն սպանում էին յոյն Պատրիարքից… Նախանձի պատճառով միջին դարերում հայերը որոշում են կաշառքի միջոցով Երուսաղէմի փաշայից թոյլտուութիւն սպանալ, որ Աւագ Շաբաթ օրը միայն իրենք ներկայ լինեն Քրիստոսի Յարութեան տաճարում: Այդ պատճառով էլ ուղղափառ պատրիարքին եւ ժողովրդին արգելւում է ներս մտնել, եւ նրանք հարկադրաբար աղօթում են տաճարի փակուած դռների առջեւ: Սովորականի համեմատ սպասումն անչափ ձգձւում է. յանկարծ որոտալից հարուածի ձայն է լսւում, եւ եկեղեցու արտաքին սիւներից մէկը ճեղքւում է, ու այնտեղից կրակ է ժայթքում: Պատրիարքը վառում է իր մոմերը, նրանից՝ բոլոր ուղղափառները և տաճար եկածները: Յետագայում հայերը պատժւում են… Նրանք մինչ օրս՝ Պատրիարքի աղօթելու ժամանակ, Գերեզման մտնելու իրաւունք չունեն, իսկ կրակը սպանում են անմիջականօրէն յոյն պատրիարքից…

Վարդանը հոգեպէս խիստ տպաւորուած էր: Չնկատեց անգամ, թէ ինչպէս վրայ հասաւ շաբաթ օրը… Նա չափազանց շատ էր ուզում «**Ուղղափառութեան Յաղթանակը**» տօնի առթիւ հաղորդութիւն սպանալ, զիտէր սակայն, որ իրեն՝ իբրեւ հերետիկոսի, թոյլ չի տրւում: Նա սպասում էր Տէր Դանիիլի ժամանելուն…

— Դէ ի՞նչ, Վարդա՛ն, տեսնում եմ, որ տխրում ես: Ի՞նչ է պատահել. վանական կեանքը չհաւանեցի՞ր:

— Դէ ո՛չ, ընդհակառակը, չեմ ուզում դրախտից հեռանալ, այդ պատճառով էլ տխրում եմ, բայց…

— Բայց ի՞նչ:

— Ուզում եմ հաղորդութիւն սպանալ, բայց ինձ թոյլ չի տրւում… Ի՞նչ անեմ:

— Վարդա՛ն, դու ինձ վախեցրիր. դա լուծուող խնդիր է:

— Կարելի՞ է:

— Ես հիմա պէտք է հանդիպեմ Հայր Դմիտրիին, տեսնենք, թէ նա ինչ կ’ասի:

— Իսկ ես կարո՞ղ եմ քեզ հետ գալ:

— Տեսնում եմ, որ անհամբեր ես, ուրեմն գնանք:

Տաճարի ճանապարհին, ուր վանականներ եւ ուխտաւորներ էին հաւաքուել, նրանք հանդիպեցին Հայր Դմիտրիին: Տէր Դանիիլը պատմեց նրան Վարդանի՝ հաղորդութիւն ստանալու ցանկութեան մասին. Հայր Դմիտրին ամենայն լրջութեամբ հարցրեց.

— Վարդա՛ն, պատրա՞ստ ես ուղղափառութիւն ընդունել՝ հրաժարուելով հայկական միաբնակութիւն հերետիկոսութիւնից:

— Այո՛:

— Դէ՛հ, փա՛ռք Աստծու: Ուրեմն վաղը՝ Պատարագից եւ «Ուղղափառութեան Յաղթանակը» կարգից յետոյ, քեզ կը մկրտենք, եւ հաղորդութիւն կը ստանաս:

Վարդանը ականջներին չէր հաւատում: Պատրաստ էր ուրախութիւնից թռչկոտել և գոռալ: Նա շնորհակալութիւն յայտնեց հայրերին իր՝ մեղաւորի հանդէպ ցուցաբերած հայրական սիրոյ և համբերատարութեան համար… Նաեւ ցոյց տուեց իր խաչը՝ խնդրելով, որ մկրտեն այդ խաչով: Հայր Դմիտրիի համար խաչն ուղղափառ չէր, բայց նա չէր ցանկանում վանել Վարդանին եւ անմիջապէս համաձայնեց…

Վարդանը դիմացաւ ողջ գիշերային հսկմանը՝ զոհաբանական աղօթքներ յդելով… Իսկ յաջորդ օրը ներկայ գտնուեց վանահօր՝ Հայր Դմիտրիի Պատարագին, որից յետոյ սկսուեց իւրատեսակ կարգ, որը հենց այդպէս էլ կոչւում էր՝ «Ուղղափառութեան Յաղթանակը»: Այս արարողութիւնը ներառում է ուղղափառ հաւատքի հիմնական դրոյթները, հաւաստում նրա յաղթանակը երբեւէ գոյութիւն ունեցած հերետիկոսութիւնների եւ հերձուածների նկատմամբ…

Ամբողջ հոգեւորականութիւնը խորանից դուրս եկաւ տաճարի կենտրոն… Սկսուեց բանադրանքի կարգը: Եկեղեցու կենտրոն բերուեցին Փրկչի եւ Աստուածամօր սրբապատկերները: Հայր Դմիտրին կարդաց մոլորուած ոչխարի մասին Աւետարանը՝ հանդիսաւոր յայտարարելով Երկնային Տիրոջ գիրկը վերադարձող բոլոր հեռացածների եկտենիան:

Ողջ ժողովուրդը եւ հոգեւորականութիւնը միաձայն բացականչեցին.

— Նզո՛վք, նզո՛վք, նզո՛վք:

— Սրբապատկերները հայհոյողներին եւ վատաբանողներին, նրանց իսկ Սուրբ Եկեղեցին Աստծու եւ Նրա աստուածահաճոյ մարդկանց գործերի յիշողութեանը, վերոյիշեալներին հայացք գցողներին յանուն բարեպաշտութեան վրդովելու, եւ վերոյիշեալները կուռք համարողներին՝ նզո՛վք:

— Նզո՛վք, նզո՛վք, նզո՛վք:

— Քրիստոսի եկեղեցով պահուած՝ բոլոր սուրբ խորհուրդները մերժողներին՝ նզո՛վք:

— Նզո՛վք, նզո՛վք, նզո՛վք:

— Աստուածային Յայտնութեանը համաձայնած, Ուղղափառ Ընդհանրական Եկեղեցու շնորհիւ բարեպաշտօրէն պահպանուած՝ Սուրբ Հայրերի Ժողովները եւ նրանց աւանդութիւնները մերժողներին՝ նզո՛վք:

— Նզո՛վք, նզո՛վք, նզո՛վք:

Արարողութիւնից յետոյ վանահայրը, դիմելով հաւատացեալներին, խօսեց ուղղափառութեան կարեւորութեան եւ մաքրութեան մասին՝ նշելով, որ միակ փրկութիւնը ուղղափառութեան մէջ է… Վարդանին թւում էր, որ ողջ կարգը ու վանահօր քարոզը յատկապէս իրեն են ուղղուած… Քիչ անց նա ծնկի էր եկել Հայր Դմիտրիի առջեւ՝ մեղքերը զղջալով եւ հրաժարուելով միաբնակութիւն հերետիկոսութիւնից: Նրան մի թուղթ տուեցին, որի վրայ գրուած էին քահանայի՝ իրեն տրուելիք հարցերը եւ այն պատասխանները, որոնք ինքը պէտք է կարդար՝ ի պատասխան հարցերի…

— Ուզու՞մ ես հրաժարուել հայոց հաւատքի մեղանչումներից եւ անճշտութիւններից:

— Ուզում եմ:

— Ուզու՞մ ես Ուղղափառ Ընդհանրական հաւատքի դառնալ:

— Ուզում եմ:

— Հրաժարւու՞մ ես այն ոչ իրաւացի կարծիքից, թէ իբր մեր Տէր Յիսուս Քրիստոսի մէջ բնութիւնները ոչ թէ երկուսն են՝ Աստուածային եւ մարդկային, այլ մէկը՝ Աստուածայինը, որը կլանած է մարդկային բնութիւնը:

— Հրաժարւում եմ:

— Յանկանու՞մ ես արդեօք միաւորուել Սուրբ Ուղղափառ Ընդհանրական Արեւելեան Եկեղեցուն:

— Ցանկանում եմ՝ ամբողջ սրտով:

— Ընդունու՞մ ես արդեօք Քաղկեդոնի, Կոստանդնուպոլսոյ երկրորդ եւ երրորդ, Նիկիայի երկրորդ Տիեզերական Ժողովները եւ ընդունու՞մ ես այս Ժողովների հաստատած դաւանանքը եւ կանոնները:

— Յարգում եմ եւ ընդունում:

— Վարդա՛ն, քեզ այլ բան չի մնում, քան մկրտուել Ուղղափառ եկեղեցում: Համաձա՞յն ես:

— Այո՛, Հայր:

Վարդանին մկրտեց Տէր Դանիիլը: Ի պատիւ առաքելապատիւ իշխան Վլադիմիրի՝ նրան մկրտեցին Վլադիմիր անուամբ, իսկ յետոյ նա հաղորդութիւն ստացաւ: Վլադիմիրի մկրտութիւնը մեծ իրադարձութիւն էր վանքում, աւելի ճիշտ՝ ուղղափառութեան յաղթանակ: Վլադիմիրն ասես նորից ծնուած լինէր. բոլորը շնորհաւորում էին նրան: Նա առաջին անգամ վանականների եւ քահանաների հետ ճաշեց միեւնոյն սեղանի շուրջը… Ճաշից յետոյ Վլադիմիրը պէտք է տուն վերադառնար, սակայն այնպէ՛ս չէր ուզում հեռանալ դրախտից եւ հրաժեշտ տալ մարմին առած հրեշտակներին… Սեղանատանը վանահայրը վանական միաբանութեան անունից Վլադիմիրին նուիրեց Կազանի՝ Աստուածածնի եւ իշխան Վլադիմիրի սրբապատկերները, աղօթագիրք եւ «*Սուրբ առաքելապատիւ մեծ իշխան Վլադիմիր: Օրհներգում և վարքագրութիւն*» գիրքը, այլեւ աղօթելու համար համրիչ: Բայց ամենամեծ նուէրը դեռ առջեւում էր…

Ճաշից յետոյ, նա Տէր Դանիիլի հետ գնաց Հայր Դմիտրիի խուց՝ հրաժեշտի եւ օրհնութեան… Տէր Դանիիլը շատ էր ուզում Երուսաղէմ գնալ:

— Հա՛յր Դմիտրի, խնդրում եմ Ձեր օրհնութիւնը՝ Երուսաղէմ ուղեւորուելու եւ ներկայ գտնուելու սուրբ կրակի իջմանը, բայց ոչ թէ մենակ, այլ իմ հոգի հետ:

— Իւրաքանչիւր ուղղափառ պէտք է այցելի Երուսաղէմ, առաւել եւս ներկայ գտնուի սուրբ կրակի իջմանը: Օրհնում եմ քեզ, որդեա՛կ, ուղեւորութեան համար. Պահապա՛ն Հրեշտակը քեզ հետ:

— Տէ՛րը փրկի: Ի դէպ, մեր Վլադիմիրը նոյնպէս ուզում է օրհնութիւն ստանալ եւ սպասում է խցի շեմին: Կարելի՞ է կանչել:

— Նա է՞լ է ուզում Երուսաղէմ գնալ:

— Չգիտեմ, ուզում էր փուն գնալու համար օրհնութիւն սպանալ:

— Ի դէպ, հիմա նա քո հոգեզաւակն է, դու մկրտել ես եւ ինքդ էլ հոգայ նրա մասին. այնպէս որ այժմ նա համայնքիցդ մէկն է: Դէ՛հ, կանչի՛ր նրան:

Տէր Դանիիլը դուրս եկաւ բակ, որտեղ սպասում էր Վլադիմիրը, եւ կանչեց նրան: Վերջինս շատ արագ մտաւ, կարելի է ասել՝ անգամ ներս թռաւ վանահօր խուց:

— Օրհնեցէ՛ք, Հա՛յր: Ամէն բանի համար շնորհակալ եմ, Տէ՛րը փրկի ձեզ:

— Տէ՛րը կ'օրհնի, որդեա՛կ: Ահա Տէր Դանիիլի հետ ուզում ենք քեզ օրհնել՝ Երուսաղէմ ուղեւորութեան: Ուզու՞մ ես արդեօք տեսնել սուրբ կրակը:

— Ինչպէ՞ս թէ, դուք ինձ օրհնում էք՝ Երուսաղէմ գնալո՞ւ: Անգամ չէի էլ կարող երազել: Փա՛ռք քեզ, Տէ՛ր: Տէ՛րը փրկի:

— Տէր Դանիիլը կը լինի քո խոստովանահայրը, լսի՛ր նրան. նրա հետ էլ կը գնաս: Երուսաղէմում ծառայում է իմ հոգեզաւակը՝ Վադիմ աբեղան. նա նոյնպէս հայ է, նրան արդէն ասել եմ քո մասին: Տէր Դանիիլը նրան լաւ գիտի, այնպէս որ նա ձեզ շատ բանով կ'օգնի: Նրան ինձնից ողջոյններ: Գնացէք խաղաղութեա՛մբ, եւ Պահապան Հրեշտակը ձեզ հետ…

Ամբողջ ճանապարհին Վլադիմիրն առանց շունչ քաշելու իր տպաւորութիւններն էր կիսում Տէր Դանիիլի հետ: Նոյնիսկ մտմտում էր վանական դառնալու մասին… Որոշեց Երուսաղէմից յետոյ մի քանի ամիս ապրել վանքում… Այս ամէնից բացի նա բազմաթիւ հարցեր էր ուղղում Տէր Դանիիլին եւ չնկատեց էլ, թէ ինչպէս տուն հասաւ…

Ծնողները սպասում էին նրան: Մայրն անչափ անհանգստանում էր նրա համար: Հայրը վերջապէս որոշել էր խօսել որդու հետ եւ անհամբերութեամբ էր սպասում նրան: Ընկերը՝ Կոլեան, Վարդանի բացակայութեան ժամանակ հասցրել էր ծանօթացնել նրա ծնողներին եւ Անիին. այցելել էին Մարտի ութի կապակցութեամբ… Կոլեան նոյնիսկ որոշել էր իրենց քաղաքի հայկական համայնքի համար կայքէջ ստեղծել եւ նոյնպէս անհամբերութեամբ էր սպասում Վարդանին…

Վարդան-Վլադիմիրն այլեւս չէր համբերում, թէ երբ է ամէն ինչ պատմելու ծնողներին եւ Կոլեային: Նա արդէն տանն էր… Ամուր գրկեց մօրը…

— Մա՛մ ջան, ինչքա՜ն էի կարօտել:

— Վարդա՛ն, որդի՛ս, ամբողջովին փայլում ես: Ի՞նչ է պատահել:

— Այո՛, մայրի՛կ, անպայման կը պատմեմ, հայրիկը փա՞նն է:

— Այո՛, նա քեզ է սպասում. ուզում է հետդ խօսել: Որդի՛ս, դէ լուացուի՛ր եւ խոհանոց: Ընթրիքն արդէն պատրաստ է, քեզ էինք սպասում:

— Մա՛մ, ես պահք եմ պահում. պահքի ինչ-որ բան կա՞յ:

— Պա՞հք, ո՞ր օրուանից. քո սիրելի սպասն եմ պատրաստել:

— Մա՛մ, մի՛ համոզիր, չեմ ուտելու, խնդրում եմ, որ ձեթնախինձոր խաշես:

— Ինչ որ ասես:

Մարիան, փազնապը սրտում, գնաց խոհանոց՝ ձեթնախինձոր խաշելու… Նա շատ էր վախենում Վարդանի պատմելիքից…

Այդ ընթացքում Վարդանը մտաւ ծնողների սենեակ, որտեղ համակարգչի առջեւ նստած էր հայրը… Կարապետ Ակոպովիչը նախապատրաստւում էր վիրաբոյժների միջազգային գիտաժողովին, որի ժամանակ պէտք է հանդէս գար զեկուցումով… Հայր եւ որդի շատ ամուր գրկախառնուեցին: Նրանք այդպէս չէին գրկախառնուել Վարդանի՝ բանակից վերադառնալուց յետոյ…

— Պա՛պ, ների՛ր, որ առանց թակելու մտայ, եւ խանգարեցի. պարզապէս կարօտել էի:

— Ինչ ես ասում, որդի՛ս, այդ դո՛ւ ներիր, որ անմիջապէս չդիմաւորեցի քեզ… Ազնուօրէն ասած՝ ես նոյնպէս կարօտել էի քեզ: Այնպիսի զգացողութիւն էր, որ մի ամբողջ յաւերժութիւն տանը չէիր…Մորդ շնորհիւ վերջին ժամանակներս ես շատ բան հասկացայ: Ես իրաւացի չէի եւ արդար չէի քո եւ մորդ հանդէպ… Հպարտութիւնս եւ յամառութիւնս…

— Պա՛պ, մոռացի՛ր այդ ամէնը. հիմա կարեւոր չէ:

— Ինչպէ՞ս թե մոռանամ, ինչպէ՞ս թէ կարեւոր չէ, ի՞նչ ես ասում:

— Պա՛պ, ների՛ր. մշտապէս ինձ վիրաւորուած էի զգում: Բայց, փա՛ռք Աստծու, ամէն ինչ անցեալ է: Իրաւացի ես. ես նոյնպէս մայրիկի շնորհիւ շատ բան հասկացայ: Այնպէս որ

այն, ինչ փնտռում էի, արդէն գտել եմ: Մնացեալը կարեւոր չէ, պա՛պ ջան:

— Այդ ի՞նչ ես գտել, չե՞ս ուզում մեզ պատմել:

— Օ՛, մա՛մ ջան, ի՞նչ աննկատ սենեակ մտար:

— Դէ՛հ, պատմի՛ր. ես եւ հայրդ անհամբերութեամբ սպասում ենք:

— Դէ, ի՞նչ պատմեմ. ես ուղղափառութիւն եմ ընդունել, մկրտուել Վլադիմիր անուամբ, իսկ ամենակարեւորը գտել եմ հենց այն, ինչ փնտռում էի:

Այս նորութիւնը ծնողների համար միանգամայն անսպասելի էր. այլեւս չկարողանալով ոտքի վրայ կանգնել՝ նրանք նստեցին: Որդու հետ պատահել էր այն, ինչից Մարիան այդքան վախենում էր: Նա ուզում էր հասկանալ որդուն, բայց չէր կարողանում: Կարապետի համար սա հարուած էր ուղիղ սրտին: Արդէն կարգաւորուում էին նրանց յարաբերութիւնները, եւ ահա… Իսկ Վարդանն ուրախ էր, որ կարողացաւ այդպէս արագ ամէն ինչ պատմել. ստացուեց այնպէս, ինչպէս Հայր Նիկոլայն էր ասում…

— Վարդա՛ն, ի՞նչ Վլադիմիր:

— Մա՛մ, ինչպէ՞ս թէ՝ ինչ. Ռուսիոյ՝ քրիստոնէութիւն ընդունած սուրբ իշխանը: Ի դէպ, նրա կինը՝ Սուրբ Աննան, ուղղափառ հայուհի էր:

— Ի՞նչ կապ ունեն Աննան եւ իշխանը: Ինչո՞ւ ես անունդ փոխել:

— Մա՛մ:

— Դու դաւաճանեցիր ոչ թէ Սարգսեանների տոհմին, այլ ողջ ժողովրդիդ: Ուղղափա՛ռ է դարձել, բայց ինչու՞ ես փոխել անունդ:

— Կարապե՛տ, խիստ մի՛ դատիր. նախ թող բացատրի, յետոյ հետեւութիւննե՛ր արա. որդուդ դաւաճա՛ն դարձրիր:

— Արդէն շատ լաւ բացատրեց: Չտեսա՞ր, թէ ինչպէս էին փայլում աչքերը, երբ յայտնեց ուղղափառութիւն ընդունելու եւ նոր անուան մասին: Ես նրա հետ այլեւս խօսելու ոչինչ չունեմ: Իսկ ես՝ յիմարս, որոշել էի հետը խօսել… Ի՞նչ յիմարն եմ…

— Կարապե՛տ:

— Իսկ ի՞նչ ասացի որ, Մարի՛ա, եւ սրանից յետոյ նա ի՞նչ հայ է:

— Հայ եմ, որ կամ, բայց՝ ուղղափառ: Եթէ մայրիկն իրեն հայուհի է զգում, ես՝ առաւել եւս. երակներումս հայկական արիւն է հոսում, իսկ հոգիս ուղղափառ է:

— Մարի՛ա, որդիդ խելագարուել է: Մի՛ փեսէ՛ք, նրա հոգին ուղղափառ է, իսկ ուղեղդ ինչպիսի՞ն է: Ա՛, մոռացել էի, որ դու ուղեղ չես էլ ունեցել:

— Կարապե՛տ, վե՛րջ փուր:

— Ինչի՞ն վերջ փամ: Նա ինչ-որ աղանդի է յարել, որփեղ չեն հաւանել Վարդան անունը, իսկ վաղը, ա՛յ կը փեսնես, նա մեզ էլ կը փոխի ուղղափառ ծնողների հեփ:

— Պա՛պ, ոչ մի աղանդի էլ չեմ յարել. դա ուղղափառ վանք է, որփեղ ապրում են նաեւ հայ վանականներ՝ Հայր Գէորգին եւ Հայր Նիկոլայը. նրանք Հայաստանից են:

— Ասում եմ, չէ՞. արդէն գփել է՝ եւ ոչ թէ մէկ, այլ երկու հայր:

— Կարապե՛փ, ի՞նչ ես կպել:

— Ի՞նչ Կարապեփ, ե՛ւ, Կարապե՛փ: Աւելի լաւ կը լինէր, որ որդուդ բաց չթողնէիր այդ Դանկա-աթէիսփի հեփ. նա ինձ մանկուց դուր չէր գալիս. աչքերը վազվզում էին, միշփ այնփեղ էր, որփեղ շահ կար, նրա պափճառով նոյնիսկ Կոլեան եւ մեր նորայայփ Վլադիմիրը միշփ անախորժութիւններ էին ունենում…

— Պա՛պ, հիմա նա քահանայ է, նորմալ մարդ: Գիրք է գրում հրաշքների մասին, շուփով ես եւ նա Երուսաղէմ ենք գնալու՝ սուրբ կրակի իջմանը…

— Իսկ ե՞ս ինչ էի ասում:

— Նա այդպիսին չէ, պա՛պ, մի՛ դափիր մարդուն, իրաւունք չունես. դա մեղք է: Ես ահա կը գնամ Երուսաղէմ եւ ականափես կը լինեմ սուրբ կրակի հրաշքին…

— Մարի՛ա, խոհանոցում ինչ-որ բան է այրւում, գնա՛… Թէ չէ մենք էլ բնակարանի հրաշք հրդեհի ականափեսը կը լինենք… Ես ոչինչ չունեմ քեզ հեփ խօսելու, Վարդա՛ն: Ա՛հ, ների՛ր, Վլադի՛միր:

Մարիան խոհանոց վազեց, որփեղ խանձւում էր գեփնախնձորը: Կարապեփը նսփեց սեղանի առջեւ, որպէսզի շաբունակի շարադրել զեկուցումը, բայց չէր կարողանում ի մի բերել մփքերը… Իսկ Վարդանը յիշեց Հայր Նիկոլայի խօսքերը… Նա զգուշացնում էր, որ հաւափացեալ մարդու թշնամիները փնեցիներն են լինելու: Այդ պափճառով էլ ուրախ էր, որ իր

ուղղափառ դառնալն անբարեացակամօրէն ընդունեցին. նշանակում է՝ ինքը ճիշտ ճանապարհ է ընտրել: Նա միայն կարող էր աղօթել ծնողների համար, որոնց անչափ սիրում էր, որպէսզի նրանք էլ իր նման ուղղափառութիւն ընդունեն: Նա զգուշացրեց մօրը, որ ուտել չի ուզում, պէտք է աղօթի, եւ խնդրեց իրեն չխանգարել… Մարիան իրեն կորցրել էր, բայց ամէնից աւելի անհանգստանում էր ամուսնու համար, եւ ընթրիքը մոռացած՝ գնաց նրա մօտ… Կարապետը, գլուխը խոնարհած, արտասւում էր: Մարիան նկատեց նրա արցունքները, որ կաթկթում էին սեղանին…

— Կարապե՛տ, սիրելի՛ս, ի՞նչ է եղել քեզ:

— Մարի՛ա, ի՞նչ կարող է պատահել ինձ: Աստուած ինձ պատժում է հպարտութեանս եւ յամառութեանս պատճառով. նախ՝ խլեց ընտանիքս, իսկ հիմա՝ նաեւ միակ որդուս. ես անզօր եմ:

— Չհամարձակուե՛ս այդպէս խօսել. դու ուժեղ ես:

— Եթէ ուժեղ լինէի, կը ներէի ինձ, իսկ հիմա կորցրի նաեւ որդուս. ինձ ներում չկայ, սիրելի՛ս:

— Դու չես որոշում, թէ Նա կը ների՞, թէ՞ ոչ: Քեզնից միայն պահանջւում է Տիրոջը քեզ ներելու հնարաւորութիւն ընձեռել:

— Այդ ինչպէ՞ս:

— Ների՛ր ինքդ քեզ, դադարի՛ր մեղադրել ինքդ քեզ, ների՛ր ինքդ քեզ. ոչինչ պատահականօրէն չի լինում: Յիշու՞մ ես, թէ ինչ ասաց Վարդանը, ո՞ւր է գնում:

— Դէ՜հ, Երուսաղէմ, եւ ի՞նչ:

— Ի՞նչը՝ ինչ: Ի՞նչ էր ասել քեզ Նեկտար մայրիկը:

— Աստուա՛ծ իմ, ինչպէ՞ս էի մոռացել: Ի՞նչ էի անելու առանց քեզ, սիրելի՛ս:

— Սիրելի՛ս, նա ի՞նչ էր ասել:

— Որդիդ Վարդանին կը գտնի Երուսաղէմում…

— Արի չխանգարենք նրան, սիրելի՛ս. ամէն ինչ Աստծու կամքն է: Նեկտար մայրիկի խաչն է ուղղորդում նրան, եւ դա նրա խաչի ճանապարհն է: Եթէ Երուսաղէմ ընկնելու համար անհրաժեշտ էր, որ նա Վլադիմիր դառնար, ուրեմն նշանակում է…

— Նշանակում է, որ նա Երուսաղէմում կը գտնի Վարդանին, այսինքն՝ կը գտնի իր իրական ԵՍ-ը:

— Ինձ թւում է, որ նա կը գտնի քո պապ Վարդանին, իսկ նրա մէջ՝ իրեն, ինչպէս ես ժամանակին Նեկտար մայրիկի մէջ գտայ իմ ԵՍ-ը: Մէկ անգամ եւս համոզւում եմ, որ Նեկտար մայրիկը մարմին առած հրեշտակ էր, սուրբ մարդ. նա կանխատեսել էր այս ամէնը: Տէ՛ր իմ, ների՛ր մեզ՝ մեղաւորներիս:

— Սիրելի՛ս, դու իմ պահապան հրեշտակն ես:

—Դէ լա՛ւ, արի որոշենք, որ չենք խանգարելու նրան, թող ապրի, ինչպէս ուզում է: Թող գնա Երուսաղէմ, իսկ այնտեղ ամէն ինչ թող Աստծու կամքով լինի:

— Համաձայն եմ:

— Դէ՛, փա՛ռք Աստծու:

Վարդանն առաւօտները չէր նախաճաշում, վաղ գնում էր եկեղեցի Տէր Դանիիլի մօտ՝ ժամերգութեան մասնակցելու, յետոյ՝ գրասենեակ: Կոլեան հաւանութեան չարժանացրեց Վարդանի որոշումը, բայց եւ այնպէս նա մնում էր իր ընկեր Վարդանը, ոչ թէ Վլադիմիր: Միասին էին սպեղծում վանքի եւ հայկական համայնքի կայքէջերը: Կոլեան եւ Անին որոշեցին, որ Կոլեան այս տարի պէտք է մկրտուի Էջմիածնում, իսկ կ'ամուսնանան արդէն իրենց քաղաքի հայկական եկեղեցում…

Վարդանին այս աշխարհում պահում էին միայն կայքէջ սպեղծելու աշխատանքը եւ Երուսաղէմ կատարելիք ուղեւորութիւնը… Նա հաստատապէս որոշել էր, նոյնիսկ արդէն ստացել էր Տէր Դանիիլի օրհնութիւնը, որ Երուսաղէմ ուղեւորութիւնից յետոյ, մի քանի ամսով վանք կը գնա… Այն խօսակցութիւնից յետոյ, Վարդանի ծնողները շատ բարեացակամ էին, եւ դա անչափ զարմացնում էր նրան: Նրան թւում էր, որ Տէրը լսում է իր աղօթքները, եւ յոյս էր փայփայում, որ ծնողները մօտ ապագայում ուղղափառութիւն կ'ընդունեն, ինքը վանական կը դառնայ եւ աղօթքներով ներում կը յայցի Սարգսեան ընտանիքի հոգիների համար… Մեծ Պահքի աւարտին Վարդանը բաւականին նիհարել էր. նրա պահեցողութիւնը խիստ էր: Մարիան շատ էր անհանգստանում որդու համար, բայց քանի որ որոշել էին չխառնուել, լռում էր՝ ցաւը սրտում…

# ԵՐՈՒՍԱՂԷՄ

Սուրբ Երկիր պէտք է թռչէին Մոսկուայով: Օդանաւակայան Վարդանին ճանապարհելու էին եկել ծնողները եւ ընկերը՝ Կոլեան…

Արդէն ապրիլի 18-ին՝ երեքն անց կէսին, Բեն Հուրիոն օդանաւակայանում նրանց խմբին դիմաւորեց ուղղափառ զբօսավար Ալեքսանդրը: Ուխտաւորներն օդանաւակայանից ավտոբուսով ուղեւորուեցին Լիդ քաղաք՝ Սուրբ Գէորգ զօրավարի տաճար: Աղօթքից յետոյ ուխտաւորները ուղղուեցին Երուսաղէմ՝ տեղաւորուելու «Jerusalem Tower» հիւրանոցում, որտեղ նրանց դիմաւորեց Հայր Վադիմը, որի մասին ասել էր Հայր Դմիտրին: Բոլորն ուխտագնացութեան օրհնութիւն ստացան նրանից…

Յաջորդ առաւօտեան՝ Աւագ Երեքշաբթի, ուխտաւորներն ուղեւորուեցին Բեթղեհէմ: Նրանց այցելութեան յաջորդ վայրը Տիրոջ Գերեզմանն էր Երուսաղէմում: Վարդանն անչափ զարմացել էր՝ իրեն ծանօթ նոյնպիսի փառեր տեսնելով Տաճարում, ինչպիսիք իր խաչի վրա էին: Տաճարում հայկական շատ բան կար… Վարդանի հոգին թրթռաց, երբ խմբի հետ ոտք դրեց Սուրբ Հեղինէ եկեղեցի, ինչպէս այն անուանեց զբօսավարը: Այնտեղ պատերին փորագրուած շատ խաչեր կային: Վարդանին թւում էր, որ այդ խաչերը յանուն Քրիստոսի սպանուած հայերի հոգիներն են, որոնք բոլոր կողմերից իրեն են նայում եւ աղաղակում՝ **Ո՞ւր ես գնում**: Վարդանը չէր կարողանում հասկանալ, թէ ինչ է կատարւում իր հետ. որքան ներքեւ էին իջնում, այնքան աւելի էր սաստկանում աղաղակը… Մի կողմից՝ Վարդանը սարսափում էր՝ ցանկանալով դուրս վազել եկեղեցուց, միւս կողմից՝ ոտքերն էին նրան ներքեւ տանում … Այդպէս նա յայտնուեց հայերէն փառերով երկու խորանների առջև, որոնց միջեւ հայկական սրբապատկեր էր՝ սպիտակ մօրուքով վանականի պատկերով. նա զինուորին էր փոխանցում մի մեծ գիրք… Վարդանին թուաց, որ անգամ սրբապատկերն է իրեն հարցնում՝ **Ո՞ւր ես գնում**: Մի ակնթարթում նա հասկացաւ, որ ամէն կողմից իրեն են նայում հայկական սրբապատկերներ: Վարդանը զարմացած էր. իսկ այդ ինչո՞ւ են ասում, որ հայերը չեն ընդունում սրբապատկերներ: Խորաններից ձախ՝ պատի մէջ, վանդակաճաղերով դուռ կար, որի հետեւում առեղծուածային մթութիւն էր, եւ մի ինչ-որ ուժ մղում

էր Վարդանին դէպի այդ դուռը… Նա չէր ցանկանում հեռանալ. բազմաթիւ հարցեր ունէր…

Վարդանը փաճարում մնալու օրհնութիւն խնդրեց Տէր Դանիիլից, բայց նրանց Գորնիի վանքում սպասում էր Հայր Վադիմը, եւ այդ պափճառով, որոշեցին նրանից օրհնութիւն խնդրել …

Վանքում ուխփաւորներին դիմաւորեց Հայր Վադիմը: Աղօթքից եւ վանքը դիփելուց յեփոյ ուխփաւորներն անցան սեղանափուն՝ ընթրելու… Ինչպէս եւ Տէր Դանիիլը խոսփացել էր, ընթրիքից յեփոյ նրանք գնացին Հայր Վադիմի մօփ՝ Վարդանի համար օրհնութիւն խնդրելու…

— Հա՛յր Վադիմ, օրհնեցէ՛ք:

— Տէ՛րը կ’օրհնի:

— Ահա մեր Վլադիմիրը խնդրանք ունի: Չգիփեմ, թէ ինչ ասեմ, դրա համար էլ որոշեցի Ձեր օրհնութիւնը խնդրել:

— Լսում եմ Ձեզ:

— Հա՛յր, պարզապէս շափ եմ ուզում այս օրերին՝ մինչ սուրբ կրակի իջնելը, մնալ Յարութեան փաճարում: Ազնուօրէն ասած՝ չեմ ուզում խմբի հեփ գնալ, այլ ուզում եմ մենակ մնալ. սա իմ առաջին պահքն է, այնպէս որ երեւի ինձ կը հասկանաք:

— Հա՛յր Վադիմ, Վլադիմիրը միայնակեցութիւն է ցանկանում եւ այդ պափճառով էլ ուզում է մենակ մնալ:

— Միայնակեցութիւնը լաւ է, այդ դէպքում թող այդպէս էլ լինի: Մէկ ժամից ես եւ մի քանի միանձնուհիներ Տիրոջ Գերեզման ենք այցելելու, եթէ ուզում ես, կարող ես միանալ մեզ:

— Տէ՛րը փրկի: Իհարկէ ուզում եմ:

— Այդ դէպքում, Տէ՛ր Դանիիլ, դու քո խմբով հիւրանո՛ց գնա. վաղն էլ ծանր օր է լինելու… Իսկ Վլադիմիրի մասին, մի՛ մփահոգուիր, ես կը հոգամ…

Վարդանին թւում էր, որ ուղղափառութիւն ընդունելով՝ բոլոր հարցերը իրենք իրենց կը լուծուեն, բայց Երուսաղէմը նոր հարցեր էր ծնում նրա հոգում, որոնց պափասխանները չգիփէր, թէ որփեղ գփնի: Արդէն յոգնել էր այդ փնփռփուքներից. թուլութիւն էր զգում նաեւ խիսփ պահեցողութիւնից… Մինչ ուղղափառութիւն ընդունելը հոգին աղաղակում էր՝ Ո՞վ եմ ԵՍ, իսկ հիմա խաչերն ու սրբապափկերներն են դիմում հոգուն՝ **Ո՞ւր ես գնում**: Նրան թւում էր, թէ չարի գայթակղութիւնն է,

ուսփի որոշեց, որ հենց ինքն է գտնելու հարցերի պատասխանները…

Տաճար հասան կէսգիշերն անց… Դռները բաց էին… Տաճարում տեսան սարկաւագների, որոնք հերթականութեամբ խնկարկում էին ամբողջ տաճարը: Հայր Վադիմից իմացաւ, որ հերթականութեամբ խնկարկում են յոյնը, հայը եւ ղպտին, իսկ յետոյ սկսուելու է բոլորի գիշերային ժամերգութիւնը, եւ իւրաքանչիւրն իր բաժնում… Հայր Վադիմը խոստացաւ Վարդանին ծանօթացնել մի հայ վարդապետի հետ, որը խօսում էր ռուսերէն եւ կարող էր օգնել Վարդանին գիշերը մնալ տաճարում…

— Հա՛յր, իսկ ի՞նչ է, տաճարում մնալ չի՞ կարելի:

— Ո՛չ, եթէ քեզ չեն երաշխաւորել…

— Չհասկացայ:

— Տաճարը փակուելու ժամանակ ոստիկանութիւնը բոլորին դուրս է հանում. տեսնես ո՛վ կը մնայ եւ ի՛նչ կ'անի… Դրա համար էլ նրանց երաշխաւորում են յոյները, կաթոլիկները կամ էլ հայերը…

— Իսկ ինչո՞ւ չդիմել յոյներին:

— Շատ հարցեր ես տալիս, Վլադի՛միր:

— Ների՛ր, Հա՛յր:

— Ի դէպ, այդ վարդապետի անունն էլ է Հայր Վարդան, մի ժամանակ քո ունեցած անուան նման… Այնպէս որ չմոռանաս նրան խնդրել, որ սուրբ կրակի իջման ժամանակ էլ քեզ թողնի տաճարում եւ մօտ կանգնեցնի Բոլորաշէնին[5]: Իսկ հիմա գնանք համբուրենք Գերեզմանը, յետոյ էլ՝ Գողգոթա՝ ժամերգութեան:

Վարդանը հետեւեց Հայր Վադիմին՝ այդպէս էլ ոչինչ չհասկանալով: Նրանք ակնածանքով համբուրեցին Գերեզմանը, յետոյ բարձրացան Գողգոթա… Տաճարում մարդիկ շատ էին: Միաժամանակ աղօթում էին յոյները, կաթոլիկները եւ հայերը… Գերեզմանի վրայ արդէն սկսւում էր յունական Պատարագը, եւ Հայր Վադիմը շտապեց մինչ այդ հանդիպել Հայր Վարդանին… Շուտով նրանք կանգնած էին հայկական բաժնի մօտ՝ այն վայրում, որտեղ Աստուածածինը ուշաթափուել էր՝ տեսնելով խաչուած Որդուն: Պատին Քրիստոսի խաչելութեան վիթխարի խճանկարն էր, կից՝ տաճարի հայ վանահօր-տեսուչի սենեակ տանող դուռը… Վերեւից ասփի-

[5] Սբ. Գերեզմանի վրայ կառուցուած մատուռը:

ճաններով իջնում էր Հայր Վարդանը: Նա մոտեցաւ Հայր Վադիմին, նրանք սիրալիրօրէն գրկախառնուեցին եւ համբուրեցին միմեանց աչքը: Երկուսն էլ ուրախ էին, որ հանդիպել են, քանի որ իրար վաղուց չէին տեսել. զրուցեցին մի տասը րոպէ, մինչ Վարդանը ուշադրութեամբ զննում էր խճանկարային սրբապատկերը, մարմարէ գմբէթի տակ՝ գետնին, դրուած կանթեղը, Աստուածածնի ուշաթափուելու տեղը…

— Վլադի՛միր, մոտեցի՛ր. ահա Հայր Վարդանը, ես նրան ամէն ինչ բացատրեցի, այնպէս որ ծանօթացի՛ր:

— Օրհնեցէ՛ք, Հա՛յր Վարդան:

— Տէ՛րը կ'օրհնի: Վլադի՛միր, յունական Պատարագից յետոյ մերն է… Մերն աւարտւելուն պէս մօտեցի՛ր ինձ, եւ ես քեզ ամէն ինչ կը բացատրեմ, թէ ինչն ինչոց է:

— Տէ՛րը փրկի:

— Դէ ինչ, Հա՛յր Վադիմ, մինչ հանդիպում: Խնդրում եմ աղօթքներ:

— Տէ՛րը փրկի, Հա՛յր Վարդան, ես նոյնպէս աղօթքներ եմ խնդրում:

Վարդանին անչափ ուրախացրել էր երկու տարբեր վանականների, բայց արիւնակից հայերի սիրալիր զրոյցը… Բայց եւ զարմացած էր. չէ՞ որ հայերը չունեն վանականներ, այդ դէպքում ո՞վ էր այս վարդապետը…

Պատարագին բազում ուղղափառ ուխտաւորներ էին ներկայ: Վարդանը հաղորդութիւն ստացաւ՝ նախապէս դեռ Գողգոթայում խոստովանելով Հայր Վադիմին … Յունական Պատարագն աւարտուելուց տասը րոպէ յետոյ տաճարը դատարկուեց… Գերեզմանի առջեւ կանգնած էին մի քանի հայ սպասաւորներ՝ եկեղեցական շապիկներով, ուխտաւորներ Հայաստանից եւ Յարութեան տաճարի տեսուչ հայ վարդապետը… Պատարագ էր մատուցում Հայր Վարդանը… Վարդանն էլ անհամբերութեամբ էր սպասում իր՝ Սուրբ Հեղինէ եկեղեցի գնալուն… Ասփիճաններով իջնելիս նա նոյն հոգեկան ապրումներն ունեցաւ, ինչ առաջին անգամ… Սրբապատկերի առջեւ ծնկի գալով՝ լալագին, անբարբառ աղօթեց հայկական երգեցողութեան մեղեդու ներքոյ… Նա չէր կարողանում հասկանալ, թէ ինչ է կատարւում իր հոգում. այն ճչում-աղաղակում էր մօրը կորցրած մանկան նման…

— Վլադի՛միր, Դուք այստե՞ղ էք:

— Այո՛:

— Հայր Վարդանը Ձեզ է սպասում:

— Արդէն գալիս եմ:

Հայկական Պապարագն արդէն աւարտուել էր. Վարդանին կանչողը սարկաւագներից մէկն էր: Վարդանի համար աննկատ էր անցել մէկ ժամից աւելի, եւ նա արդէն վանահօր սենեակում էր…

— Վլադի՛միր, նե՛րս մտիր, նստի՛ր:

— Հա՛յր Վարդան, խոստովանեմ՝ իմ անունն էլ է Վարդան:

— Իսկ Վլադի՞միրը:

— Ես իբրեւ ուղղափառ եմ Վլադիմիր:

— Ուրեմն դու ուղղափառութիւ՞ն ես ընդունել:

— Այո՛, մկրտուել եմ Վլադիմիր անուամբ:

— Իսկ ի՞նչ է, մկրտուած չէի՞ր:

— Մկրտուել էի Էջմիածնում, երբ քառասուն օրական էի:

— Հասկանալի է. արդէն գլխի ընկայ, թէ մկրտուելուդ մեղաւորն ով է: Հայր Դմիտրի՞ն, չէ՞:

— Այո՛, իսկ Դուք նրան գիտէ՞ք:

— Գիտեմ, գիտեմ, հայերի փրկիչը: Նոյնիսկ անցեալ տարի այստեղ հանդիպել եմ նրան, նրա հետ էր նաեւ մի հայ վանական, ինչքան յիշում եմ Հայր Նիկոլայը:

— Նրա հետ է՞լ էք ծանօթ:

— Ինձ նրա հետ ծանօթացրել է Հայր Վադիմը. խնդրեց, որ զատկական Լուսաւորեայի արարողութեան ժամանակ նրանց պաճար անցկացնեմ: Քեզ համար էլ է խնդրել: Սակաւախօս էին, խուսափում էին զրուցելուց, բայց մեր ճեմարանի սաների հետ հաճոյքով էին շփւում: Ծանօթացնում էին ուղղափառութեանը, պատմում ուղղափառ հրաշքների մասին, իբրեւ օրինակ բերում ուղղափառութիւն ընդունած Հայր Նիկոլային: Այնպիսի տպաւորութիւն էր, որ հոգեպէս հաւաքագրում են: Բայց մեր երեխաները նրանց կիրթ բացատրեցին, թէ ինչն ինչոց է… Այդպիսի բաներ: Իր արմատները, իր ժողովրդի պատմութիւնը չիմացող մարդը հեշտ աւար է:

— Ինչի՞ աւար:

— Տգիտութեան:

— Բայց Հայր Դմիտրին շատ իմաստուն մարդ է եւ լաւ վանական:

— Խօսքը դրան չի վերաբերում. նա փգէփ է հայկական հարցերի մասին խօսելիս. հայերի մասին յիմարութիւններ ու սփեր է դուրս փալիս: Իսկ քեզ եւ Հայր Նիկոլայի նման հասարակ մարդիկ դառնում են նրա խաբէութեան զոհը:

— Ուրեմն նա ինձ խաբե՞լ է:

— Չեմ ասում, որ գիփակցաբար է խաբել: Պարզապէս նա մոլեռանդօրէն հաւափում է իր ասածներին: Նա կարողանում է համոզել. զուր չէ բանակում քաղաքական հարցերով փեդակալ եղել, որքան գիփեմ…

— Այո՛, հին զինուորականներից է:

— Տեսնո՞ւմ ես. նա վախենում է շփուել նրանց հեփ, ովքեր լաւ գիփեն իրենցը, դրա համար էլ խուսափում է: Ինձ թւում է, որ վախենում է ճիշփն իմանալուց. այդ դէպքում ինքն ի՞նչ պէփք է ասի Տիրոջը դափասփանի ժամանակ: Հայր Դմիփրիի նման հայերին վերամկրփողները ՌՈԻԵ[6]-ում մի քանիսն են, որոնց հեփ համամիփ չեն ՌՈԻԵ-ի շափ հոգեւորականներ: Նոյնիսկ Հայր Վադիմն էլ սկզբում այդպէս՝ Հայր Դմիփրիի նման էր մփածում, բայց հիմա չի ընդունում այդ փորձառութիւնը. հոգեւոր եւ հասկացող մարդ է: Մենք շափ ենք զրուցել եւ բարեկամութիւն ենք անում ի Քրիսփոս:

— Բայց ո՞րն է նրա խաբէութիւնը:

— Կռահում եմ, թէ ինչ է ասել. հայերը չունեն սրբապափկերներ, խոսփովանութիւն եւ վանականութիւն, քանի որ միաբնակ-հերեփիկոսներ են: Իսկ ահա, որպէս ուղղափառութեան ապացոյց՝ բերում է սուրբ կրակը… Սրանք են նրա հիմնական դրոյթները…

— Իսկ կարո՞ղ էք ապացուցել նրա մոլորութիւնը:

— Վարդա՛ն, չեմ պափրասփւում ապացուցել: Ներիՙր, որ քեզ այդպէս եմ դիմում: Եթէ ուզում ես իմանալ, հարցե՛ր փուր, իսկ ընդունելը կամ մերժելը քո կամքն է: Բայց ինչպէս փեսնում եմ, արդէն քնում ես: Արի այս խօսակցութիւնը թողնենք յեփագային, քանի որ ես էլ պէփք է հանգսփանամ:

— Ինչ որ ասէք, Հա՛յր Վարդան:

— Իսկ մինչ այդ որոշենք, թէ քեզ որփեղ ենք փեղաւորելու: Մի փե՛ս, ամբողջովին ուժասպառ ես, եւ այսփեղ մնալդ անիմասփ է. դու պէփք է քունդ առնես եւ ուփես, թէ չէ մինչեւ Ջափիկ չես ձգի. ո՛չ առաջինն ես, ո՛չ էլ՝ վերջինը:

---

[6] Ռուս Ուղղափառ Եկեղեցի:

— Այսպեղ կը մնամ:

— Այսպեղ՝ որպե՞ղ. այսպեղ չես հանգսպանայ: Արի գնանք իմ վանք. այնպեղ սենեակ կայ, քունդ կ'առնես: Յեպոյ մեր ուխպաւորների հեպ կը ճաշես, եւ մէկին մօպ միասին կը գանք Տաճար. ես ժամը մէկին ժամերգութիւն ունեմ: Իսկ յեպոյ մնա մինչ վաղն առաւօպ: Ես այսպեղ բոլոր պղաներին եւ վանահօրը նախազգուշացրել եմ. այնպէս որ ամէն ինչ լաւ կը լինի, մի՛ մպահոգուիր: Գնանք, արդէն ժամը վեցն է…

Երգեհոնի երաժշպութեան ներքոյ կաթոլիկները Գերեզմանին Պապարագ էին մապուցում: Տաճարում կաթոլիկ ուխպաւորներ էին եւ հոգեւորականութիւն… Վարդանը ցաւ էր զգում՝ մպածելով, որ իրեն խաբել են, սակայն ինչ երաշխիքներ կան, որ նրան այս անգամ էլ չեն խաբի: Երաշխիքներ չկային: Բայց միւս կողմից Վարդանը յոյս էր փայփայում, որ իր խաչն իրեն կ’օգնի:

Նա եւ Հայր Վարդանը քայլում էին լուռ… Շուկայից դուրս գալով՝ նրանք թեքուեցին ձախ եւ անցան մինչեւ ոսփիկանական պեղամաս, որպեղից մի նեղ ճանապարհ էր բացւում՝ Հայոց Ուղղափառ Պապրիարքութեան փողոցը: Փողոցով առաջանալով՝ անցան կամարի պակով: Փողոցից աջ Հայկական ճեմարանի վանդակապապ ցանկապապն էր, իսկ ձախ՝ Հայոց Պապրիարքութեան մուպքը եւ Սրբոց Յակոբեանց վանքը: Այսպէս նրանք յայպնուեցին մեծ, գեղեցիկ բակում… Անցնելով մապենադարանը, վարժարանը եւ հին քաղաքի ամենամեծ ֆուպբոլային դաշպը՝ նրանք յայպնուեցին Սրբոց Հրեշպակապեպաց վանքի բակում: Հայր Վարդանը գնաց իր խուց՝ Վարդանին յապկացուելիք սենեակի բանալիները վերցնելու…

Վարդանին արթնացրեց ռուսերէն խօսակցութիւնը… Ժամը պասն էր… Ռոսպովից եւ Մոսկուայից ժամանած հայ ուխպաւորները բարձրաձայն զրուցում էին՝ կիսելով ուխպագնացութիւնից սպացած իրենց պպաւորութիւնները… Վարդանը միացաւ նրանց. նրան ջերմութեամբ ընդունեցին: Ուխպաւորների մէջ կանայք կային, որոնք բազմիցս էին եղել Սուրբ Երկրում… Վարդանը խնդրեց նրանց պապմել հայկական սրբավայրերի եւ այս վանքի մասին, քանի որ ոչինչ չգիպէր… Նրան նուիրեցին Սրբոց Հրեշպակապեպաց վանքի մասին մի գրքոյկ եւ Հայր Վարդանի՝ Հայ Երուսաղէմի մասին պապմող

գիրքը՝ ասելով, որ դրանցից նա նաեւ կ'իմանայ, թէ ինչու Հայ Եկեղեցին չի ընդունել Քաղկեդոնի Ժողովը… Վարդանին այս թեման հեփաքրքրեց… Հինգ րոպէ յետոյ նա, այլեւս չկարողանալով կփրուել, կարդում էր իր սենեակում …

## Սրբոց Հրեշփակապեփաց Վանքը

Այս վանքը կառուցուած է Աննա Քահանայապեփի փան փեղում: Սա այն քահանայապեփն է, որի առջեւ կալանաւորուած Քրիսփոսին բերին առաջին հարցաքննութեան: Այս դէպքի մասին Առաքեալ եւ Աւեփարանիչ Յովհաննէսը գրում է. «*Զինուորները, հազարապետը և հրեայ ղեկավարների սպասաւորները բռնեցին Յիսուսին և կապեցին: Եւ նախ տարան Աննայի մօտ, որը այդ տարուայ քահանայապետի՝ Կայիափայի աներն էր...: Քահանայապետը հարցեր ուղղեց Յիսուսին՝ նրա աշակերտների և ուսուցումների մասին: Յիսուսը պատասխանեց.*

*— Ես հրապարակօրէն խօսել եմ բոլորի առաջ, միշտ ուսուցանել եմ ժողովարաններում և տաճարում, որտեղ հաւաքւում էին բոլոր հրեաները. ես բնաւ գաղտնի բան չեմ խօսել: Ինչո՞ւ ես հարցնում ինձ, հարցրո՛ւ նրանց, ովքեր լսել են, թէ ի՛նչ եմ ասել իրենց, ահա նրանք գիտեն, թէ ի՛նչ եմ խօսել:*

*Յիսուսը հազիւ էր այս խօսքերն ասել, երբ սպասաւորներից մէկը, որ այնտեղ կանգնած էր, մի ապտակ խփեց Յիսուսին՝ ասելով.*

*— Այդպէ՞ս ես պատասխանում քահանայապետին:*

*Յիսուսն ասաց նրան.*

*— Եթէ մի սխալ բան ասացի, ցո՛յց տուր սխալը, իսկ եթէ ուղիղ է ասածս, ինչո՞ւ ես խփում ինձ:*

*Յետոյ, Աննան Յիսուսին կապուած էլ ուղարկեց Կայիափա քահանայապետի մօտ*» (Յովհ. ԺԸ:12-13, 19-22):

Ըսփ Հայ Եկեղեցու աւանդութեան, երբ սպասաւորը Յիսուսին ապփակեց, երկնային Սերովբէները իրենց թեւերով դէմքները ծածկեցին: Աստուածորդու ապփակահարութիւնը սարսափեցրեց հրեղէն արարածներին: 12-րդ դարում Սուրբ Ներսէս Շնորհալի Կաթողիկոսը իր շարականներից մէկում այս մասին գրում է.

«*Ծառայն զերեսն այն ապտակէր. Յորմէ Սրովբէն թեւաըքօղէր…*»:

Հնագոյն ժամանակներից մինչեւ մեր օրերը Սբց. Հրեշտակապետաց վանքը հայոց սեփականութիւնն է: Եկեղեցական աւանդութիւնը հաստատում է, որ Աննայի տան տեղում կառուցուած վանքը առաջին դարում հիմնել է հայոց Աբգար թագաւորի կինը՝ Հեղինէ թագուհին: Իսկ մատուռը 4-րդ դարում կառուցել են Սբ. Գրիգոր Լուսաւորիչն ու Հայոց Թագաւոր՝ Սբ. Տրդատը:

Ըստ պատմագիրների՝ XII դարում պատերազմի մեկնող մի հայ իշխան խնդրում է Ս. Միքայէլ եւ Գաբրիէլ Հրեշտակապետերի օգնութիւնը: Յաղթանակից յետոյ մատուռը վերածում է Ս. Հրեշտակապետերի անուններով եկեղեցու:

1286 թ. Կիլիկիայի Լեւոն III թագաւորը վանքը շրջապատում է քարէ պարիսպով:

Արաբներն այս վանքը կոչում են «*Տէյր էլ Զէյթունէհ*» (Ձիթենեաց Վանք), ի պատիւ այն ձիթենու, որին կապեցին Փրկչին՝ Աննայի տանը հարցաքննելուց առաջ: Այս ծառը գտնւում է Վանքի բակում, որի հրաշագործ պտուղները մինչ օրս բժշկում են կանանց ամլութիւնը:

Սրբազան Ձիթենուց մի քանի մետր այն կողմ՝ Սբց. Հրեշտակապետաց եկեղեցու պատի մէջ, մի քար կայ, որի մակերեսին մարդկային բերան յիշեցնող խոր մի հետք կայ: Ինչպէս հաստատում են, այդ քարը Ովսաննայի Քարն է, մէկն այն օրհնեալ քարերից, որոնք աղաղակեցին, երբ մեր Տէրը հանդիսաւոր մուտք գործեց Երուսաղէմ:

«*Եւ ամբողջ բազմութիւնը, որ թափօրի մէջ Յիսուսի առջեւից էր գնում կամ հետեւում նրան. աղաղակում էր. Օրհնութի՜ւն Դաւթի Որդուն, օրհնեա՜լ է նա, որ գալիս է Տիրոջ անունով: Օրհնութի՜ւն Բարձրեալին (Մատթ. ԻԱ:9): «Փարիսեցիներից ոմանք ամբոխի միջից ասացին Յիսուսին. Վարդապե՛տ, սաստի՛ր աշակերտներիդ, որ լռեն: Յիսուսը պատասխանեց. Ասում եմ ձեզ, որ եթէ դրանք լռեն, քարերը կ՚աղաղակեն*» (Ղուկ. ԺԹ: 39-40):

III դարի վերջում Հռոմի Դիոկղետիանոս կայսրը իմացաւ կուսանոցում ապրող Հռիփսիմէի գեղեցկութեամբ եւ ցանկացաւ կնութեան առնել նրան... Սակայն պաշտպանելու համար իր անաղարտութիւնն ու հաւատքը, Հռիփսիմէն ընկերուհիների եւ իրենց ղեկավար Գայիանէի հետ փախչելով Հռոմից եկան Երուսաղէմ եւ բնակուեցին այս նոյն Վանքում:

Սակայն Տէրը նրանց առաջնորդեց դէպի Հայաստան, ուր նրանց սպասում էր «*Մարտիրոսութեան պսակը*»:

XVIII դարում Երուսաղէմի Հայոց Պատրիարք Գրիգոր Շղթայակիրը ի պատիւ Սբց. Հռիփսիմեանց կոյսերի, Սբց. Հրեշտակապետաց եկեղեցում կառուցում է նրանց անունով մի խորան:

Վանքի եկեղեցին ունի անսովոր մեծ գաւիթ, որի արեւելեան անկիւնում գտնւում է Չարչարանաց Սուրբ Սեղանը, իսկ հարաւային պատին՝ մկրտարանը: Երկփեղկանի նախշազարդ երկաթեայ դուռը գաւիթից առաջնորդում է դէպի ոչ մեծ բազիլիկան, որը յատակագծով ուղղանկիւն է եւ սիւներով նաւերի բաժանուած:

Եկեղեցին ունի երեք Ս. Սեղան. միջին խորանը Փրկչի անունով է կոչւում, իսկ միւս երկուսը՝ Միքայէլ եւ Գաբրիէլ Սբց. Հրեշտակապետերի անուններով: Եկեղեցու հիւսիսային պատի անկիւնում է գտնւում փոքրիկ մի մատուռ՝ զարդարուած մարմարեայ բարձրաքանդակներով: Սեղանի ներքեւի մասի վերեւում գտնուող մշտավառ կանթեղները լուսաւորում են Առաջին Բանտ կոչուող այս սրբավայրը, ուր կանգնած էր Փրկիչը Աննա Քահանայապետի առջեւ հարցաքննութեան ժամանակ: Սբ. Յովհաննէսի անունով փոքրիկ մատուռը գտնւում է հարաւային կողմում, որի պատի միւս ծայրին տեսնում ենք Սբց. Հռիփսիմեանց մատուռի մուտքը:

Սբց. Հրեշտակապետաց Վանքը եղել է Կուսանոց, ուր մինչեւ XX դարի վերջերը ապրել են մայրապետ բնակիչներ: Վերջին երկու տարիներին հաւատացեալների նուիրատուութիւններով խցերից շատերը վերանորոգուեցին ու ծառայում են որպէս «*Ուխտաւորաց Տուն*»:

## Հայ Երուսաղէմը եւ Հայաստանը

Այսօր Հայաստանի Հանրապետութիւնը կազմում է պատմական Հայաստանի փոքր մասը միայն՝ մէկ տասներորդից աւելի քիչ: Հայերի պետութիւնը, ինչպէս այն կոչում էին հին ժողովուրդները՝ Armenia Maior (Մեծ Հայք), ձգւում էր Հայկական բարձրավանդակում՝ Անատոլիայից հիւսիս-արեւելք՝ զբաղեցնելով 400000 քկմ-ից աւելի տարածք, որը բոլոր կողմերից բաւականին որոշակիօրէն սահմանափակւում էր գետերով եւ լճերով. արեւելքում՝ Կասպից ծովով, հիւսիսում՝

Քուռ գետով, արեւմուտքում՝ Եփրատով, հարաւում՝ մասամբ Տիգրիսով, մասամբ Ուրմիա լճով: Այդ լայնարձակ տարածքի համարեայ կենտրոնում վեհօրէն վեր են խոյանում Մեծ եւ Փոքր Արարատների (5165մ եւ 3925մ) երկու գագաթները, որոնց լանջերին, ըստ բիբլիական աւանդութեան, հանգրուանել է Նոյի տապանը:

«*Եօթներորդ ամսի քսանեօթին տապանը նստեց Արարատ լերան վրայ: Ջուրը մինչև տասներորդ ամիսը գնալով նուազում էր. տասնմէկերորդ ամսի առաջին օրը երևացին լեռների գագաթները*» (Ծն. Ը, 4-5):

Այդ տարածքից արեւմուտք՝ Եփրատից այն կողմ՝ հիւսիսում Սեբաստիա եւ հարաւում Մելիտենա քաղաքների միջեւ, ձգւում է հին ժողովուրդների կողմից Armenia Minor (Փոքր Հայք) անուանուած երկրամասը: Պետք չէ շփոթել այս հնագոյն Փոքր Հայքը եւ նոյնպէս Փոքր Հայք կոչուող Կիլիկիայի հայկական պետութիւնը, որ 1080-1375թթ. գոյութիւն է ունեցել Միջերկրական ծովի ափին:

Դրանից բացի Աստուածաշնչում բազմիցս յիշատակւում են «*Արարատեան լեռները*» եւ «*Արարատի աշխարհը*»: Այսպիսով, Հայաստանը եւ հայ ժողովուրդը քրիստոնէութիւն ընդունելուց դեռ շատ առաջ են առնչւում փրկագործութեան պատմութեան սկզբին:

Եւ այսպէս, համաշխարհային ջրհեղեղի աւարտին Նոյի տապանը հանգրուանում է Արարատ լերան լանջերին: Նրա հետ տապանից իջնում են երեք որդիները՝ Սէմը, Քամը եւ Յաբէթը. վերջինիս երեխաները եօթն էին, այդ թւում եւ Գամերը: Գամերը ծնում է Թորգոմին (հմմտ.՝ Ծն. Ժ, 1-3): Նրանից են սերում կովկասեան ժողովուրդներին եւ նրանց հարեւաններին սկզբնաւորող բազմաթիւ երեխաներ, այդ թւում եւ հայերի նախահայր Հայկը:

Ըստ Մովսէս Խորենացու պատմութեան՝ Հայկը, չկամենալով հնազանդուել Նեբրովթին, որը ցանկանում էր, որ երկրի բոլոր բնակիչները երկրպագեն իրեն իբրեւ Աստծու, Բաբելոնում Արամանեակ որդու ծնուելուց յետոյ, գնումհաստատւում է Արարատի երկրում (այստեղ Նոյն իր առաջին զոհն է մատուցում Կենդանի Աստծուն), որ գտնւում է հիւսիսային կողմերում՝ իր որդիներով, դուստրերով, որդիների որդիներով, զօրաւոր մարդկանցով՝ թւով մօտ երեք հարիւր հոգի, ընդոծինների եւ ողջ ունեցուածքով իրեն յարած

եկուորների ուղեկցութեամբ: Ներրովթը, հաստատելով իր իշխանութիւնը, հաւատարիմ մարդկանց ուղեկցութեամբ հիւսիս է ուղարկում որդիներից մէկին՝ Հայկին առաջարկելով հնազանդուել իրեն և խաղաղ ապրել. «*Դու ցուրտ սառնամանիքների մէջ բնակուեցիր,- ասում է նա Հայկին,- սակայն տաքացրո՛ւ և մեղմացրո՛ւ քո հպարտ բնաւորութեան ցուրտ սառնութիւնը և ինձ հնազանդուելով խաղաղ ապրի՛ր իմ երկրում, որտեղ դու կը հաճես բնակուել*»: Բայց Հայկը, խստութեամբ պատասխանելով, ետ է ուղարկում Ներրովթի պատգամաւորներին:

Այն ժամանակ Ներրովթը, զօրք ժողովելով, գալիս է հիւսիս՝ Արարատի երկիր: Գեղազանգուր մազերով, ուշիմ, խոհեմ հսկան, շտապ հաւաքելով որդիներին և թոռներին, քաջ մարդկանց եւ հմուտ նետաձիգների՝ շատ սահմանափակ թուով, համախմբելով նաեւ իր իշխանութեան ներքոյ գտնուող մարդկանց, ասում է նրանց. «...*կա՛մ մեռնենք և մեր ամբողջ գերդաստանն ընկնի Ներրովթի ծառայութեան տակ, կա՛մ մեր մատների կորովը նրա վրա ցոյց տանք, ցրենք նրա խառնամբոխը և յաղթանակ տանենք*»... Ներրովթի բանակը պարտւում է, իսկ Ներրովթը՝ սպանւում Հայկի կողմից (այս ճակատամարտում էլ դրւում է հայ ժողովրդի ճակատագրի հիմքը): Սրանից յետոյ Հայկն իր ժողովրդով հաստատւում է այս երկրում: Դրա համար էլ մեր երկիրը նախահօր անունով կոչւում է Հայք կամ Հայաստան:

## Հայերը Սուրբ Երկրում

Երուսաղէմում հայերի քրիստոնէական ներկայութիւնը վերաբերում է 301թ. նախորդող՝ քրիստոնէութեան վաղ դարաշրջանին՝ Տրդատ արքային դարձի բերելուն և քրիստոնէութեան համաշխարհային պատմութեան մէջ առաջին անգամ քրիստոնէութիւնը պետական կրօն ընդունելուն:

Մկրտիչ վարդապետ Արծրունեանը «*Ստորագրութիւն Սրբոյ քաղաքին Երուսաղէմի*» աշխատութեան մէջ (1859 թ.), վկայակոչելով մի հին ձեռագիր, յիշատակում է Եդեսիայում իշխող Սբ. Աբգար հայոց արքայի կնոջը՝ Հեղինէին: Բարեպաշտ Հեղինէ թագուհին, թողնելով արքունի փառքը, գնում է Երուսաղէմ, որտեղ Տիրոջ տնօրինականաց տեղերում՝ Սուրբ Վայրերում, մատուռներ է կառուցում: Նրա մասին է յիշատա-

կում նաև Մովսէս Խորենացին. «*Այս Հեղինէն, որ իր ամուսնու՝ Աբգարի նման զինուած էր հաւատով, չհանդուրժեց կռապաշտների մէջ բնակուել, այլ գնաց Երուսաղէմ Կղավդիոսի օրոք, այն սովի ժամանակ, որ գուշակել էր Ագաբոսը: Եւ Եգիպտոսում իր բոլոր գանձերը տուեց, մեծ քանակութեամբ ցորեն գնեց և բաժանեց բոլոր կարօտեալներին. այս բանը հաստատում է և Յովսէփոսը: Նրա շիրիմը՝ յայտնի նշանով, մինչև այսօր էլ կայ Երուսաղէմում՝ դրան առաջ*»:

Առկայ է նաեւ պատմական վկայութիւն այն մասին, որ արդէն 254թ. Հայ Եկեղեցւոյ եպիսկոպոսները, յոյն եկեղեցւոյ եպիսկոպոսների հետ Երուսաղէմում ու Աղեքսանդրիայում (Եգիպտոս) ակտիւօրէն զբաղւում էին Յիսուս Քրիստոսի գործունէութեանը վերաբերող Սուրբ Վայրերի որոնմամբ եւ վաւերացմամբ, այլեւ վաղ քրիստոնէական արժէքները պահպանելու համար շէնքեր կառուցելով:

Այնուհետեւ, յիշատակելով հայ հին պատմագիրների վկայութիւնները՝ Սբ. Գրիգոր Տաթեւացին (XIV-XV դդ.) աշխատութիւններում նշում է հետեւեալը. 315թ. Սբ. Գրիգոր Լուսաւորիչը Հայաստանը աստուածիմացութեամբ եւ բոլոր ուղղափառ կանոններով լուսաւորելուց, այլեւ աւելի քան չորս հարիւր երեսուն եպիսկոպոս ձեռնադրելուց յետոյ Սբ. Տրդատ արքայի եւ բազմահազարանոց զօրքի հետ ուղեւորւում է Հռոմ՝ Սբ. Պետրոս եւ Սբ. Պօղոս առաքեալների մասունքներին երկրպագելու, նաեւ եղբայրական դաշինք եւ միութիւն կնքելու Սբ. Կոնստանդինի եւ Հռոմի քահանայապետ Սբ. Սեղբեստրոսի հետ: Հռոմում Սբ. Գրիգորին մեծարում են իբրեւ Քրիստոսի վկայ եւ նահատակ: Նրան են փոխանցում առաքյալների մասունքները եւ շատ այլ ընծաներ: Այնուհետեւ բաշխւում-բաժանւում են Սուրբ Վայրերը: Հայերը ստանում են Սբ. Յակոբի մատուռը (այսօր Երուսաղէմում Սրբոց Յակոբեանց հայոց վանք, որտեղ գտնւում են Սբ. Յակոբ Զեբեդէոսի գլուխը եւ Տեառնեղբօր՝ Սբ. Յակոբի մասունքները), Գողգոթան եւ շատ այլ սրբավայրեր: Տիրոջ Գերեզմանի պահապաններն ընտրւում են վիճակահանութեամբ: Եւ դարձեալ բախտը ժպտում է հայերին: Միւս յաւակնորդները վշտանում են, եւ խոնարհ Սբ. Գրիգորը զիջում է, որպէսզի միասին կառուցեն Տիրոջ Սբ. Գերեզմանի տաճարը: Եւ երբ բաշխւում են բոլոր սրբավայրերը, Գերեզմանին կանթեղներ են կախում՝ յանուն քրիստոնեայ ազգերի…

Մկրտիչ եպիսկոպոս Աղաւնունին «*Սուրբ Երկրին սրբավայրերուն աւանդութիւնները*» աշխատութեան մէջ (1936 թ.) մէջբերում է վարդապետ Անաստասի «*Վասն վանորէից, որ ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ*» (VII դ.) աշխատութիւնից մի հատուած այն մասին, որ Սբ. Տրդատ արքայի կառավարման եւ Սբ. Գրիգոր Լուսաւորչի հայրապետութեան օրօք շատ հայ իշխաններ եկեղեցիներ եւ վանքեր են կառուցում Սուրբ Վայրերում: Յիշատակւում են մեծ եկեղեցիները, ինչպէս՝ Գողգոթան (այն ժամանակ Տիրոջ Գերեզմանից առանձին էր), Ծննդեան, Սրբոց Յակոբեանց, Սրբոց Հրեշտակապետաց (Աննա քահանայապետի տունը), Սբ. Փրկիչ (Կայիափա քահանայապետի տունը), Սբ. Վերնատուն (Վերջին Ընթրիքի վայրը), Սբ. Համբարձման (Համբարձման վայրը), Տիրոջ Սբ. Գերեզմանի (կառուցուել է միւս քրիստոնեաների հետ) եկեղեցիները. սրանք բոլորը կառուցւում են դեռեւս Սբ. Տրդատ արքայի եւ Սբ. Գրիգոր Լուսաւորչի օրօք: Սբ. Ներսէսի կարգադրութեամբ կառուցւում են նաեւ միւս եկեղեցիները եւ վանքերը՝ հայերի աղօթքի եւ փրկութեան համար: Այսպիսով, արդէն VII դ. Սուրբ Երկրում հայերի կառուցած եկեղեցիներն ու վանքերը շուրջ եօթանասունն էին…

## Սուրբ Աբգարը եւ Հերովդէսը

«*Այն օրերին Օգոստոս կայսեր կողմից հրաման ելաւ՝ ամբողջ երկրում մարդահամար անելու համար*» (Ղուկ. Բ, 1):

Մեր Փրկչի ծնուելու ժամանակ Փոքր Հայքի թագաւորն Աբգարն էր, որին իր ոչ սովորական համեստութեան եւ իմաստնութեան, այլեւ փարիքի պատճառով կոչում էին «**Աւագ Այր**»: Յոյները եւ ասորիները, չկարողանալով ճիշտ արտասանել աւագ այր, նրան անուանում էին Աբգարոս: Նրա թագաւորելու երկրորդ փարում Փոքր Հայքը, ինչպէս եւ Մեծ Հայքը, ամբողջովին հարկատու է դառնում հռոմէացիներին: Օգոստոս կայսեր հրամանով ամբողջ փիեզերքով բնակչութեան մարդահամար պէտք է անցկացուէր: Եւ այդ նպատակով Հռոմից Հայաստան են ուղարկւում պաշտօնեաներ, որոնք իրենց հետ բերում են Օգոստոս կայսեր արձանները եւ դրանք տեղադրում բոլոր տաճարներում:

Այդ ժամանակ Պաղեստինի կառավարիչը Հերովդէսն էր, որը հրամայում է Բեթղեհէմում սպանել բոլոր մանուկներին:

*«Այն ժամանակ, երբ Հերովդէսը տեսաւ, որ մոգերից խաբուեց, սաստիկ բարկացաւ և մարդ ուղարկեց ու կոտորեց այն բոլոր մանուկներին, որ Բեթղեհէմում և նրա սահմաններում էին գտնւում և երկու տարեկան ու դրանից ցած էին՝ ըստ այն ժամանակի, որ ստուգել էր մոգերից»* (Մատթ. Բ, 16):

Սոյն Հերովդէսը նաեւ հրամայում է, որ հայկական տաճարներում Օգոստոս կայսեր պատկերի կողքին տեղադրուի նաեւ իրենը, որին Աբգարը չի համաձայնում: Հերովդէսը, օգտուելով այս պատրուակից, Պարսկաստանը ամայացնելու նպատակով թրակիացիների եւ գերմանացիների զօրքեր է ուղարկում, որ պէտք է անցնէին Փոքր Հայքով: Աբգարը չհամաձայնելով ընդդիմանում է Հերովդէսի այդ որոշմանը՝ յայտարարելով, որ այդ զօրքերը, կայսեր հրամանի համաձայն, պէտք է Պարսկաստան անցնեն անապատով: *«Հերովդէսը դառնանում է, բայց անձամբ ոչինչ չի կարողանում ձեռնարկել՝ բազմաթիւ հիւանդութիւններով բռնուած. Քրիստոսի դէմ յարձակուելու պատճառով նա որդնալից էր եղել, ինչպէս պատմում է Յովսէփոսը: Նա ուղարկում է Յովսէփ եղբօրորդուն, որին ամուսնացրել էր իր դստեր հետ, որն էլ նախկինում եղել էր իր եղբօր՝ Փերուի կինը: Նա մեծ շքախմբով հասնում է Միջագետք և Աբգարին հանդիպում է Բուգնան գաւառում: Ճակատամարտում սպանւում է, իսկ զօրքը փախուստի է դիմում: Սրանից յետոյ մահանում է նաև Հերովդէսը, իսկ Օգոստոսը հրեաների ազգապետ է նշանակում նրա Արքեղայոս որդուն»* (Մովսէս Խորենացի):

*«Երբ Հերովդէսը վախճանուեց, ահա Տիրոջ հրեշտակը երազի մէջ երևաց Յովսէփին Եգիպտոսում և ասաց. «Վե՛ր կաց, վերցրո՛ւ այդ մանկանն ու իր մօրը և վերադարձի՛ր Իսրայէլի երկիրը, որովհետև մեռան նրանք, որ այդ մանկան մահն էին ուզում»: Եւ Յովսէփը վեր կացաւ, առաւ մանկանն ու մօրը և եկաւ Իսրայէլի երկիրը: Իսկ երբ լսեց, թէ Արքեղայոսը թագաւորել է Հրէաստանի վրայ իր հօր՝ Հերովդէսի փոխարէն, վախեցաւ այնտեղ գնալ. և երազի մէջ հրաման առնելով՝ գնաց Գալիլիայի կողմերը և եկաւ բնակուեց Նազարէթ կոչուող քաղաքում, որպէսզի կատարուի մարգարէների խօսքը, թէ՝ Նազովրեցի պիտի կոչուի»* (Մատթ. Բ, 19-23):

Շուտով մահանում է նաեւ Օգոստոսը, եւ հռոմէական գահին նրան փոխարինում է Տիբերիոսը, որի զարմիկ Գերմանիկոսն անարգում է Արշաւիրի (պարսից արքայ) եւ

Աբգարի՝ Հռոմ ուղարկած մեծապոհիմիկներին՝ նրանց մղած պատերազմի պատճառով, որի ժամանակ սպանուել էր Հերովդէսի եղբօրորդին: Դրանից կատաղած՝ Աբգարը ապստամբութիւն է ծրագրում եւ պատերազմի է նախապատրաստւում. քաղաք է կառուցում այն վայրում, որտեղ ժամանակին հայոց պահապան գունդը Եփրատը պահպանում էր Կասսիոսից, եւ անուանում այն Եդեսիա: Բայց Աբգարին չի յաջողւում իրականացնել ծրագրած ապստամբութիւնը Պարսից թագաւորութեան մէջ ծագած գժտութիւնների պատճառով: Քանի որ Արշաւիրի մահից յետոյ թագաւորում է նրա որդին՝ Արտաշէսը, իսկ վերջինիս եղբայրները ընդդիմանում են նրան: Այդ ժամանակ Աբգարը զօրք է ժողովում եւ դիմում Արեւելք՝ եղբայրներին հաշտեցնելու եւ խռովութեանը վերջ դնելու համար: Նա կարողանում է հաշտեցնել եղբայրներին՝ դաշինք հաստատելով նրանց միջեւ: Կարգաւորելով ամէն ինչ եւ իր հետ վերցնելով նաեւ դաշնագիրը՝ Աբգարը վերադառնում է՝ վատառողջ, վարակուած դաժան հիւանդութեամբ, որը ոչ մի մարդ չէր կարող բուժել…

### Աբգարի նամակը Յիսուս Քրիստոսին

«*Այնտեղ կային նաև որոշ թուով հեթանոսներ՝ նրանց մէջ, որ Երուսաղէմ էին եկել, որպէսզի տօնի ժամանակ երկրպագութիւն անեն: Նրանք մօտեցան Փիլիպպոսին, որ Գալիլիայի Բեթսայիդա քաղաքից էր. աղաչում էին նրան ու ասում. «Տէ՛ր, ուզում ենք Յիսուսին տեսնել»: Փիլիպպոսը եկաւ և Անդրէասին ասաց: Անդրէասը և Փիլիպպոսն էլ Յիսուսին ասացին: Եւ Յիսուս նրանց պատասխանեց ու ասաց. «Հասաւ ժամը, որ փառաւորուի մարդու Որդին*» (Յովհ. ԺԲ, 20-23):

Աբգարը, որպէսզի բացատրի Արեւելք իր այցելութեան պատճառը, Մարինի՝ Փիւնիկիայի, Սիրիայի եւ Միջագետքի նորանշանակ հազարապետի մօտ է ուղարկում իր մեծապոհիմիկներին՝ Աղձնիքի բդեշխ Մար Իհաբին և Ապահունիների տոհմի նախապետ Շամշագրամին, նրանց հետ էլ իր հաւատարիմ Անանին: Մարինը, բարեկամաբար եւ պատիւներով ընդունելով նրանց, Աբգարին է փոխանցում իր պատասխանը. «*Այդ առիթով մի՛ վախեցիր կայսրից. միայն ճշտապահօրէն և լիովին վճարի՛ր հարկը*»:

Հեպդարձին բանագնացները Աբգարի հրամանով, որը շատ էր լսել Քրիստոսի հրաշքների մասին, ուղեւորւում են Երուսաղէմ, որպէսզի տեսնեն Նրան:

Վերադառնալով Աբգարին պատմում են Քրիստոսի հրաշքների մասին, որոնց ականատեսն են լինում Երուսաղէմում: Լսելով նրանց պատմութիւնները՝ Աբգարն անկեղծօրէն հաւատում է Քրիստոսին, եւ որ հենց Նա է Աստծու Իրական Որդին. «*Դրանք ոչ թէ մարդու, այլ Աստծու զօրութիւններ են, որովհետև մարդկանցից ոչ ոք չի կարող յարութիւն տալ մեռածներին, այլ միայն Աստուած*»:

Այդ ժամանակ Աբգարը նամակ է գրում Քրիստոսին՝ գալու եւ իրեն բժշկելու խնդրանքով. «*Աբգարը՝ Արշամի որդին՝ երկրի տէրը, Երուսաղէմում յայտնուած բարեպաշտ և Փրկիչ Յիսուսիդ ողջոյն է յղում: Լսել եմ քո մասին և այն բժշկութիւնների մասին, որ կատարւում են քո ձեռքերով առանց դեղերի և արմատների, որովհետև, ինչպէս ասում են, դու բացում ես կոյրերի աչքերը, կաղերին քայլեցնում ես, մաքրում ես բորոտներին, վանում ես չար ոգիներին, ապաքինում ես նաև երկարատև հիւանդութիւններով տառապողներին: Դու նոյնիսկ կենդանացնում ես մեռածներին: Երբ այս ամէնը լսեցի քո մասին, մտքումս դրեցի այս երկուսից մէկը. կա՛մ դու Աստուած ես, որ երկնքից իջել և այս բաներն ես անում, կա՛մ Աստծու Որդին ես, որ այդ անում ես: Դրա համար խնդրանքով դիմում եմ քեզ՝ նեղութիւն կրես, գաս ինձ մօտ և բժշկես հիւանդութիւնս, որ տանջում է ինձ: Լսել եմ նաև, որ հրեաները քեզանից դժգոհում են և ցանկանում են քեզ չարչարանքների մատնել. ես մի փոքր և գեղեցիկ քաղաք ունեմ, որ երկուսիս էլ բաւական է*»:

Անանը եւ Աբգարի նամակը տանող միւս բանագնացները Յիսուսին հանդիպում են Երուսաղէմում: Այդ մասին է գրում Մովսէս Խորենացին՝ վկայելով Աւետարանի խօսքերը. «*Նրա մօտ եկածներից ոմանք հեթանոսներ էին*» (տե՛ս Յովհ. ԺԲ, 20-23): Նամակը ստանալով՝ Տէրն Ինքը չի ցանկանում ընդառաջել Աբգարին, բայց եւ պատասխանում է նրան Թովմաս Առաքեալի գրած նամակով. «*Երանի՜ նրան, ով ինձ հաւատում է՝ ինձ տեսած չլինելով, որովհետև իմ մասին գրուած է՝ ինձ տեսնողները չեն հաւատալու ինձ, չտեսնողները կը հաւատան և կ'ապրեն: Իսկ այն մասին, ինչ դու ինձ գրում էիր, որ գամ քեզ մօտ, ապա պէտք է այստեղ կատարեմ այն ամէնը, ինչի համար ուղարկուել եմ: Եւ երբ այս բոլորը կ'ատարեմ, կը*

*համբարձուեմ նրա մօտ, ով ինձ ուղարկել է: Երբ համբարձուեմ, քեզ մօտ կ'ուղարկեմ այստեղի իմ աշակերտներից մէկին, որպէսզի նա բժշկի քո հիւանդութիւնները և կեանք շնորհի քեզ և քո մտերիմներին*»:

Աբգարի կարգադրութեամբ բանագնացների հետ է լինում նաեւ մի նկարիչ, որը պէտք է բնանկարէր Տիրոջ Աստուածային Դէմքը: Բայց նա ոչ մի կերպ չէր կարողանում նկարել Տիրոջը, որովհետեւ Նրա Աստուածային Դէմքը փոփոխւում էր փառքից փառք: Այդ ժամանակ Տէրը դնում է կտաւն Իր Դէմքին, որի վրայ պատկերւում է Նրա Աստուածային Դէմքը… Անանը Տիրոջ Դէմքի կենդանագիր պատկերը նամակի հետ բերում է Աբգարին…

## Առաքեալները Հայաստանում

Շատ չանցած՝ մեր Տիրոջ համբարձուելուց յետոյ, Փոքր Հայք է գալիս փասներկու առաքեալներից մէկը՝ Թադէոս առաքեալը՝ այն փէգով, որով խոցուել էր Տէրը, այլեւ Տիրոջ օրհնած մեռոնով: Առաքեալն իջեւանում է հրեայ մեծապոհմիկ ոմն Տուբիայի փանը, որը, ժամանակին Արշամից խուսափելով, չէր ուրացել հրեական կրօնը, ինչպէս իր միւս ազգականները, այլ հաւատարիմ էր մնացել նրա օրէնքներին, մինչեւ որ հաստատապէս հաւատացել էր Քրիստոսին: «*Թադէոսի մասին լուրը արագ տարածուեց ողջ քաղաքում. Աբգարը լսելով ասաց. «Դա այն մարդն է, ում մասին գրել էր Յիսուսը», և իսկոյն կանչեց նրան: Վերջինիս մտնելուն պէս նրա երեսին հրաշալի տեսիլք երևաց Աբգարին, և բարձրանալով գահից՝ նա երեսնիվայր ընկաւ և երկրպագեց Թադէոսին: Ներկայ բոլոր մեծատոհմիկները զարմացան, քանի որ չտեսան տեսիլքը: Աբգարը նրան ասաց. «Իրապէս դո՞ւ ես օրհնեալ Յիսուսի աշակերտը, որին նա խոստացել էր ինձ մօտ ուղարկել, և կարո՞ղ ես բժշկել իմ հիւանդութիւնը»: Եւ Թադէոսը պատասխանեց նրան. «Եթէ հաստատապէս հաւատաս Յիսուս Քրիստոսին՝ Աստծու Որդուն, կը տրուի քեզ քո սրտի կամեցածը»: Աբգարն ասում է նրան. «Ես հաստատապէս հաւատում եմ նրան և նրա Հօրը: Ուստի կամենում էի իմ զօրքով գալ և կոտորել նրան խաչող հրեաներին, բայց Հռոմի իշխանութիւններն ինձ կանգնեցրին*»»:

Առաքեալը բժշկում է արքային եւ Եդեսիա քաղաքի բոլոր հիւանդներին ու փկարներին, մկրտում է արքունիքը եւ բոլոր ճշմարիտ հաւատացողներին:

Այնուհետեւ Առաքեալը մկրտում է մետաքսէ խոյրերի ոմն վարպետի եւ, տալով նրան Ադդէ անունը, ձեռնադրում Եդեսիայի հոգեւոր պետ՝ իր փոխարէն նրան թողնելով արքունիքում: Իսկ ինքը, Աբգարից վերցնելով կարգադրող հրովարտակ, որ ամէնքը Քրիստոսի Աւետարանը լսեն, գնում է Սանատրուկի՝ արքայի քեռորդու մօտ, որը կառավարում էր Մեծ Հայքում, որտեղ քարոզում է եւ մկրտում շատ հայերի, այդ թւում եւ Սանատրուկի դստերը՝ օրիորդ Սանդուխտին: Այդ ժամանակ տասներկու առաքեալներից Սբ. Բարդուղիմէոսը գալիս է Հայաստան՝ բերելով նաեւ Աստուածամօր Հրաշագործ սրբապատկերը, որի օգնութեամբ շատ բորոտներ են բժշկւում: Նա եւս Թադէոսի նման քարոզում է եւ մկրտում հայերին…

Թագաւորելով երեսունութ տարի՝ մահանում է Սբ. Աբգարը՝ Քրիստոսին հաստատապէս հաւատացող առաջին արքան:

Նրա մահից յետոյ, Մեծ Հայքում թագաւորելու համար թագադրւում է նրա քեռորդին՝ Սանատրուկը, իսկ Եդեսիայում՝ նրա որդին՝ Անանունը, որը չի դառնում հօր առաքինութիւնների հետեւորդը: Կարճ ժամանակ անց նա, բացելով կուռքերի մեհեանները եւ վերականգնելով հեթանոսական ծէսերը, սկսում է քրիստոնեաների հալածանքները: Առաջինը նահատակւում է Ադդէն՝ Թադէոս առաքեալի աշակերտը:

Այդ ժամանակ Սանատրուկը որոշում է զաւթել Աբգարի թագաւորութիւնը: Մինչ նա զօրք է ժողովում, «Աբգարի որդուց կարծես Աստուածային ակնարկութեամբ լուծւում է Ադդէի սպանութեան վրէժը: Երբ իր պալատի վերնատանը նրա ցանկութեամբ մարմարէ սիւն էին կանգնեցնում, իսկ նա, ներքեւում կանգնած, ցուցումներ էր տալիս՝ ինչն ինչպէս պէտք է արուի, սիւնը դուրս է պրծնում այն պահողների ձեռքից, ընկնում է նրա վրայ եւ, ջարդուփշուր անելով ոտքերը, խլում կեանքը»:

Բայց Անանունի մահը չի խանգարում Սանատրուկին սրի մատնելու «*Աբգարի տան բոլոր զաւակներին, բացառութեամբ աղջիկների, որոնց վտարեց քաղաքից և բնակեցրեց Հաշտեանքում: Այդպէս նաև Աբգարի՝ Հեղինէ անունով գլխաւոր կնոջը բնակութեան ուղարկեց նրա իսկ հայրենի*

*քաղաքը՝ Խառան՝ թողնելով նրան ողջ Միջագետքի տիրուհի այն բարիքների փոխարէն, որ ինքը ստացել էր Աբգարից տիկնոջ միջնորդութեամբ*»:

Սանատրուկը դստեր նման նոյնպես քրիստոնէութիւն է ընդունում, բայց եւ շուտով, վախենալով հայ նախարարներից, հրաժարւում է Քրիստոսից՝ սկսելով քրիստոնեաների հալածանքները, որոնց ժամանակ էլ նահատակւում են նրա փասնըվեցամեայ Սանդուխտ դուստրը, որը համարւում է յանուն Քրիստոսի առաջին կին նահատակը, նրա քոյրը՝ Ոգուհին, Թադէոս եւ Բարդուղիմէոս առաքեալները, այլեւ բազմաթիւ քրիստոնեաներ:

## Հեղինէ թագուհին՝ Աբգարի կինը

Բարեպաշտ Հեղինէ թագուհին, ամուսնու մահից յետոյ թողնելով արքունի փառքը, Ք.ծ. 42-րդ տարում՝ մայիսի սկզբին, ուղեւորւում է Երուսաղէմ: Այն ժամանակ Երուսաղէմում եւ նրա շրջակայքում սով էր, որի մասին կանխագուշակել էր Ագաբոս մարգարէն (տե՛ս Գործ. ԺԱ, 27-28): Տալով իր գանձերը՝ թագուհին մեծ քանակութեամբ պարէն է գնում Եգիպտոսից, Կիպրոսից եւ այլ վայրերից եւ կերակրում է բոլորին՝ խտրականութիւն չդնելով քրիստոնեաների, հրեաների եւ հեթանոսների միջեւ:

Թագուհու՝ Երուսաղէմ այցելութեան մասին վկայում է Մովսէս Խորենացին. «*...իր ամուսնու՝ Աբգարի նման հաւատով զինուած, այլեւ չհանդուրժելով ապրել կռապաշտների մէջ՝ Կղաւդիոսի օրօք՝ սովի ժամանակ, որ կանխագուշակել էր Ագաբոսը, ուղեւորւում է Երուսաղէմ: Տալով իր ողջ հարստութիւնը՝ նա Եգիպտոսից մեծ քանակութեամբ ցորեն է գնում և բաժանում բոլոր սովեալներին, որի մասին վկայում է Յովսէփոսը*»:

Երուսաղէմում նրա գտնուելու հինգերորդ տարում, երբ հրեական հողում սովը յաղթահարւում է, նա սկսում է փոքր մատուռներ կառուցել Սուրբ Վայրերում: Առաջին հերթին ցանկապատում է Տիրոջ Գերեզմանի վայրը եւ վրան բուրգի տեսքով մատուռ կառուցում: Յետագայում մատուռ է կառուցում Համբարձման՝ Տիրոջ ոտնատեղիի վրայ, որտեղից Նա Երկինք էր համբարձուել: Քարերով նաեւ պարսպապատում է Բեթղեհէմում մեր Տիրոջ ծնուելու վայրը եւ մսուրը: Մատուռ է

կառուցում Յակոբ առաքեալի գլուխը թաղած վայրում: Աստուածածնի Վերափոխումից յետոյ նա նաեւ ցանկապատում է Աստուածամօր Գերեզմանը:

Այսպիսով, մի կողմից՝ նա այդ վայրերը պաշտպանում է պղծումից, միւս կողմից՝ հաւատացեալների համար երկրպագութեան վայր ստեղծում: Աւանդութիւնը վկայում է, որ նրա տունը գտնւում էր Սիոն լեռից ոչ հեռու, որտեղ ապրում էր Աստուածածինը, եւ որին նա յաճախ էր այցելում: Աստուածածինը պատմում էր իր Միածին Որդու մասին եւ Հեղինէի հետ յաճախ էր աղօթում քրիստոնեաների, եւ իհարկէ նաեւ Հայաստանի համար, որը 301 թուականին դառնալու էր քրիստոնեայ առաջին պետութիւնը:

Հեղինէն բազում այլ բարեգործութիւններ է կատարում: Վերը նկարագրուածներից բացի, նա շատ բան է անում Երուսաղէմի եւ հրեաների համար: Վերանորոգում է Դաւիթ արքայի որդու՝ Աբիսողոմի գերեզմանը: Երուսաղէմի տաճարին է նուիրաբերում մենորա՝ ոսկեայ աշտանակ, որն ամրացւում է տաճարի դարպասների վերեւում: Ամբողջ Երուսաղէմում երեւում էր ծագող արեւի ճառագայթների՝ աշտանակի ոսկուց արտացոլուող փայլը, որն առաւօտեան աղօթքը սկսելու ազդանշան էր:

Երանելի թագուհին, ապրելով իր կեանքը սրբութեան մէջ եւ օրինակ ծառայելով շատ կանանց, Երուսաղէմ գալու եօթներորդ տարում եւ Աստուածածնի Վերափոխման երկրորդ տարում՝ սեպտեմբերի իննին, Տիրոջ ձեռքն է յանձնում իր հրեշտակային հոգին: Նրան մեծարանքով եւ պատիւներով յուղարկաւորում են գեղեցիկ հանգստարանում՝ պսակուած երեք բուրգերով, որոնք հենց Հեղինէն էր կանգնեցրել քաղաքից երեք ասպարէզ հեռաւորութեամբ:

## Հեղինէ թագուհու հանգստարանը եւ տունը

«*Նրա շիրիմը՝ յայտնի նշանով, մինչեւ այսօր էլ կայ Երուսաղէմում՝ դրան առաջ*»: Մովսէս Խորենացու այս խօսքերից կարելի է ենթադրել, որ Հեղինէ թագուհու շիրմի տեղը յայտնի է եղել դեռ V դարում:

Սակայն յետագայում, հաւանաբար Երուսաղէմի աւերածութիւնների հետեւանքով, գերեզմանի վայրը կորսուել է: 1836 թուականին Երուսաղէմում՝ Դամասկոսի դարպասներից

հիւսիս, ֆրանսիացի հնագէտ Լ. Ֆ. դէ Սոլսին հնագիտական հետազօտութիւններ է սկսում: Հանգստարաններ գտնելով՝ նա ենթադրում է, որ յայտնաբերել է հրեայ արքաների գերեզմանները, որ յիշատակւում են Աստուածաշնչում, եւ այդ պատճառով էլ հանգստարանը կոչում է թագաւորների գերեզմանատուն:

Յոյն պատմագիր եւ աշխարհագիր Պաւսանիոսը (մ.թ. II դ.) Հեղինէի դամբարանը շքեղութեամբ եւ մեծութեամբ երկրորդն է համարում առասպելական Մաւսոլիոս արքայի դամբարանից յետոյ, որն աշխարհի եօթ հրաշալիքներից է:

Ինը մետր լայնութեամբ սանդուղքը տանում էր բացօթեայ բակ, ուր գտնւում էին լուացման համար ծիսական մի քանի աւազաններ: Քսանութ մետր բարձրութեամբ ճակատը պսակում էին երեք բուրգեր. քովթարը (արխիտրաւը) պահում էին երկու սիւներ, որոնց բեկորները գտնուել են պեղումների ժամանակ:

Հանգստարանների մուտքը փակւում էր կլոր մեծ քարով, որը տեղաշարժւում էր ջրային մխոցի համակարգի վրայ հիմնուած գաղտնի մեխանիզմով: Ներկայումս համակարգը չի գործում:

Հանգստարանը մաքրելիս յայտնաբերւում են քարատապաններ (սարկոֆագներ), որոնցից մէկի կափարիչին՝ փորագրուած երկու սկաւառակներ, իսկ նրանց միջեւ՝ «צדה מלכתה»՝ «**Սադդան թագուհի**» (թագուհու արամերէն անունը) տողերը: Քարատապանը բացելու ժամանակ նրա մէջ մարդկային աճիւն է ուրուագծւում՝ գլուխը բարձրացրած եւ ձեռքերն ազդրերին: Հանգուցեալի գանգին առաջին իսկ հպումից ամբողջ կազմուածքը փշրւում է՝ իբրեւ պատրանք, եւ մնում է միայն փոշու բարակ գիծ: Ըստ քարատապանի վրայ եղած գրութեան եւ Յովսէփոս Փլաւիոսի վկայութեան՝ այն բարեպաշտ Հեղինէ թագուհունն էր: Քարէ տապանն այսօր պահւում է Լուվրում…

1878 թուականին հողատարածքը գնում է սեֆարդեան Պերէյրա ընտանիքը Ֆրանսիայից:

2007 թուականին՝ իսրայէլցի հնագէտները արեւելեան Երուսաղէմում պեղումներ իրականացնելիս, ատոկայանատեղիներից մէկում յայտնաբերում են մի շինութիւն, որի տարիքը հաշվարկւում է մօտ 2000 տարի: Մասնագէտների կարծիքով, ամենայն հաւանականութեամբ, դա Հեղինէ թագուհու ամառային աթոռանիստն էր: Այս գիւտը սուրբ քաղաքի պատմութեան համար ոչ մեծ, բայց բացառիկ էր: Շինութեան

մնացորդները յայտնաբերուել են հին քաղաքի պարիսպներից դուրս՝ աւելի ուշ բնակավայրերի շերտերի տակ, որոնք ոչ մեծ մի ատոկայանատեղիում մինչ վերջերս ծածկուած էին ասֆալտով: Պեղումներ են կատարւում լերան լանջին կառուցուած Սիլուան արաբական շրջանում, որտեղ գտնւում էին Երուսաղէմի առաւել հին բնակավայրերը:

Երուսաղէմ նոր քաղաքում ի պատիւ Հեղինէ թագուհու փողոց կայ: Մինչ 1948 թուականը՝ բրիտանական մանդատի ժամանակ, այս փողոցը հայոց թագուհի Մելիսենդի անունով էր, որը խաչակիրների օրօք (1131-ից մինչեւ 1153 թթ.) կառավարում էր Երուսաղէմի թագաւորութիւնը:

## Քրիստոնէութիւնը Հայաստանում

*«Հայ ժողովուրդը բացառիկ երևոյթ է: Հին ժամանակներում իրենց հաւատքի համար հայերը հարկւում էին, և որքան ծանրանում էին հարկերը, այնքան աւելի էր ամրապնդւում ժողովրդի հաւատքը: Հենց դրա շնորհիւ հայերը պահպանեցին իրենց հոգևոր մշակոյթը և այն փոխանցեցին մեզ բոլորիս...»* (Իւ. Ժդանով):

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու արմատները ձգւում են մինչ մեր Տէր Աստուած Յիսուս Քրիստոսի Սբ. առաքեալներ: Սբ. Թադէոսը եւ Սբ. Բարդուղիմէոսը, Հայաստանով անցնելիս, հայ ժողովրդի մէջ սերմանում են ճշմարտութեան խօսքը. այն աճում ու խոր արմատներ էր գցում մեր Սբ. Գրիգոր Լուսաւորչից դեռ երեք դար առաջ, որն արդէն առատօրէն ոռոգում էր Ճշմարտութեան Ծառը:

Նշենք, որ III դարի վերջում Հայաստանում արդէն գոյութիւն ունէր Եկեղեցի՝ իրար յաջորդող հովուապետերով, որոնց թիւը հասնում էր քսանչորսի: Եւ քրիստոնեաներն այնքան շատ էին, որ IV դարի սկիզբին քրիստոնէութիւնն առանց նկատելի դժուարութիւնների հռչակւում է երկրի պետական կրօն:

287 թուականին Տրդատ արքան հռոմէական զօրքի ուղեկցութեամբ վերադառնում է Հայաստան, որպէսզի նրանց օգնութեամբ վերադարձնի հօր գահը: Յաղթանակից յետոյ նա Անահիտ հեթանոս աստուածուհու մեհեանում զոհաբերութեան

ծէս է կատարում: Նրա գործակիցներից մէկը՝ Սբ. Գրիգորը, քրիստոնեայ լինելով, հրաժարւում է մասնակցել ծէսին:

Տրդատ արքայի հրամանով Քրիստոս Փրկչի դաւանանքի համար բազմաթիւ դաժան կտտանքներից յետոյ Սբ. Գրիգորին գցում են մահապարտների խոր փոսը (Խոր Վիրապ):

Թաքնուելով Դիոկղէտիանոս կայսեր հետապնդումներից՝ Հայաստան են գալիս Սուրբ Հռիփսիմեանք կոյսերը: Տրդատը, զմայլուելով Հռիփսիմէի գեղեցկութեամբ, ցանկանում է կնութեան առնել նրան, բայց մերժում ստանալով՝ հրամայում է բոլոր կոյսերին նահատակել: Այս իրադարձութիւնը տեղի է ունենում 300 թուականին: Սուրբ կոյսերի սպանութեան պատճառով արքան հիւանդանում է խոզակերպ մի հիւանդութեամբ: Արքայի քոյրը՝ Խոսրովդուխտը, բազմիցս երազ է տեսնում, որ Տրդատին կարող է բժշկել Սբ. Գրիգորը… Ազատութիւն ստանալուց յետոյ Սբ. Գրիգորն անմիջապէս հողին է յանձնում նահատակ կոյսերի աճիւնները, իսկ այնուհետեւ՝ վաթսունվեցօրեայ քարոզից յետոյ, բժշկում արքային: Աստծու պատգամով նա ուղեւորւում է Փոքր Հայք, որտեղ Սբ. Թադէոսի աթոռն էր, եւ այնտեղ էլ ձեռնադրւում Հայաստանի Պատրիարք: Վերադարձից յետոյ եդեմական Եփրատ գետում անյապաղ մկրտում է արքային, թագուհուն և 100.000 նոր դարձի եկածների: Նախքան մկրտութիւնը գետի հոսքը դադարում է, (ինչպես Յորդանանը՝ Հին Կտակարանում), եւ այն վերածւում է մեծ աւազանի, որի մէջ Սբ. Գրիգորը լցնում է Սբ. Մեռոնը, եւ այն սկսում է պտոյտներ գործել իւրաքանչիւր մկրտուողի շուրջը, իսկ երկնքում մինչեւ մկրտութեան աւարտը յայտնւում է լոյսի ձեւ ունեցող Խաչ:

Այնուհետեւ կործանելով բոլոր կռապաշտական մեհեանները՝ Հայաստանը 301 թուականին քրիստոնէութիւնն ընդունում է որպէս պետական կրօն:

Այս իրադարձութիւններից կարճ ժամանակ անց Սբ. Գրիգորին տեսիլք է յայտնւում՝ աշխարհում առաջին քրիստոնէական տաճարը կառուցելու մասին: Նա տեսնում է Աստծու Միածին Որդուն, Որն իջնում է լայնօրէն բացուած երկնքից՝ ոսկեայ մուրճը ձեռքին, եւ հարուածելով այն հողին՝ ասում. «*Շինի՛ր Աստծու անուան տաճար քեզ ցոյց տրուած տեղում*»: Այդ պատճառով էլ կառուցուած տաճարն անուանում

են «**Էջմիածին**», որ հայերէն նշանակում է՝ Իջաւ Միածինը: Մայր տաճարը կառուցւում է 303 թուականին:

301 թուականին նորադարձ հայկական պետութիւնը հարկադրուած էր քրիստոնէութիւնը պաշտպանել Հռոմէական կայսրութիւնից: Եւսեբիոս Կեսարացին վկայում է, որ Մաքսիմիանոս կայսրը (305-311 թթ.) պատերազմ է յայտարարում հայերին, «*այն մարդկանց, որոնք ի սկզբանէ բարեկամ և նիզակակից էին հռոմէացիներին: Եւ որովհետև նրանք քրիստոնեայ էին և ջերմեռանդ պաշտում էին Աստծուն, ուստի աստուածատեացը ջանաց նրանց բռնութեամբ ստիպել, որ դառնան կուռքերի և դևերի պաշտամունքին*»:

Հեթանոս Հռոմը պատերազմ է յայտարարում քրիստոնեայ Հայաստանին: Սակայն Աստծու օգնութեամբ հայերը, ջախջախիչ հարուած հասցնելով, զաւթիչներին դուրս են վռընդում իրենց երկրի սահմաններից:

Այդ տարիներին Սբ. Գրիգորը Սբ. Նունէի միջոցով դարձի եկած վրացիների համար ձեռնադրում է առաջին Կաթողիկոսին եւ քահանաների: Նոյնն է անում նաեւ աղուանների համար՝ Կաթողիկոս ձեռնադրելով իր թոռանը՝ Սբ. Գրիգորիսին:

## Սուրբ Լուսաւորիչը Երուսաղէմում

Սբ. Տաթեւացու (XIV-XV դդ.) «*Գիրք Հարցմանց*» եւ Յովհաննէս վարդապետի «*Գիրք Պատմութեան Սբ. Երուսաղէմի*» (1782 թ.) աշխատութիւններից կարելի է վերականգնել հետեւեալ պատկերը: Քիչ անց՝ Հռոմից վերադառնալով Հայաստան, Սբ. Գրիգորը որոշում է ծնկաչոք գնալ Երուսաղէմ: Հրեշտակը թոյլ չի տալիս նրան՝ ասելով, թէ բաւական են նրա չարչարանքները: Սբ. Գրիգորը գալիս է Երուսաղէմ՝ իր հետ բերելով Սբ. Յովհաննէս Մկրտչի մասունքները: Իրեն անարժան համարելով՝ անմիջապէս չի մտնում Գերեզման, այլ իջնում է քարայրները, որտեղ երկար ժամանակ՝ համարեայ եօթ տարի, տրւում է աղօթքի եւ պահքի: Այսօր այդ վայրը գտնւում է Սբ. Յարութեան կամ Տիրոջ Գերեզմանի տաճարում՝ Սբ. Գրիգոր հայկական եկեղեցու ստորին հատուածում: Շատերը, չիմացութիւնից կամ այլ նկատառումներով, այդ վայրը կոչում են Սբ. Հեղինէ: Այդտեղ են գտնւում նաեւ երկու փոքրիկ խորաններ. մէկը՝ ի պատիւ Սբ. Գրիգորի, միւսը՝ Սբ. Յովհան-

նէս Մկրտչի: Եօթ տարի անց Սբ. Գրիգորը Աւագ Շաբաթ օրը մտնում է Տիրոջ Գերեզման, որտեղ Տիրոջը խնդրում է, որ ի նշան Նրա Յարութեան լոյս իջնի… Տէրը լսում է նրա աղօթքները. հրաշքով վառւում են բոլոր կանթեղները եւ մոմերը: Կատարուած հրաշքը տեսնելով՝ Սբ. Գրիգորը երգում է «**Լոյս Զուարթ**». այդ օրհներգութիւնը մինչ օրս ամէն շաբաթ կատարւում է Հայ Առաքելական Եկեղեցում…

Այնուհետեւ Սբ. Գրիգորը խնդրում է Տիրոջը, որ Նա ամէն Աւագ Շաբաթ օր, ի փառս Իր Յարութեան, անտեսանելի լոյսով վառի կանթեղները: Այդ նշանը մինչ օրս գոյատեւում է, եւ տեսանելի է միայն հաւատքի աչքով: Եւ դրա համար Սբ. Գրիգորը Լուսաւորիչ է կոչւում ոչ միայն իբրեւ հայ ժողովրդի լուսաւորիչ, այլեւ Տիրոջ Գերեզմանի մօտ կատարուած հրաշքի պատճառով…

## Պայքար քրիստոնէական հաւատքի համար

«*Հաւատքի արիութիւնը հայերի տարբերակիչ առանձնայատկութիւնն է քրիստոնէութեան առաջին ժամանակներից մինչ ներկայ ժամանակներ*» (Գ. Գիբսոն):

330-ական թուականներից Հայաստանի համար դժուարին ժամանակներ են սկսւում: Պարսկաստանը Հայաստանի նոր կրօնը՝ քրիստոնէութիւնը, ոչնչացնելու նպատակով սկսում է քրիստոնեաների հալածանքը: Պարսկական եւ հայկական աղբիւրների համաձայն՝ այդ ժամանակահատուածում զոհւում են տասնեակ հազարաւոր հայեր: Իսկ Բիւզանդիայի քաղաքականութիւնը հայկական իշխանական տների դիրքերը թուլացնելն էր: Դրանով Կոստանդնուպոլիսը յոյս ունէր նրանց իրեն կցել եւ Հայ Եկեղեցին ենթարկել արքունիքին: Յոյների քաղաքականութիւնն արտահայտել է Մորիկ կայսրը. «*Մի խոտոր և անհնազանդ ազգ է գտնւում մեր միջև… …եթէ մեռնեն, ապա մեր թշնամիները կը մեռնեն, և եթէ նրանք սպանեն, ապա մեր թշնամիներին կը սպանեն, և մենք խաղաղ կ'ապրենք: Որովհետև եթէ դրանք իրենց երկրում լինեն, մեզ հանգիստ չի լինի*»:

Մէկդարեայ մրցակցութիւնից յետոյ՝ 387 թուականին, Բիւզանդիան եւ Պարսկաստանը Հայաստանը բաժանելու համաձայնութեան են գալիս: Ըստ Փաւստոս Բուզանդի ստեղծագործութիւնից յայտնի պատմութեան՝ յոյները եւ պարսիկները

միմեանց ասում են մօփաւորապէս հետեւեալը. «*Մեր երկուսիս միջև ընկած է այս հզօր և հարուստ թագաւորութիւնը... նախ երկու մասի բաժանենք նրան, յետոյ կ'աշխատենք նրանց աղքատացնել և մեր ծառայութեան ենթարկել, որպէսզի մեր մէջ չկարողանան գլուխ բարձրացնել*»: 391 թուականին բիւզանդացիները Արեւմտեան Հայաստանում վերացնում են Արշակունիների իշխանութիւնը, իսկ 428 թուականին Արեւելեան Հայաստանում գահընկեց է արւում Հայաստանի վերջին արքան՝ Արտաշէսը: Այսպիսով, Հայկական թագաւորութիւնը ոչնչացւում է, եւ Հայաստանը երկար ժամանակով զրկւում է պետականութիւնից:

Սակայն անգամ պետականութեան բացակայութեան ժամանակ մենք տեսնում ենք հայ ժողովրդի պայքարը յանուն իր գոյատեւման եւ անկախութեան: Այս պայքարում կարեւոր դեր է խաղացել Հայ Առաքելական Եկեղեցին՝ հանդէս գալով նաեւ որպէս ազգի քաղաքական ներկայացուցիչ. նրան բաժին է ընկնում ոչ միայն իր հօտը հոգեւոր սնունդով ապահովելը, այլեւ հայ ժողովրդի ինքնակայութիւնը պահպանելու եւ պետականութիւնը վերականգնելու դժուարին հոգսը:

V դ. 40-ական թուականներին պարսից արքունիքը վերստին սկսում է Հայաստանին հարկադրել հաւատափոխութեան եւ այս անգամ բաւական վճռականօրէն: 449 թուականին պարսից Յազկերտ II արքան հրաման է արձակում՝ հայերից պահանջելով մազդէականութիւն ընդունել, դաժան պատիժներ նախատեսելով նրանց համար, ովքեր կը յամառին քրիստոնէութիւն դաւանել: «*Իմ իշխանութեան ներքոյ գտնուած բոլոր ազգերն ու ժողովուրդները թող բոլորը ձեռք քաշեն [իրենց] մոլար կրօններից և գան երկրպագութիւն անեն միմիայն արեգակին, զոհեր մատուցելով և աստուած անուանելով [նրան], և սպասաւորելով կրակին. բացի այս ամէնից՝ մոգութեան օրէնքներն էլ կատարեն, առանց որևէ բան պակաս թողնելու*», հակառակ դէպքում, ըստ հրամանի, կը դատուեն սրով, հրով եւ կախաղանով: Պարսից արքայի հրամանը հրապարակելուց յետոյ Հայաստանում ժողովրդական լայնածաւալ ապստամբութիւն է սկսւում: Դրա հետեւանքով 35 տարիների ընթացքում Հայաստանը գտնւում է պարսիկների դէմ անընդհատ պարտիզանական պատերազմի իրավիճակում: Սբ. Յովսէփ I նոր Կաթողիկոսը՝ Սբ. Սահակի աշակերտը եւ ժառանգորդը, Արտաշատում բոլոր իշխանների եւ հոգեւորականութեան մասնակցութեամբ ազգային-եկեղեցական ժողով է գումարում: Ժո-

ղովը Յազկերտ II-ին պատասխանում է հետեւեալը. «*Մեր ամբողջ գոյքը և ստացուածքը քո ձեռքում են, և մեր մարմինները քո առաջն են. քո կամքի համաձայն արա՛, ինչ ուզում ես: Եթէ այս հաւատի մէջ թողնես, ո՛չ երկրի վրայ ուրիշ տէր կ'ընդունենք քո փոխարէն և ո՛չ էլ երկնքում ուրիշ Աստուած կ'ընդունենք Յիսուս Քրիստոսի փոխարէն, որից բացի՝ ուրիշ Աստուած չկայ… Այս հաւատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ո՛չ հրեշտակները և ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը և ո՛չ հուրը… որովհետև մեր հաւատի ուխտը ո՛չ թէ մարդու հետ է, որ երեխայի նման խաբուենք, այլ Աստծու հետ է անլուծելի կերպով, որ անհնար է քանդել ու հեռանալ, ո՛չ այժմ և ո՛չ յետոյ, ո՛չ յաւիտեանս և ո՛չ էլ յաւիտենից յաւիտեանս*»: Դրանով ժողովի մասնակիցները մերժում են զրադաշտականութիւն ընդունելու արքայական առաջարկը… 451 թուականի մայիսի 26-ին՝ Հոգեգալստեան փօնի նախօրէին, Վասպուրականում՝ Ուրմիա լճից հիւսիս, վճռական ճակատամարտ է տեղի ունենում, որը յայտնի է Աւարայրի ճակատամարտ անուանումով, եւ որը համաշխարհային պատմութեան մէջ քրիստոնէութեան առաջին զինուած ինքնապաշտպանութիւնն է, երբ միմեանց էին դիմակայում լոյսն ու խաւարը, կեանքն ու մահը, հաւատքը եւ ուրացութիւնը: Յազկերտ II-ը յատուկ արբեցրած ռազմական փղերով եւ հայկական զօրքը երեք անգամ գերազանցող զօրք է ուղարկում: Հայոց ուժերը գլխաւորում էր Սբ. Սահակի թոռը՝ զօրավար Սբ. Վարդան Մամիկոնեանը. այդ բանակում կային եւ՛ ծեր, եւ՛ մանուկ, ինչպէս նաև հոգեւորականութիւն՝ Սբ. Ղեւոնդ Երէցի գլխաւորութեամբ… Թէեւ հայերը պարտութիւն են կրում, սակայն Աւարայրի ճակատամարտը վեհացնում եւ բոցավառում է հայոց ոգին այնքան, որ այն յաւերժ ապրելու կարողութիւն է ձեռք բերում, քանի որ հայերը մահուան էին գնում «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն» բառերով: Ճակատամարտից յետոյ Յովսէփ I Կաթողիկոսը եւ Ղեւոնդ Երէցը, որոնք հոգեպէս զօրացնում էին ժողովրդին, շատ հոգեւորականների եւ իշխանների հետ աքսորւում են Պարսկաստան, որտեղ էլ 454 թուականին նահատակւում են:

Հարկ է նշել նաեւ, որ 451 թուականին Քաղկեդոնում տեղի է ունենում IV Տիեզերական Ժողովը, որ նոյն տարուայ մայիսին գումարում է Բիւզանդիայի Մարկիանոս կայսրը, որն այդ հրամանից ոչ շատ առաջ ոչ միայն մերժում է հայ պատգամաւորների՝ քրիստոնէական հաւատքը պաշտպանելու համար ռազմական օգնութեան խնդրանքը, այլեւ զգուշացնում

պարսիկներին հայերի պատերազմելու մասին՝ նրանց այդ պատերազմին չմիջամտելու համաձայնութիւն տալով:

Այսպիսով, մինչեւ ժողովը մերժում են Աստծու Խօսքերն ու Սուրբ Հայրերի խրատները. «*Այս է իմ պատուէրը. որ սիրէք միմեանց, ինչպէս որ ես սիրեցի ձեզ: Աւելի մեծ սէր ոչ ոք չունի, քան այն, որ մէկն իր կեանքը տայ իր բարեկամների համար*» (Յովհ. ԺԵ, 12-13): «*Սէրը նրանո՛վ ճանաչեցինք, որ Յիսուս իր կեա՛նքը տուեց մեզ համար. մենք էլ պարտաւոր ենք մեր եղբայրների համար տալ մեր կեանքը: Ով այս աշխարհի բարիքներից  ունենայ և տեսնի իր եղբօրը մի բանի կարօտ ու փակի իր սիրտը նրա առաջ, Աստծոյ սէրը ինչպէ՞ս կարող է բնակուել նրա մէջ: Որդեակնե՛ր, խօսքերով և լեզուո՛վ չսիրենք, այլ՝ գործով և ճշմարտութեամբ*» (Ա. Յովհ. Գ, 16-18): «*Փրկի՛ր նրանց, ում մահուան են տանում, և ոչինչ մի՛ խնայիր մահապարտներին փրկագնելու համար: Բայց եթէ ասես, թէ՝ «Ես նրան չեմ ճանաչում, ոչ էլ նա՝ ինձ», – ապա իմացի՛ր, որ Տէրը ճանաչում է բոլորի սրտերը: Եւ Նա, որ ստեղծեց բոլորի շունչը, ճանաչում է բոլորին և իւրաքանչիւրին հատուցելու է ըստ նրա գործերի*» (Առակ. ԻԴ, 11-12): Սբ. Յովհան Ոսկեբերանը գտնում է, որ Աստծուն ոչինչ այնքան չի վրդովեցնում, որքան մերձաւորին փրկելու քամահրանքը, ուստի Նա Իր աշակերտներին բնորոշ յատկանիշ է դնում սէրը՝ նշելով, որ, այսպիսով, պէտք է բռնել այս ճանապարհը, որովհետեւ դա այն ճանապարհն է, որ մեզ երկինք է տանում, դարձնում Քրիստոսին նմանակողներ եւ հնարաւորութեան դէպքում՝ նման Աստծուն: Նա նաեւ գտնում է, որ Եկեղեցուց հեռանալու երկու եղանակ կայ. մէկը, երբ մեր սէրը ցամաքում է, եւ միւսը, երբ համարձակւում ենք անարժան ինչ-որ բան անել այդ մարմնի (Եկեղեցու) հանդէպ:

Երբ քրիստոնեայ աշխարհը Քաղկեդոնում քրիստոսաբանական հարցեր էր լուծում, մի ողջ ժողովուրդ, Քրիստոսի հաւատքի իր եղբայրների կողմից ճակատագրի քմահաճոյքին մատնուած, հեթանոսական Պարսկաստանից պաշտպանում էր քրիստոնէական հաւատքը: Երբ Հայաստանի հովուապետը, իր հօտով բանտարկուած, կտտանքների էր ենթարկւում, Ժողովի մասնակիցները հանգիստ խղճով լուծում էին այն հարցը, թէ ով էր մահացել խաչին: Հայ ժողովուրդն անհաւասար պայքարում պահպանեց ինչպէս իր հաւատքը, այնպէս էլ Եկեղեցու ամբողջականութիւնը, որովհետեւ սուրբ նահապատ զօրավար Վարդանի խօսքերով՝ «...*մենք քրիստոնէութիւնն իբրև զգեստ ունենք*

*հագած, այժմ չի կարողանում մեզ փոխել, ինչպէս մարմնի գոյնը [չի կարելի փոխել], գուցէ այլեւս չկարողանայ էլ մինչեւ վերջը*»:

**Իսկ ահա Քաղկեդոնի ժողովը Եկեղեցու բաժանման պատճառ է դառնում…**

Հայերը հեփազայ 30 փարիների ընթացքում Պարսկասփանի դէմ պայքարում պաշփպանում են քրիսփոնէութիւն դաւանելու իրենց իրաւունքը, իսկ 484 թ. Հայասփանի եւ Պարսկասփանի միջեւ կնքւում է Նուարսակի հաշփութեան պայմանագիրը, որով պարսիկները ճանաչում են հայերի՝ քրիսփոնէութիւն դաւանելու իրաւունքի ազափութիւնը:

Այսպիսով, պայքարին նուիրուած լարուած ուժերը խոչընդոփում են Հայ Եկեղեցու եւ հայ ժողովրդի կեանքը, նրանց զարգացումը եւ բարգաւաճումը: Բայց եւ այդ դժուարութիւնները չէին կարող արգելել հայ ժողովրդին վերսփին սփեղծել ու սփեղծագործել: Քրիսփոսի հաւափքի եւ իր փոկուն ոգու շնորհիւ նա կարողանում է կրծքով դիմակայել յարձակումներին, պաշփպանել եւ պահպանել իր հայրերի սուրբ հաւափքը:

## Ոսկեդար

Հենց այս դժուարին փորձութիւնների ժամանակաշրջանին (Vդ.) է համընկնում հայ մշակոյթի ոսկեդարը:

Հայասփանում քրիսփոնէական եկեղեցական ասփուածապաշփութիւնը կափարւում էր երկու լեզուներով՝ յունարէն եւ ասորերէն: Բնականաբար, ժողովուրդը շափ բան չէր հասկանում, թէեւ կային թարգմանիչներ, որոնք պաշփամունքի ժամանակ Ս. Գրքից հափուածներ էին թարգմանում հայերէն խօսակցական լեզուի: Բայց որպէսզի քրիսփոնէութիւնը փիրէր հայ ժողովրդի հոգուն եւ գիփակցութեանը, այն պէփք է հնչէր մայրենիով: Այս խնդիրը խորապէս գիփակցում էր Մեսրոպ Մաշփոցը, երբ Գողթնում պայքարում էր հեթանոսութեան մնացուկների դէմ: Նա փոգորուած էր հայոց այբուբեն սփեղծելու գաղափարով, որը պաշփպանում էին Սբ. Սահակ Կաթողիկոսը եւ հայոց Վռամշապուհ արքան: Փորձելով մարդկային բոլոր հնարաւորութիւնները՝ նրանք սկսում են ապաւինել Ասփծուն: Երկարափեւ պահեցողութիւններից եւ աղօթքներից յեփոյ Սբ. Մեսրոպ Մաշփոցին երեւում է Ամենակարողի ձեռքը, որը ժայռի վրայ փառեր է գրում… Եւ առաջինը,

որ Սբ. Մաշտոցը թարգմանում է Ս. Գրքից՝ «*Ճանաչել իմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ*» (Առակ. Ա, 1) փողն է՝ ասես մարգարէաբար նշելով հայ հոգեւոր էութեան ծրագիրը, այսինքն՝ գիտելիքների եւ գրքի հանդէպ սէրը: Միաժամանակ նա ուղարկում է իր աշակերտներին ժամանակի լուսաւորեալ քաղաքները՝ Աղեքսանդրիա, Աթէնք, Կոստանդնուպոլիս եւ այլն՝ յունարէն եւ ասորերէն ուսանելու եւ Եկեղեցու Հայրերի աշխատութիւնները թարգմանելու: Բարեպաշտ Թէոդորոսը, իմանալով հայոց ասպուածապտուր գրերի մասին, հոգում է ուսման ծախսերը պետական գանձարանից: Թարգմանիչների աշխատանքի շնորհիւ V դ. թարգմանուել է Սուրբ Հայրերի՝ I-V դդ. համարեայ ողջ գրականութիւնը: Այսօր շատ բնագրեր կորսուած են, սակայն տեքստերը պահպանուել են միայն շնորհիւ գրաբարեան թարգմանութեան: Թարգմանուել է նաեւ Աստուածաշունչը (434 թ.). այն յետագայում կոչուել է «**Թարգմանութիւնների Թագուհի**»: Դրանից յետոյ, քրիստոնէական հաւատքն առաւել ամուր է հաստատւում հայ ժողովրդի սրտում եւ կեանքում, որովհետեւ ինչպէս ասում է Սբ. Մաշտոցի աշակերտ Կորիւնը. «*Այն ժամանակ անպայման սքանչելի դարձաւ մեր երանելի ու ցանկալի Հայաստան աշխարհը, ուր երկու հաւասարակիցների ձեռքով յանկարծ, մի անգամից եկան հասան, հայաբարբառ, հայերէնախօս դարձան օրէնուսոյց Մովսէսը՝ մարգարէական դասի հետ, և առաջադէմ Պօղոսը՝ բոլոր առաքելական գնդով, Քրիստոսի աշխարհակեցոյց Աւետարանի հետ միասին*»:

Սբ. Մեսրոպը գրեր է ստեղծում նաեւ վրացիների եւ աղուանների համար նրանց թախանձալի խնդրանքով: Սբ. Սահակը եւ Սբ. Մեսրոպը ստեղծում են բազմաթիւ հոգեւոր երգեր՝ շարականներ, որոնք մինչ օրս երգւում են Հայ Եկեղեցում: Հայերէն են կարգաւորւում նաեւ եկեղեցական բոլոր արարողութիւնները: Հայաստանի տարբեր վայրերում բացւում են դպրոցներ: Հարկ է նշել, որ Հայ Եկեղեցին դարեր շարունակ կարեւոր տեղ է յատկացրել կրթութեանը, որովհետեւ պատմութիւնը փաստում է, որ կրթութիւնը մշտապէս հզօր զէնք է եղել օտարերկրեայ զաւթիչների դէմ՝ օտար ազդեցութիւններից պաշտպանելով Հայ Եկեղեցին եւ հայ ժողովրդին:

Տարրական եւ բարձրագոյն դպրոցները միշտ գործել են վանքերին եւ եկեղեցիներին կից: Բարձրագոյն դպրոցն աւարտողները վարդապետի կոչում էին ստանում եւ իրաւունք ունէին

ուսուցանելու ու քարոզելու: Եկեղեցու աւանդութիւնները եւ ժողովրդի աւանդոյթները պահպանելուց բացի, վարդապետները գիտութեան տարբեր ոլորտներում հետազօտութիւններ էին կատարում: Զարգանում էր նաեւ թարգմանչական գործունէութիւնը, որին զուգահեռ ստեղծւում էր ինքնուրոյն գրականութիւն՝ տարբեր ուղղութիւններով՝ աստուածաբանական, խրատական, մեկնաբանական, ջատագովական, պատմական: Այս ամբողջ գրականութիւնը պահւում էր վանքերի եւ դպրոցների մատենադարաններում:

*«Հայերը ձեռագիր այն երբեմն արիւնով գրուած գրքի հանդէպ սուրբ ակնածանքը դարերով պահել և սերնդէսերունդ փոխանցել կարողացող ժողովուրդ են: Սովորաբար բոլորն են պաշտպանում իրենց հողը: Մենք պաշտպանում ենք մեր հողի ամէն մի թիզը, տները, որտեղ մեծացել ենք, սրբօրէն պահպանում ենք նախնիների յիշատակը: Բայց ոչ բոլոր ժողովուրդներն են պահպանել և պատմութեան միջով մեզ հասցրել ձեռագիր գիրքը: Իսկ դա մշակոյթի հզօր ցուցանիշ է և ակունքների հանդէպ վեհ սիրոյ ծանրակշիռ վկայութիւն… Ես այցելել եմ Մաշտոցի շիրմին Օշականում: 1500 տարի առաջ հայ փառապանծ գինուոր Մեսրոպ Մաշտոցը միտք է յղանում, որ գիրը հզօր զէնք է, և նա ստեղծում է հայոց գրերը: …Ես ցաւով էի մտածում Դաղստանի մասին, որը, չունենալով գիր և գրչութիւն, հազարամեակներ է ձեռքից բաց թողել… Մենք գրքի համար ամէն ինչ ունէինք՝ կրքոտ սէր, քաջ հերոսներ, ողբերգութիւններ, խիստ բնութիւն, միայն գիրք չկար: …Ես տեսայ ողջ ժողովրդի՝ իրենց գրքերի հանդէպ մեծ յարգանք: Կեանքումս ինչպիսի՜ թանգարաններ եմ այցելել: Սակայն աշխարհում միայն երեք վայրերում են հաւաքուած մարդկութեան ողջ հարստութեան ամէնից արժէքաւորը՝ ձեռագիր գրքերը: Ես խօսում եմ Իրանի, Վատիկանի և Հայաստանի մատենադարանների մասին»* (Ռ. Համզաթով):

## Հայերի հալածանքները Երուսաղէմում

Նշենք, որ մինչեւ VI դարի կէսերը Սուրբ Երկրում քրիստոնեաներն ապրում էին սիրով և համերաշխ՝ ունենալով մէկ Պատրիարք: Բայց յոյների՝ Քաղկեդոնն ընդունելով՝ իրադրութիւնը սկսում է փոխուել: Յուստինիանոս կայսեր հրամանով սկսում են հետապնդել բոլոր նրանց, ովքեր չէին ընդունել Քաղկեդոնի ժողովը: Հայերից վանքեր են խլում՝ արտաքսելով Երու-

սաղէմից: Սակայն հայ իշխանական փների ջանքերով, որոնք կայսերը մեծ հարկ են վճարում, վանքերը վերադարձւում են հայերին: Բայց եւ այնպէս հալածանքները չեն դադարում: Շատ հայ հոգեւորականներ եւ վանականներ հեռանում են Կեսարիա եւ Եգիպտոս: Վանքերը «*փոխանցւում են*» յոյներին: Հայ հոգեւորականութեան ոչ մեծ մասը, այդուհանդերձ, մնում է եւ կեանքի գնով պաշտպանում իր սրբութիւնները՝ ենթարկուելով յոյն հոգեւորականութեան անարգանքին եւ հալածանքներին…

Այս ընթացքում օգնութիւն չի սպացւում նաեւ Հայաստանից, քանի որ Հայաստանը նոյնպէս գտնւում էր ոչ բարենպաստ պայմաններում:

## Պարսիկների, արաբների արշաւանքը եւ յոյների քաղաքականութիւնը: Երուսաղէմի Պատրիարքութիւնը

VI դ. վերջին՝ Պարսկաստանի՝ բազմաթիւ ամայացնող արշաւանքներից յետոյ, ամբողջ Հայաստանը յայտնւում է նրա իշխանութեան ներքոյ: Երկարատեւ պատերազմներ են սկսւում Պարսկաստանի եւ Բիւզանդիայի միջեւ: 591 թուականին Հայաստանը կրկին բաժանւում է նրանց միջեւ. մեծ մասը բաժին է ընկնում Բիւզանդիային, որը դաժան հալածանքներ է սկսում հայերի դէմ՝ Քաղկեդոնն ընդունելու նպատակով:

610 թուականին պարսից Խոսրով արքան բազմահազարանոց զօրքով յարձակւում է Բիւզանդական կայսրութեան վրայ: Ոգեւորուած առաջին յաղթանակներով՝ պարսիկները, փիրելով Երուսաղէմին եւ աւերելով շատ փաճարներ ու վանքեր, զաւթում են նաեւ Քրիստոսի Խաչափայտը (614 թ.): Շատերն են հրի եւ սրի մատնւում կամ գերի տարւում: Նրանց մէջ է լինում նաեւ Երուսաղէմի Զաքարիա Պատրիարքը: Երկարատեւ պատերազմից յետոյ բիւզանդացիները, Իրակլի կայսեր առաջնորդութեամբ, յաղթում են պարսիկներին եւ ազատագրում Սբ. Խաչը (628թ.): Այդ իրադարձութիւններին մասնակցում էին նաեւ հայկական ջոկատներ՝ բիւզանդական Հայաստանի կառավարիչ Մժեժ Գնունու գլխաւորութեամբ: Ազատագրուած Խաչափայտը հանդիսաւոր՝ թափօրների եւ եկեղեցիներում արարողութիւնների ուղեկցութեամբ, Հայաստանով տարւում է Կոստանդնուպոլիս, իսկ յետոյ՝ Երուսաղէմ:

Սակայն VII հարիւրամեակի կէսերից ամբողջ աշխարհը սկսում է զգալ արաբական տիրապետութեան հզօրացումը:

Գալիս է իսլամի դարը. նոր կրօնը գնում է զաւթելու քրիստոնեայ ժողովուրդներին:

640, 642-43 եւ 650 թուականներին արաբները Հայաստանը ենթարկում են դաժան ասպատակութիւնների՝ բռնութիւններ, կողոպուտներ ու աւերածութիւններ իրականացնելով եւ գերիներ տանելով: Այսպէս, արաբների՝ Հայաստան առաջին ներխուժման ժամանակ Հայաստանի մայրաքաղաք Դուինն ամբողջովին աւերակների է վերածւում: 12. 000 սպանուածների արիւնով են ողողւում Դուին քաղաքի Սբ. Սարգիս եկեղեցու բեմն ու մկրտութեան աւազանը. քաղաքի՝ աւելի քան 35.000 կենդանի մնացած բնակիչներ գերի են տարւում…

Բիւզանդացիների՝ արաբների դէմ դաշինք կնքելու մերժումը հայերին հարկադրում է բանակցել արաբների հետ. բանակցութիւնների արդիւնքում երկիրը երեսուն տարի խաղաղութիւն է վայելում՝ խալիֆներին հարկ վճարելով: Բայց դարավերջին արաբները վերսկսում են իրենց ասպատակութիւնները եւ 698 թուականին զաւթում են ողջ երկիրը՝ թողնելով այնտեղ իրենց զօրքերը եւ իրենց կառավարիչներին: Այդ ժամանակուանից Հայաստանը աւելի քան մէկուկէս հարիւրամեակ գտնւում է խալիֆների տիրապետութեան ներքոյ:

## Երուսաղէմի Պատրիարքութիւնը

Երուսաղէմի Եկեղեցու առաջին հովուապետը Յակոբ առաքեալն էր: VI դ. կէսերին, երբ Երուսաղէմի Պատրիարքութիւնը վերջնականապէս քաղկեդոնական վարդապետութիւնն է ընդունում, Երուսաղէմում ձեւաւորւում է Երուսաղէմի անկախ Հայոց Պատրիարքութիւնը:

Երուսաղէմի՝ մեզ յայտնի առաջին հայոց Պատրիարքն Աբրահամն էր, որը, ըստ արաբ պատմագիր Ջէքի ալ Դինի, տեսնելով Մուհամմէդի իշխանութեան հզօրացումը, 626 թ. անձամբ գնում է նրա մօտ եւ ստանում Երուսաղէմի Հայ Եկեղեցու անձեռնմխելիութեան հրովարտակը: Այդ եւ նախորդների հիման վրայ տրուող յետագայ հրովարտակները հիմնաւորապէս նպաստում են Պատրիարքութեան ամբողջականութեան ամրապնդմանը՝ ապահովելով նրա իրաւունքներն ու առանձնաշնորհումները յարգելու հիմքը քաղաքի յետագայ նուաճողներից:

Օրինակ՝ Սրբոց Յակոբեանց հայկական վանքի մուտքի արեւմտեան պատին փորագրուած է արաբերէն գրութիւն, որը զգուշացնում է բոլոր զաւթիչներին. «*Սոյն որոշումը մեր Տէր Սուլթանից և Ալ Դահր Աբու Սայիդ Մուհամմէդից է. Թող անիծուեն բոլոր նրանք և նրանց սերունդները, և թող ամենակարող Աստուած նզովի բոլոր նրանց, ովքեր կը փնասեն կամ որևէ անարդարութիւն կը գործեն այս Սուրբ Վայրում: Աբու Հեյերը երաշխաւորում է սա Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց հայկական վանքին. Մուհամմէդի 845 թ.1488 Ք.ծ.)*»:

Սուրբ Վայրերում հայկական առանձնաշնորհումների պահապանը Երուսաղէմի Պատրիարքն է: Այսօր Հայոց պատրիարքութեան իրաւասութեան ներքոյ են Իսրայէլի, Պաղեստինի եւ Յորդանանի հայկական եկեղեցիները:

## Փորձութիւնների նոր շրջան

VIII դարը եւ IX դարի կէսերը Հայաստանի համար լճացման ժամանակաշրջան են: Երկիրն ամայացնում են արաբների դէմ մշտական պատերազմները: Բիւզանդիան փորձում է Հայ Եկեղեցին բռնութեամբ միակցել յունականին:

Այն ժամանակների պատմագիրները խոստովանում են, որ անկարող են նկարագրել հայկական հողի վրայ արաբների իրականացրած բոլոր չարագործութիւնները: Այս շրջանում հայ ժողովուրդն ունենում է քրիստոնէական հաւատքի բազմաթիւ նահատակներ:

Սակայն 930 թուականից սկսած՝ Հայաստանը թեւակոխում է խաղաղութեան եւ բարգաւաճման շրջան, որը փեւելու է մի ամբողջ հարիւրամեակ՝ ապշեցնող արդիւնքներ արձանագրելով ինչպէս մշակոյթի, այնպէս էլ տնտեսութեան ոլորտներում: Կառուցւում են վանքեր եւ եկեղեցիներ: Օգնում են նաեւ Հայ Երուսաղէմին:

XI դարի կէսերից Հայաստանի անկումը պայմանաւորւում է ինչպէս առանձին իշխանական տների միջեւ երկպառակչական պայքարով, այնպէս էլ արտաքին պատճառներով: Մի կողմից՝ թուլանում է արաբների իշխանութիւնը, միւս կողմից՝ վերստին հզօրանում է Բիւզանդիան եւ ցուցաբերում է իր նուաճողականութիւնը՝ փորձելով կրկին արմատաւորել քաղկեդոնական դաւանանքն ու Հայ Եկեղեցին միակցել յունականին: Բիւզանդիան զաւթում է Հայաստանի հարաւային

հողերի զգալի մասը: Դրանից բացի սկսում են նախկինում քոչուոր նոր մուսուլման ժողովրդի՝ թուրք-սելջուկների արշաւանքները. նրանք շատ կարճ ժամանակաշրջանում զաւթում են ընդարձակ փարածքներ: Եւ Հայաստանը կրկին յայտնւում է սեղմուած իսլամական Արեւելքի եւ քրիստոնեայ Արեւմուտքի ակցի միջեւ:

Այն ժամանակ, երբ հայերը, պայքարելով յոյների դէմ, դեռեւս փորձում են պահպանել իրենց քաղաքները, երկիր են ներխուժում թուրք-սելջուկների հորդաները: Արաբների դաժանութիւնները փակաւին չմոռացած հայերը, այդուհանդերձ, սելջուկներին համարում են անասելի դաժան. փարեգրութիւններում նրանք անուանւում են «մարդակեր գազաններ»: Սելջուկների՝ Հայկական բարձրավանդակում յայտնուելու պահից (1048 թ.)՝ XI դարի կէսերից, աւելի քան փասը դարերի ընթացքում հայոց պատմութիւնը միահիւսուելու է թուրքերի պատմութեանը. հայերին փիրող փարբեր ցեղեր եւ ազգութիւններ ունեն թրքական արմատներ՝ սելջուկներ, թաթարներ, մամլուքներ, Թամերլանի զօրքեր, փարբեր թուրք հորդաներ, օսմաններ, ժամանակակից թուրքեր…

Սելջուկների օրօք կտրուկ աճում է՝ Հայաստանի հայաթափութեան ժողովրդագրական գործընթացը, նաեւ շատ հայերի արտագաղթը Ղրիմ, Լեհաստան, Մոլդավիա, Հունգարիա, Կիպրոս, Եգիպտոս եւ այլ երկրներ: XI դարի վերջին հնադարեան Հայաստանը հիմնաւորապէս անկում է ապրում. քաղաքները՝ աւերուած, թալանուած եւ լքուած, առեւտուրը՝ դադարած: Շատ հայ իշխաններ Բիւզանդիային են յանձնում իրենց փիրոյթները՝ դրանց փոխարէն հողեր ստանալով հեռաւոր Կիլիկիայում: Այս գաղթերի հետեւանքով կազմաւորւում են հայկական իշխանութիւններ, որոնք, սակայն, կարճատեւ գոյութիւն են պահպանում: Եւ միայն Ռուբինեան իշխանութիւնը Կիլիկիայում ոչ միայն դիմակայում է թշնամիների ճնշումներին, այլեւ կարողանում է համախմբել ներքին ուժերը եւ վերաճել թագաւորութեան:

## Կիլիկեան հայկական թագաւորութիւնը եւ Սուրբ Երկիրը

Զաւթելով Վասպուրականի, Անիի եւ Կարսի թագաւորութիւնները՝ Բիւզանդիան բազմահազար հայերի, իշխանների

հետ, վերաբնակեցնում է կայսրութեան արեւմտեան շրջաններում: Այնտեղ էլ XI դ. կէսերից սելջուկների ամայացնող արշաւանքների ժամանակ վերաբնակւում են տասնեակ հազարաւոր հայեր: Շուտով Կիլիկիայում հայ բնակչութիւնը զգալի մեծամասնութիւն է կազմում: XI դ. 80-ական թուականներին Կիլիկիայում՝ հայ իշխանների կալուածքներում, առաւել նշանաւոր էր Ռուբէնի հիմնած իշխանական տունը, որը, իր շուրջը համախմբելով հայ բնակչութեանը, ազատագրական պայքար է սկսում Բիւզանդիայի դէմ: Նա գրաւում է Լեռնային Կիլիկիայի մի մասը եւ 1080թ. այն յայտարարում անկախ իշխանութիւն:

XII դ. առաջին տասնամեակում Կիլիկիայի հայերը յամառօրէն պայքարում են բիւզանդացիների եւ սելջուկների դէմ: Լեւոն I-ի օրօք բիւզանդացիներից ետ է նուաճւում բաբեբեր կիլիկեան դաշտավայրը:

Կիլիկիայի հայկական թագաւորութեան ընդարձակումը, Արեւելքում նրա քաղաքական կշռի ամրապնդումը եւ տնտեսական վերելքը Լեւոն I-ին հնարաւորութիւն են ընձեռում իրեն թագաւոր հռչակելու (1198 թ.):

XIII-XIVդդ. ընթացքում Կիլիկիան հեծում է Եգիպտոսի մամլուքների ամայացնող արշաւանքներից, որոնց պատճառով էլ Կիլիկիայի շատ թագաւորներ ձգտում են Արեւմուտք: Արեւմուտքից եւ պապից օգնութիւն ստանալու ակնկալիքով նրանք Կաթողիկոսներից պահանջում են լիովին միաւորուել Լատին Եկեղեցու հետ. սա բուն Հայաստանում՝ հոգեւորականութեան շրջանում, լուրջ առարկութիւններ է յարուցում: 1361 թուականին գումարւում է Սսի VIII Ժողովը, որը պահանջում է Հայ Եկեղեցու ծէսերից վերացնել բոլոր նորարարութիւնները, որոնք Կիլիկիայի թագավորների լատինամէտ քաղաքականութեան արդիւնք էին:

Այսպիսով, Կիլիկեան Հայաստանի պատմութիւնը յագեցած է հարեւան պետութիւնների դէմ չդադարող պատերազմներով, որոնք էլ զինուորական դասը ամէնաազդեցիկն են դարձնում: Հարկ էր լինում մերթ պաշտպանուել Բիւզանդիայի խարդաւանքներից, մերթ պատերազմել լատինամէտ քաղաքականութեան պատճառով թշնամօրէն տրամադրուած սելջուկ սուլթանների դէմ, մերթ դաշնակցել խաչակիրների հետ, մերթ պաշտպանուել նրանցից: Այս ամէնը հարկադրում է մշտապէս մեծաթիւ բանակ պահել, որի առնչութեամբ էլ մտցւում է

յարուկ հարկ, որ վճարում են հողագործները եւ արհեստաւորները:

XIII դ. երկրորդ կէսից մամլուքների յաճախացած արշաւանքներով պայմանաւորուած՝ բանակի թուաքանակը հասցւում է 12 հազար հեծելազօրայինի եւ 50 հազար հետիոտն զինուորի, եւ սա դեռ յարաբերականօրէն խաղաղ ժամանակ: Պատերազմի ժամանակ զօրակոչւում էին ռամիկները՝ քաղաքացիները եւ գիւղացիները, որոնք ձեւաւորում էին հետեւակ զօրքը, եւ այդ ժամանակ զօրականութիւնն արդէն կազմում էր 80-ից 100 հազար մարդ:

Կիլիկիայի թագաւորները մասնակցում են նաեւ խաչակրաց արշաւանքներին՝ հողեր ամրակցելով Արեւելքում: Երուսաղէմի առաջին թագուհիներից են Կիլիկիայի արքայական ծագման հայուհիներ՝ Արդան, Մելիսէնդը եւ Մորֆան: Ուստի զարմանալի չէ, որ երբ 1099 թ. խաչակիրները գրոհով գրաւում են Երուսաղէմը, վաւերացնում են Հայ Եկեղեցու իրաւունքները Սուրբ Երկրում: Մելիսէնդի օրօք Կիլիկիայի հայ որմնադիրների եւ վարպետների մասնակցութեամբ վերականգնւում է Տիրոջ Գերեզմանի աւերուած տաճարը:

Նշանակալից է նաեւ Կիլիկիայի հայ թագաւորների ներդրումը հայկական սրբավայրերում: Կառուցւում են եկեղեցիներ, ցանկապատւում են վանքեր, հողեր են գնւում Պատրիարքութեան շրջակայքում:

Այս ամէնից բացի Պատրիարքութիւնը նաեւ վայելում էր Կիլիկիայի հայ արքաների պաշտպանութիւնն ամէն տեսակի ճնշումներից:

Երուսաղէմի թագաւորութեան ժամանակ Սուրբ Երկիր են այցելում շատ հայ ուխտաւորներ նաեւ Կիլիկիայից. շատերը բնակութիւն են հաստատում Երուսաղէմում: Այդպիսով հիմնադրւում են հայկական թաղամասի ամուր հիմքերը…

XII դ. վերջին՝ խաչակիրների պարտութիւնից յետոյ, Երուսաղէմին տիրում է Եգիպտոսի սուլթան Սալահ ադ Դինը, որը, զաւթելով լատին եկեղեցիները, դրանք վերածում է մզկիթների: Երուսաղէմի՝ Աբրահամ հայոց Պատրիարքը հանդիպում է Սալահ ադ Դինի հետ եւ ներկայացնում Մուհամմէդ մարգարէի, Օմար (634-644) եւ Ալի (656-661) խալիֆների հրովարտակները, որ տրուել էին Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեանը: Կարդալով դրանք՝ Սալահ ադ Դինը նոյնպէս հողատարածքների եւ եկեղեցիների անձեռն-

մրխելիութեան նոր հրովարտակ է փալիս Հայոց Պատրիարքութեանը:

### Կաթոլիկների ունիթորական շարժման դէմ պայքարը: Կիլիկիայի Աթոռից Պատրիարքութեան անջատուելը: Կիլիկիայի անկումը 1375 թուականին

Կիլիկիայի թագաւորութեան օրօք Հայ Եկեղեցին իր պատմութեան մէջ առաջին անգամ շփումներ է ունենում Հռոմի Եկեղեցու հետ:

Երբ Կիլիկիայի թագաւորները օգնութեան համար դիմում են Արեւմուտքին, Հռոմի Եկեղեցին յաճախ պայմաններ է առաջադրում, որ Հայ Եկեղեցին ճանաչի Քաղկեդոնի եւ յետագայ ժողովները, որ Սուրբ Սկիհի մեջ ջուր խառնի եւ Քրիստոսի Ծնունդը նշի դեկտեմբերի 25-ին:

Ժամանակ առ ժամանակ Կիլիկիայի հոգեւորականութիւնը եւ թագաւորները, ընդունելով այդ պայմանները, փոփոխութիւններ են մտցնում Հայ Եկեղեցու արարողակարգում եւ ծէսերում: Այդ փոփոխութիւններին մշտապէս լրջօրէն առարկում է Արեւելեան Հայաստանի հոգեւորականութիւնը, որի շնորհիւ էլ Հայ Եկեղեցին փրկւում է լատին միաւորումից ինչպէս Հայաստանում, այնպէս էլ Կիլիկիայում եւ Երուսաղէմում: Արեւելեան Հայաստանի ազդեցութիւնը Կիլիկիայի վրայ թուլացնելու նպատակով Հռոմի Եկեղեցին 1250 թուականին Հայաստան է ուղարկում ֆրանցիսկեան վանականների, որոնք ակտիւ քարոզչական գործունէութիւն են ծաւալում՝ Հռոմի հետ միաւորելու «*հեռացած քրիստոնեաներին*», որոնց ծէսերը տարբերւում են լատինականից: 1388 թուականին Յովհաննէս XXII պապը, ֆրանցիսկեան միաբանութեան մէջ ներքին պայքարի պատճառով, դոմինիկեան վանականներին ուղարկում է Հայաստան, որոնք իրականացնում են հաւատափոխութեան առաւել նուաճողական քաղաքականութիւն: Հենց այս շրջանում Հայաստանում՝ Սիւնիքում, սկսում են գործել միջնադարեան Հայաստանի երկու խոշորագոյն հոգեւոր-կրթական կենտրոնները՝ Գլաձորի եւ Տաթեւի վանքերի համալսարանները, որոնք վանական դպրոցների հետ երկու դար շարունակ ոչ միայն զգալի ներդրում են ունենում միջնադարեան հայ մշակոյթի գանձարանում՝ պաշտպանելով Հայ Եկեղեցու հնագոյն աւանդութիւններն ու աւանդները, այլեւ

գաղափարական եւ քաղաքական պարտութեան են մատնում Վատիկանը:

Այսպիսով, XIII դարի վերջին Կիլիկիայում թագաւորում էր եկեղեցիների միաւորման կողմնակից Հեթում II-ը (1289-1301 թթ.): Նրա հրամանով Գրիգոր Անաւարզեցի Կաթողիկոսը Յայսմաւուրքը համապատասխանեցնում է յունականին եւ լատինականին եւ լատինների նման ամենայն սրբոց տօնը հաստատում նոյեմբերի 1-ին: Նա փորձում է փոփոխել նաեւ ծիսական բնոյթի մի շարք խնդիրներ, յատկապէս այնպիսիք, որոնք միշտ խոչընդոտում են Հայ Եկեղեցւոյ միաւորումը Բիւզանդական եւ Լատին Եկեղեցիներին:

Այդ փոփոխութիւններին լրջօրէն առարկում են Արեւելեան Հայաստանում, որտեղ Սիւնիքի միտրոպոլիտի նախագահութեամբ Ժողով է գումարւում, որը գրաւոր զգուշացնում է Կաթողիկոսին, որ նա չփոփոխի Հայ Եկեղեցու ծէսերը:

Կարճ ժամանակ անց Գրիգոր Անաւարզեցի Կաթողիկոսը, համոզուելով, որ լատիններից իրական օգնութիւն ստանալ հնարաւոր չէ, աւելորդ է համարում այլեւս զբաղուել Եկեղեցիների միաւորման խնդրով եւ այդպիսով խառնակութիւն սերմանել սեփական Եկեղեցում: Բայց Հեթում եւ Լեւոն թագաւորները, Արեւմուտքից օգնութիւն ստանալու ակնկալիքով, շարունակում են Կաթողիկոսից պահանջել երկու Եկեղեցիների լիակատար միաւորում: Կաթողիկոսը հրաժարւում է եւ այդ պատճառով զրկւում իշխանութիւնից ու աքսորւում եւ 1306 թուականին աքսորում վախճանւում՝ մահուան մահճում արտաբերելով՝ «**Ես հայ եմ, հայ էլ մեռնում եմ**»:

Գրիգոր Անաւարզեցու մահից յետոյ Լեւոն թագաւորը 1307 թուականին Սսում Ժողով է գումարում, որը յայտնի է որպէս Սսի VII Ժողով, եւ որին մասնակցում են քառասուներեք եպիսկոպոս եւ Կիլիկիայի իշխանները: Լեւոն թագաւորը Ժողովին է ներկայացնում իբրեւ թէ Գրիգոր Անաւարզեցու գրած նամակը, որն ամփոփում է հետեւեալ աստուածաբանական եւ ծիսական փոփոխութիւնները.

ա) Սուրբ Բաժակի մէջ ջուր խառնել,

բ) Ընդունել եօթ Տիեզերական Ժողովների որոշումները,

գ) Քրիստոսի մէջ ընդունել՝ երկու բնութիւնը, երկու կամքը եւ երկու ներգործութիւնը,

դ) Տիրոջ տօները նշել յոյների եւ լատինների նման. Սուրբ Ծնունդը՝ դեկտեմբերի 25-ին, Տեառնընդառաջը՝ փետրուարի 2-ին, Աւետումը՝ մարտի 25-ին եւ այլն:

Ժողովի մասնակիցները, բացառութեամբ հինգ եպիսկոպոսների, ընդունում են այս փոփոխութիւնները: Այդ Ժողովում էլ Կաթողիկոս է ընտրւում միաւորման ջատագով Կոստանդին Կեսարացին (1307-1322 թթ.):

Սսի Ժողովի որոշումները կրկին լուրջ դիմադրութեան են հանդիպում ինչպէս Արեւելեան Հայաստանում, այնպէս էլ Երուսաղէմում: Սակայն Լեւոն թագաւորի ժառանգորդ Օշինը (1307-1320 թթ.) ջանք ու եռանդ չի խնայում՝ կեանքի կոչելու այդ որոշումները:

Ինչպէս տեսանք, Երուսաղէմի Պատրիարքութիւնն ունէր ինչպէս Կիլիկիայի Կաթողիկոսութեան հոգեւոր, այնպէս էլ Կիլիկիայի թագաւորների նիւթական հոգացողութիւնը: Բայց Կիլիկիայի լատինամէտ քաղաքականութիւնը նոյնպէս մտահոգում էր Երուսաղէմի Պատրիարքութեանը: 1311 թուականին Սարգիս Պատրիարքը, ընդդիմանալով Օշին թագաւորի եւ Կոնստանդին Կաթողիկոսի՝ Հռոմի Եկեղեցուն միաւորուելու պահանջներին, զատւում է Կիլիկիայի Կաթողիկոսութիւնից եւ դաշնագիր կնքում Եգիպտոսի սուլթանի հետ՝ ստանալով նրա խնամակալութիւնը:

Ծագած խառնակութեանը վերջ դնելու նպատակով Օշին թագաւորը 1316 թուականին Ադանայում տասներեք եպիսկոպոսի, եօթ վարդապետների եւ տասն իշխանների մասնակցութեամբ Ժողով է գումարում. քննարկւում են Սսի VII Ժողովի որոշումների առարկութիւնները, որոնք մերժւում են իբրեւ ճշմարտութեանը հակասող, եւ վերստին հաստատւում են Սսի Ժողովի որոշումները:

Սակայն նման Ժողովները չէին կարող խախտել Հայ Եկեղեցու աւանդութիւնները:

Ադանայում կայացած Ժողովից յետոյ Օշին թագաւորը 1318 թուականին դիմում է Յովհաննէս XXII պապին եւ Ֆրանսիայի թագաւոր Ֆիլիպին՝ Եկեղեցիների միաւորման համար խոստացուած օգնութեան մասին խնդրագրով, սակայն ապարդիւն: Լատինամէտ քաղաքականութեան հետեւանքը միայն հարեւան մուսուլմանների, յատկապէս Եգիպտոսի մամլուքների թշնամանքն էր, որոնց յաճախակի արշաւանքները

Կիլիկիայի հայկական պետութեան կործանման պատճառ են դառնում:

Զայրացած Արեւմուտքի չիրականացրած խոստումներից՝ Մեսրոպ I Արտազեցի Կաթողիկոսը 1361 թ. գումարում է Սսի VIII Ժողովը եւ կարգադրում Հայ Եկեղեցու արարողակարգից վերացնել բոլոր նորարարութիւնները, որոնք Կիլիկիայի թագաւորների լատինամէտ քաղաքականութեան հետեւանք էին:

Այսպիսով, 1375 թ. փապալւում է Կիլիկիայի հայկական թագաւորութիւնը: Երկիրը սնանկանում է, սկսւում է մասսայական արտագաղթ: Հայ Եկեղեցու Կաթողիկոսի Աթոռը խաղալիք է դառնում օտարերկրացիների ձեռքին: Այսպիսի քաղաքական պայմաններում բուն Հայաստանում ծնւում է Աթոռը Սուրբ Էջմիածին վերադարձնելու գաղափարը:

Կիլիկիայի հայկական թագաւորութիւնը, տեղակայւած լինելով Ասիայի եւ Եւրոպայի սահմանագծին, ռազմական եւ առեւտրական ճանապարհների հատման վայրում, քաղաքական, տնտեսական եւ մշակութային բաւական կարեւոր դեր է խաղացել Մերձաւոր Արեւելքի պատմութեան մէջ: Կիլիկիայի հայերը, մատչելի լինելով արտաքին աշխարհին, կարողանում են ստեղծել աւանդական հայկական մշակոյթի եւ այլ երկրների ձեռքբերումների իւրայատուկ համադրութիւն: Դրանից բացի հայ ժողովուրդը Միջերկրական ծովի ափերին՝ իր նոր հողի վրայ, ստանձնում է Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ միջնորդի այն դերը, որ պէտք է խաղայ իր ողջ յետագայ պատմութեան ընթացքում: Կիլիկիայի թագաւորութեան երեքհարիւրամեայ գոյութիւնը, երբ բուն Հայաստանում հայերը զրկւած էին պետականութիւնից, հայ ժողովրդի յամառօրէն քաղաքական անկախութեան ձգտելու եւ նրա ստեղծագործ գործունէութեան լաւագոյն վկայութիւնն է: Կիլիկիայի հայկական թագաւորութեան պատմութիւնը հայ ժողովրդի բազմադարեան անցեալի բովանդակալից էջ է:

### Վրացիների ոտնձգութիւնները: Գողգոթայի կորուստը

Պատերազմների, բնական պարերքների, միւս քրիստոնեաների նենգութիւնների պատճառով հայերը շատ եկեղեցիներ եւ վանքեր են կորցնում Սուրբ Երկրում… Այն ժամանակաշրջանի պատմագիրները նկարագրում են հայ հոգեւորա-

կանութեան թշուառ վիճակը. արիւն է թափւում սրբավայրերը պաշտպանելիս, փիրում է սով, Պատրիարքութիւնը յայտնւում է պարտքերի ներքոյ՝ չկարողանալով մարել սրբավայրերի եւ հողատարածքների պարտքերը: Շնորհիւ մեր Գրիգոր Պարոնտէր եւ Գրիգոր Շղթայակիր Սուրբ Պատրիարքների (ըստ եկեղեցական կանոնների՝ նրանք Հայ Առաքելական Եկեղեցու սրբերից չեն, սակայն Երուսաղէմում մեծարւում են իբրեւ սուրբ նրանց անուններն անգամ յիշատակւում են Պատարագի ժամանակ)՝ Աթոռը նորից է ծաղկում, մարւում են պարտքերը, միաժամանակ ձեռք են բերւում նոր հողատարածքներ, վերանորոգւում են եկեղեցիներ… Բաւականին կարեւոր դեր են կատարում նաեւ մեր ուխտաւորները, որոնք իրենց նուիրատուութիւններով եւ իշխանութիւնների առջեւ բարեխօսութիւններով, Պատրիարքութիւնը փրկում են ծայրայեղ ծանր վիճակից…

Հայ Եկեղեցին զրկանքներ էր կրում նաեւ միւս Եկեղեցիներից, առաջին հերթին՝ յոյներից. մեր Պատրիարքութեանը հանգիստ չէին տալիս նրանց խարդախութիւնները, չարամտութիւնը եւ իշխանութեանը կաշառելը: Երբեմն մէկ կանթեղի պատճառով կարող էր մեծ բախում բորբոքուել եւ զոհերի հանգեցնել:

Սուրբ Վայրերի էական հատուածի՝ հայերին պատկանելը գրգռում էր միւս քրիստոնեաների նախանձը, ատելութիւնը. նրանք մշտապէս պատեհ առիթ էին որոնում, որ փիրեն այդ վայրերին… Վրացիները, որոնք Երուսաղէմում Յունաց Պատրիարքութեան իրաւասութեան ներքոյ էին, աչք են տնկում Սրբոց Յակոբեանց վանքին…

Երբ 1311 թուականին Երուսաղէմի Պատրիարքութիւնն անջատւում է Կիլիկիայի Կաթողիկոսութիւնից, վրաց թագաւորը, իմանալով, որ Կիլիկիայի Օշին թագաւորն այլեւս չի օգնի Հայոց Պատրիարքութեանը, 1312 թուականին Եգիպտոսի Մելիք Իւսուֆ սուլթանի մօտ պատգամաւորներ է ուղարկում՝ Սրբոց Յակոբեանց հայկական վանքը ձեռք գցելու նպատակով: Չունենալով վանքի հանդէպ որեւէ իրաւունք եւ ոչ մի ապացոյց՝ վրացիները խնդրում են, որ սուլթանն այն խլի հայերից եւ փոխանցի վրացիներին: Սակայն Սարգիս Պատրիարքը սուլթանին է ներկայացնում իսլամ կառավարիչների կողմից հայերին տրուած, բոլոր իրաւունքներն ու հրովարտակները, որոնք հաստատում են հայերի՝ վանքի հանդէպ

ունեցած բոլոր իրաւունքները: Այդ հիմքով սուլթանը մերժում է վրացիների խնդրանքը, իսկ հայերին՝ նոր հրովարտակ տալիս:

Կարճ ժամանակ անց՝ Սարգիս Պապրիարքի մահից յետոյ, վրացիները, համաձայնութեան գալով Կաթոլիկների հետ, Եգիպտոսի սուլթանից խնդրում են Սրբոց Յակոբեանց վանքը եւ Գողգոթան: Սուլթանը կրկին մերժում է վրացիներին եւ կաթոլիկներին, իսկ հայերին՝ նոր հրովարտակ տալիս:

XV դարի 20-ական թուականներին Վրաստանում է գտնւում եգիպտացի հարուստ եւ անուանի վաճառական ոմն Գայիպի: Նրան կաշառում են եւ խնդրում համոզել Եգիպտոսի Մելիք-Աշրաֆ սուլթանին, որ հայերից խլի Գողգոթան եւ փոխանցի վրացիներին: Բազում գանձերից բացի վրաց իշխանները խոստանում են, որ Վրաստանի փիրապետութեան ներքոյ գտնուող բոլոր մուսուլմանները կ'ազատուեն հարկերից, կը վերականգնուեն քանդուած մզկիթները: Սուլթանը համաձայնում է այս գործարքին… Մեր Մարտիրոս Պապրիարքը 1424 թուականին զառամեալ հասակում գնում է Եգիպտոս եւ երեք տարուայ ընթացքում ոչ առանց կաշառելու համոզում է սուլթանին վերադարձնել Գողգոթան: Գողգոթան վերադարձւում է… Սակայն շուտով՝ մէկ տարի անց, վրացիները կրկին կաշառում են սուլթանին, եւ Գողգոթան կրկին փոխանցւում է նրանց… Մեր Պապրիարքը նորից է գնում Եգիպտոս, նոր փրկագին վճարում եւ վերադարձնում Գողգոթան… Քիչ անց վրացիները երրորդ անգամ են սպանում Գողգոթան, եւ երբ Մարտիրոս Պապրիարքը երրորդ անգամ է ուղեւորւում Եգիպտոս, նրան բացատրում են, որ զուր ժամանակ եւ գումար է ծախսում, որովհետեւ վրացիները խոստացել են ամէն տարի սուլթանին հարկ վճարել, այլեւ ծառաներ եւ կանայք ուղարկել նրա հարեմի համար: Վրաց թագաւորի հրամանով Վրաստանում թալանում էին հայ վաճառականներին, աւելացւում էին տեղացի հայերի հարկերը, եւ այդ ամէնն ուղարկւում էր սուլթանին… Բայց սուլթանը, յարգելով մեր Պապրիարքի տարիքը, նաեւ ծնունդով Եգիպտոսից լինելը, հայերին է նուիրում տաճարի վերնայարկը, որտեղ նախկինում աղօթում էին քրիստոնեայ արքաները: Մարտիրոս Պապրիարքն այնտեղ խորան է կառուցում Գողգոթային դէմ յանդիման եւ այդ փոքրիկ եկեղեցին անուանում Երկրորդ Գողգոթա. այն մինչ օրս պատկանում է հայերին: Այսպիսով, 1439 թուականին մենք վերջնականապէս կորցնում

ենք Գողգոթան: Յետագայում, վրացիները չեն կարողանում սուլթանին հարկ վճարել, եւ այն անցնում է յոյներին…

## Օգնութիւն ֆրանցիսկեաններին

Փիլիպպոս Պատրիարքի մահուանից յետոյ՝ 1551 թուականին, Պատրիարք է ընտրւում Անդրէասը, որը, լինելով խոնարհ, հրաժարւում է Պատրիարք դառնալուց՝ առաջարկելով իր հօրեղբօր՝ Աստուածատուրի թեկնածութիւնը: Բայց եւ, այդուհանդերձ, ողջ հոգեւորականութեան թախանձանքով զիջում է: Նրա պատրիարքութեան օրօք, Պատրիարքութիւնն օրեցօր բարգաւաճում էր:

1554 թուականին Երուսաղէմի մուսուլմանների եւ Սիոնի Վերնատան վանքի ֆրանցիսկեանների միջեւ բախում է տեղի ունենում, որի պատճառով վերջիններս վտարւում են վանքից: Երկար թափառելով եւ տեղ չգտնելով՝ ֆրանցիսկեաններն օգնութեան խնդրանքով դիմում են Անդրէաս հայոց Պատրիարքին: Ֆրանցիսկեաններին ժամանակաւորապէս տրամադրում են Սրբոց Հրեշտակապետաց վանքը: Նրանց համար առանձնացւում են երկու ջրհոր եւ խցեր, իսկ Պատարագների համար՝ եկեղեցու երկու խորան: Մի քանի տարի յետոյ ֆրանցիսկեանները, Երուսաղէմում գնելով վրաց Ս. Յովհաննէս եկեղեցին (այն գրաւ էր դրուած վրացիների հարկ չվճարելու պատճառով), տեղափոխւում են հայկական վանքից: Շուտով գնում են վանքի շրջակայքի հողերը, կարգի բերում վանքը, կառուցում են նոր եկեղեցի՝ այն անուանելով Ս. Փրկիչ. այն մինչ օրս պատկանում է ֆրանցիսկեաններին:

## Սուրբ Աթոռը XVI-XVIII դդ.

XVI դ. երկրորդ կէսին՝ բարեպաշտ Անդրէաս Պատրիարքի օրօք, մեր Պատրիարքութիւնն օրեցօր բարգաւաճում էր: 1589 թ.՝ նրա մահուանից յետոյ, Ս. Յակոբի Աթոռ է բարձրանում նրա զարմիկ ոչ պակաս բարեպաշտ եւ գործունեայ Դաւիթ Պատրիարքը…

Այդ ժամանակ շատ տեղացի հայեր, որոնք ապրում էին Պատրիարքութեանը պատկանող հողատարածքներում, նաեւ հիմնաւորուած էին Սրբոց Յակոբեանց վանքում, հարկեր չէին վճարում, այլեւ ի լրումն սկսում են իրենց տէր զգալ՝ կորցնելով

յարգանքը հոգեւորականութեան նկատմամբ: Այս ամէնը Պապրիարքութեան պարտքերի աճի պատճառ է դառնում: Միւս պատճառն այն էր, որ քաղաքի կառավարիչները, շեյխերը եւ այլ աշխարհականներ նախանձում էին մեր Պապրիարքութեան բարգաւաճմանը: Նրանք հարստանալու աղբիւր են նկատում եւ օգտւում են յարմար պահից: Պատմագիրները հաղորդում են, որ նրանք բառի բուն իմաստով սկսում են թալանել Պապրիարքութիւնը. ընդամէնը մի քանի տարուց այն աղքատանում է. գրաւ են դրւում ոչ միայն եկեղեցական սպասքը, զգեստները, այլեւ մի քանի եկեղեցիներ: Ահա թէ ինչ է գրում Սիմէոն Լեհացին. *«Եթէ անհրաժեշտ էր պատարագ մատուցել, չկար ո՛չ սկիհ, ո՛չ խաչ, ո՛չ Աւետարան. գնում, կաշառք էին տալիս, բերում էին շուրջառներ և մնացեալը, պատարագից յետոյ հապճեպ հետ էին տանում: Պարտքերն այնքան բազմապատկուեցին և աճեցին, որ անգամ Սուրբ Վայրերը խլեցին հայերից, այնպէս որ նրանց ոչինչ չմնաց: Վա՜յ ինձ, [որովհետև] իմ՝ մեղքերի մէջ թաղուածիս պատճառով անհաւատներին են յանձնուել Քրիստոսի սրբութիւնները և Սուրբ Վայրերը, ինչպէս հին ժամանակներում՝ Տապանը: Եւ հենց Պարոնտէրը լալագին ասաց. «Կար ժամանակ, երբ մենք, ըստ սովորութեան, Ծննդեան տօնին գնացինք Բեթղեհէմ, և չունէինք խաչ, որպէսզի օրհնենք ջուրը, և հանելով Մաշտոցից փոքրիկ խաչը, մենք դրանով օրհնեցինք [ջուրը]. լոյսի գալստեան ժամին հայերը չէին երևում Սուրբ Յարութեան [եկեղեցում] ամօթից և կշտամբանքից, թէ իբր՝ «դուք չունէք ո՛չ տեղ, ո՛չ գոյք, ո՛չ շուրջառներ»: Այս ամէնը կրելով՝ հայ ժողովուրդը շփոթուեց և նուաստացաւ՝ դառնալով բոլոր քրիստոնեաների ծաղրուծանակի և նախատինքի առարկայ: Ոչ ոք չէր կարող օգնել Սուրբ Երուսաղէմին կամ էլ ազատել [այն] պարտքերից՝ ո՛չ կաթողիկոս, ո՛չ եպիսկոպոս, ո՛չ վարդապետ, ո՛չ խոջայ, ո՛չ երևելիներ, ո՛չ հարուստներ, մինչև որ բարեգութ Աստուած, որը վերջնականապէս և ընդմիշտ չէր լքել [մեզ], գայրացաւ, գթաց, խղճաց [մեզ], գտաւ ապաքինում և օգնական և փրկիչ դարձաւ իրեն ապաւինողներին՝ ազատելով մեզ դժբախտութիւնից, վշտից ու խայտառակութիւնից և օգնութեան գալով մոլորեալներին և կորուսեալներին»*:

1600 թ. իմանալով Պապրիարքութեան աղէտալի վիճակի մասին՝ Երուսաղէմ է այցելում Սսի Ազարիա Կաթողիկոսը: Վերադառնալով հայրենիք՝ նա Ժողով է գումարում եւ որոշում մարդկանց ուղարկել քաղաքներ ու գիւղեր՝ Երու-

սաղէմի Պատրիարքութեանն օգնելու համար դրամական միջոցներ հաւաքելու: Միջոցները փոխանցւում են Դաւիթ Պատրիարքին եւ նրա աշակերտ Յովհաննէս վարդապետին: Պարտքերը մարւում են, ամէն ինչ փրկագնւում են. Յովհաննէս վարդապետը վտարում է բոլորին, ովքեր ինքնագլուխ հիմնաւորուել էին Պատրիարքութեան հողատարածքներում, որ տեղի էր ունեցել Պատրիարքի, ըստ Սիմէոն Լեհացու, մեղմ ու համեստ մարդու թուլութեան պատճառով: Յովհաննէս վարդապետը ուղեւորւում է Կաթողիկոսի մօտ դրամական միջոցների միւս մասի հետեւից: Ճանապարհին նա տեղեկանում է Կաթողիկոսի մահուան եւ դրամական միջոցների կորստեան մասին: Կարճ ժամանակ անց Պատրիարքութիւնը կրկին ընկնում է պարտքերի մէջ…

1608 թ. Երուսաղէմ է այցելում այն ժամանակ յայտնի Բարսեղ վարդապետը: Մէկ տարի ապրելով Սրբոց Յակոբեանց վանքում՝ նա իմանում է Պատրիարքութեան թշուառ վիճակի բոլոր մանրամասները: Վերադառնալով հայրենիք՝ նա շրջում է Վանի նահանգի քաղաքներով եւ գիւղերով՝ պատմելով Երուսաղէմի մասին եւ հայերին նուիրատուութիւնների կոչ անելով: Շատ գանձեր են հաւաքւում, դրանից բացի շատ հայեր Պատրիարքութեանն աջակցելու համար մեկնում են Երուսաղէմ: «*Եւ բոլոր յարգարժան և նշանաւոր հարուստները սկսեցին տալ իրենց հնարաւորութիւնների չափով, ով հազար, ով երկու, ով հինգ հազար և աւելի դուրուշ: Կային այնպիսիք, որ տուեցին 10 հազար: Իսկ աղքատները [տուեցին] 100, 50 և այլն: Եւ հաւաքեցին աւելի շատ գանձ, քան պարտքն էր, որովհետև տալիս էին [նոյնիսկ] աղքատները և ողորմութիւն խնդրողները, կոյրերը և կանայք*»:

Այդ ժամանակաշրջանի պատմագիրներն ասում են, որ Աստուած յիշեց Ս. Աթոռի տառապանքները, որովհետեւ քրիստոնեայ ժողովուրդների շրջանում ծաղրի առարկայ դարձանք, եւ դիպաւ բարեպաշտ մարդկանց սրտերին, եւ բոլոր երկրներից Երուսաղէմ եկան առաջնորդներ, վարդապետներ եւ աշխարհականներ… Պարտքերը մարւում են, ոսկէ կանթեղներով եւ այլ սպասքով են զարդարւում Սրբոց Յակոբեանց տաճարը, Երկրորդ Գողգոթա եկեղեցին: Դրանից յետոյ վախն անհետանում է Ս. Աթոռի վանական միաբանների սրտերից, որովհետեւ նրանք արդէն չէին վախենում համարձակօրէն փողոց դուրս գալ: Երուսաղէմի միւս քրիստոնեայ եկեղեցիները նախկինում ուզում էին ձեռք գցել գրաւի դրուած հայկական եկեղեցիները,

բայց տեսնելով հայերին ուղղուած Աստծու Ձեռքը՝ հրաժարւում են իրենց չար մտադրութիւններից:

Երբ մինչեւ վերջին կոպեկը վճարւում են բոլոր պարտքերը, սկսում են խորհրդակցել, թէ ով պէտք է լինի Ս. Աթոռի առաջնորդ եւ հովուապետ, այլեւ Երուաղէմի Ս. Աթոռի խնամակալ, որպէսզի հոգայ Աստծու երկրի մասին: 1611 թ. ընդհանուր համաձայնութեամբ Դաւիթը լքում է ամբիոնը, նրա փոխարէն ընտրւում է Գրիգոր Պարոնտէրը, որն այն ժամանակ սովորական վանական էր, բայց արդէն հռչակ էր վայելում իր բեղմնաւոր գործունէութեամբ՝ ծառայելով Պատրիարքութեանը եւ պաշտպանելով նրա սրբավայրերի իրաւունքները: Մի քանի օրից նրան ձեռնադրում են քահանայ, իսկ 1613 թ. յատուկ այդ առաքելութեամբ Երուսաղէմ ժամանած Աւետիս Կաթողիկոսի ձեռքով՝ եպիսկոպոս, որից յետոյ Գրիգորը դառնում է Ս.Աթոռի Պատրիարք:

## Գրիգոր Պարոնտէր Սուրբ Պատրիարքը

Պատմագրի հաղորդմամբ այն ժամանակ, երբ Սրբոց Յակոբեանց Առաքելական Աթոռը խրուած էր պարտքերի մէջ, Աստծու Նախախնամութիւնը, որն անտեսանելիօրէն պահպանում էր Աթոռը, քարերից վեր է խոյացնում Աբրահամի եւ Սիոնի (Պատրիարքութիւնը եւ տաճարը գտնւում են Սիոն լերան վրայ, թէեւ քարտեզներում լեռը յաճախ նշւում է միայն հին քաղաքի պարսպից այն կողմ, որտեղ գտնւում է հայկական գերեզմանատունը) որդուն՝ Գրիգոր Պարոնտէրին՝ ծնունդով Գանձակից, ազնուազարմ ընտանիքից: Երեխայ տարիքում նա հրաշքով փրկւում է մահից. սրա պատճառով ծնողները որոշում են նրան բազմաթիւ ընծաներով ուղարկել՝ սրբավայրերին երկրպագելու: Կարճ ժամանակ անց ծնողները մահանում են, սակայն հարազատները, յիշելով նրանց ուխտի մասին, Գրիգորին ուղարկում են Երուսաղէմ: Վերադառնալուց եւ չափահաս դառնալուց յետոյ հարազատները ցանկանում են նրան ամուսնացնել, սակայն նա որոշում է հրաժարուել այս աշխարհից: 1581 թ. նա երկրորդ անգամ է գնում Երուսաղէմ, այնտեղից՝ Հռոմ՝ երկրպագելու Սբ. Պօղոսի եւ Սբ. Պետրոսի մասունքներին, յետոյ վերադառնում է հայրենիք՝ դառնալով Պետրոս Կարկառեցու՝ Սսի ապագայ Կաթողիկոսի աշակերտը: Գրիգորը խիստ ճգնաւորական կեանք է վարում՝

իմաստնութիւն դրսեւորելով ինչպէս խօսքով, այնպէս էլ գործով:

Այդ ժամանակ Դաւիթ Պատրիարքը Հայաստանի թեմեր նամակներ է ուղարկում՝ բարեպաշտ այրերի Երուսաղէմ ուղարկելու խնդրանքով, որոնք ունակ են Պատրիարքութիւնը դուրս բերելու թշուառ վիճակից: Այսպէս Գրիգորն ընկնում է Երուսաղէմ. որտեղ ձեռնադրւում է սարկաւագ, եւ Պատրիարքութեան շատ գործեր յանձնում են նրան… Նա սկսում է վանքեր նորոգել, զբաղւում է պարտքերի եւ այլ կարեւոր խնդիրներով: Ինչպէս արդէն նշուել է, 1611 թ. բոլոր պատրիարքական գործերը վերջնականապէս փոխանցւում են Գրիգորին, իսկ 1613 թ. նա դառնում է Պատրիարք:

Սկզբում նա նորոգում և բարեկարգում է քաղաքի եւ քաղաքից դուրս գտնվող 12 եկեղեցիներ, իսկ Սրբոց Յակոբեանց, Սրբոց Հրեշտակապետաց եւ Սուրբ Փրկիչ վանքերում հիւրերի եւ հիւանդների համար՝ սենեակներ կառուցում, միաբանների համար՝քարէ խցեր, գեղեցիկ դարպասներ եւ համապատասխան սեղանատներ, պարտէզներ, խաղողի այգիներ եւ ծաղկանոցներ, եւ շատ այլ շինութիւններ, նորոգում է 365 խցեր: Նրա ժամանակաշրջանում Հայոց Պատրիարքութիւնը առաջադիմում էր եւ բարգաւաճում: Այս ամէնից բացի, նա վերականգնում է խախտուած վանական կարգերն ու կանոնները: Բոլոր եկեղեցիներում նշանակում է լուսարարներ եւ քահանաներ, որ ամէն օր Պատարագ կատարեն՝ աղօթելով հայ ժողովրդի համար:

1614 թ. Երուսաղէմ է այցելում Սսի Յովհաննէս Կաթողիկոսը, որպէսզի քաջալերի Գրիգորին եւ վերջինիս խնդրանքով օրհնի Մեռոնը: Այդ տարի Սիմէոն Լեհացու վկայութեամբ Գրիգոր Պարոնտէրի աղօթքով Յարութեան Տաճարում հրաշք է կատարւում. *«…Մեր պատրիարքը խղճալի ձայնով և լալագին ասում է ժողովրդին. «Զգօ՛ն եղէք և զգուշացէ՛ք մեղքերից, որովհետև մօտենում է լոյսի գալուստը: Ուշադի՛ր եղէք, որպէսզի ձեր մէջ չլայտնուի դաւադիր կամ չարամիտ կամ անառակ կամ թերահաւատ, չապաշխարած, չխոստովանած մէկը: Իմացէ՛ք, որ մեր մեղքերի պատճառով Քրիստոսը կ'արգելի լոյսի [գալուստը]»: Եւ ասում է շատ այլ խօսքեր և խրատներ, այնուհետև կարգադրում երեք անգամ խղճալի ձայնով կարդալ. «Տէ՛ր, ողորմեա՛»: Սրանից յետոյ տղամարդիկ և կանայք՝ երեք անգամ, իսկ ծերերն ու երեխաները երկու անգամ բացականչում են. «Լուսաւորչի*

*փառքով փառաբանե՜նք Տէր Աստծուն», յետոյ շարական երգում. «Լուսավորուի՛ր, Երուսաղէ՛մ, քանի որ Քրիստոսի լոյսը հասել է», նաև «Ծնծա՛, Սուրբ Եկեղեցի»: Յանկարծ, անսպասելիօրէն սարսափելի որոտի ձայն է լսւում, այնպէս որ ոմանք անգամ քարանում են [վախից]: Յետոյ, դէպի գմբէթ ճախրող աղաւնիներ են յայտնւում: Եւ նորից երկու և երեք անգամ երգում և բացականչում են. «Տէ՛ր, ողորմեա՛ ժողովրդին» և «Լուսաւորչի փառքով փառաբանե՜նք Տէր Աստծուն»: Եւ կրկին որոտում և ցնցւում է Քրիստոսի սուրբ գերեզմանը: Նախապատրաստուելով և զգեստաւորուելով, վանականները իրենց ձեռքն են վերցնում խաչ, Աւետարան, բուրվառ, խաչվառ, իսկ սարկաւագները, դպիրները և կղերականները վերցնում են քշոց, ծնծղաներ, իսկ միւսները՝ [ինչ-որ բան] մնացեալը: Պարոնտէրը հրամայում է բոլորին հաշտուել և միմեանց համբուրել, որովհետև Քրիստոսը չի մօտենում մեղաւորներին և չարամիտներին, այլ փախչում է նրանցից: Եւ կրկին երեք անգամ բարձրաձայն բացականչում են «Տէ՛ր, ողորմեա՛», իսկ յետոյ՝ «Լուսաւորչի փառքով փառաբանե՜նք Տէր Աստծուն»: Գերեզմանը ահաւոր որոտում է, և վրան մեծ ճեղքեր են յայտնւում, որտեղից լոյս է ճառագում և պատուհանից դուրս գալիս...»:*

1634 թ. եկեղեցական Տօնացոյցը չի համընկնում յունականին. նրանց Զատիկը պէտք է փօնուէր մերից մէկ շաբաթ առաջ: Յոյները պահանջում են, որ մենք Զատիկը փօնենք իրենց հետ, սակայն յետոյ՝ ցուցադրաբար համաձայնում Պարոնտէրի հետ: Բայց քաղաքի կառավարիչներին յայտնում են հայերի՝ չսահմանուած կարգով նաեւ մէկ այլ Զատիկ փօնելու մտադրութիւնը (մուսուլմանական իշխանութիւնների հետ քրիստոնեաների չհամաձայնեցրած փօնելը կարող էր պատժուել): Իշխանութիւնները դիմում են շէյխերին եւ հրեայ ռաբբիներին, որոնք հաստատում են, որ հայերի Զատիկը նշւում է սահմանուած օրը՝ մուսուլմանական եւ հրեական փօներին համեմատաբար մօտ ժամանակահատուածում: Բոլոր վկայութիւններն արձանագրւում են, եւ իշխանութիւնները թոյլատրում են, որ չհամապատասխանելու դէպքում (90 կամ 100 տարին մէկ) երկու Եկեղեցիները Զատիկը փօնեն ամէն մէկն իր օրը՝ պայմանով, որ յոյների փօնի ժամանակ տաճարում հայ չպէտք է լինի՝ բացի մէկ հոգեւորականից, եւ ընդհակառակը...

Յունական փօնին՝ Աւագ Շաբաթ՝ ապրիլի վեցին, յոյները սկսում են արարողութիւնը՝ աղօթելով, որ կրակը յայտնուի,

սակայն ոչինչ չի յաջողւում. այդ ժամանակ նրանք կաշառում են մի զինուորի, որպէսզի նա հրահան նետի Գերեզմանի մէջ. դրա համար զինուորը պատժւում է, իսկ յոյները՝ խայտառակւում… Մեր տօնին՝ ապրիլի 13-ին, Պարոնտէրի աղօթքով կրկին Լոյսի ճառագման հրաշք է տեղի ունենում, որի մասին վկայում է պատմաբան Սաւալանեանցը:

Բայց յոյները չեն հանդարտւում: Կաշառելով Կոստանդնուպոլսի վեզիրներին՝ նրանք յայտնում են, որ հայերը իբրեւ թէ իրենց վտարել են տաճարից եւ միայնակ են նշել տօնը: Վեզիրները թաքցնում են շեյխերի եւ ռաբբիների վկայութիւնները եւ յօգուտ յոյների որոշում կայացնում, որի պատճառով սուլթանի հրամանով մի քանի հայ է գլխատւում: Մահապատժի վայրում երկնքից Լոյս է իջնում՝ քաղաքի բոլոր բնակիչներին տեսանելի: Բնակիչներն ահաբեկւում են, եւ հայերին թոյլատրւում է թաղել գլխատուածներին. գիշերը գերեզմաններին կրկին Լոյս է իջնում…

Անհնար է գերագնահատել Պարոնտէրի ներդրումը: Նա նաեւ Բեթղեհէմից ոչ հեռու հողատարածք է գնում, այնտեղ խցեր է կառուցում եւ բազմաթիւ ձիթենիներ տնկում: Յոգնելով Ս. Աթոռի գործերից՝ նա այնտեղ էր գնում՝ աղօթքի եւ ինքնախոհութեան: Այս հողամասը, ի պատիւ նրա, մինչ օրս անւանում են Պարոնտէր:

*«Նա բարի, գործունեայ, կենցաղավարութեամբ սուրբ և բարեպաշտ մարդ էր: Խօսքը՝ [նրա] արտհայտիչ և իմաստնութեամբ լի, ահեղ և բոլորին սարսափեցնող, այնպէս որ ոչ ոք չէր կարող առարկել նրան, և բոլորը պապանձուած և [սանս] բերանները ջուր հաւաքած լռում էին… Նա ինքը ճգնում, ջանում է զօրուգիշեր, քիչ ուտում է, քիչ քնում և ամբողջ գիշեր արթուն մնալով՝ Աստծուն աղօթքներ է յղում: Երբ քունը նրան յաղթում է, մերկ մարմնին քուրձ հագնելով՝ պառկում է գետնին [անգամ առանց գօտին արձակելու], մի քիչ քնելով՝ նորից վեր կենում: Նա [գաղտնի] շատ բարի գործեր է կատարում և ճգնաւորութիւն անում, որ ես իմ աչքերով եմ տեսել և իմ ականջներով լսել»,* — գրում է Սիմէոն Լեհացին:

Իր մահուանից առաջ Պարոնտէրը կանչում է վանքի միաբանութեանը եւ խնդրում, որ իրենից յետոյ Սբ. Աթոռը գլխաւորի Աստուածատուր եպիսկոպոսը: Պարոնտէրը Աստծու մօտ է հեռանում 1654 թ.՝ թողնելով բազում շինութիւններ եւ հարստութիւն, եւ ամենագլխաւորը՝ բարի յիշատակ…

**Վանքի կորուստը եւ վերադարձը**

Աթոռ է բարձրանում Աստուածատուր եպիսկոպոսը, որը շարունակում է իր նախորդի գործը: 1634 թ. Զատկի ժամանակներից յոյները մշտապէս առիթ են փնտռում իրենց սրտի մաղձը թափելու հայերի վրայ… Աստուածատուր Պատրիարքը անչափ հեզաբարոյ ու բարի մարդ էր, եւ յոյները որոշում են օգտուել դրանից եւ զաւթել Սրբոց Յակոբեանց վանքը: Սկզբում փորձում են Պատրիարքութեան ուժերը: 1656 թ. Զատկին, երբ հայերը Պատրիարքի գլխաւորութեամբ սկսում են եկեղեցական թափորը Գերեզմանի շուրջը, յոյները յարձակւում են հայ ուխտաւորների եւ հոգեւորականների վրայ: Փայտով խփւում-զցւում է Պատրիարքի խոյրը, իսկ ինքը՝ ծեծւում. Պատրիարքը, սակայն, թախանձում է, որ մերոնք չարութեանը չարութեամբ չպատասխանեն… Հայերը չեն բողոքում իշխանութիւններին. յոյները, այս փաստը թուլութիւն համարելով, որոշում են աւելի հեռուն գնալ: Նրանք Կոստանդնուպոլսում կաշառում են վեզիրին եւ նրանից հայկական եւ եթովպական եկեղեցիների նկատմամբ իրաւունք ստանում: Երուսաղէմի կաշառուած դատաւորը կատարում է նրանց բոլոր պահանջները: Նշենք, որ ղպտիները, ասորիները եւ եթովպացիները գտնւում էին Հայոց Պատրիարքութեան հոգեւոր հովանու ներքոյ, եւ քանի որ Եթովպիայի հետ կապ չկար, եւ Սուրբ Երկրում նրանցից համարեայ ոչ ոք չէր մնացել, եթովպական բոլոր եկեղեցիները փոխանցուել էին մեզ: Պատմաբան Սաւալանեանցը նոյն միտումն է արձանագրում վրացիների եկեղեցիների առնչութեամբ, որոնք ժամանակի ընթացքում անցնում են յոյներին:

Անտեսելով թոյլ առողջութիւնը եւ ծեր փարիքը՝ Աստուածատուր Պատրիարքը ուղեւորւում է Կոստանդնուպոլիս՝ Աստուածածնի ողորմածութեան յոյսով: Ճանապարհին այցելելով գիւղեր եւ քաղաքներ՝ հայերից օգնութիւն եւ աղօթքներ է խնդրում: Կոստանդնուպոլսում ազդեցիկ հայերի օգնութեամբ Պատրիարքը վերադարձնում է կորսուածը: Այնտեղ էլ հանդիպում է շատ գործունեայ եւ իմաստուն Եղիազար վարդապետին, նրան պեղապահ նշանակում՝ իրաւունք տալով խնդիրներ լուծելու եւ միջոցներն իր հայեցողութեամբ ծախսելու: 1656 թ. Պատրիարքը վերադառնում է Երուսաղէմ, որտեղ վերականգնում է Սբ. Աթոռի իրաւունքները: Սաւա-

լանեանցը նշում է, որ յոյները, մնացեալից բացի, ուզում էին «սեփականութեան իրաւունք» սպանալ նաեւ Աւագ Շաբաթ զատկական Լուսաւորեայի արարողութեան համար: Սաւալանեանցը նկատում է, որ կողքից որոշ մարդկանց կարող է խնդիրն աննշան թուալ, բայց եւ արձանագրում է, որ դա սրբավայրերում իրաւունքի, այլեւ պատրիարքութիւնների իրաւահաւասարութեան խնդիր է: Յոյների՝ առաջինը լինելու այս մոլուցքը տեսնում ենք նաեւ մեր օրերում…

Աստուածատուր Պատրիարքը վերադառնալով Ժողով է գումարում՝ բոլորին խնդրելով Եղիազարին Պատրիարք ընտրելու համաձայնութիւն տալ: Այդ ժամանակ յոյները սուտ վկայութիւն են տալիս, թէ իբր հայերը հակադրւում են սուլթանի որոշումներին եւ, կաշառելով վեզիրներին, Սրբոց Յակոբեանց վանքը տնօրինելու իրաւունք սպանում: Դռները կնքւում են, բանալիները՝ յանձնւում Դամասկոսի կառավարչին, որն ուզում է օգնել հայերին, բայց Կոստանդնուպոլսում վեզիրները չեն լսում նրան: 1658 թ. վանքից վտարում են բոլոր հայերին. վերջիններս հաստատւում են Երուսաղէմի Սբ. Փրկիչ վանքում եւ Բեթղեհէմում՝ չիմանալով, թէ յետագայում ինչ է տեղի ունենալու: Դամասկոսի կառավարիչը այդ տարուայ Զատկին հայերի համար բացում է դռները եւ թոյլատրում զաղտնի ապրել վանքում: Յոյները շուտով կաշառում են նաեւ նրան՝ բանալիները ձեռք բերելու համար:

1658 թ.՝ Սբ. Հոգու Գալստեան տօնին, յոյները սպանում են բանալիները եւ հաստատւում Սրբոց Յակոբեանց վանքում: Անհնար է նկարագրել հայերի թշուառ վիճակը… Սակայն անքննելի են Աստծու ճանապարհները: Կոստանդնուպոլսի՝ Բարթէնիոս յոյն Պատրիարքը նամակ է գրում ռուս թագաւորին՝ գալու եւ Օսմանեան կայսրութեան մայրաքաղաքը գրաւելու յորդորներով, որտեղ, նրա խօսքերով, քաոս է տիրում: Նամակը սուլթանի ձեռքն է ընկնում, նա էլ պատժում է յոյներին՝ կախելով զգեստաւորուած Պատրիարքին եւ ութ օր այդպէս թողնելով, իսկ յետոյ դիակը, կապելով ձիու պոչից, քարշ են տալիս եւ նետում ծովը… Եղիազար Պատրիարքը եւ Աստուածատուրը, օգտուելով պահից, ընծաներով դիմում են վեզիրներից մէկին եւ ետ են սպանում իրենց իրաւունքները: Այդպէս 1659 թ. նոյեմբերին՝ մէկ տարի եւ վեց ամսուայ զրկանքներից յետոյ, հայերը վերադարձնում են Սրբոց Յակոբեանց վանքը:

## Պայքարի հետեւանքները

Մանրամասնօրէն չենք անդրադառնայ այս խնդիրներին: Պատրիարք է ընտրւում Եղիազարը, որը, ըստ պատմագիրների, չափազանց փառամոլ լինելով, որոշում է իրեն հռչակել Երուսաղէմի եւ թուրքերի տիրապետութեան ներքոյ գտնըւող բոլոր տարածքների Կաթողիկոս. սա սկիզբ է դնում Սբ. Աթոռի նոր պարտքերի եւ վանական միաբանութեան զրկանքների: Չնայած Եղիազարի փառամոլութեանը՝ նա, այնուամենայնիւ, Սբ. Աթոռի համար չափազանց շատ բան է անում. կառուցում է Սուրբ Էջմիածին եկեղեցին, որը միանում է Սրբոց Յակոբեանց տաճարին, քահանաների համար Աբեղայաթաղ վանական առանձնամասը՝ քսան խցերով, նաև ուրիշ շինութիւններ հենց վանքում: Ռամլէ քաղաքում կառուցում է Սուրբ Գէորգ եկեղեցին, Եաֆայում՝ Սուրբ Նիկողայոս վանքում՝ ուխտաւորների համար խցեր: Սրբոց Յակոբեանց տաճարում խորաններ է կառուցում՝ ի պատիւ Սբ. Ստեփանոսի եւ Սբ. Գրիգոր Լուսաւորչի…

Հայ Առաքելական Եկեղեցում երկպառակութեանը վերջ դնելու համար Եղիազարին ընտրում են Ամենայն Հայոց Կաթողիկոս: Սակայն իշխանութեան համար պայքարը սրանով չի աւարտվում: XVIII դ. սկզբին բոլոր խարդաւանքները հանգեցնում են Երուսաղէմի եւ Կոստանդնուպոլսի Պատրիարքութիւնների միաւորմանը: Երուսաղէմ են ուղարկւում Կոստանդնուպոլսի աշխարհական ներկայացուցիչներ, նաեւ տեղապահ՝ մայրաքաղաքի հոգեւորականութիւնից: Այս աշխարհականները, ագահ եւ անկուշտ լինելով, Սբ. Աթոռը հասցնում են աղքատութեան, գրաւ են դրւում եկեղեցիներ: Նրանք ոչ մի սրբութիւն չեն ճանաչում. մտնում են անգամ վանականների խցերը եւ խլում ամէն ինչ: Օրեր են լինում, երբ նոյնիսկ ուտելու հաց չի լինում: Ուխտաւորների հոսքը դադարում է, իսկ հիմնական դրամական օգնութիւնը նրանցից էր…

1713 թ. Տարօնից իր՝ Սուրբ Կարապետ վանքի գործերով Կոստանդնուպոլիս է ժամանում Յովհաննէս վարդապետը: Մայրաքաղաքի ազդեցիկ հայերը, տեսնելով նրա առաքինի վարքը, որոշում են նրան տեղապահ ուղարկել Երուսաղէմ՝ այդ թւում խոստանալով օգնել պարտքերի խնդրով: Առաջին հերթին նա գրաւից ազատում է Սրբոց Հրեշտակապետաց վանքի

այգին, Տիրոջ Գերեզմանի արծաթեայ կանթեղները: Սակայն ողջ պարտքը վերադարձնել չի յաջողւում, եւ նա դատարանին խնդրում է ժամանակը երկարաձգել՝ խոստանալով փոքր-ինչ ուշ վճարել մնացեալը… Վերադառնալով Կոստանդնուպոլիս՝ նա 1715 թ. Ժողով է գումարում՝ ներկայացնելով աշխարհականների գործած բոլոր արարքներն ու դատարանում իր երաշխաւորութիւնը: Եւ ամենակարեւորը՝ ներկայացնում է խնդիրները լուծելու ճանապարհը, այն է՝ բաժանել երկու պատրիարքութիւնները եւ նշանակել Երուսաղէմի նոր Պատրիարք: Ի պատասխան այն հարցին, թէ ում կը ցանկանայ նա տեսնել Սբ. Աթոռի գահին՝ մատնացոյց է անում Գրիգոր Շղթայակրին, իսկ իրեն 1715 թ. սեպտեմբերի 12-ին ընտրում են Կոստանդնուպոլսի Պատրիարք՝ պատմութեանը յայտնի որպէս Յովհաննէս Կոլոտ Պատրիարք…

## Գրիգոր Շղթայակիր Սուրբ Պատրիարքը

Գրիգորը ծնունդով Շիրուանից էր, դրա համար էլ նրան կոչում էին Շիրուանցի: Երիտասարդ տարիքում նա կուսակրօնութեան ուխտ է ընդունում Տարօնի Սբ. Կարապետ վանքում եւ երիտասարդ տարիքում մահացած վանահօր փոխարէն ընտրւում վանահայր: Նա իրեն դրսեւորում է որպէս իմաստուն, խոնարհ հոգով մարդ, լաւ կառավարիչ…

Ինչպէս արդէն նշուել է, 1715 թ. Յովհաննէս Կոլոտի խնդրանքով Շղթայակրին ընտրում են Երուսաղէմի Պատրիարք: Շղթայակիրը Կոստանդնուպոլիս է հասնում համարեայ երկու տարի յետոյ, բայց մինչ այդ իմանալով, որ որոշ աշխարհականներ իրենց ընչաքաղցութեան պատճառով դեռեւս վնասում եմ Սբ. Աթոռին՝ 1715 թ. հոկտեմբերի 2-ին հրաման է արձակում եւ ուղարկում Երուսաղէմ: Հրամանով նա տեղապահ է նշանակում Յաննէ անունով յայտնի Յովհաննէս վարդապետին եւ բոլոր գործերը յանձնարարում նրան եւ միւս վարդապետներին…

Ընդունելով պատրիարքական Աթոռը՝ Գրիգորը ծանր շղթաներ է հագնում՝ ուխտելով դրանք չհանել, մինչեւ չմարուեն Սբ. Աթոռի բոլոր պարտքերը: Այդ պատճառով էլ նրան սկսում են կոչել Շղթայակիր: Շղթաներից բացի նա կրում է նաեւ մեխերով քուրձ, քիչ է ուտում եւ խիստ ճգնաւորական կեանք է

վարում… Նա շրջում է քաղաքներով եւ գիւղերով՝ օգնութիւն խնդրելով հայերից…

Պատրիարքը դեռ չէր ազատուել նախկին պարտքերից, երբ մի նոր բեռ է ծանրանում նրա ուսերին: Կաթոլիկները եւ ուղղափառ յոյները, տեսնելով հայերի թշուառ վիճակը, համաձայնում են միասին վերանորոգել Տիրոջ Գերեզմանի տաճարը: Նրանք վստահ էին, որ եթէ հայերը չկարողանան մասնակցել վերանորոգման աշխատանքներին, կարող են իրենց ուժերով նորոգել հայերին պատկանածը եւ այն իրենց ձեռքը վերցնել: Բայց Շղթայակիրը չի ընկճւում: Զինուելով Աստծու յոյսով՝ նա 1720 թ. վերանորոգում սկսելու լուր է ուղարկում Յաննէ վարդապետին… Վերջինս շփոթւում է, որովհետեւ կոպեկ անգամ չկար, որի մասին եւ գրում է իր յուշերում: Բայց Տէրը ողորմած է. Նա, ինչպէս միշտ, օգնում է հայերին եւ թոյլ չի տալիս, որ մեր Եկեղեցին պարտուազուրկ լինի, որովհետեւ Նրան ապաւինողները չեն անարգուի: Յովհաննէս Կոլոտ եւ Գրիգոր Շղթայակիր Պատրիարքներն ամէն ինչ անում են, որ գումար հայթայթեն տաճարը վերա-նորոգելու համար, եւ դա Աստծու օգնութեամբ յաջողւում է… Պարտքերը մարելով՝ Շղթայակիրը միաժամանակ հողատա-րածքներ, տներ, խանութներ է գնում, վանքեր է վերանորոգում, նոր խցեր կառուցում …

1721 թ. փետրուար 12-ին նա ոտք է դնում Սիոն լերան վրայ, որտեղ եւ կարգի է բերում Սրբոց Յակոբեանց վանքը: Ժամանելով Երուսաղէմ՝ սկսում է վերականգնել նաեւ միաբանութեան բարոյական կեանքը, արարողութիւնները սրբավայրերում: Շարունակում է հողեր գնել, բայց այս անգամ վանքի շրջակայքում, նաև տներ, որտեղ բնակեցնում է հայերի:

Անցնում է ութ տարի, համարեայ բոլոր պարտքերը մարւում են, բայց բարեպաշտ Պատրիարքը չի հանում շղթա-ները: Նա դա անում է Սրբոց Յակոբեանց միաբանութեան, Կոստանդնուպոլսի Յովհաննէս Կոլոտ Պատրիարքի եւ Կոստանդնուպոլսում գտնուող Ամենայն Հայոց Կարապետ Կաթողիկոսի խնդրանքով:

Կոստանդնուպոլսում Ժողով է գումարւում Կաթողի-կոսի մասնակցութեամբ: Ոչ վաղ անցեալի խնդիրներից եւ դրանց հետեւանքներից ելլելով՝ կանոններ են ընդունւում՝ նզովելով այն աշխարհականներին, որոնք ոտնձգութիւններ կը կատարեն եւ կը խառնուեն Սբ. Աթոռի գործերին, կը փորձեն

վերամիաւորել Սբ. Աթոռը միւս Աթոռների կամ Կոստանդնու-պոլսի Պատրիարքութեան հետ: Նաև կարգ է հաստատւում, ըստ որի՝ Պատրիարքը պէտք է լինի Սրբոց Յակոբեանց միա-բանութեան անդամ, իսկ եթէ դրսից ոեւէ մէկը ոտնձգութիւն կատարի՝ զաւթելու Սբ. Աթոռի իշխանութիւնը, նա նոյնպէս կը նզովուի:

1729 թ., ինչպէս եւ Պարոնտէրի օրօք, հայերի եւ յոյների զատկական տօները չեն համընկնում. յոյներինը դարձեալ մէկ շաբաթ ետ է ընկնում: Խաղաղ համաձայնութեան են գալիս, որ կը տօնեն հերթականութեամբ, եւ իշխանութիւնները հաս-տատում են համաձայնութիւնը… Չմանրամասնելով նշենք միայն, որ Գրիգոր Շղթայակիր Պատրիարքի օրօք էլ է հրաշք տեղի ունենում, ինչպէս 1634 թ.՝ Պարոնտէրի օրօք: Երկար արարողութիւնից յետոյ հայերը սկսում են եկեղեցական թափօրը Տիրոջ Գերեզմանի Բոլորաշէնի շուրջը, ուխտաւոր-ները լալագին բացականչում են՝ Տէ՜ր ողորմեա՜: Շղթայակիրը մօտենում է դռներին, հանում զգեստը, ողբագին աղօթում է, յետոյ բացւում են դռները, եւ երբ նա ներս է մտնում Բոլորաշէն, Տիրոջ Գերեզմանից արդէն լոյս է ճառագում: Նա վառում է մոմերը. մուտքին՝ դրան վրայ, ինքնիրեն վառւում է Գրիգոր Լուսաւորչի պատուին դրուած կանթեղը, յետոյ վառւում են տաճարի միւս կանթեղները, այդ թւում նաեւ՝ կաթոլիկ ու յունա-կան: Անհնար է նկարագրել հաւատացեալների ցնծութիւնը, որոնք այս հրաշքի ականատեսներն էին: Լուրերն արագ հաս-նում են նաեւ Հայաստան: 1727 թ. Երուսաղէմ է այցելում ժամանակի հայ նշանաւոր գործիչ Սեղբեստրոս ամիրան, որի նուիրատւութեամբ վերականգնւում է Սրբոց Յակոբեանց տա-ճարը: 1732 թ. Մելիտոն անունով մէկ այլ ամիրայ Երուսաղէմ է այցելում կնոջ հետ. նրա նուիրատւութեամբ հողատարածքներ են գնւում:

1733 թ. Սբ. Աթոռի սիւն եւ պաշտպան Յաննէ վարդա-պետը Աստծուն է աւանդում իր հոգին: Այդ ժամանակ Պատրի-արքի առողջութիւնը տկարացել էր խիստ ճգնաւորական կենցաղի եւ ծերութեան պատճառով. նա ծանր է տանում ընկերոջ եւ զինակցի կորուստը: Պահից օգտուելով՝ յոյները նոր խարդաւանք են ծրագրում Սբ. Աթոռի նկատմամբ… Հայերի զգօնութիւնը թմրեցնելու համար Մելետիոս յոյն Պատրիարքը 1734 թ. կոչ է անում Շղթայակրին՝ հաւատարմութեան եւ սիրոյ երդում տալ Աւետարանի վրայ՝ մոռանալով նախկին վիրաւո-րանքները: Շղթայակիրը համաձայնում է, իսկ Մելետիոսը

շուտով ուղեւորւում է Կոստանդնուպոլիս, որպէսզի ձեռք գցի Սրբոց Յակոբեանց վանքը: Երբ հայերը գլխի են ընկնում չար մտադրութեան մասին, Մելետիոսը 1735 թ. յունուարի 22-ին կրկին մեր հոգեւորականութեան հետ հաւատարմութեան եւ սիրոյ գրաւոր դաշինք է կնքում (այն մինչ օրս պահւում է Սբ. Աթոռում), իսկ ինքը շարունակում է իր խարդաւանքները: Նա փաստաթղթեր է նախապատրաստում այն հաւակնութիւններով, որ Երուսաղէմի եւ Բեթղեհէմի՝ հայերին, ղպտիներին, ասորիներին եւ եթովպացիներին պատկանող բոլոր եկեղեցիները յոյների սեփականութիւնն են: Շղթայակիրը նախապատրաստում է հայերի եւ միւս Հինարեւելեան Եկեղեցիների սեփականութեան իրաւունքները պաշտպանող եւ հաստատող իր փաստաթղթերը: Կաթոլիկները այդ ժամանակ խոստանում են օգնել հայերին  եւ, եթէ պահանջուի, վկայել դատարանում: 1735 թ. մայիսի 6-ին Շղթայակիրն ուղեւորւում է Կոստանդնուպոլիս՝ յուսալով հանդիպել սուլթանին, բայց վերջինս Պատրիարքին ուղարկում է գլխաւոր վեզիրի մօտ: Հայերի իրաւունքների բոլոր վկայութիւնները դատարանում որեւէ նշանակութիւն չեն ունենում, քանի որ մեծ կշիռ է ունենում յոյների փողը: Հայերի փաստաթղթերը ներկայացւում են սուլթանին, բայց նա, չկարդալով դրանք, հրահանգում է հրամանագիր նախապատրաստել յոյների՝ բոլոր սրբավայրերի նկատմամբ իրաւունքների մասին. այն ուժի մէջ էր մտնելու յաջորդ առաւօտեան: Ուշ գիշերով Գրիգոր Շղթայակիր եւ Յովհաննէս Կոլոտ Պատրիարքները, ապաւինելով Աստծուն, գնում են սուլթանի հայ ճարտարապետ Մելիտոնի մօտ: Մելիտոնի որդին խաբում է նրանց՝ ասելով, որ հայրը տանը չէ: Սրա համար, ինչպէս ասում է պատմագիրը, յետագայում նա պատժւում է՝ ցաւերով եւ տանջանքներով յանկարծամահ լինելով:

Պատրիարքները գնում են Շեյխ ու Իսլամի ընկերոջ եւ սուլթանի մերձաւոր  Յարութիւն ամիրայի մօտ եւ բացատրում խնդիրը: Յարութիւնն անմիջապէս գնում է Շեյխ ու Իսլամի, սա էլ նրա խնդրանքով՝ սուլթանի մօտ եւ պատմում, թէ իբր երազում իրեն է յայտնուել մեծ մարգարէն եւ կարգադրել գնալ սուլթանի մօտ, իսկ ինքը, իմիջիայլոց, յիշատակում է հայերին եւ յոյներին: Սուլթանը բացատրում է, որ հայերը ոտնձգութիւն են կատարել յոյների իրաւունքների նկատմամբ, եւ ցոյց է տալիս վերջիններիս օգտին հրամանագիրը, այլեւ հայերի փաստաթղթերը, որոնք Շեյխ ու Իսլամը սուլթանի բարեհաճութեամբ սկսում է կարդալ: Նա ընթերցում է նախորդ սուլ-

թանների՝ հայերից սրբավայրերը խլել համարձակուողին ուղղուած անէծքները: Սուլթանը սարսափում է, անմիջապէս սփռ-րագրում է նոր հրամանագիր՝ ամէն ինչ թողնելով հայերին: Այս դէպքում եւս Տէրն օգնում է հայերին, եւ, ինչպէս ասում է պատմագիրը, **ամբողջ ժողովրդով պէտք է շնորհակալ լինենք Յարութիւն ամիրային եւ յաւերժ՝ սերնդէսերունդ պահպանենք նրա յիշատակը՝ նրա, կարելի է ասել, հերոսութեան համար:**

Շղթայակիրը շուտով վերադառնում է Երուսաղէմ՝ յուսալով հանգիստ շունչ քաշել, բայց ավա՜ղ… Այս անգամ բախում է տեղի ունենում կաթոլիկների հետ, որոնք հայերին արգելում են Պատարագ մատուցել Տիրոջ Յարութեան տաճարում՝ Սրբոց Իւղաբեր Կանանց խորանին (Տիրոջ Գերեզմանին դէմ դիմաց), այլեւ գորգեր փռել գետնին՝ այն պատրուակով, թէ իբր Տաճարի յատակը պատկանում է կաթոլիկներին: Նրանք նաեւ շատ փարաձայնութիւններ են առաջացնում Բեթղեհէմում եւ նեղում են հայերին:

1742 թ. հոկտեմբերի 16-ին Տիրոջ Գերեզմանի տաճարում կաթոլիկները գազանաբար ծեծում են հայ վանականի՝ այն բանի համար, որ նա խանգարել է իրենց աւլել հայկական բաժնի հատուածում: Ինչպէս նշում է Սաւալանեանցը, կաթոլիկ վանահայրերը յաճախ էին փոխւում: Հաւանական է, որ հերթական վանահայրը չէր սիրում հայերին, կամ էլ եւրոպական պէրութեան նոր ազդեցիկ դեսպանի յայտնուելը կարող էր սրբավայրերի նկատմամբ իրաւունքը զաւթելու առիթ հանդիսանալ… Չկարողանալով պայմանաւորուել կաթոլիկերի հետ՝ Շղթայակիրը նամակներ է գրում Ֆրանսիայի Լիւդովիկոս XV թագաւորին, Հռոմ՝ կարդինալների Սինոդին, Ֆրանսիայի կառավարութեան ղեկավար կարդինալ դե Ֆլերին եւ Ֆրանսիայի նոր դեսպան Կաստէլլինիին՝ բողոքելով կաթոլիկների գործողութիւններից: Շուտով կաթոլիկները փոխում են իրենց քաղաքականութիւնը, եւ հայերը վերականգնում են իրաւունքները…

1741 թ. փետրուարի 12-ին հոգին Աստծուն է աւանդում Կոստանդնուպոլսի Յովհաննէս Կոլոտ Պատրիարքը՝ սուրբ վարքի տէր մարդը: Շղթայակիրը դրանից յետոյ ապրում է եւս ութ տարի՝ տառապելով արդէն հենց հայերից. Հայաստանից գաղթածները փորձում են Դամասկոսում գրաւել Պատրիարքութեանը պատկանող շինութիւնները եւ եկեղեցիները,

Երուսաղէմում շատ հայեր իրենց շահի համար կաթոլիկութիւն են ընդունում՝ վնասելով Սբ Աթոռին: Պատրիարքը հոգին Աստծուն է աւանդում 1749թ. փետրուարի 12-ին՝ հենց այն նոյն օրը, երբ 1721 թ. Սիոնի դարպասներից ներս է մտնում Երուսաղէմ…

Երանելի՛ են այս սուրբ այրերը. նրանց շնորհիւ այսօր ունենք այն, ինչ ունենք: **Երանի՛ որ ունիցի յիշատակ ի Սիոն**:

## Բախումներ: Հրդեհ Յարութեան տաճարում

1808 թ. սեպտեմբերի 30-ի լուսաբացին հրդեհ է բռնկւում, որը Սաւալանեանցը նկարագրում է «*Պատմութիւն Երուսաղէմի*» գրքում: Կրակը սկզբում պատում է Տիրոջ Գերեզմանը եւ սկսում արագօրէն տարածուել տաճարում՝ ճանապարհին ոչնչացնելով ամէն ինչ… Սպասաւորները դուրս են թռչում լուսամուտներից կամ թաքնւում են, եթէ ապահով տեղ են գտնում:

Նշենք, որ դռները դրսից փակում էին արաբները, որոնք էլ պահում էին տաճարի  բանալիները, եւ այդ պատճառով էլ մարդիկ հնարաւորութիւն չեն ունենում դռնից փողոց դուրս վազելու...

Երբ հրդեհը մարում է, տաճար է գալիս քաղաքապետն իր օգնականներով: Սաւալանեանցը հրդեհի պատճառ է համարում տաճարի սպասաւորների անփութութիւնը, բայց յոյները բողոքում են քաղաքապետին՝ մեղադրելով հայերին Գերեզմանը նենգօրէն եւ գիտակցաբար հրկիզելու համար՝ ընդ որում խնդրելով լատիններին սուտ վկայութիւն տալ, որոնք հրաժարւում են սուտ վկայութիւն տալուց: Այդ ժամանակ յոյները դատաւորին խնդրում են նամակ գրել Դամասկոսի կառավարչին այն մասին, թէ ինչ են արել հայերը, բայց դատաւորը պատասխանում է, որ դա Աստծու պատիժն է քրիստոնեաներին, եւ ոչ թէ ոեւէ մէկի նենգ դիտաւորութիւնը…

Շատ չանցած՝ դատաւորը բոլոր երեք քրիստոնեայ Եկեղեցիներին իրաւունք է տալիս վերակառուցելու եւ վերանորոգելու իրենց բաժինները, քանի որ հրդեհը մեծ վնաս էր պատճառել… Սակայն յոյները, կաշառելով իշխանաւորներին, սկսում են իրենք արագօրէն վերանորոգել՝ միաժամանակ զաւթելով ուրիշինը:  Ոմն հայ Անտոն, տեսնելով այս ամէնը, սկսում է վիճել յոյների հետ, որի պատճառով էլ յոյները ծեծում

են նրան, եւ նա հազիւ է խուսափում մահից՝ պատսպարուելով զինուորների մօտ: Տեսնելով, որ քաղաքում խռովութիւններ կարող են ծագել, արգելւում են յոյների շինարարական աշխատանքները: Այս ժամանակ (1808 թ. հոկտեմբերին) Երուսաղէմում էր գտնւում Դամասկոսի կառավարիչը, որից յոյները պաշտպանութեան համար 200 զինուոր են խնդրում՝ խոստանալով իրենց հաշուին նրանց պահել: Տեղացի մուսուլմաններին վտարելով Դաւթի ամրոցից՝ զինուորները հաստատւում են այնտեղ: Յոյներն այս անգամ աւելի հեռուն են գնում: Նրանք գնում են նոր հրահանգ, որով միայն իրենց էր վերապահւում տաճարը վերանորոգելու իրաւունքը. հայերին արգելւում էր Աստուածածնի Գերեզմանին Պատարագ մատուցել, իսկ լատիններին՝ Տիրոջ Գերեզմանին: Նշենք, որ մինչեւ հրդեհը հայերը կորցրել էին Տիրոջ Գերեզմանին Պատարագ մատուցելու իրաւունքը: Ճիշտ է, կաթոլիկները պաշտպանում են Պատարագ մատուցելու իրենց իրաւունքը…

Դաւթի ամրոցից արտաքսուած բնակիչները յարձակւում են յոյների վրայ՝ ծեծելով եւ սպանելով ճանապարհին հանդիպող իւրաքանչիւր յոյնի: Հայերն այդ ժամանակ շատ յոյների են փրկում: Կատաղած ամբոխը խուժում է տաճար եւ աւերում յոյների կառուցած ամէն ինչ: Կարճ ժամանակից վրայ են հասնում զօրքերը…

Բախումը՝ բազում իրադարձութիւններով, շատ երկար պատմութիւն է ունենում: Կոստանդնուպոլսում բանակցութիւններ են վարում. բախուող կողմերը մերթ ետ են գնում իրաւունքները, մերթ կորցնում են…

Յոյներն իրենց հայեցողութեամբ վերանորոգում են Տիրոջ գերեզմանը եւ կաթոլիկների հետ Պատարագ մատուցում… 1813 թ. նոյեմբերին հայերը վերադարձնում են Աստուածածնի Գերեզմանի իրենց իրաւունքները՝ Պատարագ մատուցելու իրաւունքով: Իսկ 1829 թ. սուլթանի կարգադրութեամբ նաեւ վերադարձնում են յոյների եւ կաթոլիկների հետ հաւասար Տիրոջ Գերեզմանին պատարագ մատուցելու իրենց իրաւունքները՝ միաժամանակ կորցնելով մի շարք այլ իրաւունքներ, որ ունէին մինչեւ հրդեհը: Առաջին պատարագը մատուցւում է նոյն տարուայ սեպտեմբերի երեքին:

Հայերը խնդրում են սուլթանին վերադարձնել նաեւ Գողգոթայի իրաւունքները՝ ներկայացնելով դրա՝ վաղ ժամանակներից հայերին պատկանելու վկայութիւնը. վրացիները

խլել են այն, իսկ հիմա այն յոյներինն է: Սակայն սուլթանը մերժում է՝ քաղաքական իրավիճակից ելլելով: Նոր էր աւարտուել Օսմանեան կայսրութեան եւ Ռուսաստանի միջեւ պատերազմը՝ խաղաղութեան պայմանագրի՝ ի վնաս առաջինի ստորագրմամբ, եւ ռուսները, հաւատակից լինելով յոյներին, դրամական առաւելութիւն եւ հզօր ազդեցութիւն ունէին տարածաշրջանում …

Երբ այսօր տօնական պատարագներ ենք մատուցում, Տիրոջ Գերեզմանի խորանին է դրւում արեգակի տեսքով արծաթեայ ճաճանչ՝ հայերէն գրութեամբ. այն մատնացոյց է անում Պատարագ մատուցելու մեր իրաւունքը:

## Համբարձման տաճարը

XIX դ. 30-ական թուականներին Երուսաղէմում ուժեղ երկրաշարժ է տեղի ունենում. շատ տներ են աւերւում, քանդւում է Համբարձման տաճարի գմբէթը: Նշենք, որ տաճարը եւ շրջակայ շինութիւնները հայերի սեփականութիւնն էին: Հայերը իրաւունք են տալիս միւս քրիստոնեաներին տարին երկու անգամ այստեղ պատարագ մատուցելու… Եւ ահա երկրաշարժից յետոյ Եգիպտոսի կաթոլիկները գմբէթը կառուցելու իրաւունք են ստանում՝ երկաթեայ կափարիչով փակելով մեր Տիրոջ Ոտնատեղիի վայրը, նաեւ տաճարում սպասաւորելու իրաւունքներ են ստանում:

Այս թոյլտուութեան դէմ բողոքում են հայերը եւ յոյները, բայց քանի որ հայերը չեն հասցնում սուլթանի մօտ նորոգել տաճարի սեփականութեան իրաւունքը, բոլոր երեք Եկեղեցիներն էլ գմբէթը միասին վերակառուցելու իրաւունք են ձեռք բերում:

1836 թ. հայերը ստանում են սեփականութեան բարեփոխուած իրաւունքը, նաեւ Յարութեան տաճարը վերանորոգելու, այլեւ յոյների հետ հաւասար իրաւունքներ Բեթղեհէմի Ծննդեան տաճարում: Այս առիթով պատմաբանն ասում է, որ աւելի լաւ կը լինէր չստանային այդ իրաւունքը, քանի որ դատարանի թուլութեան պատճառով այն ուժի մէջ չի մտնում՝ առիթ տալով յոյների չարութեան …

Այսպիսով, գմբէթը կառուցում են բոլոր Եկեղեցիները. հայերը տաճարի շուրջը կառուցում են նաեւ նոր խցեր, յոյները եւ կաթոլիկները տարին երկու անգամ պատարագում են տա-

ճարում… Կաթոլիկները չեն հանդարտւում. նորից օգտագործելով իրենց ազդեցութիւնը՝ ուզում են ձեռք գցել տաճարը, սակայն դա նրանց չի յաջողւում… Շատ չանցած՝ 1838 թ. սեպտեմբերին, Երուսաղէմ է ժամանում սուլթանի ներկայացուցիչ ոմն Արիֆի: Նա հրաւիրում է կաթոլիկների կողմից արդէն կաշառուած տեղացի երեք ազդեցիկ բնակչի, նաեւ դատաւորին եւ երեք Եկեղեցիների ներկայացուցիչների: Տաճարում երեք բնակիչը վկայում են, որ այդ սրբավայրը մուսուլմանական մզկիթ է, որը եւ հաստատում են նախանձից կուրացած յոյները եւ կաթոլիկները…

Հայերին այլեւս ոչ ոք չի լսում: Շուտով ստացւում եւ ընթերցւում է սուլթանի հրահանգը, եւ այլեւս ոչ ոք չի կարողանում ընդդիմանալ նրան… Դատական ատեանից դուրս գալիս հայերը նկատում են, թէ ինչպէս է յոյների եւ կաթոլիկների ամբոխը՝ զինուած կացիններով եւ փայտերով, շարժւում դէպի տաճար…

Հայկական շինութիւնները եւ տաճարն աւերւում են 1839 թ. սեպտեմբերի 11-ին: Նկարագրելով այս իրադարձութիւնները՝ Սաւալանեանցը գրում է, որ միւս քրիստոնեաները այնքան էին կուրացել եւ այնպիսի եռանդով էին գործում՝ ասես քանդում էին Աֆրոդիտէի հեթանոսական մեհեանը: Յետոյ նրանք խրախճանք են սարքում եւ հարբած անցնում են Հայոց Պատրիարքութեան մօտով՝ թմբուկ զարկելով ցուցադրելով հայերի նկատմամբ իրենց յաղթանակը…

Մեր Պատրիարքութիւնը բացի տաճարի կորստից նաեւ ծանր վնաս է կրում: Այսօր այդ վայրում մզկիթ է կանգնած, իսկ քրիստոնեաները վճարում են հողատէրերին՝ այդտեղ Պատարագ մատուցելու համար:

### Ստատուս Քվո

Բոլոր այս բախումները դեռ երկար կը շարունակուէին, եթէ չլիներ Օսմանեան կայսրութեան սուլթան Աբդուլ Մեջիդի՝ 1852 թ. կարգադրութիւնը: Այդ յայտարարութիւնը պաշտօնապէս հաստատում է սրբավայրերի «Ստատուս Քվո»-ն. այն որոշում, կարգաւորում եւ առանց փոփոխութիւնների պահպանում է սրբավայրերի սեփականութեան իրաւունքը, որ շնորհւում է բացառապէս երեք հիմնական Պատրիարքութիւնների՝ Հայ, Յոյն–Ուղղափառ եւ Կաթոլիկ…

Այս որոշումն Օսմանեան կայսրութեան անկումից եւ Պաղեստինի նկատմամբ բրիտանական մանդատ ստանալուց յետոյ ճանաչում է նաեւ Մեծ Բրիտանիայի կառավարութիւնը, իսկ յետագայում՝ նաեւ Իսրայէլի իշխանութիւնները… Սակայն, այդուհանդերձ, նաեւ մեր օրերում են Ստատու Քվոն խախտելու փորձեր կատարւում, եւ այդ պատճառով մշտապէս նոր բախումներ են ծագում …

## Պայքար՝ սրբավայրերի համար

Դեռեւս Սբ. Գրիգոր Լուսաւորիչը, Սբ. Տրդատը եւ Սբ. Ներսէսն էին գիտակցում սրբավայրերի կարեւորութիւնը մեր ժողովրդի համար եւ աջակցում էին, որ այստեղ եկեղեցիներ հիմնուեն՝ յանուն հայ ժողովրդի փրկութեան: Դրա համար էլ Սրբոց Յակոբեանց վանական միաբանութիւնը հարկադրուած էր կրծքով պաշտպանել սրբավայրերի մեր առանձնաշնորհումները, պաշտպանել իր մշտական ներկայութեամբ եւ պաշտամունքներով, որպէսզի մեր ուխտաւորները հանգիստ աղօթեն՝ չվախենալով, որ վաղը նրանց, կարող է, թոյլ չտան պաշտամունքի մասնակցելու միայն այն պատճառով, որ իրենք Հայ Առաքելական Եկեղեցու հաւատացեալներն են:

Ամէն Աստծու օր ու գիշեր սրբավայրերում Պատարագներ ենք մատուցում: Գիշերը՝ ժամը 3-ին՝ Պատարագ Տիրոջ Գերեզմանին, առաւօտեան 8-ին՝ Աստուածածնի Գերեզմանին եւ Բեթղեհէմում՝ չհաշուած ամէնօրեայ այլ պաշտամունքներ:

Հաւանական է՝ ողջ պատմածը որոշ ընթերցողների շփոթեցնի: Ինքս կարող եմ վկայել, թէ ինչպէս համացանցում որոշ հայեր անգամ ծիծաղում են վերջին բախումների վրայ, թէ իբր՝ «*տէրտէրները խելքները թռցրել են*», «*Ի՞նչ տարբերութիւն, թէ ով ումից յետոյ է մտնում ու որտեղ է կանգնում. արդեօք քրիստոնեաբա՞ր է դրա պատճառով վիճել*», «*Տուէ՛ք ամէն ինչ յոյներին, իսկ ինքներդ գնացէ՛ք Հայաստան, քիչ եկեղեցիներ կա՞ն այնտեղ*»…

Իրապէս, յարգելի՛ ընթերցողներ, ամէն ինչ առաւել քան լուրջ է: Պատմութիւնը փաստում է, որ եթէ քչին հաւատարիմ չլինես, յետոյ աւելին կը կորցնես: Պատմութեան ողջ ընթացքում տեսնում ենք յոյների՝ չնչին հարցերում Ստատու Քվոն խախտելու մշտական փորձերը: Եւ եթէ թոյլ տրուի քիչը, ոտն-

ձգութիւններ կը լինեն աւելիին: Եւ, այդպիսով, ի վերջոյ կը կորցնենք շատ վայրեր, որոնց համար մեր հայրերն արիւն են թափել:

Մանրուքները երբեմն աննշան են թւում, սակայն այստեղ՝ Սուրբ Վայրերում, ամէն մի մանրամասնութիւն կարեւոր խորհրդանշական իմաստ ունի: Այն փաստում է ՀԱԵ[7]-ի իրաւունքները, մեր եւ յոյներին ու կաթոլիկներին հաւասարութիւնը: Նայեցէ՛ք Կաթոլիկ Եկեղեցու եւ կաթոլիկ պետութիւնների, այլեւ Ուղղափառ Եկեղեցու եւ ուղղափառ երկրների ուժին եւ հզօրութեանը: Համեմատէ՛ք այդ հզօրութիւնը Հայ Եկեղեցու եւ Հայաստանի հնարաւորութիւնների հետ: Սուրբ Երկրում, սակայն, մենք ունենք նոյնքան ծանրակշիռ իրաւունքներ, որքան եւ այն Եկեղեցիները, որոնց օգնել եւ օգնում են հզօր պետութիւնները: Մեր յոյսը Տէրն է, եւ, ինչպէս փաստում է պատմութիւնը, առանց Տիրոջ օգնութեան հայերը վաղուց վերացած կը լինէին Սուրբ Երկրից, ինչպէս վերացան վրացիները: Տէրն օգնում է նրանց, ովքեր անմնացորդ տալիս են իրենց ողջ, թեկուզ եւ համեստ ուժը: Պէտք է յիշենք սա ամէնուր եւ առաջին հերթին Երուսաղէմում…

## Ճեղքուած սեան պատմութիւնը

Հայկական վարկածին առաջին անգամ անդրադարձել է Լւով քաղաքի մտաւորականութեան ներկայացուցիչ Սիմէոն դպիր Լեհացին «*Ուղեգրութիւն. Տարեգրութիւն և յիշատակարանք*» գրքում. գրելու տարեթիւը՝ 1619-1635 թթ.:

«*Ասում են՝ մի ժամանակ դրսում են մնում աղքատ ուխտաւորներ. նրանց ներս չեն թողնում մուտքի վճարով, իբր՝ տուէք ամբողջութեամբ, և այսպէս նրանք զուրկ են մնում [լոյսից]: Բայց երբ լոյսը յայտնւում է, այն սկզբում ուղղւում է աղքատների համար՝ դուրս և այրում դրան երկու կողմերի մարմարեայ սիւների կատարները: Շատերն են դա տեսնում և փառք են տալիս Աստծուն: Մինչ այժմ էլ երևում են կրակով պատռուած վերնամասերը: Այդ մասին յայտնում են խոնդկարին, և նա՝ պաշած, կարգադրութիւն և նալաթլամայ (անէծքի թուղթ) է ուղարկում Երուսաղէմ, որ եթէ աղքատները չունենան [դրամ] և կ'երդուեն, որ չունեն, նրանց ներս թողնեն, որպէսզի նրանք*

[7] Հայ Առաքելական Եկեղեցի:

*չգրկուեն լոյսից: Եւ մենք նոյնպէս մեր աչքերով ենք տեսել այրուած և սեւացած սիւները»:*

Հայկական վարկածում պեսնում ենք, որ Ասպուած խղճում է աղքապներին եւ հրաշքով ազապում նրանց վճարելուց:

Ուղղափառ վարկածի աղբիւրը, անշուշփ, յունական է, եւ այն ռուսերէն առաջին անգամ յիշապակում է միայն մոսկուացի քահանայ, հնածէս Իոան Լուկեանովը, որ ճանապարհորդել է Սուրբ Երկրում Պեփրոս I-ի օրօք 1710-1711թթ.:

*«Մենք այդ սեան մասին յոյներին ենք հարցրել, և նրանք մեզ պատմել են, որ այդ սեան վրայ մեծ նշան է եղել. 24 տարի է անցել այն ժամանակուանից, երբ հայերը գալիս են փաշայի մօտ և այսպէս ասում. «Յոյների հաւատը ճիշտ չէ, կրակը յայտնւում է ոչ թէ նրանց հաւատով, այլ մեր, վերցրու մեզնից հարիւր ոսկեդրամ (չերւոնեց), որպէսզի մենք պաշտամունք կատարենք Աւագ Շաբաթ, իսկ յոյները եկեղեցուց դուրս գան, որպէսզի նրանք այստեղ չլինեն, թէ չէ կ'ասեն՝ իրենց հաւատով է կրակը իջնում երկնքից»: Թուրքը հաճոյքով գոհանում է գրոշներով ու գայթակղւում մեծ տալիքով, և յոյներին դուրս է անում եկեղեցուց: Այնուհետև թուրքը բացում է եկեղեցին և հայերին ներս թողնում Աւագ Շաբաթուայ օրը: Իսկ յոյն միտրոպոլիտը քրիստոնեաների հետ կանգնում է սեան՝ Հեղինէ թագուհու վայրի մօտ, որտեղ նա ջհուդներին էր դատում, իսկ այդ տեղը մեծ եկեղեցուց դուրս էր, և սեան մօտ կանգնած միտրոպոլիտը, լալիս էր և աղօթում Աստծուն: Իսկ հայերը մեծ եկեղեցում այն ժամանակ իրենց անիծեալ հաւատքով օյիններ էին սարքում և Տիրոջ Գերեզմանի բաժնի մօտ խաչերով քայլում և բացականչում էին՝ Տէ՛ր, ողորմեա՛, և ոչինչ չէր լինում: Եւ ժամը տասնմէկին մօտ Տիրոջ Գերեզմանի բաժնում երկնքից կրակ է իջնում և խաղում, ինչպէս արեգակն է փայլում ջրի մէջ՝ գնալով ոչ թէ դէպի Տիրոջ Գերեզման, այլ դէպի մեծ եկեղեցու դռները, և այնտեղ էլ ոչ թէ դռների մէջ, այլ պատի միջով գնում է դէպի ամբողջական տեղ և դէպի քարէ սիւնը, և սիւնը ճեղքւում է, և եկեղեցուց ողջ ժողովրդի առջև կրակ է դուրս գալիս, իսկ սիւնը ճաքում է, ասես ահռելի ուժով որոտ է պայթում»:*

Ուշադրութի՛ւն դարձրէք այս իրադարձութեան փարեթուին՝ 24 փարի առաջ, այսինքն՝ 1710 — 24 = 1686 թուական: Սակայն հայ հեղինակը շափ աւելի վաղ է յիշապակում պա-

փահածի մասին: Իսկ ամենակարեւորը հայերի հաւատքի հանդէպ վերաբերմունքն է. քահանան այն կոչում է անիծեալ…

Այնուհետեւ ուղղափառ վարկածը ձեւափոխւում է: Տարբեր աղբիւրներ տարբեր տարբերութեւր են նշում՝ չհամաձայնեցնելով անգամ էական մանրամասներ: Ինչու՞ է անհրաժեշտ եղել յօրինելու այս եւ այլ ստայօդ պատմութիւններ. խաչակիրների արշաւանքների ժամանակաշրջանով էլ թուագրւում է համանման մի պատմութիւն այն մասին, որ կրակը յայտնուել է միայն ա՛յն ժամանակ, երբ կաթոլիկ հոգեւորականութիւնը լքել է տաճարը, եւ յետագայում յամառօրէն տարածել: Դրա համար հարկ է նորից անդրադառնալ Երուսաղէմի պատմութեանը, XVI եւ XVII դդ. իրադարձութիւններին: Հայկական Զատիկը, ինչպէս արդէն ասուել է, սովորաբար համընկնում էր յոյն-ուղղափառին՝ բացառութեամբ առանձին տարիների: Հենց այդ տարիներին էլ կտրուկ սրւում է յոյն հոգեւորականութեան թշնամական վերաբերմունքը հայերի նկատմամբ՝ համապատասխանաբար լարելով նաեւ տեղի ուղղափառ հաւատացեալներին եւ ուխտաւորներին:

Յոյները պահանջում են ենթարկուել զատկական օրը որոշելու իրենց հաշուարկներին: Շատ հեղինակներ, նրանց շարքում նաեւ այնպիսի հեղինակութիւն, ինչպիսին Մաղաքիա Օրմանեանն է, օրինակ, նշում են այն վկայութիւնը, որ մերժելու դէպքում Գրիգոր Պարոնտէրին անգամ մահով են սպառնում:

Եթէ Հայ Եկեղեցու հօտում հայեր էին, ապա յոյն հոգեւորականութեան առջեւ խնդիր է ծառանում պաշտպանելու իր յաւակնութիւնների գերակայութիւնը բազմազգ հօտում, որի հիմքը կազմում էին արաբները: Այդ պատճառով էլ յոյն հոգեւորականութիւնը Զատկին կրակի հրաշքով յայտնուելը մշտապէս ձգտում է վերագրել բացառապէս իր աղօթքներին: Երբ հայերն առանձին են տօնում Զատիկը, կրակը յայտնւում է հայ Պատրիարքի եւ հաւատացյալների աղօթքով (որ հաստատւում է ժամանակակիցների բազմաթիւ վկայութիւններով), եւ դա վնասում էր կրակի յայտնուելու՝ յոյն հոգեւորականութեան մենաշնորհի առասպելին, որը նա ձգտում է ներշնչել ուղղափառ հաւատացեալներին՝ շարունակելով նաեւ այսօր:

Այն մասին, թէ յոյն հոգեւորականութիւնը ինչպէս է մեկնաբանում կրակի յայտնուելը Զատիկը համատեղ տօնելիս, կարելի է դատել ներկայով՝ ժամանակակից գրքերի բազմաքանակ նիւթերով, յօդուածներով, հարցազրոյցներով: Արարո-

ղութեանը հայ ներկայացուցչի մասնակցութիւնը ձգտում են յանգեցնել զուտ անուանականի՝ նրան սպորադաս դեր վերագրելով: Ոչ մի տեղ գործնականօրէն չես հանդիպի յիշատակութիւն այն մասին, որ հայ հոգեւորականը մտնում է ոչ միայն Հրեշտակի, այլեւ Սուրբ Գերեզմանի բաժիններ:

Ահա, օրինակ, իր հարցազրոյցում ինչ է ասում 2000 թ. Դիոդորոս I յոյն Պատրիարքը, որն այդ ժամանակ արդէն 19 անգամ մասնակցել էր արարողութեանը. «*Երբ վառվում են մոմերը, ես դուրս եմ գալիս և նախ կրակը տալիս եմ Հայ, յետոյ՝ ղպտի Պատրիարքին: Յետոյ կրակը տալիս եմ եկեղեցում գտնուող միւս ներկաներին*»:

Հարցազրոյցի ոչ մի բառ ճիշտ չէ: Հայ Պատրիարքն ընդհանրապէս չի մասնակցում արարողութեանը. նա հետեւում է վերեւից՝ Երկրորդ Գողոթայից: Երբ մեր վարդապետը վառվող մոմերով դուրս է գալիս Հրեշտակի Քարի բաժին, պատուհանից կրակը նրանից ընդունում են աշխարհական երեք հայ սուրհանդակներ (լուսահան վարդապետի օգնականներ): Առաջինը շտապում է այն հասցնել վերեւ՝ Պատրիարքին, իսկ միւս երկուսը կրակը փոխանցում են տաճարում եւ նրա սահմաններից դուրս գտնուող հաւատացեալներին: Մինչ յոյն Պատրիարքը դեռ նոր է դուրս գալիս Սբ. Գերեզմանի Բոլորաշէնից, հայ Պատրիարքը վերեւից բռնած վառվող մոմերով արդէն խաչաձեւ օրհնում է տաճարում հաւաքուածներին:

Յունական վերապատումում, որը երկար տարիների ընթացքում հաստատուել է արարողութեան նկարագրութիւնների մեծ մասում, հայերը հրաշքին մասնակից չեն, ենթակայ դեր են կատարում, այդ թւում նաեւ հայ Պատրիարքը, որն իբրեւ թէ վերադասից՝ յոյնից է ստանում կրակը: Ահա թէ ինչու է յոյների համար կարեւոր համապեղ անցկացնել արարողութիւնը, ահա թէ ինչու հայերի՝ Ջատիկն առանձին տօնելը Երուսաղէմում՝ յոյն հոգեւորականութեան շրջանում, ծնել է կաշառքի եւ ճեղքուած սեան մասին հեքիաթը:

## Հայկական Սրբավայրեր

Ինչպէս նշուել է, հայերն արդէն VII դ. ունէին մօտ 70 վանք եւ եկեղեցի: Դրանք կառուցել են Հայաստանի իշխանական տները եւ իրենց թեմերից այնտեղ են ուղարկել վանականների: Բաւականին նշանակալից է նաեւ յետագայում Կի-

լիկիայի հայ թագաւորների ներդրումը՝ կառուցած եկեղեցիներով եւ ընծաներով: Այսպիսով, այսօր Սբ. Աթոռի իրաւասութեան ներքոյ են հետեւեալ վանքերն ու եկեղեցիները:

**I. Սրբոց Յակոբեանց վանքը**. տաճարում են գտնւում Սուրբ Էջմիածին եկեղեցին, Սուրբ Սարգիս եւ Սուրբ Ստեփանոս մատուռները՝ չհաշուած թւով շուրջ երեք տասնեակ խորաններ:

**II. Սուրբ Թէոդորոս եկեղեցին.** վանքի պարածքում է, այն կառուցել է Կիլիկիայի Հեթում I թագաւորը՝ ի յիշատակ զոհուած Թորոս որդու:

**III. Սրբոց Հրեշտակապետաց վանքը.** կառուցուել է Աննա քահանայապետի տան տեղում, որի մօտ հարցաքննութեան են բերում Տիրոջը Գեթսեմանիի պարտէզում կալանաւորելուց յետոյ, իսկ յետոյ՝ տանում Կայիափայի մօտ:

**IV. Սուրբ Փրկիչ վանքը**՝ քահանայապետ Կայիափայի տան տեղում:

**V. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին**՝ նոր քաղաքում:

**VI. Սուրբ Յարութեան տաճարը**. Տիրոջ Գերեզմանի Տաճարը պատկանում է երեք Եկեղեցու՝ Հայ, Յոյն եւ Կաթոլիկ: Պատանատեղիի քարը նոյնպէս ընդհանուր է :

Մեզ են պատկանում՝

1. Երկրորդ Գողգոթա եկեղեցին, Վերնատունը.
2. Իւղաբեր Կանանց խորանը.
3. Աստուածածնի ուշաթափման վայրը.
4. Սուրբ Յովսէփ Արեմաթացի եկեղեցին.
5. Հանդերձից բաժանման խորանը.
6. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին.
7. Սուրբ Վարդան եկեղեցին. գտնւում է Սուրբ Գրիգոր եկեղեցու տեւում (70-ական թթ., երբ վերանորոգւում էր Սուրբ Գրիգոր եկեղեցին, խորանի յետնամասում յայտնաբերւում է դատարկ տարածութիւն: Պեղումներից յետոյ գտնւում են մեծ տարածք եւ IV դ. քար՝ լատիներէն գրութեամբ եւ առագաստով նաւակի պատկերով: Այստեղ կառուցւում է Սուրբ Վարդան նոր եկեղեցի, որը Սպապտւս Քվոյից դուրս է):
8. Սուրբ Յովհաննէս Աւետարանիչ եկեղեցին գտնւում է տաճարի բացօթեայ գաւթում:

**VII. Գեթսեմանիի պարտէզը**. Սուրբ Աստուածածնի Գերեզմանը. ունենք չորս խորան: Մէկը կառուցուել է Սբ. Կոյսի նշանածի՝ Սբ. Յովսէփի գերեզմանին, իսկ Գերեզմանի մատուռի երեսի կողմում խորան է կառուցել Կիլիկիայի Հեթում թագաւորը: Սուրբ Աստուածածնի Գերեզմանն ընդհանուր է յոյների հետ:

**VIII. Բեթղեհէմ. Ծննդեան Տաճարը.**

1. Տաճարում ունենք երկու խորան:

2. Ծննդեան Այրը. ընդհանուր է յոյների հետ.

3. Սուրբ Յակոբ եկեղեցին. Բեթղեհէմում՝ մեր Ծննդեան վանքում:

**IX. Սուրբ Նիկողայոս վանքը**՝ Եաֆայում՝ Միջերկրական ծովի ափին:

**X. Սուրբ Եղիա Մարգարէ եկեղեցին**՝ Հայֆայում:

**XI. Սուրբ Գէորգ վանքը**՝ Ռամլէյում:

**«Մի՛ մոռանաք Երուսաղէմը, յանուն Քրիստոսի եւ մեր ժողովրդի՝ օգնեցէ՛ք Սբ. Աթոռին, որը կարիք ունի ինչպէս ձեր նիւթական, այնպէս էլ բարոյական, աղօթքի աջակցութեան, իսկ ամենակարեւորը՝ ձեր ներկայութեան: Մի՛ մոռանաք, որ Երուսաղէմի Սբ. Աթոռը դարեր շարունակ գոյատեւել է մեր ժողովրդի նուիրատուութիւններով, հոգեւորականութեան եւ բազմաթիւ ուխտաւորների մշտական ներկայութեամբ: Եւ այդ պատճառով էլ Աստծու եւ Սբ. Գրիգոր Լուսաւորչի առջեւ պատասխանատու ենք Սբ. Աթոռի համար: Երանի՛ որ ունիցի յիշատակ ի Սիոն»:**

## Հայերն արդեօ՞ք միաբնակ են

Արդէն երկար հարիւրամեակներ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին մեղադրում են միաբնակութեան համար, այսինքն՝ համարում են Եւտիքէսի հերետիկոսութեան հետեւորդ. վերջինս, զինուելով Նեստորի հերետիկոսութեան դէմ, ընկնում է հակառակ ծայրայեղութեան գիրկը: Նա լիովին միաձուլում էր Քրիստոսի երկու բնութիւններն այնպէս, որ ընդունում էր Նրա մեջ ոչ միայն մէկ Դէմք, այլեւ մէկ բնութիւն, եւ դրա համար էլ այդ հերետիկոսի հետեւորդներին կոչում են միաբնակներ: Նա ասում էր. «*Բանն Աստծու մարմնացումից յետոյ երկրպագում եմ միայն մէկ բնութեան՝ Աստծու բնութեանը…*», այսինքն՝ նրա համար Քրիստոսի մարդկային բնութիւնը կլանուել է Աստուածային բնութեամբ, եւ այդ պատճառով էլ Քրիստոսի մէջ յայտնւում եւ երկրի վրայ ապրում է հենց Բանը՝ միայն մարմնի տեսքով, իսկ Բանի Աստուածութիւնը չարչարւում է, թաղւում եւ յարութիւն առնում… Հենց այս մոլորութիւնն է վերագրւում Հայ Եկեղեցուն, որը մեծ սուտ է եւ ծանր մեղք: «*Ոչ մի ողջամիտ արարած,* - ինչպէս ասում է Յովհաննէս Սանդուխտաւորը, - *սուտը չի համարի փոքր մեղք, որովհետև չկայ արատ, որի դէմ Ամենասուրբ Հոգին արտաբերի այսպիսի զարհուրելի արտայայտութիւն, քան ստի դէմ: Եթէ Աստուած կործանի ստախօսներին (հմմտ. Սաղ. Ե, 7), ապա ի՞նչ կը կրեն նրանք, ովքեր միակցում են սուտը երդումներին*»: Դատի մասին է ասում նաեւ Սբ. Ոսկեբերանը՝ նշելով, որ այն կը կործանի բոլոր սուտ խօսողներին: Եւ այդ պատճառով պէտք է չափազանց ուշադիր լինել՝ ուրիշին վերագրելով այն, ինչ գոյութիւն չունի: Առաւել եւս, եթէ դա վերաբերում է ոչ թէ մի մարդու, այլ հին աւանդութիւններ եւ պատմութիւն ունեցող ողջ Եկեղեցու: Նշենք, որ Հայ Եկեղեցին Նեստորի հետ միասին նզովում է նաեւ Եվտիքէսին եւ նրա մոլորութիւնը, որովհետեւ անզօր ենք, անգամ մտքից ծնուած որեւէ բան իսկ յաւելել կամ պակասեցնել, այլ հաստատապէս հետեւելով ուղղափառ[8] Սուրբ Հայրերի, առաջին երեք Տիեզերական Ժողովների վարդապետութեանը՝ անշեղօրէն եւ անսասան պահպանում ենք մեր Տէր Աստուած Քրիստոսի միութիւնը: Ըստ Սբ. Կիւրեղ Աղեքսանդրիացու եւ մեր ուղղափառ հայրերի վարդապետու-

[8] «Ուղղափառութիւնը» հասկացւում է առաքելական աւանդութիւններին հաւատարիմ լինելու լայն իմաստով:

թեան՝ դաւանում ենք «**Մի է բնութիւն Աստուծոյ Բանին մարմնացելոյ**»…

Դարեր շարունակ բիւզանդական կայսրերի եկեղեցական քաղաքականութիւնը եւ Եկեղեցու ներքին յարաբերութիւնները սեւեռւում են մէկ կենսական հարցի՝ «Ընդունե՞լ, թէ՞ մերժել Քաղկեդոնի Ժողովը»: Կայսրութեան ամբողջականութիւնը պահպանելու տեսանկիւնից այս հարցն էական նշանակութիւն ունէր: V-VIII դդ. կայսերական իշխանութիւնը ակտիւօրէն մասնակցում էր Եկեղեցու ներքին կեանքին: Աստուածաբանութիւնը դառնում է «պալատական» խօսակցութիւնների առարկայ: Կայսրերը խառնւում են քաղկեդոնական վէճերին, մասնակցում ժողովներին, գրում են դաւանաբանական աշխատութիւններ: Այդպիսի, այսպէս կոչուած, անյաջող «*կայսերական աստուածաբանութիւն*» էր «*մի կամքի վարդապետութիւնը*», որը Հայ Եկեղեցին նոյնպէս մերժում է: Հրապարակւում են կրօնական հրահանգներ եւ դաժանօրէն դատաստան են տեսնում նրանց հետ, ովքեր դրանք չեն ընդունում… Բացառութիւն չէ նաեւ Յուստինոս կայսրը (518-527 թթ.), որի օրօք կրկին վերսկսւում են հալածանքները Քաղկեդոնը մերժողների դէմ: Հալածւողների թւում են լինում նաեւ Անտիոքի Սեւերիոս Պատրիարքը եւ Հալիկառնասի Յուլիանոս եպիսկոպոսը, որոնք 518 թ. աքսորւում են Աղեքսանդրիա: Այնտեղ մի վանական նրանց հարցնում է, թէ կարելի՞ է արդեօք Քրիստոսի Մարմինը համարել ապականացու, թէ՞ անապական: Սեւերիոսը պատասխանում է, որ այն, ըստ հայրերի, ապականացու է, իսկ Յուլիանոսը՝ պատասխանում, որ այն, ըստ հայրերի, անապական է: Այստեղից էլ նրանց միջեւ Տիրոջ Մարմնի մասին վիճաբանութիւն է ծագում…

Սեւերիոսի հետեւորդ Յակոբ Բարադէոս վանականը 541 թ. ձեռնադրւում է եպիսկոպոս: Նա շուրջ երեսուն տարի շրջում է Սիրիայով, Պաղեստինով, Եգիպտոսով եւ ձեռնադրում քահանաների եւ եպիսկոպոսների: Տարածելով Սեւերիոսի ուսմունքը՝ նա հիմնում է Եկեղեցի, որը նրա անունով կոչւում է Յակոբիկեան: Հայ Եկեղեցու Սուրբ Հայրերը կտրականապէս մերժում են ապականացութեան մասին վարդապետութիւնը: Սակայն դրա հետ մեկտեղ մերժւում է նաեւ Յուլիանոսի՝ անապականութեան մասին ուսմունքը, որի մեջ քողարկուած դոկետիզմ էր առկայ: Հայ հայրերի վէճը ոչ այնքան Յուլիանոսի, որքան նրա ծայրայեղական հետեւորդների հետ

էր, որոնք կոչուեցին աֆթարտոդոկետներ՝ անապական-երեւութականներ:

VI-VIII դդ. Հայ Եկեղեցու Սուրբ Հայրերը ստեղծում են աստուածաբանական ստուարածաւալ գրականութիւն: VIII դ. հայ քրիստոսաբանութեան ամբողջացման ժամանակաշրջանն էր: Աստուածաբանական մտքի ասպարէզ են իջնում այնպիսի մեծութիւններ, ինչպիսիք են Ամենայն Հայոց Կաթողիկոս Սբ. Յովհաննէս Օձնեցին, Սբ. Խոսրովիկը, Սբ. Ստեփանոս Սիւնեցին… Եւ ահա 726 թ. տեղի է ունենում մի իրադարձութիւն՝ Մանազկերտի Ժողովը, որը պէտք է վերջնականօրէն ձեւակերպէր Հայ Եկեղեցու քրիստոսաբանական համակարգը: Ժողովը հաստատում է 10 նզովքներ, որոնց մէջ խտացուած է Հայ Եկեղեցու քրիստոսաբանական ողջ կառոյցը: Այդ նզովքները՝ Յուլիանոսի, Սեւերիոսի վարդապետութիւնների եւ նրանց հետեւորդների, ինչպէս նաեւ նեստորականութեան եւ Քաղկեդոնի դաւանապարտութիւնն էր:

* * *

Քրիստոսը կատարեալ մարդ է: Նրա յայտնութիւնը մարդկանց պատրանք չէր, Կոյսից Նա վերցրել է առանց ապականութեան եւ մեղքի մարդկային բնութեան ամբողջականութիւնը՝ հոգին, միտքը և մարմինը: II նզովքով մերժւում է ցանկացած մարդաբանական անկատարութիւն, վերացականութիւն եւ վնասուածութիւն (այսինքն՝ մեղքի եւ ապականութեան առկայութիւն): Քրիստոսն անգամ անճառ փնօրէնութիւնից յետոյ կատարեալ Աստուած է (համագոյ է Հօրը եւ Սուրբ Հոգուն) եւ կատարեալ մարդ է (համագոյ է մեզ՝ մարդկանց), ամէն ինչով մեզ հաւասար՝ բացի մեղքից (IX նզովք): Մարմնացեալ Բանն ունի մի բնութիւն, ըստ Աստուածային եւ մարդկային բնութիւնների անճառելի միաւորութեան՝ անբաժանելի, անփոփոխելի եւ անշփոթելի (IV նզովք): Մի է Քրիստոս, եւ անընդունելի է Քրիստոսի մէջ բնութիւնների, անձերի, կամքերի եւ ներգործութիւնների ածանցում կամ բաշխում (V նզովք): Բանն Աստուած մարմին է առել ոչ թէ նախաստեղծի անմահ եւ անապական բնութիւնից ինչպէս ասում էր Յուլիանոսը, այլ մեր մահկանացու եւ մեղանչական բնութիւնից (III նզովք), այսուհանդերձ, Քրիստոսի մարմինը անապական է ոչ թէ բնութեամբ, այլ անճառելի միաւորութեամբ (VI նզովք): Այսպիսով,

Քրիստոսի մարմինը ըստ բնութեան չարչարելի է եւ մահկանացու, իսկ ըստ միաւորութեան՝ անչարչարելի եւ անմահ (VII նզովք): Քրիստոսը ճշմարտապէս եւ ազատօրէն կրում է մարդկային բոլոր կրքերը՝ բացի մեղքից (VIII նզովք), եւ այդ կրքերը Նա կրում է կամովի և անապականաբար, հետեւաբար բնականօրէն, այլ ոչ թէ հակաբնական եւ ակամայ կերպով (X նզովք):

Այս ամէնից բացի Մանազկերտի Ժողովը յունուարի 6-ը կրկին հաստատում է Տիրոջ Ծննդեան եւ Յայտնութեան օր, որոնք Տեառնեղբօր՝ Սբ. Յակոբի աւանդմամբ եւ Նիկիայի առաջին Սբ. Ժողովի որոշմամբ Հայ Եկեղեցին նշում էր յունուարի 6-ին: Մէկ անգամ եւս հաստատում են Սբ. Թադէոս առաքեալի եւ Սբ. Գրիգոր Լուսաւորչի աւանդութիւնները այն մասին, որ Պատարագի ժամանակ պէտք է օգտագործել անթթխմոր հաց եւ անապակ գինի…

Այսպիսով, Հայ Եկեղեցին անզօր է անգամ մտքից ծնուած որեւէ բան յաւելել կամ պակասեցնել, այլ հաստատապէս հետեւում է Սուրբ Հայրերի, առաջին երեք Տիեզերական Ժողովների վարդապետութեանը, անշեղօրէն եւ անսասան պահպանում է մեր Տէր Աստուած Քրիստոսի միութիւնը՝ ըստ Սբ. Կիւրեղ Աղեքսանդրիացու եւ մեր Սուրբ Հայրերի վարդապետութեան՝ դաւանելով «**Մի է բնութիւն Աստուծոյ Բանին մարմնացելոյ**»...

Քրիստոսաբանութիւնը փիլիսոփայական ձեւակերպումների համակարգ չէ. այն մարդկանց միջավայրում քրիստոսաբանական իդեալի յայտնութիւն է: Ամէն մի ժողովուրդ իր մէջ կրում է Քրիստոսի՝ միայն իրեն իւրայատուկ քրիստոսաբանական փիլը՝ որպէս փրկութեան եւ աստուածացման ներքին հնարաւորութիւն: Եւ որքան այդ ժողովրդի հաւատքի դաւանութիւնը մաքուր եւ հարազատ լինի առաքելական աւանդութիւններին, այնքան անաղարտ կը լինի նրա քրիստոսաբանական իդեալը…

* * *

Վարդանը փարակուսանքով լի էր: Նա չէր կարողանում հաւատալ, որ Հայր Դմիտրին խաբել է իրեն: Չի կարող պատահել: Իսկ գուցէ Հայր Վարդանն իրաւացի է, երբ ասում էր, որ Հայր Դմիտրին հաւատում է այն ամէնին, ինչ ասում է... «Ուրեմն հայերը միաբնակներ չեն, նշանակում է նաեւ՝ հերետիկոսներ չեն, ուրեմն ինչո՞ւ էին ինձ մկրտում, ինչո՞ւ էին փոխում անունս: Ուրեմն՝ ես իրոք դաւաճանել եմ իմ Եկեղեցուն, իմ ժողովրդին: Ուրեմն՝ Հայոց Եղեռնը Տիրոջ պատիժը չէ: Իմ ժողովուրդը մեռնում էր հայ լինելու պատճառով, Քրիստոսին հետեւելու պատճառով: Տէ՛ր Աստուած, ինչո՞ւ է այս ամէնն ինձ հետ կատարւում: Ի՞նչ ես ուզում ինձնից, Տէ՛ր»:

Վարդանը դառնագին լալիս էր եւ մրմնջում... Մտքում հնչում էին Գրիգոր Կաթողիկոսի բառերը. «**Ես հայ եմ, հայ էլ մեռնում եմ**»:

— Վարդա՛ն, Վարդա՛ն, ժամանակն է:

— Այո՛, Հա՛յր Վարդան, հիմա դուրս կը գամ:

— Մի բա՛ն կեր, իսկ յետոյ կը գնանք Յարութեան տաճար: Քեզ կը սպասեմ տասներկուսն անց կէսին վանքի բակում:

Վարդանը լուացուեց եւ գնաց սեղանատուն, որտեղ նրան էին սպասում ուխտաւորները: Աղօթելուց յետոյ բոլորը սեղան նստեցին. նրան հումուս հիւրասիրեցին...

Որքան մօտենում էին տաճարին, այնքան ընթացքը դժուարանում էր՝ ժողովրդի կուտակուած լինելու պատճառով: Ամբողջ ճանապարհին լուռ էին: Քիչ անց նրանք արդէն վանահօր սենեակում էին: Վարդանը որոշեց մասնակցել ժամերգութեանը՝ դրա համար խնդրելով Հայր Վարդանի օրհնութիւնը...

Ժամերգութիւնը տեղի էր ունենում վերեւում՝ Երկրորդ Գողգոթա եկեղեցում: Վարդանը ոչինչ չէր հասկանում, սակայն երգեցողութիւնը եւ աղօթքները, չնայած ուխտաւորների աղմուկին եւ գվուոցին, այնքան հարազատ էին հոգուն, որ չէր կարողանում զսպել արցունքները... Ժամերգութիւնից յետոյ Հայր Վարդանը նրան ցոյց տուեց Բոլորաշէնի եւ Գողգոթայի տեսքը վերեւից, կարելի էր տեսնել անգամ Պատանատեղին: Այնտեղ կար նաեւ մէկ այլ խորան՝ ի պատիւ Երաշխաւորող Աստուածածնի. մի ժամանակ այնտեղ կախուած է եղել այդ սրբապատկերը, այժմ այն Սբ. Յակոբ արաբական ուղղափառ եկե-

ղեցում է: Խորանի եպեւում Քրիսփոսի Ծննդեան գեղեցիկ խճանկարն է: Աջ կողմում լուսամուփներ էին, որ Ցարութեան փաճարի մուփքի վերեւում էին: Դրսից ասփիճան կար, որով ժամանակին հայ վանականները իջնում էին փոքրիկ պապշգամբ՝ օդ շնչելու: Այսօր, սակայն, դուրս ելող չկայ, բայց ասփիճանը մնացել է Սպապուս Քվոյի ժամանակներից… Խորանից ոչ հեռու մի փոքրիկ խորան էլ կար, որի վրայ Կայիափա քահանայապեպի փան քարէ սիւներից մէկն է, որին կապել են Քրիսփոսին, եւ սեանը կապուած Քրիսփոսի պապկերով սրբապապկեր…

— Հա՛յր Վարդան, իսկ ճի՞շպ է, որ հայերը չունեն սըրբապապկերներ:

— Ո՛չ, ճիշպ չէ. ի՞նչ է նշանակում սրբապապկեր:

— Պապկեր, նկար:

— Կեցցե՛ս: Հայերը ուղղափառների նման չունեն այն երկրպագութիւնը, բայց ունենք սրբապապկերներ, անգամ օրհնութեան եւ մեռոնով օծելու իւրայապուկ կարգ, առանց որոնց սրբապապկերը երկրպագելի չէ: Այդպիսի կարգ ուղղափառները չունեն:

— Իսկ հայերն ունե՞ն սրբապապկերների փօներ:

— Ո՛չ, բայց առաջին սրբապապկերները հայերին են պապկանել. Քրիսփոսի պապկերով իբրեւ Անձեռակերպ Նկար յայտնի սրբապապկերը՝ հայոց Աբգար արքայի մօպ էր, եւ Ասպուածածնի սրբապապկերը (ըսպ մեր աւանդութիւնների, նկարել է Յովհաննէս առաքեալը) Հայասպան է բերել Բարդուղիմէոս առաքեալը…

— Իսկ հիմա դրանք որպե՞ղ են:

— Միջին դարերում, ցաւօք, երբ շարունակ պապերազմներ էին լինում, Անձեռակերպ սրբապապկերն ընկնում է Իպալիա եւ այժմ գպնւում է Սբ. Բարդուղիմէոս հայ կաթոլիկ եկեղեցում, իսկ Ասպուածածնի սրբապապկերը յայտնի չէ՝որպեղ… Աւելի ճիշպ՝ շապերի մօպ…

— Ինչպէ՞ս թէ՝ շապերի մօպ:

— Ասորիները գպնում են, որ իրենց մօպ է, յոյները՝ իրենց…

— Հասկանալի է. ուրեմն հայերը նոյնպէս պաշպում են սրբապապկերները:

— Հայ Եկեղեցին իր զաւակներին սովորեցնում է միջին ճանապարհը. մի կողմից՝ չընկնել մի ծայրայեղութեան գիրկը՝

ընդհանրապէս մերժելով սրբապատկերները, իսկ միւս կողմից՝ անիմաստ չպաշտել՝ կռապաշտութեան գիրկը չընկնելու համար: Այդ պատճառով էլ մեզանում սրբապատկերների հանդէպ աւելի շատ յարգանք է, քան ուղղափառների հասկացողութեամբ՝ պատկերապաշտութիւն… Մեծարում ենք Աստծուն եւ սրբերին, սակայն մի բան է Աստծուն պաշտելը, մէկ այլ բան՝ սրբերին, եւ դա մենք լաւ ենք գիտակցում: Իսկ երբ պաշտում ենք, ապա միայն այն սրբապատկերներն ու խաչը, որոնք, ինչպէս ասացի, եպիսկոպոսը օծել է մեռոնով եւ օրհնել աղօթքով: Այդ պատճառով էլ չունենք սրբապատկերների յատուկ փօներ, եւ փա՜ռք Աստծու, որ չունենք սրբապատկերների այն հասկացութիւնը, որով նրանք կը փրկեն մեզ հրդեհից եւ գողերից…

— Իսկ կարելի՞ է ասել, որ եթէ հայերն ունեն սրբապատկերներ, ապա նրանք չեն կարող լինել միաբնակներ:

— Կարծում եմ, որ կարելի է: Խնդիրն այն է, թէ արդեօք կ’ընդունե՞ն այդ կարծիքը Հայր Դմիտրիի նմանները:

— Չգիտեմ:

— Ես էլ չգիտեմ: Ա՛յ, Սուրբ Տաթեւացին ասում է, որ Բանն Աստուած Կոյս Մարիամից վերցնում է մարդու կերպարանքը եւ, Իր պատկերն անձեռակերտ նկարելով գործուածքի մի կտորի վրայ, ուղարկում է Աբգար թագաւորին, որով էլ նա ցաւերից բժշկւում է: Դրա համար էլ նաեւ մենք, վերցնելով Նրա պատկերը, նկարում ենք Նրան: Այնուհետեւ, Աստուածածինը Վերափոխման օրը օրհնում է Յովհաննէսի նկարած իր պատկերը: Դրանից էլ օրհնութիւն վերցնելով՝ բազում վայրերում սրբերի պատկերներ ենք նկարում: Որովհետեւ մարմնական աչքերով նայելով՝ ճանաչող բանականութեամբ մտահայում ենք Նախապատկերը: Ահա որն է պատճառը, որ սրբապատկերներ ենք նկարում:

— Իսկ ի՞նչ կ’ասէք վանականութեան մասին. Հայր Դմիտրին ասում էր, որ հայերը չունեն վանականութիւն, իսկ եթէ չկայ վանականութիւն, չկան նաեւ աղօթողներ: Իսկ եթէ չկայ աղօթքի կեանք, ուրեմն չեն կարող լինել նաեւ սրբեր: Եւ որ Հայ Եկեղեցում չկան անգամ սրբեր… Աւելի ճիշտ՝ մինչեւ չորրորդ Ժողովը եղել են, բայց քանի որ հեռացել են ուղղափառութիւնից, ապա հեռացել են նաեւ Սուրբ Հոգու շնորհից: Սրբերը հենց նրանով են սուրբ, որ նրանց մէջ է բնակւում Սուրբ Հոգին…

— Օհո՜, ինչպէս մաթեմատիկայում՝ մէկին գումարած մէկ կը լինի երկու: Ե՛ւ փխուր է, ե՛ւ ծիծաղելի: Վանականութիւն կայ, օրինակ՝ ես վարդապետ եմ, ապրում եմ վանքում, կան կանոններ ու կարգ… Հայ Եկեղեցում վանքերը հայոց հաւատքի եւ աւանդութիւնների պահապաններն են: Դրանք գիտական կենտրոններ, հոգեւոր դպրոցներ են եղել… Մշտապէս, երբ այլազգիները ասպատակում էին Հայաստանը, առաջին հերթին ոչնչացնում էին վանքերը, ձեռագրերը, սպանում էին վանականներին: Նոյնիսկ միջին դարերում՝ Եւրոպայում Վերածննդի դարաշրջանում, Հայաստանում տիրում էր «*Խաւարի Դարը*»՝ անկման եւ անիշխանութեան ժամանակաշրջանը: Հայաստանը համարեայ երկու դար (XV-XVII դդ.) երկու մրցակից պետութիւնների՝ Պարսկաստանի եւ Օսմանեան կայսրութեան միջեւ պատերազմի թատերաբեմ էր, փնտեսութիւնը ոչ միայն չէր զարգանում, այլև աղէտալի վիճակում էր: Երկիրը համարեայ ամայանում էր. անմարդաբնակ են դարձել ամբողջ գաւառներ, քաղաքներից փախչում են վաճառականներն ու արհեստաւորները, իսկ հայերի լքած դաշտերում արածում էր քուրդ քոչւորների անասունը: Թւում էր՝տասնամեակներով մոռացութեան են մատնուել ձեռագրերի ստեղծումը, եկեղեցիների եւ վանքերի կառուցումը: Այդ ժամանակաշրջանում, երբ Հայաստանն ապրում էր պարսից եւ օսմանեան ծանր լծի տակ, Եկեղեցին միակ բեւեռն էր, որի շուրջը կարող էր համախմբել ողջ հայ ժողովուրդը: Եկեղեցին, ի դէմս կաթողիկոսների եւ հոգեւորականութեան, ակտիւօրէն մասնակցում էր նաեւ ժամանակաշրջանի քաղաքական հարցերին, մի կողմից՝ փնտռելով տարբեր քրիստոնեայ կառավարիչների օգնութիւնը, իսկ միւս կողմից՝ գլխաւորելով ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը: Եվ երբ 1639 թուականին Պարսկաստանը եւ Օսմանեան կայսրութիւնը հաշտութիւն են կնքում, երկու կայսրութիւններում էլ հայերի համար նպաստաւոր շրջան է սկսւում: Շնորհիւ երեք մեծ Կաթողիկոսների՝ Մովսէս Տաթեւացու (1629-1632), Փիլիպպոս I-ի (1633-1655) եւ Յակոբ IV-ի (1655-1680) ջանքերի՝ վանական եւ եկեղեցական կեանքը վերակազմաւորւում է. վերակառուցւում են տաճարներն ու վանքերը, վերականգնւում են դպրոցները, բացւում է տպագրատուն, նոր ազդակ է հաղորդւում հայ ժողովրդի հոգեւոր եւ մշակութային կեանքին:

Դրանից բացի, Հայոց Եղեռնի ժամանակ ոչնչացւում են մի քանի հազար վանականներ եւ հոգեւորականներ, սովետների

ժամանակ՝ նոյնպէս: Քանդւում են վանքեր եւ եկեղեցիներ: Այսօր պահպանուել է չորս վանական կենտրոն՝ Էջմիածնում, այստեղ՝ Երուսաղէմում, Կոստանդնուպոլսում եւ Լիբանանում… Հայաստանում արդէն կուսանոց կայ, եւ այլք՝ տղամարդկանց համար: Նոյնիսկ մեր Սրբոց Հրեշտակապետաց վանքը, որտեղ դու քնել ես, կուսանոց էր: Վերջին միանձնուհին վախճանուել է XX դ. 80-ականներին:

— Իսկ ինչո՞ւ այլեւս չկան:

— Ցանկացողներ չկան, եւ այլ պատճառներ…

— Վանքերում աղօթում են, եւ մշտական պաշտամունքնե՞ր կան:

— Իհարկէ, մենք շատ ժամերգութիւններ եւ Պատարագներ ունենք: Աստուածածնի Գերեզմանին եւ Բեթղեհէմում ամէն օր՝ առաւօտեան ութին, Պատարագ է, իսկ Տիրոջ Գերեզմանին՝ գիշերը՝ երեքին… Էլ չեմ ասում այլ եկեղեցիների մասին…

— Իսկ ի՞նչ կ՚ասէք սրբերի մասին:

— Սրբեր էլ ունենք: Պարզապէս նրանք չեն մեծարւում ուղղափառութեան մէջ… Ինչպէս եւ նրանց սրբերը՝ մեզանում… Բայց դա չի նշանակում, որ սրբեր չկան. Հայր Դմիտրիի որոշելիքը չէ՝ մենք սրբեր ունե՞նք, թէ ոչ:

— Կարելի՞ է մէկ հարց եւս:

— Արի մի փոքր յետոյ. ինձ մօտ հիմա պէտք է մի օրիորդ գայ՝ մեր ուխտաւորներից. ուզում է խոստովանուել:

— Ուրեմն հայերը նաեւ խոստովանութի՞ւն ունեն. դա էի ուզում հարցնել:

— Բնականաբար, կայ, ինչպէս եւ՝ բոլոր եօթ Սուրբ Խորհուրդները:

— Ապաշխարանք նո՞յնպէս կայ:

— Իհարկէ, կայ. ա՛յ, օրիորդի՛ն հարցրու:

Նրանց մօտեցաւ մի օրիորդ եւ հայերէն օրհնութիւն խնդրեց Հայր Վարդանից՝ գլուխը խոնարհելով. հայրը, ձեռքը դնելով նրա գլխին, օրհնեց:

— Հռիփսիմէ՛, ահա մեր Վարդանը. նա Ռուսաստանից է, հարցնում է, թէ արդեօք ունե՞նք խոստովանութեան խորհուրդ եւ ապաշխարանք: Խնդրում եմ՝ բացատրես նրան, ես հիմա կը վերադառնամ, զնամ խաչի եղեւից…

— Այո՛, Հայր Վարդան, ինչ ասէք: Առանց խոստովանութեան հնարաւոր չէ. ես իմ փորձից գիտեմ դա. արդէն քանի տարի խոստովանում եմ Հայր Վարդանին:

— Ներեցէ՛ք, իսկ ինչպէ՞ս էք խոստովանում:

— Դէ՛, ահա եկել եմ եկեղեցի, նստում ենք որեւէ տեղ, որպէսզի մեզ չխանգարեն, իսկ յետոյ իմ մեղքերն եմ յայտնում, երբեմն Հայր Սուրբն ինքն է օգնում, կարելի է ասել՝ դուրս է քաշում մեղքերը: Բայց նա գտնում է, որ ինքդ պէտք է յանգես մեղքի գիտակցութեանը, որպէսզի անկեղծօրէն զղջաս եւ յետոյ խոստովանես:

— Իսկ կա՞յ արդեօք եպիտիմիա:

— Իհարկէ, կայ: Շատերի համար ապաշխարանքը մի ինչ-որ պատիժ է, բայց այն ընդամէնը հոգու բալասան է, առանց որի հոգին չի կարող ապաքինուել: Ապաշխարանքի հիմնական տեսակներն են պահեցողութիւնը, աղօթքը եւ ողորմութիւնը: Կայ նաեւ ընդհանուր խոստովանութիւն. այն պատարագի ժամանակ է լինում, երբ ողջ ժողովուրդը ծնկի է գալիս, ընթերցւում է մեղքերի ցանկը եւ քահանան թողութիւն է շնորհում մեղքերին, եւ յետոյ բոլորը հաղորդութիւն են ստանում, աւելի ճիշտ՝ ցանկացողները... Ներեցէ՛ք, Հայր Վարդանն է գալիս:

— Դէ ի՞նչ,Վարդա՛ն, Հռիփսիմէն պատասխանե՞ց քո հարցերին:

— Տէ՛րը փրկի նրան. ես այլեւս հարցեր չունեմ:

— Վարդա՛ն, ներքե՛ւ իջիր. այնտեղ քեզ սպասում է մեր Սարգիս սարկաւագը. նրա հետ արդէն ծանօթ ես: Նա քեզ կ'ուղեկցի մի տեղ, ուր բոլորը չէ, որ կարող են մտնել...

— Օրհնեցէ՛ք, Հա՛յր:

— Տէ՛րը կ'օրհնի:

Վարդանն իջաւ ներքեւ... Նա անչափ ուրախ էր, որ հայերը հերետիկոսներ չեն, եւ իր հարազատներն էլ դժոխք չեն ընկնի միայն նրա համար, որ Հայր Դմիտրիի հասկացողութեամբ ուղղափառ չեն: Նա արդէն զղջում էր, որ շտապել է՝ ուղղափառութիւն ընդունելով, մկրտուելով եւ Հայ Եկեղեցին ուրանալով:

Ներքեւում նրան դիմաւորեց Սարգիս սարկաւագը, որը դեռ առաւօտեան էր նրան ուղեկցել Հայր Վարդանի մօտ:

— Բարե՛ւ Ձեզ, Վարդա՛ն:

— Բարե՛ւ Ձեզ, Հա՛յր Սարգիս:

— Ես քահանայ չեմ, ինչո՞ւ էք ինձ հայր անուանում:

— Պարզապէս ռուսները սարկաւագներին դիմելիս նոյնպես «հայր» են ասում, այդ պատճառով…

— Ինձ պարզապէս Սարգիս ասէք:

— Ինչ որ ասէք, իսկ ո՞ւր ենք գնում:

— Հիմա կը տեսնէք. նախ՝ Ձեզ համար մի փոքրիկ շրջայց կը կազմակերպեմ տաճարի տարածքում, եթէ, իհարկէ, դէմ չէք:

— Ուրախ կը լինեմ:

— Այստեղ՝ մեր կանգնած տեղից, Աստուածածինը նայել է խաչելութեանը եւ ուշաթափուել, դիմացը ահա տեսնու՞մ էք խորանը. Իւղաբեր Կանանց խորանն է. նրանք առաւօտեան եկել են, որ օծեն Քրիստոսի մարմինը, եւ կանգնել են այստեղ, երբ տեսել են, որ Գերեզմանը բաց է…

Խորանին մի գեղեցիկ սրբապատկեր կար. կենտրոնում՝ Աստուածածինը, իսկ կողքերին՝ Սբ. Մկրտիչն ու Սբ. Յակոբը…

Յետոյ նրանք մօտեցան Բոլորաշէնի մուտքին:

— Մուտքի վերեւի առաջին սրբապատկերը մերն է՝ Սբ. Գրիգոր Լուսաւորչի եւ Յարութիւն առած Քրիստոսի պատկերով: Սրբապատկերի առջեւ տասներեք կանթեղներ են կախուած. տասներկուսը՝ ի պատիւ առաքեալների, տասներեքերորդը՝ ի պատիւ Սբ. Լուսաւորչի: Կողքերին՝ լամպերի համար երկուական մոմանման պատուանդաններ. երկուսը՝ յունական, երկուսը՝ կաթոլիկ, եւ երկուսը՝ հայկական, որ վառւում են պաշտամունքների ժամանակ, եւ երկուական մեծ աշտանակներ: Հիմա ներս մտնենք: Ա՜յ, տեսնում ես, այստեղ Հրեշտակի քարի վերեւում կախուած են տասնհինգ կանթեղներ. հինգական՝ յունական, կաթոլիկ եւ մերը: Բայց մեր հաշուին, այսինքն՝ մեր մէկի փոխարէն կախուած է ղպտիական կանթեղը. այդպէս է ստացուել: Շրջուի՜ր, ա՜յ մուտքի վրայ կախուած է երեք սրբապատկեր, այն մէկը մերն է… Գերեզմանը պատկանում է հայերին, յոյներին եւ կաթոլիկներին, բայց միայն յոյներն իրաւունք ունեն ամէն օր այստեղ կանգնելու, իսկ մեր կամ կաթոլիկների պաշտամունքների եւ Պատարագների ժամանակ կանգնում են միայն մեր կամ կաթոլիկ վանականները: Իսկ հիմա ներս մտնենք…

Նրանք սպասեցին, մինչև ուխտաւորները դուրս գան, եւ յետոյ միասին ներս մտան… Նախ երկուսն էլ համբուրեցին Գերեզմանի սալաքարը…

— Ահա, վերե՛ւ նայիր, շարքերով կախուած են յունական, կաթոլիկ, ղպտիական եւ մեր կանթեղները: Ահա երեք սրբապատկեր, մերն աջինն է՝ ապակու տակ, վեց աշտանակներ եւ ծաղիկներով մէկական ծաղկաման… Ամէն ինչ հաւասարապէս, քանի որ երեք Եկեղեցիներն էլ հաւասար իրաւունքներ ունեն Գերեզմանի նկատմամբ: Դէ՛հ, դուրս գանք. ժողովուրդը շատ է, պէտք է ամէն ինչ հասցնենք…

Վարդանն այդ ամբողջ ընթացքում լուռ էր եւ համակ ուշադրութեամբ լսում էր Սարգսին: Նրանք դուրս եկան Բոլորաշէնից, թեքուեցին աջ եւ հասան Բոլորաշէնի հակառակ կողմը, որտեղ ղպտիների խորանն էր: Ժամանակին այն պատկանել է հայերին, բայց միջին դարերում ղպտիներին է փոխանցուել, նաեւ մի քանի սենեակներ՝ Եգիպտոսում եկեղեցի ունենալու փոխարէն: Դէմ յանդիման գտնւում էր Սբ. Յովսէփ Արեմաթացիի լքուած փոքրիկ եկեղեցին: Պատկանում է հայերին, սակայն կիրակի օրերին Պատարագ են կատարում ասորի-յակոբիկեանները: Եկեղեցին վերանորոգելու՝ հայերի եւ ասորիների վէճը դեռևս լուծուած չէ…

Այնուհետեւ հասան Հանդերձից Բաժանման բաժինը, որտեղ հայկական խորանն էր, կողքին՝ Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու մուտքը …

Վարդանն արդէն գիտէր, որ դա հայկական եկեղեցի է, եւ որ այնտեղ աղօթել է Սբ. Գրիգորը: Նրա սիրտը կրկին թրթռաց. թւում էր, որ բոլոր հայ նախապակներն ու սրբերը իրեն են նայում՝ մեղադրելով արմատներն ուրանալու համար… Նա սարսափում էր…

— Սարգի՛ս, իսկ սա ի՞նչ սրբապատկեր է:

— Այստեղ պատկերուած է Սբ. Սահակ Կաթողիկոսը, որը թոռանը՝ Սուրբ զօրավար Վարդանին է փոխանցում «**Թարգմանութիւնների Թագուհի**» համարուող Աստուածաշունչը…

— Սա Սուրբ Վարդա՞նն է:

— Այո՛:

— Իսկ ի՞նչ կայ դրան ետեւում:

— Այնտեղ Սուրբ Վարդան եկեղեցին է: Հայր Վարդանն ասաց, որ քեզ այստեղ բերեմ ու թողնեմ:

— Սուրբ Վարդան եկեղեցի՞. չի կարող պատահել: Տէ՛ր, ողորմեա՛:

— Ամէն ինչ կարող է պատահել: Այս վայրը Հայր Վարդանը շատ է սիրում եւ յաճախ է գալիս այստեղ՝ աղօթելու: Մուտքը զբօսաշրջիկների համար փակ է, այնպէս որ վերցրո՛ւ բանալիները, մտի՛ր եւ ետեւիցդ փակի՛ր: Մնա՛, որքան ուզում ես:

Վարդանի համար սա յայտնագործութիւն էր: Նա չէր կարողանում մինչեւ վերջ գիտակցել Տիրոջ անսահման գթասրտութիւնն իր՝ մեղաւոր անձի հանդէպ… Նրա առջեւ մարմարեայ մեծ խորան էր, որի վրայ նոյնպէս մարմարից մեծ խաչ կար: Խորանի ճակատային մասում քանդակուած էր Սբ. Վարդանի գլուխը: Վարդանն աղօթում էր… Այսօր նրա աղօթքը իր նախնիների՝ Նեկտար մայրիկի, նրա ամուսնու՝ Վարդանի, Սարգսեան տոհմի բոլոր հանգուցեալների հետ հաղորդակցութիւնն էր: Նա զրուցում էր բոլոր հայ սրբերի, եւ մասնաւորապէս Սուրբ Վարդանի, նաեւ 1915 թ. Հայոց Եղեռնի նահատակների հետ… Սուրբ Վարդանի խորանի առջեւ նա երդուեց. «**Ես հայ եմ, հայ էլ կը մեռնեմ**»:

Երկու ժամ էր անցել: Նա ուղղուեց վանահօր սենեակ. ուզում էր զրուցել Հայր Վարդանի հետ… Իմանալով, որ նա վանքում է, Վարդանը Սարգսին խնդրեց իրեն ուղեկցել Սրբոց Հրեշտակապետաց վանք…

Քիչ անց նա վանքի՝ ուխտաւորների սեղանատանն էր, որտեղ նրան ջերմօրէն ընդունեցին, թէյ հիւրասիրեցին եւ երկու ժամից էլ ընթրիք խոստացան: Ուխտաւորներից իմացաւ, որ մի քանիսն իր նման, անգիտակցաբար ուղղափառութիւն են ընդունել, իսկ ահա Երուսաղէմում վերադարձել են Մայր Եկեղեցու գիրկը: Խօսում էին շատ բաների մասին եւ տարբեր թեմաներով: Ընթրիքից յետոյ, ինչպէս եւ խոստացել էր, զրուցելու եկաւ Հայր Վարդանը: Նա խօսում էր հոգեւոր կեանքի, աղօթքի եւ պահեցողութեան մասին, սակայն նրա համար ամենակարեւորը ողորմութիւնն էր՝ սիրոյ գործերը, առանց որոնց փրկութիւն չկայ… Հայր Վարդանը հարցերին պատասխանում էր պարզ եւ հասկանալի լեզուով:

— Դէ՛, պէտք է տաճար գնամ. կէս ժամից դռները փակւում են: Վարդա՛ն, դու ինձ հետ կը գա՞ս:

— Իհարկէ կը գամ:

Հայր Վարդանը բոլորին օրհնեց եւ Վարդանի հետ ուղղուեց Յարութեան տաճար… Վարդանը բազմաթիւ հարցեր ունէր, բայց ամաչում էր հարց տալուց…

— Դէ ի՞նչ, Վարդա՛ն, հարցեր չկա՞ն, բայց դէմքիցդ արդէն երեւում է, որ հարցերը շատ են:

— Հա՛յր, հարցերը բազմաթիւ են, բայց…

— Դէ լա՛ւ, տաճար հասնենք, այնտեղ էլ կը զրուցենք:

Ժամը իննին տաճարը փակւում էր, եւ ոչ ոք չէր մնա-ցել բացի սպասաւորներից եւ Վարդանից… Նրանք ուղղուեցին վանահօր սենեակ…

— Դէ՛հ, լսում եմ քեզ:

— Իսկ ի՞նչ է նարօտը. գիտեմ, որ կարմիր եւ սպիտակ միահիւսուած թելեր են:

— Այո՛, այդպէս է. այդ թելից են կախում խաչը, երբ կնքում են երեխային … Կարմիր եւ սպիտակ գոյները ջրի եւ արեան խորհրդանիշն են, որ Քրիստոսի կողից են հոսել, երբ հարիւրապետը Նրան խոցել է տէգով: Մկրտուելիս մեր հոգիները ջրով մաքրւում են աւազանում, եւ արեամբ՝ Պատարագի ժամանակ:

— Իսկ ի՞նչ է Պատարագը:

— Լիտուրգիա:

— Ա՛, ահա թէ ինչ:

— Գիտէի՞ր:

— Այո՛, Հա՛յր, մանուկ հասակում ինձ Պատարագի են տարել եւ հաղորդութիւն տուել…

— Օհո՜:

Վարդանը պատմեց Նեկտար մայրիկի, իր մայրիկի եւ ընտանիքի մասին… Անգամ իր խաչը ցոյց տուեց, որը պէտք է օգնէր Վարդանին: Հայր Վարդանը, խաչը տեսնելով, անչափ զարմացաւ, որովհետեւ տեսել էր այն ինչ-որ տեղ, բայց ոչ մի կերպ չէր կարողանում մտաբերել… Նա այդ մասին ոչինչ չասաց Վարդանին …

— Տեսնո՞ւմ ես, Վարդա՛ն, իրապէս այդ խաչն է քեզ ուղղորդում. Երուսաղէմում կը գտնես աւելին, քան սպասում էիր:

— Ձեր աղօթքներով, Հա՛յր, իսկ կարո՞ղ եմ էլի հարցեր տալ:

— Այո՛, իհարկէ, մենք դեռ ունենք երկու ժամից աւելի:

— Ինչո՞ւ հայերը Պատարագի ժամանակ գինուն ջուր չեն աւելացնում եւ անթթխմոր հաց են օգտագործում:

— Դէ՛, այս աւանդութիւնը առաքեալներից եւ Սուրբ Գրքից է գալիս:

— Հայր Դմիտրին ասաց, որ եթէ հայերն այդպէս են վարւում, դա ապացուցում է, որ նրանք չեն ընդունում Քրիստոսի մարդեղութիւնը:

— Ա՜խ, այդ Հայր Դմիտրին: Մենք հետեւում ենք Սուրբ առաքեալների կանոններին, որոնք հաստատել է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը, եւ այդ պատճառով էլ մինչ օրս օգտագործում ենք անթթխմոր հաց եւ անապակ գինի: Ըստ մովսիսական օրէնքի, երբ սկսւում էին բաղարջակերաց օրերը, տներում չէր կարելի թթխմորով հացի թեկուզ մի փշուր պահել, իսկ եթէ գտնէին, ապա կը քարկոծէին (տե՛ս Ելից. ԺԲ, 15, 18-20): Հրեաները մինչ օրս տօնի նախօրէին հիմնաւորապէս մաքրում են տունը. բնակատեղիում չպէտք է մնայ ոչ մի փշուր «թթխմոր»: Եւ ինչպէս Սուրբ Գիրքն է ուսուցանում, մեր Տէրը հաստատել է Զատիկը բաղարջակերաց օրերին. «*Եւ Բաղարջակերաց տօնի առաջին օրը աշակերտները մօտեցան Յիսուսին և ասացին. «Ո՞ւր ես կամենում՝ պատրաստենք զատկական ընթրիքը քեզ համար, որ ուտես*»», եւ այդ պատճառով էլ Խորհրդաւոր ընթրիքին անթթխմոր հաց էր:

Ընթրիքին գինին անապակ էր՝ ջուր չխառնած. «*Եւ բաժակ վերցնելով՝ գոհութիւն յայտնեց, տուեց նրանց և ասաց. «Խմեցէ՛ք դրանից բոլորդ, որովհետև այդ է նոր ուխտի իմ արիւնը, որ թափւում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողութեան համար: Ասում եմ ձեզ, այսուհետև ես այլևս որթատունկի բերքից չեմ խմի մինչև այն օրը, երբ ձեզ հետ կը խմեմ նորը իմ Հօր արքայութեան մէջ*»»: Վարդա՛ն, Տէրը չի օգտագործում ջուր, այլ միայն որթատունկի բերքից գինի: Եւ բոլորին է յայտնի, որ խաղողից գինի է ստացւում, ոչ թէ ջուր: Սուրբ Ոսկեբերանն ասում է՝ քանի որ ոմանք խորհուրդների ժամանակ ջուր են օգտագործում, որպէսզի ցոյց տան, որ ե՛ւ խորհուրդները հաստատելիս, ե՛ւ յարութեան ժամանակ գինի է օգտագործել, երբ առանց խորհրդի առաջարկում էր սովորական ընթրիք, նոյնպէս գինի էր օգտագործում, ասում է՝ որթատունկի բերքից: Խաղողի վազից գինի է ստացւում, այլ ոչ

թէ ջուր: Դրա համար էլ Հայ Եկեղեցին հաւատարիմ է մնում Սուրբ Աւետարանին եւ մեր Սուրբ Հայրերին:

— Ի՞նչ փաստարկներ են վկայակոչում թթխմորով հաց օգտագործելու եւ գինուն ջուր աւելացնելու կողմնակիցները:

— Թթխմորով հացի կողմնակիցները մէջբերում են Յովհաննէս Աւետարանչի խօսքերը. «*Կայիափայի տնից Յիսուսին տարան կուսակալի ապարանքը: Այգաբաց էր: Բայց նրանք ապարանք չմտան, որպէսզի չպղծուեն, և որպէսզի զատկական ընթրիքը կարողանան ուտել*», այսինքն՝ Զատիկը դեռ չէր սկսուել, իսկ Քրիստոսը Զատիկը նշել էր մէկ օր առաջ, եւ դրա համար էլ բնականաբար հացը թթխմորով էր: Սակայն այսպիսի պնդումը հակասում է միւս երեք Աւետարանիչներին. ըստ նրանց՝ Քրիստոսը Զատիկը նշեց «*բաղարջակերաց առաջին օրը*», որը հաստատում է նաև Սուրբ Ոսկեբերանը՝ ասելով՝ չէ՞ որ Քրիստոսն ինքը նշեց Զատիկը «*բաղարջակերաց առաջին օրը*»: Վարդա՛ն, Տէրը չէր կարող խախտել օրէնքը. «*Մի՛ կարծէք, թէ Օրէնքը կամ մարգարէներին ջնջելու եկայ. չեկայ ջնջելու, այլ՝ լրացնելու*», եւ այդ պատճառով էլ «*բաղարջակերաց օրը*» չէր կարող ուրիշ հաց լինել: Իսկ այն, որ հրեաները չեն ճաշակել Զատիկը, խօսում է այն մասին, որ նրանք նախանձի եւ ատելութեան պատճառով այնքան են զբաղուած եղել դատական գործերով, որ Զատիկը չեն ճաշակել նշուած օրը, եւ այդպիսով իրենք են խախտել Օրէնքը, եւ ոչ թէ Քրիստոսը:

Նրանք գինուն ջուր են խառնում ի յիշեցումն այն բանի, որ խաչին գամուած Փրկչի կողից արիւն եւ ջուր է արտահոսում. «*...այլ զինուորներից մէկը տէգով խոցեց նրա կողը, և իսկոյն արիւն և ջուր ելաւ*»: Բայց այդ վկայակոչումը հակասում է Սուրբ Գրքին. նախ՝ Ինքը՝ Տէրը, ջուր չի օգտագործում, այլ միայն գինի, երկրորդ՝ Տիրոջ կողից արտահոսող ջուրը եւ արիւնը միախառնուած չէին, եւ այդ պատճառով էլ գինուն ջուր խառնելը ճիշտ չէ, երրորդ՝ ջուրը Մկրտութեան նախատիպն է, իսկ արիւնը՝ Հաղորդութեան, եւ եթէ Հաղորդութեան ժամանակ գինուն ջուր են աւելացնում, ապա ինչո՞ւ Մկրտութեան ժամանակ ջրին գինի չեն աւելացնում:

Գինուն ջուր խառնելու պատարագային աւանդոյթը ծագում է յոյների՝ միայն ջրով խառնած գինի խմելու հին սովորոյթից: Յունական գինիները աւանդաբար թունդ էին եւ քաղցր, դրա համար էլ դրանք անխառն խմելը յոյները բարբարոսութիւն էին համարում: Յետագայում այդ աւանդոյ-

թը, փարածուելով ողջ Միջերկրածովեան փարածաշրջանում, հասփափւում է հռոմէական կայսրութեան Եկեղեցիների Պափարագներում: Այդ պափճառով էլ Սուրբ Գրքի բոլոր վկայակոչումները, որոնք իբրեւ թէ փասփում են, որ գինուն պէփք է ջուր աւելացնել, ոչ մի հիմք չունեն:

— Իսկ ինչպիսի՞ գինի եւ հաց են օգփագործում միւս Եկեղեցիները:

— Եկեղեցիները փարբեր աւանդոյթներ ունեն. կաթոլիկներն օգփագործում են անթթխմոր հաց, սակայն գինուն ջուր են աւելացնում, ղպփիները՝ թթխմորով հաց, գինուն՝ ջուր, ասորի-յակոբիկեանները՝ թթխմորով հաց, գումարած իւղ, գումարած աղ, գինուն՝ ջուր, ուղղափառները՝ թթխմորով հաց, գինուն՝ սառը ջուր, գումարած նաեւ վերջում՝փաք:

— Իսկ ե՞րբ է ծնուել Քրիսփոսը, ո՞ր օրը:

— Հայ Եկեղեցին Քրիսփոսի Ծննդեան փօնը եւ Մկրփութիւնը միաժամանակ նշում է յունուարի 6-ին (յունուարի 19)՝ Ասփուածայայփնութիւն ընդհանուր անուամբ: Պափմական միւս Եկեղեցիները Քրիսփոսի Ծննդեան փօնը նշում են դեկփեմբերի 25-ին (յունուարի 7), իսկ Մկրփութիւնը՝ յունուարի 6-ին (յունուարի 19): Հին Եկեղեցում III դարի վերջից յունուարի 6-ին նշւում էր Ասփուածայայփնութեան փօնը, որը միաւորում էր Ծնունդն ու Մկրփութիւնը: 336 թ. սկսած՝ Հռոմում Ծննդեան փօնը սկսում են նշել դեկփեմբերի 25-ին. այդ օրը հեթանոսները մեծարում են Արեւի անպարփելի ասփծուն (Natalis Solis Invicti), այսինքն՝ լոյսի յաղթանակն ընդդէմ խաւարի, ցերեկուայ գերազանցելը գիշերուան: Հեթանոսական այդ փօնին Հռոմի քրիսփոնեաները հակադրում են Ճշմարփութեան Արեւի Ծննդեան՝ Քրիսփոսի Ծննդեան մեծ փօնը: Շուփով Արեւմուփքում ամէնուր Սուրբ Ծնունդը սկսում են նշել դեկփեմբերի 25-ին: Այս նորարարութիւնն ասփիճանաբար փարածուում է նաեւ Արեւելքում: Այսպէս, 376 թ. Սուրբ Ծնունդը դեկփեմբերի 25-ին են սկսում նշել Անփիոքում, 443 թ.՝ Աղեքսանդրիայում, 549 թ.՝ Երուսաղէմում եւ այլն: Այսպիսով, բոլոր Եկեղեցիները սկսում են նշել Սուրբ Ծնունդը դեկփեմբերի 25-ին (յունուարի 7-ին), իսկ Մկրփութիւնը՝ յունուարի 6/19-ին: Եւ միայն Հայ Եկեղեցին է պահպանում Սուրբ Ծնունդը եւ Մկրփութիւնը նոյն օրը՝ յունուարի 6-ին, փօնելու հին սովորոյթը:

— Ինչո՞ւ են  փարբեր ձեւերով խաչակնքւում:

— Ընդամէնը լեզուական, ոչ թէ աստուածաբանական տարբերութիւն է, ինչպէս ոմանք ուզում են ցոյց տալ:

— Այսի՞նքն:

— Այսինքն՝ բոլորի համար Հոգի բառը համընկնում է սրտին: Մենք եւ կաթոլիկները, օրինակ, ասում ենք՝ «*Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ*», եւ դրա համար էլ ձախից աջ է: Իսկ յոյներն ու ռուսները (վերջիններս փոխառել են յոյներից), ասում են՝ «*Յանուն Հօր և Որդւոյ և Սրբոյ Հոգւոյն*», դրա համար էլ աջից ձախ է…

— Հարցերը շատ են: Իսկ ինչո՞ւ են Հայ Եկեղեցին անուանում գրիգորեան: Հայր Դմիտրին ասում է այն պատճառով, որ հայերը քրիստոնէութիւնը ընդունել են Սուրբ Գրիգորից. արդեօք այդպէ՞ս է:

— Դու ինձ ծիծաղեցրիր քո Հայր Դմիտրիով: Այդ անուանումը հայերին յաւելագրել են ցարական Ռուսաստանում XVIII-XIX դդ., որպէսզի ցոյց տան, թէ իբր հայերը հաւատն ընդունել են Սուրբ Գրիգորից, եւ այդպիսով զրկեն առաքելական յաջորդականութիւնից: Բայց դա այդպէս չէ. հայերը Քրիստոսին ընդունել են առաքեալներից, իսկ Սուրբ Գրիգորի օրօք արդէն հօտ կար, եւ քրիստոնեաներին հալածում էին: 301 թուականին մենք քրիստոնէութիւն ենք ընդունում պետական մակարդակով: Եթէ հետեւենք Հայր Դմիտրիի տրամաբանութեանը, ապա Ռուս Եկեղեցին էլ պէտք է կոչել վլադիմիրեան. չէ՞ որ Ռուսիան մկրտել է սուրբ Վլադիմիրը:

— Բայց Դուք իրաւացի էք, Հա՛յր. մի հարց էլ կարելի՞ է:

— Այսօր՝ վերջինը. ես պէտք է ժամերգութեան նախապատրաստուեմ:

— Ուղղափա՞ռ է արդեօք Հայ Եկեղեցին:

— Իհարկէ, սակայն ուղղափառութեան տարբեր հասկացութիւններ կան: Հայ Եկեղեցին կրել եւ կրում է Եկեղեցւոյ չորս յատկութիւնները՝ **Մի, Ընդհանրական, Առաքելական, Սուրբ Եկեղեցի**. դրանք արդէն իսկ վկայում են նրա Ուղղափառութիւնը: Քաղկեդոնի Ժողովի պատճառով Եկեղեցիների բաժանումից յետոյ յոյները, որպէսզի ընդգծեն իրենց դաւանանքի ճշմարտացիութիւնը, սկսում են շեշտել «ուղղափառութիւն» բառը: Յետագայում նրանց են հետեւում ռուսները: Նրանց համար «ուղղափառութիւն»-ը լայն եւ չափազանց կարեւոր գործօն է, այսինքն՝ ուղղափառացուել է ամէն ինչ՝ քրիստոսաբանութիւնից մինչ մանրագոյն ծիսական

ձեւեր: Այդ պատճառով սոյն բառը ուղղափառների համար միայն իրենց պատկանող ինչ-որ առանձնաշնորհ է, սեփականութիւն, աւելի ճիշտ՝ նրանց համար, ովքեր հաւատարիմ են «ուղղափառութեանը»՝ այդ բառի լայն իմաստով: Այդ պատճառով էլ նրանց հասկացողութեամբ՝ ով ուղղափառ չէ, նա հերետիկոս է: Այդ պատճառով նրանց համար փրկութիւնը միայն ուղղափառութեան մէջ է: Այսինքն՝ այս ամէնը կարող է անհեթեթութեան հանգել կլիւշնիկների ձեռքին. եթէ դու այնպէս չես հագնուած, այնպէս չես խաչակնքւում, ուրեմն դու ուղղափառ չես, նշանակում է՝ պէտք է այրուես դժոխքում: Խօսել Հայ Եկեղեցու «ուղղափառութեան» մասին այն իմաստով, ինչպէս դա ըմբռնում են իրենք՝ ուղղափառները, անհնար է, եւ դա փաստ է: Մենք ունենք մեր պատմութիւնը, մեր մշակոյթը, մեր ծէսերն ու աւանդութիւնները, սակայն ամենակարեւորը մեր քրիստոսաբանութիւնն է: Եւ այս ամէնով մեր ուղղափառութիւնը տարբերւում է ուղղափառ քաղկեդոնական եկեղեցիներից: Բայց դա մեզ չի խանգարում նրանց ընդունել այնպիսին, ինչպիսին որ են: Փրկութիւնը Տիրոջ մէջ է եւ Ընդհանրական Եկեղեցւոյ մէջ, եւ ոչ թէ քրիստոնէութեան նեղ ըմբռնման մէջ…

— Իսկ ի՞նչ է կլիւշնիկութիւնը:

— Կլիւշնիկութիւնը եկեղեցու գրկում աղանդաւորութիւն է՝ իր միօրինակ մոլորութիւններով: Բոլոր առաքելական եկեղեցիները հերետիկոսական են, եւ նրանցից ոչ մէկը չի փրկուելու, բացի ուղղափառներից, իսկ ուղղափառներից էլ՝ միայն իրենք: Հայր Դմիտրին հենց այդ մտածողութեամբ էլ ապրում է: Այս ամէնից բացի, անգամ ՌՈւԵ-ի Պատրիարքի դէմ է հանդէս եկել այն պատճառով, որ նախորդ տարի՝ մարտ ամսին, Հայաստան է այցելել եւ Սուրբ Էջմիածնի տաճարում երկրպագել է Իջման Խորանին եւ շփուել Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ: Հաւանաբար երկար են նրան հանդուրժել, բայց յետոյ արգելեցին քահանայագործել, քանի որ հաւատացեալներին պառակտման կոչ էր անում: Սակայն նա խելքի է եկել, եւ ահա մի քանի ամիս է, որ վերականգնուել է քահանայագործութեան մէջ: Անգամ Հայր Վադիմը մինչ վերջերս նրա երկրպագուն էր, բայց հիմա լրջօրէն չի վերաբերւում նրան…

— Աստուա՛ծ իմ, ո՞ւր եմ ընկել:

— Ես կարծում եմ, որ դու պէտք է անցնէիր այս ամէնը, որպէսզի ամէն ինչ հասկանայիր. չէ՞ որ քեզ ուղղորդում է նախնիներիդ խաչը:

— Եթէ նրանց չհանդիպէի, հաւանաբար այդպէս էլ Երուսաղէմ չընկնէի…

— Ահա, Վարդա՛ն, վերցրու՛ ռուսերէն այս աղօթագիրքը, նուիրում եմ: Կարելի է ասել, որ այս գիրքը հոգեւոր դուդուկ է: Գիտե՞ս, թէ ինչ է դուդուկը:

— Իսկ ինչո՞ւ չգիտեմ. յաճախ եմ լսում:

— Ահա՛, սա Սուրբ Նարեկացու աղօթագիրքն է՝ «*Մատեան ողբերգութեան*» կամ ինչպէս այն անուանում են հաւատացեալները՝ «*Նարեկ*»՝ սրտի խորքից բխող աղօթքներ: Երբեմն մենք աղօթքի բառեր չենք գտնում, իսկ հոգին աղաղակում է իր բառերով: Ահա՛, Սուրբ Նարեկացին հոգու աղաղակը փոխադրել է հասարակ խօսակցական լեզուի: Այնպէս որ գնա՛ եւ կարդա՛:

— Տէ՛րը փրկի. ես էլ հենց աղօթագիրք չունեմ. մոռացել եմ հիւրանոցում: Ի դէպ, Հա՛յր Վարդան, իսկ ինչպէ՞ս կարող եմ հիւրանոցից վերցնել իրերս:

— Մի բան կը մտածենք: Աստուա՛ծ քեզ պահապան:

— Իսկ ես կարո՞ղ եմ գնալ Սուրբ Վարդան եկեղեցի:

— Քեզ կ'ուղեկցի Սարգիսը: Աղօթի՛ր նաեւ ինձ համար:

Հինգ րոպէից Վարդանն արդէն Սուրբ Վարդան եկեղեցում էր եւ կարդում էր Սուրբ Նարեկացու աղօթագիրքը.

Սրտիս դառնահեծ հառաչանքների
Վայն ու ողբաձայն աղաղակները
Վերընծայում եմ քեզ, ո՛վ գաղտնատես.
Եւ իմ սասանուած մտքի ճենճերող
Իղձերի պտուղ նուէրն այս դրած
Անձս տոչորող թախծի կրակին՝
Կամքիս բուրվառով առաքում եմ քեզ:
Սակայն կը նայես նրան, ո՛վ գթած,
Ու կը հոտոտես աւելի սիրով,
Քան պատարագն այն բոլորանուէր,
Որ մատուցւում էր ծխով թանձրաբարդ.

Ընդունի՛ր հիւսուածքն իմ այս կարճառօտ ու սեղմ խօսքերի
Բարեհաճօրէն, ոչ թէ բարկութեամբ:
Մտքիս խոհածուփ սենեակի խորքից
Սրտիս անձկութեամբ ելած կամաւոր նուէրն իմ այս թող,
Որպէս բանական զոհաբերութիւն,
Ողջակիզուելով պարարտակուտակ ճարպիս զօրութեամբ,
Բարձրանայ ու քեզ հասնի անյապաղ:
Աղերսախառն այս դափի մտնելն իմ քեզ հետ, ո՛վ հզօր,
Թող քեզ փաղփկալի չթուայ յանկարծ,
Ինչպէս ձեռքերի կարկառումն ի վեր
Ամբարշտացած Յակոբի ցեղի,
Ըստ մարգարէի ամբաստանութեան,
Կամ թէ սաղմոսի առակում յիշուած
Անիրաւութիւնն այն Բաբելոնի.
Ընդունելի թող լինի կամքին քո,
Ինչպէս Սելովի խնկաբուրումն այն՝ Դաւթի խորանում,
Կերտուած ի հանգիստ սուրբ տապանակի,
Որն իր վերստին զերեդարձութեամբ
Ասես նաեւ իմ կորուսեալ հոգու
Վերագտնումն է խորհրդանշել:

Վարդանը տարուել էր կարդալով. աղօթքի բառերը հնչում էին ասես դուդուկի մեղեդիներ, անհնար էր լաց չլինել… Նա չնկատեց էլ, թէ ինչպէս թռան համարեայ վեց ժամերը… Նրան կրկին կանչեց Սարգիսը…

— Վարդա՛ն, Հա՛յր Վարդանն ասաց, որ եթէ ուժ ունես, քեզ հիւրանոց տանեմ՝ իրերիդ հետեւից…

— Կարող եմ գնալ: Տէ՛րը փրկի:

— Ժամը տասներկուսին մօտ Հայր Վարդանը կը հանդիպի քեզ վանքում:

Անցան շուկայով եւ դուրս եկան հին քաղաքի՝ Եաֆայի դարպասների մօտ: Հատեցին Մամիլա փողոցը, կողքերին՝ խանութներ եւ սրճարաններ, եւ ինչպէս Սարգիսն ասաց, հայաստանցի ուխտաւորները այդ փողոցը կոչում են Հիւսի-

սային պողոտայ, ինչպէս Երեւանում է… Սարգիսը պատմում էր Երուսաղէմում բնակուող հայերի կեանքի, յոյների հետ բախումների մասին, այն մասին, թէ ինչպէս կրօնաւոր հրեաները թքում են պարեզօտով քրիստոնեաների վրայ… Այդպէս հասան հիւրանոց… Տէր Դանիիլը սենեակում չէր. նրանք գնացել էին Գեթսեմանի՝ Աստուածածնի Գերեզմանի տաճար՝ պատարագի: Վարդանը հաւաքեց իրերը եւ գրութիւն թողեց, որ ինքը լաւ է, բնակութիւն է հաստատել Սրբոց Հրեշտակապետաց հայկական վանքում, եւ իրեն ցերեկուայ ժամը մէկից յետոյ միշտ կարելի է գտնել Տիրոջ Գերեզմանի տաճարում…

Վերադառնում էին նոյն ճանապարհով… Սրբոց Յակոբեանց տաճարը բաց էր, բայց Վարդանը որոշեց յետոյ մտնել, որովհետեւ այլեւս ուժ չունէր: Սենեակում շորերով պառկելուն պէս նա իսկոյն քնեց …

Ժամը տասներկուսին նրան արթնացրին ուխտաւորները. ճաշի էին կանչում… Նրանցից իմացաւ Հայ Եկեղեցու արարողութիւնների ծրագիրը: Երկուսն անց կէսին Սրբոց Յակոբեանց տաճարում պէտք է կատարուէր Ոտնլուայի կարգը, չորս անց կէսին՝ եկեղեցական թափօր Սրբոց Հրեշտակապետաց վանքից մինչեւ Սուրբ Փրկիչ վանք եւ դէպի ետ: Երեկոյեան եօթին Սրբոց Յակոբեանց տաճարում՝ Խաւարում… Ժամը մէկին մօտ նա Հայր Վարդանի եւ սարկաւագների հետ արդէն Երկրորդ Գողգոթա եկեղեցում էր… Ժամերգութիւն էր… Ուխտաւորների պատճառով աղմուկը շատ էր, որը, սակայն, չխանգարեց հայ վանականների աղօթքին… Ժամերգութեան ժամանակ Վարդանը եկեղեցու պատին խճանկար նկատեց: Յետոյ իմացաւ, որ դա 451 թ. Աւարայրի ճակատամարտի պատկերն է: Կենտրոնում Սբ. Վարդանն էր՝ ձի հեծած… Վարդանը որոշեց մնալ այստեղ մինչ ժամը չորսը, յետոյ ինքը վանք կը գնայ՝ մասնակցելու եկեղեցական թափօրին… Հայր Վարդանը օրհնեց եւ գնաց… Վարդանը մնաց՝ «Նարեկը» ձեռքին…

Սրբոց Հրեշտակապետաց վանքում շատ հայ ուխտաւորներ կային Հայաստանից, Ամերիկայից, Կանադայից, Կոստանդնուպոլսից, Ռուսաստանից, նոյնիսկ Վրաստանից… Հնարաւոր չէր եկեղեցի թափանցել… Եկեղեցական թափօրը սկսուեց եկեղեցում: Հոգեւորականութիւնը եւ ճեմարանականները կանգնած էին երկու շարքով, բոլորը, նաեւ ուխտաւորները

մոմեր ունէին ձեռքներին: Չափազանց գեղեցիկ էր: Թափորապետն էր Տիրոջ Գերեզմանի փեսուչ-վանահայր Հայր Սամուէլը: Դուրս եկան հրաշագործ ձիթենու մօտ, յետոյ ուղղուեցին Սուրբ Փրկիչ վանք, որը կառուցուել է քահանայապետ Կայիափայի տան տեղում: Այնտեղ է գտնւում քարը, որով ծածկել են Տիրոջ Գերեզմանը... Այսօր այն խորան է ծառայում վանքի եկեղեցում: Վանքի տարածքում հայկական գերեզմանատուն կայ: Վարդանի սիրտը թրթռում էր նոյն կերպ, ինչպէս՝ Սուրբ Գրիգոր եկեղեցում: Նա չէր հասկանում, թէ ինչ է իր հետ կատարւում. ոտքերը տանում էին նրան գերեզմանատուն: Նա ինչ-որ բան էր փնտռում, բայց չէր հասկանում, թէ յատկապէս ինչ, ինչ-որ մէկը կանչում էր նրան... Նա թափառում էր գերեզմանատանով՝ զննելով իրեն ծանօթ տառերով շիրմաքարերը...

Եկեղեցական թափօրը վերադառնում էր, Վարդանը հասաւ նրան Սուրբ Փրկիչ վանքի մուտքից դուրս գալիս...

Սրբոց Հրեշտակապետաց վանք վերադարձան երեկոյեան վեցին... Վանքում բնակուող ուխտաւորներն ընթրելու էին պատրաստւում, որպէսզի եօթին գնան Սրբոց Յակոբեանց՝ Խաւարման կարգին...

Վարդանն ապշած էր տեսածից: Սրբոց Յակոբեանց տաճարում առեղծուածային մթութիւն էր տիրում՝ մի քանի տասնեակ կանթեղների լոյսով լցուած: Ժողովուրդը լիքն էր, խորանը փակուած էր վարագոյրով, որի առջեւում Քրիստոսի պատկերով վիթխարի սրբապատկեր կար, նրանից աջ՝ մեծ աշտանակ՝ տասներեք մոմերով, որոնցից մէկը՝ եզրինը, սեւ էր եւ չէր վառւում. մոմերը՝ ի դէմս Քրիստոսի եւ տասներկու առաքյալների, սեւը Յուդան էր... Հոգեւորականը, սրբապատկերի առջեւում կանգնած, ինչ-որ բան էր ընթերցում՝ հաւանաբար սաղմոսներ... Քիչ անց սկսուեց ժամերգութիւնը, իսկ Վարդանը կանգնեց քահանաների եւ ճեմարանականների ետեւում՝ փայտեայ մեծ դրան կողքին... Երգեր, աղօթքներ, Սուրբ Գրքի, Աւետարանի ընթերցում, եւ հերթական Աւետարանն ընթերցելուց յետոյ երկու մոմ էին հանգցնում... Շուտով վերջինը, որ մէջտեղում էր, տարան վարագոյրի ետեւը եւ սկսեցին յանգցնել եկեղեցու բոլոր մոմերը, կանթեղները: Վրայ հասաւ Խաւարման մութը: Բոլորը սկսեցին երգել Տիրոջը փառաբանող երգը, որի ժամանակ սարկաւագը քայլում էր տաճարով եւ խնկարկում՝ վառուող մոմը ձեռքին... Ինչ-որ մէկը խորա-

նից երգում էր սրտաճմլիկ ձայնով, Վարդանի շուրջը լալիս էին: Յետոյ նա իմացաւ, որ դա Քրիստոսի եւ Աստուածածնի երկխօսութիւնն էր… Քիչ անց մթութեան մէջ եպիսկոպոսնե-րից մէկը փոքրիկ պատշգամբից սկսեց քարոզը, որը տեւեց մօտ տասնհինգ րոպէ…

Վարդանը լեզուն չէր հասկանում, բայց նրան ամէն ինչ հարազատ էր, եւ նա այնպիսի զգացողութիւն ունէր, որ այդ երգեցողութիւնը համահունչ է հոգու խորքից հնչող երգեցողու-թեանը…

«*Խաչի քո, Քրիստո՛ս, երկիր պագանեմք*» երգեցողու-թեան ներքոյ (ուխտաւորներից մէկը Վարդանի համար թարգմանեց բառերը) եպիսկոպոսներից մէկը սկսեց խնկարկել տաճարով, իսկ հոգեւորականութիւնը եւ ճեմարանականները գնացին՝ Կենարար Խաչի մասունքով Խաչին երկրպագելու… Ժամերգութիւնն աւարտուեց կէսգիշերին… Վարդանը Սրբոց Հրեշտակապետաց վանքի ուխտաւորների հետ ուղղուեց իր սենեակ: Վաղը նրանք մասնակցելու էին երկու ժամերգու-թեան…

Վարդանն արթնացաւ առաւօտեան տասին… Չէր համբերում, թէ երբ է հանդիպելու Հայր Վարդանին… Մի կողմից՝ նա դեռ հարցեր ունէր, իսկ միւս կողմից՝ ուզում էր կիսել իր տպաւորութիւնները…

Վանքի բակում հրաշագործ ծառի տակ զրուցում էին մի քանի ուխտաւորներ… Գրեթէ բոլորը ռուսախօս էին եւ հայերէն չէին հասկանում: Վարդանը միացաւ նրանց: Համարեայ իւրաքանչիւրն ունէր նոյնականութեան այնպիսի խնդիրներ, ինչպիսին՝ իրենը, անգամ երիտասարդ մի զոյգ կար, որն ուղղափառութիւն էր ընդունել, բայց նրանց չէին վերամկրտել, այլ պարզապէս նրանք զղջացել եւ խոստովանել էին միաբնա-կութիւն հերետիկոսութիւնը: Հայ Երուսաղէմը եւ Հայր Վար-դանը նրանց բոլորին օգնել էին գտնել իրենց իրական «Ես»-ը: Վարդանն ամաչում էր խոստովանել, որ վերամկրտուել է՝ նոր անուն ընդունելով… Բայց, այնուամենայնիւ, համարձա-կութիւն ձեռք բերեց եւ ամէն ինչ պատմեց… Նրա պատմու-թիւնը հայրական տունը փնտռող մոլորուած որդու ինչ-որ մի խոստովանութիւն էր…

Կարճ ժամանակից մօտեցաւ Հայր Վարդանը եւ զգու-շացրեց, որ Խաչելութեան կարգը կը կատարուի Յարութեան

փաճարում, այնպէս որ բոլորը 12:30-ին պէտք է լինեն Սրբոց Յակոբեանց վանքի մուտքի մօտ…

Վարդանն այլեւս չէր կասկածում հայերի ուղղափառութեանը, բայց եւ ուզում էր որոշ մանրամասներ ճշտել, որպէսզի իմանայ ճիշտ պատասխանները…

— Հա՛յր Վարդան, իսկ կարելի՞ է հարցնել. ինձ թւում է, որ մեզանից շատերին են յուզում այս հարցերը…

— Հարցրէ՛ք:

— Ինչո՞ւ են մինչեւ հիմա Հայ Եկեղեցին անուանում միաբնակ: Մենք գիտենք, որ մեր Եկեղեցին արդէն երկար հարիւրամեակներ մեղադրում են միաբնակութեան համար, այսինքն՝ համարում են Եւտիքէսի հերետիկոսութեան հետեւորդ: Ինչո՞ւ:

— Սիրելինե՛րս, դա ընդամէնը քաղաքականութիւն է, որը գալիս է բաժանման առաջին ժամանակներից: Հայ Եկեղեցու՝ Քաղկեդոնը չընդունելու պատճառը քաղաքական շարժառիթները չեն, յունարէն չիմանալը չէ, ինչպէս որոշ պատմաբաններ եւ աստուածաբաններ ցանկանում են վերագրել հայերին: Քաղկեդոնը չընդունելն առնչւում է նրա՝ առաքելական աւանդութիւններին չհամապատասխանող իրարամերժ հասկացութիւններով եւ քրիստոսաբանական դաւանութիւններով: Հայ Եկեղեցին նեստորականութեան հետ միասին նզովում է եւ Եւտիքէսին՝ իր միաբնակ մոլորութիւններով՝ միաժամանակ հետեւելով առաջին երեք Տիեզերական Ժողովների հենց ուղղափառ քրիստոսաբանութեան ոգուն եւ էութեանը, անշեղօրէն եւ անսասան պահպանելով մեր Տէր Յիսուս Քրիստոսի միութիւնը: Իսկ բիւզանդացիները իրենք էլ գիտէին, թէ ինչ շիլաշփոթ են ստեղծել, սակայն չկարողացան մարսել այն, եւ որպէսզի «խիղճը հանգստացնեն» սկսեցին համոզել հայերին, որ մենք ընդունենք Քաղկեդոնը, չյաջողուեց… Յետոյ՝ ուժով, չյաջողուեց… Եւ ի՞նչ էր մնում անել. որպէսզի ապացուցեն Ժողովի իսկութիւնը, հաստատեցին, որ Ժողովը պայքարում էր միաբնակութիւն հերետիկոսութեան դէմ, որը չկար էլ, աւելի ճիշտ՝ այն այդպէս էլ փարածում չգտաւ, իսկ ով չընդունեց այդ Ժողովը, բնականաբար դարձաւ միաբնակ: Իսկ ռուսները քրիստոնէութիւն ընդունել են յոյներից՝ իրերի նրանց իսկ հասկացողութեամբ, ընդունում են նաեւ հայերի մասին սուտը, որը մինչ օրս էլ փարածում են… Իսկ եթէ պարզուի, որ

նրանց հայրերն այսքան դարեր սխալուել են, ապա ի՞նչ: Սփի վրայ հիմնուած քաղաքականութիւնը…

— Իսկ կարելի՞ է ասել, որ հայերը իրենց նեղ ազգային հետաքրքրութիւնների պատճառով ժամանակի ընթացքում յանգել են ինքնամեկուսացման եւ իրենց հակադրում են միւս բոլորին, որպէսզի ընդգծեն իրենց հեռաւորութիւնը մնացեալ քրիստոնեայ աշխարհից:

— Եթէ մնացեալ քրիստոնեայ աշխարհ ասելով՝ նկատի ունենանք Հռոմը եւ կարծիքների մէջ փափանուող Կոստանդնուպոլիսը, ապա տեղին է նշել, որ քրիստոսաբանական վէճերի ժամանակ Հինարեւելեան Եկեղեցիների ճնշող մեծամասնութիւնը փարածքային տեղական եկեղեցիներ էին, եւ այդ պատճառով էլ Հինարեւելեան Եկեղեցիների կողմից Քաղկեդոնի եւ յետագայ Ժողովները չընդունելը դրանք զրկել է Տիեզերական նշանակութիւնից: Հայ Եկեղեցին մասնակցել է ընդամէնը առաջին՝ Նիկիայի Տիեզերական Ժողովին, սակայն դա նրան չի խանգարել ընդունելու նաեւ յետագայ երկու Տիեզերական Ժողովների որոշումները: Քանի որ Տիեզերական Ժողովն այն Ժողովն է, որը պէտք է ճանաչեն եւ ընդունեն Տիեզերական բոլոր Եկեղեցիները, եւ ոչ թէ միայն պապն ու կեսարը: Իսկ եթէ մէկ կամ երկու տեղական եկեղեցիներ իրենց յայտարարում են «Տիեզերական Եկեղեցի», ապա դա նրանց հիւանդագին ինքնահաւանութիւնն է: Այդ դէպքում աւելի ճիշտ կը լինի ասել, որ հենց Հռոմը եւԿոստանդնուպոլիսն են յանգել ինքնամեկուսացման եւ իրենց հակադրում են միւս բոլորին: Պարզապէս նրանք շատ են…

Սակայն պատմութիւնը փաստում է, որ Հռոմի եւ Կոստանդնուպոլսի «*կայսերական քաղաքականութիւնը*» մի կողմից՝ իրենց իշխանութեան ներքոյ բնակուող «*հերետիկոս-միաբնակներին*» քաղաքացիական իրաւունքներից զրկելու եւ անգամ մահապատժի սպառնալիքով հարկադրում է անցնել կայսրութեան «*պաշտօնական քաղկեդոնական դաւանանքի*», միւս կողմից՝ տարածում է այդ դաւանանքը ինչպէս ոչ քրիստոնեայ, այնպէս էլ քրիստոնեայ ժողովուրդների միջավայրում: Հենց այդ քաղաքականութեան շնորհիւ՝ Հռոմը եւ Կոստանդնուպոլիսը, որոնք միմեանց միջեւ չէին կարողանում բաժանել Տիեզերքը, ստուարացնում են ինչպէս իրենց հօտը նաեւ հայերի հաշուին, այնպէս էլ հոգեւոր-քաղաքական ազդեցութեան տարածքը նաեւ ի հաշիւ Հայաստանի: Ինչպէս

աւում է, աշխարհիս հզօրների առջեւ, միշտ էլ թոյլերն են մեղաւոր… Դրա համար էլ զարմանալի կը լինէր, եթէ այսօր չլինէին հայ քաղկեդոնականներ, քանի որ Հռոմի եւ Կոստանդնուպոլսի «*կայսերական քաղաքականութիւնը*» այսօր էլ արդիական է ինչպէս Ուղղափառ, այնպէս էլ Կաթոլիկ Եկեղեցիների համար…

— Իսկ ինչո՞ւ են հայերն ընդունում Քաղկեդոնը ու ուրանում իրենց հաւատը:

— Այսօր հայ քաղկեդոնականները նրանք են, ովքեր կա՛մ ծնուել են քաղկեդոնական միջավայրում (մշակոյթ եւ աւանդոյթներ), քանի որ նրանց նախնիները քաղկեդոնական են դարձել «շնորհիւ կայսերական քաղաքականութեան», կա՛մ էլ, քանի որ բնակութեան վայրում հայկական եկեղեցի չի եղել, մանուկ հասակում մկրտուել եւ յետագայում սնուել են քաղկեդոնական աւանդութիւններով: Նշեմ, որ 1915 թուականի Հայոց Եղեռնից յետոյ, Հայաստանի սահմաններից դուրս ձեւաւորւում է մեծ սփիւռք, որտեղ չկային ո՛չ հայկական եւ ո՛չ էլ Հինարեւելեան եկեղեցիներ, Հայ Եկեղեցու հովուապետերը օրհնում էին իրենց հօտը՝ սնուելու քաղկեդոնական եկեղեցիներում, որպէսզի չզրկուեն Սուրբ Խորհուրդներից:

Հետսովետական ժամանակաշրջանում ուղղափառ համայնքը համալրւում էր ինչպէս ի հաշիւ շատ ռուսախօս հայերի, որոնք մկրտուել էին մեր Եկեղեցում, սակայն չգիտէին իրենց պատմութիւնը, էլ չեմ ասում իրենց Եկեղեցու քրիստոսաբանութիւնը: Այդպիսիններին ուղղափառ քարոզիչները ուղղափառ էին դարձնում միաբնակութիւն հերետիկոսութիւնը ապաշխարելու միջոցով կամ էլ վերամկրտութեամբ: Սակայն մինչ այդ նրանց դարձի էին նախապատրաստում Մաքսիմ Գրեկի «*Ընդդէմ հայկական չարադաւանութեան*» փիպի փարբեր սպայօղ պատմութիւններով… Ինձ թւում է, որ այս ամէնը ձեզանից շատերին է ծանօթ:

— Այո՛, Հա՛յր, դրա համար էլ հարցնում ենք:

— Եւ «շնորհիւ» այդ սպայօղ պատմութիւնների, որոնք իրենց հերթին հիմնաւորւում էին ամէն տեսակի ուղղափառ հրաշքներով, հոգեւես ծերունիների՝ հերետիկոսների մասին զրոյցներով, սուրբ կրակի յայտնուելու պատմութիւններով, դարեր շարունակ եւ մինչ օրս ինչպէս ռուսախօս հայերի, այնպէս էլ ուղղափառ հաւատացեալների միջավայրում ստեղծ-

ւում եւ ամրապնդւում է Հայ Առաքելական Եկեղեցու մասին սուտ կարծիքը…

— Ուրեմն նաեւ սուրբ կրա՞կն է սուտ պատմութիւն:

— Աւելի ճիշտ՝ նրա մասին պատմութիւնները, որոնք իբր թէ հաստատում են ուղղափառութեան ճշմարտացիութիւնը եւ միւսների հերետիկոսութիւնը… Սոյն կրակը դարձել է ուղղափառների սեփականութիւնը: Կրակը բերւում է ի ապացոյց ուղղափառութեան, այսինքն՝ հենց միայն ուղղափառի աղօթքն է այդ կրակն ի վերուստ իջեցնում: Կրակն ապացուցում է, որ միայն ուղղափառների օրացոյցն է ճըշմարիտ, քանի որ միայն այդ օրն է յայտնւում կրակը: Այդ պատճառով էլ ուղղափառների համար այն այդքան կարեւոր է, քանի որ նրանց ուղղափառութիւնը հաստատւում է կրակով կամ հրաշքներով: Իսկ ի՞նչ է ուսուցանում մեզ Սուրբ Ռսկեբերանը: Նա ասում է, որ աւելի լաւ է՝ վարժեցնենք առաքինութեան, որովհետեւ դա է մեծ հարստութիւնը եւ մեծ հրաշքը. նշանները գրաւում էին առաւել պղէտներին, իսկ առաւել խելամիտներին՝ մարգարէութիւնները եւ ուսմունքը: Որովհետեւ նրանք, ովքեր գերուած էին ուսմունքով, անսասան էին նշաններով հրապուրուողներից: Այնուհետեւ, իրենց ուղղափառութիւնը հրաշքներով ապացուցելն արդէն մեր խնդիրը չէ, այլ ուղղափառ հոգեւորականութեան, որը հարկ է համարում այդպէս հաւատ սերմանել իր հաւատացեալների սրտերում, որպէսզի նրանց պահի ուղղափառութեան գրկում: Սակայն հարցն այլ է. ինչո՞ւ է դա արւում՝ ի հաշիւ հայերի մասին սուտ յօրինելու: Աստուա՛ծ նրանց հետ. խաբում են իրենց հաւատացեալներին, որ կրակն իջնում է երկնքից, բայց ինչո՞ւ են ասում, որ տաճարում հայեր չեն լինում, կամ հայերը չեն մասնակցում Լուսաւորեայի արարողութեանը, կամ հայ Պատրիարքը գնում-վերցնում է  կրակը յոյն Պատրիարքից, կամ հայերը չեն մտնում Գերեզման, կամ, կամ… Չի կարելի ստի հաշուին ապացուցել ճշմարտութիւնդ: Գոյութիւն ունի Ստատուս Քվո, որի մէջ ամէն ինչ րոպէ առ րոպէ գրանցուած է, թէ ով որտեղ է կանգնում եւ ուր է գնում: Այնտեղ սեւով սպիտակին գրուած է, որ հայ վարդապետը յոյն Պատրիարքի հետ մտնում է Բոլորաշէն եւ ներսում միասին ծնկի են գալիս Գերեզմանի քարի առջեւ… Սակայն Աստծուն ապաւինողները չեն ամաչի…

— Ուրեմն այսօր չկա՞յ կրակի իջման հրաշք:

— Չկայ. Գերեզմանի քարին դրուած է երկու վառւող կանթեղ. դրանցից մէկը ներս է բերում յոյն վանահայրը, որն էլ այդ կանթեղները վառում է կրակայրիչով, իսկ յետոյ արդէն մտնում են Պատրիարքն ու վարդապետը: Նրանք անգամ աղօթագրքեր ունեն. մերն իր հետ է վերցնում, իսկ յոյնինը դրուած է Գերեզմանի քարին: Նրա մէջ հրաշքի խնդրանքի մասին ոչ մի բառ չկայ… Ահա մի հետաքրքիր պահ եւս… Ներսում շատ մութ է, որովհետեւ բոլոր կանթեղները մարուած են: Հարց է ծագում՝ ինչպէ՞ս են նրանք կարդում, եթէ այնտեղ մութ է:

Մեզ համար դա Լոյսի արարողութիւն է: Սակայն չի կարելի ասել, որ հրաշք ընդհանրապէս չի եղել: Երբ այդ հրաշքը կատարւում էր, ապա ականատեսները երկուսը չէին, այլ փաճարում բոլոր կանգնածները…

— Օրինակներ կա՞ն:

— Սուրբ կրակին առնչւող աւանդութիւնը գալիս է Սուրբ Գրիգոր Լուսաւորչի ժամանակներից: Նա գալիս է Երուսաղէմ եւ իրեն անարժան համարելով մուտք գործելու Գերեզման՝ մտնում է քարայրներ, որտեղ երկար աղօթում է: Այսօր այդ վայրում, որտեղ նա աղօթել է Տիրոջ Գերեզմանի Տաճարում, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ հայկական եկեղեցին է: Դուք այնտեղ եղել էք. շատերն այդ եկեղեցին կոչում են Սուրբ Հեղինէ…

Կարճ ժամանակ անց՝ շաբաթ օրը՝ Զատկից մէկ օր առաջ, նա մտնում է Գերեզման, որտեղ հրաշքով վառւում են բոլոր մոմերը եւ կանթեղները: Այնուհետեւ նա խնդրում է Տիրոջը, որպէսզի Նա Զատկի օրերին, ի փառս Իր Յարութեան, անտեսանելի լոյսով վառի կանթեղները: Խորհրդանշան, որ մինչ օրս գոյություն ունի, եւ տեսանելի է միայն հաւատքի աչքով: Տէրը լսում է նրա աղօթքները: Եւ դրա համար Սուրբ Գրիգորը Լուսաւորիչ է կոչւում ոչ միայն իբրեւ հայ ժողովրդի լուսաւորիչ, այլեւ Տիրոջ Գերեզմանի մօտ կատարուած հրաշքի պատճառով…

Իսկ երբ վառւում են կանթեղները, Սուրբ Գրիգորը երգում է «**Լոյս Զուարթ**» հոգեւոր երգը, որը մեզանում երգում են ամէն շաբաթօրեայ երեկոյեան ժամերգութեան ժամանակ, եւ այդ ժամանակ խորանին վառւում են բոլոր մոմերը: Այդ պատճառով անգամ Աւագ Շաբաթուայ Պատարագից յետոյ, հաւատացեալներն իրենց մոմերը վառում են խորանի մոմերից

կամ կանթեղներից եւ փանում են փուն՝ հաւապալով այդ լոյսի շնորհալիութեանը. հրաշքներ էլ են լինում: Այլ դէպքերի եւ սեանն առնչւող պապմութեան մասին կարող էք կարդալ իմ գրքում…

— Այո՛, բոլորս կարդացել ենք:

— Դէ՛, լաւ է:

— Իսկ ինչպէ՞ս վերաբերուել սուրբ կրակին:

— Երբեմն այս օրերին, վազելով կրակի եփեւից, մոռանում ենք ամենակարեւորը, որին նախապապրասպւում ենք Մեծ Պահքի այս օրերին: Մոռանում ենք մեր Տէր Աստուած Յիսուս Քրիստոսի Հրաշափառ Յարութիւնը: Մոռանում ենք, որ Նա մահով մահը ոպնակոխեց, որ Նա յարութիւն առաւ եւ հենց Յարութեամբ մեզ յաւիպենական կեանք պարգեւեց: Դրա համար էլ, սիրելինե՛րս, թող այդ կրակը, կամ, ինչպէս մենք ենք ասում, Լոյսը Քրիստոսի Յարութեան նախապիպը լինի, որպէսզի յեփոյ գաք եւ մասնակցէք Պապարագին եւ հաղորդութիւն սպանաք: Այսինքն՝ սպասենք ոչ թէ կրակը դուրս բերելուն, այլ Աւագ Շաբաթուայ Պապարագին:

— Ամէ՛ն: Հա՛յր Վարդան, ի՞նչ կասէք Երեքսրբեանի մասին: Թէ չէ ասում են՝ քանի որ հայերը միաբնակ են, ապա եւ աւելացնում են, որ «*խաչեցար վասն մեր*»:

— Իբրեւ ապացոյց են յիշապակում այն փղային, որը, ինչպէս յիշում եմ, երկրաշարժի ժամանակ երկինք էր բարձրացել եւ լսել էր, թէ ինչպէս են հրեշփակները երգում Երեքսրբեան՝ ուղղուած Երրորդութեանը: Իսկ երբ երգում են երկրի վրայ, ապա երկրաշարժն էլ դադարում է… Դրա համար էլ նրանք երգում են՝ դիմելով Սուրբ Երրորդութեանը: Նրանք կարծում են, որ եթէ մենք Երեքսրբեանին յաւելում ենք՝ «*խաչեցար վասն մեր*», ապա մենք դրանով խաչ ենք հանում ողջ Երրորդութիւնը: Սակայն դա անհեթեթութիւն է: Ինչպէս որ Կոյս Մարիամին անուանելով Աստուածածին՝ կարծում ենք, որ Նա է ծնել Երրորդութեանը…

— Իսկ մենք ինչպէ՞ս ենք բացապրում:

— Հռոմի Նեկփարիոս Պապրիարքն ասում էր, որ մեր Տիրոջ Մարմինը վէրքերի պապճառով անհնար է լինում Խաչից հանել: Այդ ժամանակ Յովսէփ Արիմաթիացին, խաչի առջեւ ձեռքերը փարածելով, ասաց. «*Սուրբ Աստուած, Սուրբ և Հզօր, Սուրբ և Անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ*»: Եւ երբ նա կրկնում է երեք անգամ, Տիրոջ մարմինը Խաչից սահում-

իջնում է Յովսէփի ձեռքերի մէջ: Եփեսոսի Ժողովի ժամանակ Սուրբ Կիւրեղ Աղեքսանդրիացին Երեքսրբեանին յաւելում է՝ «*խաչեցար վասն մեր*»: Եւ բացատրում է այսպէս, որ Եսային տեսնում է Քրիստոսին, որ նստած էր իր գահին, այսինքն՝ Խաչը, եւ Սերովբէները երգում էին Երեքսրբեան: Եւ իբրեւ ականատես նշում է Յովհաննէս Աւետարանչին. «*Եսային այս ասաց, որովհետեւ տեսաւ նրա փառքը և խօսեց նրա մասին*»: Այդ պատճառով Սուրբ Կիւրեղի խորհրդով մենք Երեքսրբեանով դիմում ենք Որդուն: Իսկ Սուրբ Գրիգոր Աստուածաբանն ասում էր. «...*Աստուած խաչեալ, արեգակն խաւարեալ*»: Իսկ Սուրբ Բարսեղ Մեծն ասում էր. «...*զԱստուած խաչեալ տեսանելով, և նոյն ընդ աւազակին*»: Պօղոս առաքեալն էլ ասում էր. «...*որովհետեւ, եթէ ճանաչուած լինէր, արդարև փառքի Տիրոջը չէին խաչի*»: Եւ մենք՝ հայերս, հետեւելով մեր ուղղափառ հայրերին, ասում ենք՝ «*Սուրբ Աստուած, Սուրբ և Հզօր, Սուրբ և Անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ*», այսինքն՝ ուզում ենք ասել՝ քանի որ հրեաները սպանեցին Քեզ՝ ինչպէս յանցաւոր մարդու, Դու Սուրբ ես եւ Աստուած, եւ ոչ թէ պարզ մարդ: Եւ որովհետեւ կամքովդ նուաստացար եւ Քեզ յանձնեցիր խաչողների ձեռքը, դու Սուրբ ես եւ Հզօր: Եւ քանի որ Դու մարմնով մեռար, եւ գերեզմանի մեջ դրուեցիր, Դու Սուրբ ես եւ Անմահ, եւ Անապական: Եւ Դու, որ կամքով խաչուեցիր մեզ համար, նոյն սիրով ողորմի՛ր մեզ: Եւ այդպէս միշտ յիշում ենք Նրա մեծագոյն բարերարութիւնները, Ով խաչուել է մեզ համար… Այնպէս որ խաչը Տիրոջ փառքն ու պսակն է, եւ այն, ինչով պարծենում են բոլոր քրիստոնեաները, եւ ոչ թէ նախատինք ու պարսաւանք:

«...*և նայեցէ՛ք Սողոմոն արքային ու նրա պսակին, որով մայրը նրա հարսանիքի օրը՝ իր որդու սրտի ուրախութեան օրը պսակեց նրան*» (Երգ. Գ, 11), «...*և դու այժմ հիմա փառաւորի՛ր ինձ, Հա՛յր...*» (Յովհ. ԺԷ, 5), նկատի ունէր խաչը. «*Սակայն քա՛ւ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչով*» (Գաղ. Զ, 14):

Եւ այսպէս մենք ամբողջ օրը երեք անգամ Երեքսրբեան ենք ասում՝ մեր հոգին, միտքը եւ մարմինը լուսաւորելու համար: Նշեմ, որ Հայ Եկեղեցին ունի ինը ժամերգութիւններ: Երեքական նուիրուած են Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն: Առաւօտեան ժամերգութիւն, Իններորդ ժամի Ժամերգութիւն, որը նոյնպէս Պատարագի բաղադրիչ է եւ Երեկոյեան ժամերգութիւն. այս երեք ժամերգութիւններն ուղղուած են Որդուն, եւ

դրանց ու Պատարագի ժամանակ երգում են Որդուն ուղղուած Երեքսրբեան: Առաջինը՝ առաւօտեան, երբ մատնուել է Տէրը, երկրորդը՝ ցերեկը, երբ խաչուել է Տէրը, եւ երրորդը՝ երեկոյեան, երբ Տիրոջ մարմինը գերեզմանի մէջ է դրուել:

«...*տեսայ Տիրոջը, որ նստած էր բարձր և վերացած աթոռին.... Նրա շուրջը սերովբէներ կային.... Ձայնակցում էին իրար և ասում. «Սու՜րբ, սու՜րբ, սու՜րբ է Զօրութիւնների Տէրը, և ամբողջ երկիրը լի է նրա փառքով*»» (Ես. Զ, 1-4): Եսային ասում է Երրորդութեան առաջին Դէմքի համար, որովհետեւ այն ժամանակ գիտէին միայն Հօրը: Յովհաննէս առաքեալը՝ Երրորդութեան երկրորդ Դէմքի՝ Որդու. «*Եսային այս ասաց, որովհետև տեսաւ նրա փառքը և խօսեց նրա մասին*» (Յովհ. ԺԲ, 41): Իսկ Պօղոս առաքեալը՝ Երրորդութեան երրորդ Դէմքի՝ Սուրբ Հոգու (տե՛ս Գծ. ԻԸ, 25-27):

Եւ այն, որ ուղղուած է երեք անձի՝ Աստուած, Հզօր եւ Անմահ, կարելի է ասել Մէկ Անձի համար՝ Աստուած, Հզօր եւ այլն: Եւ քանի որ սերովբէները երգում էին՝ դիմելով Երրորդութեանը, Սուրբ առաքեալն ասում է Երրորդութեան երկրորդ Դէմքի՝ Որդու համար: Դրա համար էլ մեր Սուրբ Եկեղեցին, ուսանելով Սուրբ Յովհաննէսից եւ մեր Սուրբ Հայրերից երգում է «*Սուրբ Աստուած, Սուրբ և Հզօր, Սուրբ և Անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ*»՝ դիմելով մեր Տիրոջը՝ Յիսուս Քրիստոսին, ոչ թէ Սուրբ Երրորդութեանը: Այնուհետեւ, «*որ խաչեցար վասն մեր*» յաւելումից բացի կան նաեւ այլ յաւելումներ՝ որ ծնուել եւ յայտնուել ես, որ եկել ես եւ նորից կը գաս, որ մատնուել ես եւ թաղուել, որ յարութիւն ես առել եւ համբարձուել, որ յայտնուել ես Թաբոր լերան վրայ, որ եկել ես Քո Մօր եւ Կոյսի երեւից: Բայց մի յաւելում էլ կայ, որ ուղղուած է Սուրբ Հոգուն՝ «*որ եկիր և հանգեար յառաքեալսն*»: Այսպիսի բաներ, սիրելինե՛րս: Ժամանակն է:

Հոգեւորականութիւնը, ճեմարանականները եւ ուխտաւորները ուղղուեցին Յարութեան Տաճար… Ժողովուրդը չափազանց շատ էր ինչպէս փողոցներում, այնպէս էլ փաճարում… ժամերգութիւնն ընթանում էր ուխտաւորների աղմուկի եւ կաթոլիկ երգեհոնի երաժշտութեան ներքոյ, որն անչափ շատ էր խանգարում հենց ժամեգութեանը. ոչինչ չէր լսւում…

Հոգեւորականութիւնը եւ ճեմարանականները «*Խաչի քո, Քրիստո՛ս, երկիր պագանեմք*» երգեցողութեան ներքոյ

երկրպագեցին Կենարար Խաչի մասունքով Խաչին եւ արծաթեայ շրջանակով փոքրիկ Աւետարանին… Ժամերգութիւնն աւարտուելուց յետոյ երկրպագելու հնարաւորութիւն ընձեռեցին նաեւ ուխտաւորներին…

Վերադարձը նոյնքան դժուար էր, բայց եւ այնպէս չորսին մօտ տանն էին… Թաղման կարգը պէտք է կատարուէր երեկոյեան հինգին Սրբոց Յակոբեանց տաճարում… Այնպէս որ մնում էր մէկ ժամ, Վարդանն ու բոլոր ուխտաւորները որոշեցին հանգստանալ եւ նախապատրաստուել ժամերգութեան… Վարդանը եւ ռուսաստանցի ուխտաւորները բարեկամացել էին, քանի որ համարեայ բոլորը մէկ ընդհանուր ցաւ ունէին …

Տաճարում՝ կենտրոնում՝ գլխաւոր խորանի առջեւ, պատրաստուած էր Քրիստոսի գերեզմանը՝ զարդարուած ծաղիկներով, խաչերով, սրբապատկերներով… Շատ ուխտաւորներ, անգամ զբօսաշրջիկներ կային, որոնք եկել էին տեսնելու հայկական ժամերգութիւնը… Կարդում էին Սուրբ Գիրք, Աւետարան, երգում էին շարականներ … Շուտով ողջ հոգեւորականութիւնը, ճեմարանականներն ու ժողովուրդը ծնկի գալով, հոգի թափանցող ձայնով սկսեցին երգել Երեքսրբեան՝ «*որ թաղեցար վասն մեր*» յաւելումով… Ժամերգութեան աւարտին երգեցին «*Խաչի քո, Քրիստո՛ս, երկիր պագանեմք*», իսկ հոգեւորականութիւնն ու ճեմարանականները գնացին՝ Խաչին երկրպագելու… Թաղման կարգի աւարտից յետոյ երկրպագելու հնարաւորութիւն ընձեռեցին նաեւ ժողովրդին… Խոստացան ծաղիկները բաժանել վաղը՝ Աւագ Շաբաթուայ Պատարագից յետոյ…

Վարդանին ամէն ինչ մօտ էր ու հարազատ, անգամ մեծ վանքի քարերն էին խօսում նրա հետ: Չնայած Աւագ Ուրբաթն էր, շուրջը տիրում էր ինչ-որ հոգեւոր ուրախութիւն, ուխտաւորների աչքերում նկատելի էր Յաւիտենական Կեանքի ցնծութիւնը: Այդպէս նա ուխտաւորների հետ իր վանք վերադարձաւ, որը բոլորի համար արդէն հարազատ տուն էր: Հաւաքուեցին սեղանատանը՝ զրուցելու եւ չոր լաւաշով թէյ խմելու… Քիչ անց եկաւ նաեւ Հայր Վարդանը: Զրոյցը հետաքրքիր դարձաւ: Հարցեր էին տալիս, որոնց Հայր Վարդանը պատասխանում էր հասարակ եւ հասկանալի լեզուով, շեշտում էր ողորմութեան գործերը, առանց որոնց ոչ ոք չի կարող փրկուել: Հայր Վարդանն Աւետարանից օրինակ էր բերում իմաստուն եւ յի-

մար կոյսերի առակը: Ձէթը, որ չէր բաւականացրել կոյսերին, ողորմութեան գործերն էին եւ սէրը, որ չունէին յիմար կոյսերը, եւ այդ պատճառով էլ նրանք չփրկուեցին, թէեւ ունէին հաւատ եւ մաքրութիւն… Կոյսերի յիմարութիւնը, ինչպէս ասում էր Հայր Վարդանը, այն էր, որ նրանք այդպէս էլ չհասկացան քրիստոնէութեան էութիւնը, իսկ նրա էութիւնը սիրոյ մէջ է: Դրա համար էլ առանց սիրոյ ոչ մի քրիստոնեայ չի փրկուի: Վարդանին հետաքրքրեց այդ միտքը եւ այդ պատճառով էլ նա հարցրեց.

— Հա՛յր Վարդան, Դուք ասում էք, որ առանց սիրոյ ոչ մի քրիստոնեայ չի փրկուի, իսկ ահա Հայր Դմիտրին ասում էր, որ եթէ մարդը ուղղափառ չէ, չի կարող փրկուել, եւ ահա կը փրկուե՞ն արդեօք ուղղափառները:

— Իսկ դու ի՞նչ ես կարծում, Վարդա՛ն:

— Չգիտեմ:

— Կարո՞ղ են արդեօք նրանք, ովքեր որոշում են, թէ ով փրկուի, իսկ ով՝ ոչ, դժոխքից թեկուզ մէկ հոգի փրկել:

— Ինձ թւում է՝ ոչ:

— Ահա տեսնում ես: Տէրը ոչ մի տեղ չի ասել, որ փրկութիւնը բնութիւնների քանակի մէջ է: Փրկութիւնը Ժողովների քանակի մէջ չէ: Վարդա՛ն, այ քո Նեկտար մեծ պապը, մահացել է ի Քրիստոս եւ անգամ գիտէր իր ժամը, որի մասին ինքդ էիր ասում:

— Այո՛:

— Այդպիսի հաւատացեալներ, ինչպիսին նա էր, որոնց եղունգն իսկ չարժենք, շատ են ե՛ւ մեզանում, ե՛ւ բոլոր եկեղեցիներում ու ժողովուրդների մէջ: Նրանք պարզապէս ապրում էին, գլուխները ժողովներով չէին ծանրաբեռնում: Ինչպէս առաքեալն է ասում՝ սէրը հաստատում է, գիտութիւնը՝ հպարտացնում…

Այնպէս որ Տէրը Դատաստանի ժամանակ չի հարցնելու՝ քանի՞ բնութեան էիր երկրպագում, քանի՞ Ժողով էիր ընդունում, ի՞նչ լեզուով էիր աղօթում, այլ կը հարցնի միայն՝ քաղցած էի, կերակրեցի՞ր արդեօք Ինձ:

— Այսինքն՝ ամէն ինչ սիրոյ մէջ է, ուրեմն՝ կարեւոր չեն Ժողովները:

— Կարեւոր են կարգապահութեան առումով, այսինքն՝ եթէ դու մի աւանդութեան կրողն ես, ապա պէտք է հաւատարիմ լինես նրան, ինչով ծնուել ես. ոչինչ կարեւոր չէ, երբ սէր չկայ:

— Այդ դէպքում ինչպէ՞ս կարող են քրիստոնեաները միաւորուել. բոլորն էլ իրենց աւանդութիւնները ունեն, եւ ոչ մէկը չի ուզում զիջել:

— Բայց այդպիսի միաւորման հարկ չկայ:

— Ինչպէ՞ս:

— Պարզապէս այդպիսի միաւորումը կը յանգեցնի նոր բաժանման. դժգոհներ միշտ կը գտնուեն:

— Ուրեմն միաւորուելու կարիք չկա՞յ. ես Ձեզ չեմ հասկանում, Հա՛յր Վարդան:

— Պէտք է դարմանել այնտեղ, որտեղ սկսւում է հիւանդութիւնը. եկեղեցիների բաժանման պատճառը քրիստոսաբանութիւնը չէ, այլ սիրոյ ցամաքելը:

— Ինչպէ՞ս թէ:

— Այ այսպէ՛ս, բաժանման հիմքը դրուել էր դեռ ժողովից էլ շատ առաջ, երբ 451 թուականին հրաժարուեցին օգնել հայ ժողովրդին, եւ դրանով իսկ մերժեցին Աստծու խօսքերը եւ մեր Սուրբ Հայրերի խրատները. «*Այս է իմ պատուէրը. որ սիրէք միմեանց, ինչպէս որ ես սիրեցի ձեզ: Աւելի մեծ սէր ոչ ոք չունի, քան այն, որ մէկն իր կեանքը տայ իր բարեկամների համար*» (Յովհ. ԺԵ, 12-13): «*Սէրը նրանո՛վ ճանաչեցինք, որ Յիսուս իր կեա՛նքը տուեց մեզ համար. մենք էլ պարտաւոր ենք մեր եղբայրների համար տալ մեր կեանքը: Ով այս աշխարհի բարիքներից ունենայ և տեսնի իր եղբօրը մի բանի կարօտ ու փակի իր սիրտը նրա առաջ, Աստծոյ սէրը ինչպէ՞ս կարող է բնակուել նրա մէջ: Որդեակնե՛ր, խօսքերով և լեզուո՛վ չսիրենք, այլ՝ գործով և ճշմարտութեամբ*» (Ա. Յովհ. Գ, 16-18): «*Փրկի՛ր նրանց, ում մահուան են տանում, և ոչինչ մի՛ խնայիր մահապարտներին փրկագնելու համար: Բայց եթէ ասես, թէ՝ «Ես նրան չեմ ճանաչում, ոչ էլ նա՝ ինձ», – ապա իմացի՛ր, որ Տէրը ճանաչում է բոլորի սրտերը: Եւ Նա, որ ստեղծեց բոլորի շունչը, ճանաչում է բոլորին և իւրաքանչիւրին հատուցելու է ըստ նրա գործերի*» (Առակ. ԻԴ, 11-12): Սբ. Յովհան Ոսկեբերանը գտնում է, որ Աստծուն ոչինչ այնքան չի վրդովեցնում, որքան մերձաւորին փրկելու քամահրանքը, ուստի Նա Իր աշակերտներին բնորոշ յատկանիշ է դնում սէրը՝ նշելով, որ, այսպիսով, պէտք է բռնել այս ճանապարհը, որովհետեւ դա այն ճանապարհն է, որ մեզ երկինք է տանում, դարձնում Քրիստոսին նմանակողներ եւ հնարաւորութեան դէպքում՝ նման Աստծուն: Նա նաեւ գտնում է, որ Եկեղեցուց հեռանալու երկու

եղանակ կայ. մէկը, երբ մեր սէրը ցամաքում է, եւ միւսը, երբ համարձակւում ենք անարժան ինչ-որ բան անել այդ մարմնի (Եկեղեցու) հանդէպ:

Եւ դրա համար էլ զարմանալի չէ, որ այն ժամանակ, երբ մի ողջ ժողովուրդ սպանութեան էր դատապարտուած, կայսրն առանց խղճի խայթի Ժողով էր գումարում, իսկ նոյն Ժողովի մասնակիցները, երբ հովուապետը, իր հօտով բանտարկուած, կտտանքների էր ենթարկւում, նոյնպիսի հանգիստ խղճով լուծում էին այն հարցը, թէ ով էր մահացել խաչին…

Պարզապէս սկսենք սիրել միմեանց, միմեանց ընդունենք այնպիսին, ինչպիսին կանք, յարգենք այն, ինչ թանկ է հարազատին՝ միաժամանակ չուրանալով մերը… Իսկ յետոյ Տէրն էլ կ'ողորմի մեզ եւ Ինքը կ’որոշի…

— Հիմա հասկանում եմ. ուրեմն՝ պէտք է սիրել սովորել:

— Ա՛յ, ես էլ եմ դա ասում: Դրա համար, սիրելինե՛րս, պէտք է գործերով սիրել, ինչպէս ուսուցանում էին մեզ Տէրը եւ մեր Հայրերը, ինչպէս Յովհաննէս Սարկաւագը, որ ապրել է XII դարում. «*Սիրում և բաղձում ենք Հոգու միաւորութիւնը, դառնօրէն ողբում ենք լծակցութեան բաժանումը, արտասուքներով թրջւում՝ յիշելով երբեմնի լծակցութիւնը. Նաև այժմ իսկ փարւում ենք որպէս հարազատ եղբայրների, որ հեռացել են [մեզանից], հեռուից ողջունում ենք համաշնչութիւնը, և, լսելով այսքան չափազանցութիւններ և բամբասանքներ մեր մասին, չենք ցանկանում նոյն կերպ պատասխանել նրանց՝ [ասելով]. «Տե՛ր, սա նրանց մեղք մի՛ համարիր»»: Սակայն մենք միայն համբերենք գոհութեամբ՝ որպէս անիրաւ նախատինքի և թշնամանքի արժանացածներ, այլև օրհնենք նրանց, քաղցած տեսնելով՝ կերակրենք, ծարաւած հանդիպելով՝ յագեցնենք, հագցնենք, երբ մերկ են. բարեգործ լինենք ատելիների նկատմամբ, ինչպես Հեզի և Մարդասէրի աշակերտները, սոսկ անուամբ և ճշմարիտ դաւանութեամբ մեզ քրիստոնեայ ցոյց չտանք, այլ՝ այս պատուիրանների հնազանդութեամբ և կատարմամբ, քանզի ամէն ծառ իր պտղից է ճանաչւում*»…

Այնպէս որ արդէն ուշ է. հանգստանալ եմ ուզում, իսկ յետոյ՝ Յարութեան ճաշը՝ ժամերգութեան: Ահա բոլորիդ ճաշը միասին ուտելու հաշուեկշիռներ: Վաղը՝ առաւօտեան ճաշին մօտ, այս հաշուեկշիռներով եղէք Պատրիարքութեան մուտքի առջեւ: Մի՛ ուշանաք: Իսկ ով ուզում է գիշերուանից

մնալ Յարութեան փաճարում, ապա գիշերը՝ փասներկուսին, լինի այսպեղ՝ բակում, կը գաք ինձ հետ:

— Հա՛յր Վարդան, կարո՞ղ էք մի քանի րոպէ փրամադրել ինձ, Գէորգիին եւ Աննային:

— Իհարկէ, դուրս գանք բակ, իսկ ով մնում է, աղօթքներ եմ խնդրում: Աստուա՛ծ ձեզ պահապան:

— Օրհնեցէ՛ք, Հա՛յր Վարդան:

— Տէ՛րը կ'օրհնի:

Վարդանը նկափի ունէր այն զոյգին, որն իր նման ուղղափառութիւն էր ընդունել, բայց առանց մկրփուելու: Նրանք խօսել էին այդ թեմայով եւ ուզում էին ուղղել իրենց մոլորութիւնը, որպէսզի Ջափկին հանգիսփ խղճով հաղորդուեն Հայ Եկեղեցում: Այդ մասին էլ հարցրին Հայր Վարդանին…

— Դէ՛հ, ի՞նչ կ'ասէք, ի՞նչ անենք, Հա՛յր Վարդան: Ձեր զրոյցների եւ Հայ Երուսաղէմի շնորհիւ մեզ արդէն որերորդ օրն է՝ խիղճը փանջում է: Մենք հիմա հասկանում ենք, թէ մասնաւորապէս ինչ կորցրինք, երբ հրաժարուեցինք Մայր Եկեղեցուց, որի մկրփութեան աւազանում ծնուել էինք: Երբ փեսնում ես Հայ Երուսաղէմը, փեսնում ես արմափները, որ դարերի խորքից ձգւում են դէպի մեզ եւ սնում են մեզ: Ձեր զրոյցների շնորհիւ մենք գփանք մեր արմափները, իսկ Հայ Երուսաղէմի շնորհիւ շփուեցինք եւ սերփաճեցինք այդ արմափներին, եւ այլեւս ոչ մի բան եւ ոչ ոք չի կարող մեզ պոկել այդ արմափներից…

— Այդ դէպքում, սիրելինե՛րս, դուք պէփք է ինձ հեփ գաք Յարութեան փաճար եւ մնաք մինչեւ Լոյսի արարողութեան աւարփը: Այնպէս որ գիշերը՝ փասներկուսին, եղէք այսփեղ՝ բակում…

— Համաձայն ենք, օրհնեցէ՛ք:

— Տէ՛րը կ'օրհնի:

Չնայած ուշ էր, շուկայի բոլոր խանութները բաց էին, շափ ուխփաւորներ կային, ինչպէս եւ Յարութեան փաճարի գաւթում: Յոյներն արդէն սկսել էին ժամերգութիւնը… Ճեղքուած սեան կողքին՝ մուփքի մօփ, Վարդանը նկափեց Տէր Դանիիլին իր խմբով: Նրանք աղօթում եւ ծնրադրում էին սեան մօփ… Վարդանը սպասեց, որ նրանք աւարփեն աղօթքը, եւ մօփեցաւ Տէր Դանիիլին…

— Օրհնեցէ՛ք, Տէ՛ր Հա՛յր:

— Օ՜յ, Վլադի՛միր, Տէ՛րը կ’օրհնի: Որտե՞ղ էիր այսքան ժամանակ. անհանգստանում էինք:

— Հա՛յր, բայց գրութիւն էի թողել:

— Օ՜յ, այո՛, Տէ՛րը փրկի՛: Դէ՛, ինչպէ՞ս ես. հայերը պապահաբար քեզ չէ՞ին գայթակղում:

— Ինչո՞վ, Տէ՛ր Հայր, չեմ հասկանում:

— Դէ՛, չէի՞ն յորդորում քեզ վերադառնալ իրենց մօտ:

— Ո՛չ, ոչ ոք չէր յորդորում:

— Դէ՛, փա՛ռք Աստծու:

— Տէ՛ր Դանիիլ, բայց այստեղ՝ Երուսաղէմում, ես շատ բան հասկացայ... Չեմ կարող բացատրել: Երախտապարտ եմ քեզ ամէն ինչի համար. եթէ ես ռուս ուղղափառութիւն չընդունէի, չէի լինի Երուսաղէմում, չէի գտնի արմատներս:

— Փա՛ռք Աստծու, տեսնում ես ուղղափառութեան վեհութիւնը. դու աւելի հաստատուեցիր: Ես էլ քեզ եմ շնորհակալ. եթէ դու չլինէիր, ես նոյնպէս այստեղ չէի լինի. դու վճարեցիր իմ ամբողջ ուղեւորութեան համար…

— Ո՛չ , ես այլ բան եմ ասում: Իմ արմատները բխում են Հայ Եկեղեցու գրկից, ես ուրացայ նրանց, բայց նրանք ինձ չեն լքել…

— Այդ ի՞նչ ես ասում:

— Հենց այն, որ «**Ես հայ եմ, հայ էլ կը մեռնեմ**»:

— Դու ի՞նչ է, ուրանո՞ւմ ես ուղղափառութիւնը եւ դեռ ասում ես, որ քեզ չեն գայթակղել:

— Ես երբեք չեմ ուրացել ուղղափառութիւնը, քանի որ այդպիսին ծնուել եմ, բայց ուրացել եմ արմատներս, իմ Մօրը, որն ինձ ծնել է: Եւ ինձ ոչ ոք չի գայթակղել: Այստեղ՝ Երուսաղէմում՝ այս տաճարում, Մայրս կանչեց ինձ: Դու չես հասկանայ, Տէ՛ր Դանիիլ:

— Ցաւում եմ, որ աչքս վրադ չպահեցի, ուշքի՛ եկ. սա փորձութիւն է, թէ որքան ես հաւատարիմ ուղղափառութեանը: Վաղը, երբ սուրբ կրակն իջնի…

— Եւ ի՞նչ, Տէ՛ր Հա՛յր, ինձ համար կարեւոր չէ կրակը, ինձ համար բոլորովին այլ բան է կարեւոր, որ դու չես հասկանայ: Հասկանո՞ւմ ես՝ ես Վարդանն եմ եւ ոչ թէ Վլադիմիրը:

— Դէ՛, գուցէ եւ չհասկանամ: Մի խնդրանք ունեմ:

— Ուրախ կը լինեմ օգնել:

— Կարո՞ղ ես խնդրել հայերին, որ ինձ թաքցնեն փաճարում, իսկ վաղը Բոլորաշէնի մօտ կանգնեցնեն:
— Տէ՛ր Դանիիլ, չեմ խոստանում. գնանք ինձ հետ…

Նրանք փաճար մտան, համբուրեցին Պապանապեղիի քարը, անցան տեսուչի սենեակի մօտ, որ վերեւ բարձրանան, բայց Տէր Դանիիլը չցանկացաւ բարձրանալ, որպէսզի մասնակից չդառնայ հայկական աղօթքին. որոշեց ներքեւում սպասել... Տեսուչը համաձայնեց, որ նա իր մօտ մնայ: Տէր Դանիիլը տեսուչի սենեակին պէտք է մօտենար Գերեզմանին հայկական Պապարագն աւարտուելուց յետոյ... Պապարագ պէտք է մատուցէր Հայաստանից ժամանած Տէր Հայրը…

Վարդանը, Գէորգը եւ Աննան հետեւեցին Հայր Վարդանին… Քիչ անց նրանք Սուրբ Վարդան եկեղեցում էին…
— Դուք պէտք է խոստովանուէք. ես կը կարդամ, իսկ դուք կրկնէք իմ ետեւից, յետոյ կը կարդաք «Հայ Եկեղեցու Հաւատամքը»: Դուք պէտք է ներէք նրանց, ովքեր ձեզ հեռացրել են Հայ Եկեղեցուց, բայց պէտք է գիտակցէք, որ դա նաեւ ձեր մեղքն է…
— Այո՛, Հա՛յր Սուրբ:
— Այսպիսով, ծնկի՛ եկէք Սուրբ Վարդանի խորանի առջեւ…
Երեքը միասին բառ առ բառ կրկնում էին.
— Մեղա՛յ Ամենասուրբ Երրորդութեանը՝ Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն. մեղանչել եմ Աստուծոյ առաջ: Խոստովանում եմ Աստուծոյ առաջ եւ սրբուհի Աստուածածնի եւ քո առաջ հա՛յր սուրբ, բոլոր գործած մեղքերս: Քանզի մեղք գործեցի խորհրդով, խօսքով եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ: Մեղա՛յ Աստուծոյ:
— Աստուած թողութիւն շնորհեսցէ:
— Մեղաւոր եմ՝ ուրանալով մեր Մօրը՝ Հայ, Մի, Ընդհանրական, Առաքելական եւ Սուրբ Եկեղեցին: Մեղա՛յ Աստուծոյ:
— Աստուած թողութիւն շնորհեսցէ:
— Մեղաւոր եմ՝ ուրանալով մեր Սուրբ Հայրերի հաւատքը, Հայ Առաքելական Եկեղեցւոյ վարդապետութիւնը եւ դաւանանքը: Մեղա՛յ Աստուծոյ:

— Աստուած թողութիւն շնորհեսցէ:

— Մեղաւոր եմ՝ Հայ Եկեղեցու դէմ լուտանքով եւ ամէն պեսակի ստով: Մեղա՛յ Աստուծոյ:

— Աստուած թողութիւն շնորհեսցէ:

— Մեղաւոր եմ այս ամէնով՝ լինի խորհրդով, խօսքով եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ: Մեղա՛յ Աստուծոյ:

— Աստուած թողութիւն շնորհեսցէ: Ողորմեսցի ձեզ մարդասէրն Աստուած, եւ թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց ձերոց խոստովանեցելոցն եւ մոռացելոցն: Եւ ես կարգաւս քահանայական իշխանութեան եւ հրամանաւն աստուածային՝ թէ զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս. նովին բանիւն արձակեմ զձեզ յամենայն մասնակցութենէ մեղաց ձերոց, ի խորհրդոց, ի բանից եւ ի գործոց. յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Եւ դարձեալ պամ ձեզ ի խորհուրդս Սուրբ Եկեղեցւոյ, զի զոր ինչ գործիցէք բարիս, եղիցի ձեզ ի բարեգործութիւն եւ ի փառս հանդերձեալ կենացն. Ամէն:

Հաւատո՞ւմ, դաւանո՞ւմ եք Հայ Առաքելական Եկեղեցու վարդապետութիւնը:

— Հաւատում ենք եւ դաւանում ենք:

— Հետեւո՞ւմ եւ աշակերտո՞ւմ էք Հայ Եկեղեցու Սուրբ Վարդապետներին՝ Դիոնէսիոս Արիսպագացուն, Սեղբեստրոսին եւ Աթանաս Աղեքսանդրացուն, մեր Գրիգոր Լուսաւորչին եւ նրա որդիներին ու թոռներին, մեր սուրբ թարգմանիչներին՝ Սահակին եւ Մեսրոպին, Բարսեղ Մեծին եւ Գրիգոր Նիւսացուն, Կիւրեղ Երուսաղէմացուն եւ Եփրեմ Ասորուն, Գրիգոր Աստուածաբանին եւ Եպիփան Կիպրացուն, Յովհան Ոսկեբերանին եւ Կիւրեղ Աղեքսանդրացուն, Յակոբ Մծբնեցուն եւ Գրիգոր Սքանչելագործին, եւ Յակոբ Որճեցուն, Յովհաննէս Օձնեցուն, Յովհաննէս Որոտնեցուն եւ Գրիգոր Տաթեւացուն, Ստեփանոս Սիւնեցուն եւ Պօղոս Տարօնացուն, Պարսամ Ճգնաւորին եւ Սիմէօն Սիւնակեացուն, այլեւ Նիկիայի Ժողովի 118, Կոստանդնուպոլսի Ժողովի 150, Եփեսոսի Ժողովի 200 հայրապետներին եւ բոլոր ուղղափառ սուրբ հայրերին, որոնք մեզ են հասցրել ուղղափառ դաւանանքը:

— Հետեւում եւ աշակերտում ենք Հայ Եկեղեցու բոլոր Սուրբ Վարդապետներին:

— Ամէ՛ն: Իսկ հիմա բարձրաձայն կարդացէ՛ք «**Հայ Եկեղեցու Հաւապամքը**»:

— «Խոստովանիմք եւ հաւատամք ամենակատար սըրտիւ զՀայրն Աստուած՝ անեղ, անծին եւ անսկիզբն. այլ եւ ծնող Որդւոյ եւ բղխող Հոգւոյն Սրբոյ:

Հաւատամք զԲանն Աստուած՝ անեղ, ծնեալ՝ եւ սկսեալ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս. ո՛չ յետոյ եւ ո՛չ կրտսեր. այլ որքան Հայրն Հայր՝ ընդ նմին եւ Որդին Որդի:

Հաւատամք զՍուրբ Հոգին Աստուած՝ անեղ՝ անժամանակ. ոչ ծնեալ՝ այլ բղխեալ ի Հօրէ. էակից Հօր եւ փառակից Որդւոյ:

Հաւատամք զԵրրորդութիւնն Սուրբ՝ մի բնութիւն, մի Աստուածութիւն. ոչ երեք Աստուածք, այլ՝ մի Աստուած, մի կամք, մի թագաւորութիւն, մի իշխանութիւն. Արարիչ երեւելեաց եւ աներեւութից:

Հաւատամք յԵկեղեցի սուրբ, զթողութիւն մեղաց, հաղորդութեամբ սրբոց:

Հաւատամք զՄինն յԵրից Անձանց Զբանն Աստուած՝ ծնեալ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս. ի ժամանակի իջեալ յԱստուածածին կոյսն Մարիամ՝ առեալ յարենէ նորա՝ միաւորեաց ընդ իւրում Աստուածութեանն. իննամսեայ ժուժկալեալ յարգանդի անարատ Կուսին. եւ եղեւ Աստուածն կատարեալ՝ մարդ կատարեալ, հոգւով եւ մտօք եւ մարմնով. մի անձն, մի դէմ, եւ միաւորեալ մի բնութիւն:

Աստուած մարդացեալ առանց փոփոխման եւ առանց այլայլութեան. անսերմն յղութիւն եւ անապական ծնունդ. որպէս ոչ է սկիզբն Աստուածութեան նորա՝ եւ ոչ վախճան Մարդկութեան նորա: (Զի Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր՝ նոյն եւ յաւիտեան):

Հաւատամք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս շրջեալ ի վերայ երկրի. յետ երեսուն ամաց եկեալ ի մկրտութիւն: Հայր ի վերուստ վկայեալ՝ Դա՛ է Որդի Իմ սիրելի. եւ Հոգին Սուրբ աղաւնակերպ իջեալ ի վերայ նորա: Փորձեալ ի սատանայէ եւ յաղթեալ նմա: Քարոզեալ մարդկան զփրկութիւն: Աշխատեալ մարմնով, վաստակեալ՝ քաղցեալ՝ եւ ծարաւեալ: Յետոյ եկեալ կամաւ ի չարչարանս. խաչեալ եւ մեռեալ մարմնովն, եւ կենդանի Աստուածութեամբն: Մարմինն եդեալ ի գերեզմանի՝ միաւորեալ Աստուածութեամբն, եւ Հոգւովն իջեալ ի դժոխս՝ անբաժանելի Աստուածութեամբն: Քարոզեալ հոգւոցն՝ աւե-

րեալ զդժոխս՝ եւ ազատեալ զհոգիս: Յետ երից աւուրց յարուց-եալ ի մեռելոց եւ երեւեալ աշակերտացն:

Հաւատամք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս՝ նովին մարմնովն համբարձեալ յերկինս, եւ նստեալ ընդ աջմէ Հօր: Այլեւ գալոց՝ նովին մարմնովն եւ փառօք Հօր՝ ի դատել զկենդանիս եւ մեռեալս: Որ եւ յարութիւն ամենայն մարդկան:

Հաւատամք եւ զհատուցումն գործոց. արդարոցն՝ կեանք յաւիտենական, եւ մեղաւորացն՝ տանջանք յաւիտենա-կան»:

Հայր Վարդանը խաչով օրհնեց հաւատացեալներին եւ գրկեց նրանց…

— Ամէ՛ն: Աստուա՛ծ ձեզ պահապան, եւ եղէ՛ք Սուրբ Մայր Եկեղեցուն հաւատարիմ զաւակներ:

Պատարագից յետոյ հաւաքուեցին սեղանատանը, եկաւ նաեւ Տէր Դանիիլը: Սարգիս սարկաւագը սկսեց պատմել, թէ ինչպէս է ընթանում ողջ լուսաւորեայի արարողութիւնը:

Այդ ժամանակ փակ դռների ետեւում՝ Պատանատեղիի քարի դիմաց, սկսուեց կաթոլիկների «Կրակն օրհնելու» կարգը, որից յետոյ՝ Տիրոջ Գերեզմանին արարողութիւնը... Աւարտին հայ եւ յոյն վանականները ոստիկանութեան մասնակցութեամբ սկսեցին բաժանարար ցանկապատ տեղադրել՝ դրանով իսկ սահմաններ նշելով հաւատացեալների համար:

Մինչ այստեղ ցանկապատ էին տեղադրում, Սբ. Յարու-թեան տաճարի բանալիների պահապաններն արդէն Հայոց Պատրիարք Թորգոմ Մանուկեանի մօտ էին, որպէսզի յանձնեն բանալիները... Պատրիարքը բանալիները փոխանցում է հայ թարգմանին՝ բոլոր տօնական թափօրների պատասխանատու վարդապետին: Այդ ժամանակ հոգեւորականութիւնը, ճեմա-րանականներն ու հաւատացեալները սպասում են Պատրի-արքութեան մուտքի մօտ եւ տասն անց կէսին թարգման Հայր Գուսանի գլխաւորութեամբ ուղղւում են Յարութեան տաճար... Մուտքի մօտ թարգմանը բանալիները տալիս է բանալիների պահապանին... Հանդիսաւոր պայմաններում հայերը բացում են դռները, եւ բոլորը մտնում են տաճար, ձախ կողմից՝ հայերը, աջից՝ ուղղափառները... Տաճարը սկսում է լցուել... Սարգիսը Վարդանին, Տէր Դանիիլին, Գէորգին եւ Աննային կանգնեցնում է Բոլորաշէնի հայկական լուսամուտի մօտ, որտեղից երեւում է

նաեւ մուտքը... Ամէնուր կանգնած են ճեմարանականներ, որոնք հետեւում են կարգին, որպէսզի օտարն առանց հաշուեքարտի չմտնի հայկական տարածք: Սա խստօրէն է պահպանւում, որովհետեւ հայերը քիչ տեղ ունեն, եւ դրանից բացի իրենց տարածքի մի մասը տալիս են ղպտիներին եւ ասորիներին՝ նրանց ուխտաւորների համար (դրա մասին ասաց Վարդանի կողքին կանգնած ճեմարանականը)... Շուտով հայ հոգեւորականութիւնը լքում է տաճարը՝ երկրորդ՝ պատրիարքական հանդիսաւոր մուտքի համար: Բայց քանի որ Թորգոմ Մանուկեան Սրբազան Պատրիարքը հիւանդ էր եւ ծեր, նրա փոխարէն պէտք է գար Լուսարարապետ Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեանը:

11:30-ին հայ հոգեւորականութիւնը եւ միւս ուխտաւորները, որոնց շարքերում շատ էին ռուս ուխտաւորները, Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ մտնում են տաճար: Առանց հայկական հաշուեքարտերի ռուս ուխտաւորներին ճեմարանականներն ուղարկում են յունական հատուած… Հոգեւորականութիւնը թափօրով անցնում է Գերեզմանի շուրջը եւ ուղեւորւում վանահօր սենեակ…

Գերեզմանի դռների մօտ կանգնած են հաւասար թւով հայ եւ յոյն վանականներ:

Հայ եւ յոյն թարգմանները մտնում են Գերեզման՝ ստուգելու, թէ արդեօք ոեւէ մէկը չի՞ թաքնուել: Հաւաստիանալով, որ ոչ ոք չկայ, դռները փակում են, իսկ բռնակները՝ կապում սպիտակ ժապաւէնով, որի ծայրերը պէտք է բռնեն հայ եւ յոյն վարդապետները:

12:00-ին դուռը կնքում են մեղրամոմով, որի վրայ իրենց կնիքներն են դրոշմում տաճարի բանալիների պահապանները:

12:30-ին թմբուկների հնչիւնների եւ բացականչութիւնների ներքոյ տաճար է մտնում արաբ ուղղափառ երիտասարդութիւնը, անցնում Կաթոլիկոն յունական եկեղեցի եւ ուղղւում Բոլորաշէնի հիւսիսային հատուած, որտեղ յունական լուսամուտն է: Հինգ րոպէից նրանք լքում են տաճարը…

13:20-ին տաճարի յոյն վանահայրը իր սենեակից հանդիսաւորութեամբ բերում է գաւաթի ձեւ ունեցող արծաթէ կանթեղը: Նա կանգ է առնում մուտքի առջեւ, մինչեւ հանում են դրան կնիքը, եւ յետոյ  կանթեղը ներս է տանում Գերեզման: Դռները նրա հետեւից փակում են: Բոլորաշէնում վանահայրը մնում է մէկ րոպէից աւելի… Վարդանը նկատեց, որ ոչ ոք չի

սպուզում վանահօրը, եւ անգամ այդ մասին ասաց Տէր Դանիիլին, որ նա կարող էր լուցկի կամ կրակայրիչ իր հետ ներս տանել եւ վառել կանթեղը… Բայց Տէր Դանիիլը չէր ուզում լսել Վարդանին: Վանահօր դուրս գալուց յետոյ դռները կրկին փակում են…

Հայկական պատուհանի մօտ երկաթեայ գերաններին նստել էր հայ քաղաքացի Սողոմոնը, որը պէտք է սպանար արդէն վառուող մոմերը, իսկ կողքին կանգնած էին երկու երիտասարդ ճեպազնացներ-լուսահանի օգնականներ, որոնք պէտք է մոմերը հասցնէին ժողովրդին եւ վերին եկեղեցի՝ Նուրհան Սրբազանին, որպէսզի նա վերեւից օրհնէր ժողովրդին… Այս ճեպազնացի համար ճանապարհ էր բացուած, որը վերահսկում էին ճեմարանականները…

Աղմուկը չափազանց շատ էր. բոլորը սպասում էին… Այդ ժամանակ Տէր Դանիիլն աղօթում էր, որ Տէրը ցոյց տար Վարդանին ուղղափառութեան վեհութիւնը, իսկ ահա Վարդանն աղօթում էր բոլոր քրիստոնեաների համար՝ խնդրելով սէր եւ խաղաղութիւն: Աղօթում էր նաեւ իր նախնիների՝ ի Քրիստոս ննջեցեալների համար: Շնորհակալութիւն էր յայտնում Տիրոջը իր ծնողների, նրանց իմաստնութեան եւ սիրոյ համար: Շնորհակալութիւն էր յայտնում նաեւ Հայր Վարդանի եւ Հայ Երուսաղէմի համար:

Հայերը սկսեցին բացականչել՝ **ՀԱՅԵ՛Ր, ԼՈ՛ՅՍ, ՀԱՅԱՍՏԱ՛Ն**, իսկ յետոյ սկսեցին երգել «Հա՛յր մեր», «Տէ՛ր, ողորմեա՛», «Քրիստոս ի մէջ մեր»… Այնպիսի տպաւորութիւն էր, որ տաճարում միայն հայեր են մնացել…

13:30-ին սկսուեց յունական թափօրը՝ Պատրիարքի գլխաւորութեամբ, հոգեւորականութեան, վանականների, խաչվառակիրների բազմութեամբ… Պատրիարքն ամբողջովին զգեստաւորուած էր… Գերեզմանի շուրջը երրորդ պտոյտի ժամանակ, երբ Պատրիարքը հասաւ հայկական բաժին, նրան միացաւ Հայր Բագրատ վարդապետը՝ ձեռքին մոմեր, եւ երկու սարկաւագների ուղեկցութեամբ:

Տէր Դանիիլն անչափ զարմացաւ, երբ տեսաւ, որ Պատրիարքին ոչ ոք չի խուզարկում. պարզապէս հանեցին պատրիարքական հանդերձանքը եւ սաղաւարտը՝ թողնելով միայն սպիտակ շապիկը: Նրա սարկաւագը նրան փոխանցեց մոմերը, եւ Հայր Բագրատի հետ 14:00-ին մտան Բոլորաշէն: Դա Տէր Դանիիլի երկրորդ զարմանքն էր, քանի որ նա գիտէր, թէ

հայերը չեն մտնում Բոլորաշէն… Զարմացաւ նաեւ Վարդանը. նրան թուաց, որ Հայր Բագրատից յետոյ նաեւ ոստիկան մտաւ, յետոյ դռները փակեցին…

«ԼՈՅՍ» բացականչութիւնները յաճախացան. անգամ Վարդանը, չկարողանալով իրեն զսպել, նոյնպէս ձայնեց, եւ այդ բառը հայ բազմութեան շուրթերին հնչեց իբրեւ աղօթք…

Թուաց, թէ մի ամբողջ յաւերժութիւն անցաւ, եւ յանկարծ ժամը 14:10-ին կրակը սպասցողը ձեռքով նշան արեց, եւ հնչեցին հայկական զանգերը, որ ազդարարում էին կրակը ստանալը: Կրակը սպացողն արդէն լուսահանի օգնականներին էր փոխանցել Հայր Բագրատից սպացած մոմերը, որոնք նա վառել էր Գերեզմանի քարին դրուած կանթեղներից… Հաշվուած վայրկեանների ընթացքում կրակը տարածուեց հայկական բաժնում, եւ արդէն Նուրիան Սրբազանը վառուող մոմերով վերեւից օրհնում էր տաճարում կանգնած մարդկանց:

Հայերէն բացականչում էին եւ ողջունում էին միմեանց՝ Քրիստո՛ս Յարեաւ ի մեռելոց: Վարդանն արդէն կանգնած էր վառուող մոմերով, իսկ Տէր Դանիիլը չէր ուզում իր մոմերը հայերից վառել… Վարդանը ցաւ զգաց… 2-3 րոպէից դուրս եկաւ Պատրիարքը, նրա հետեւից՝ Հայր Բագրատը: Պատրիարքին համարեայ ձեռքերի վրայ տարան Կաթոլիկոն, իսկ նրա հետեւից՝ նաև Տէր Դանիիլը… Հայր Բագրատին իրենց ուսերին հայոց վանահօր սենեակ հասցրին երկու սարկաւագներ…

Արդէն սկսւում էր հայկական թափօրը: Ճեմարանականները եւ հոգեւորականութիւնը շարք էին կազմում… Հայերի թափօրի մէջ մտան նաեւ աշորիները եւ ղպտիները. այդպէս է սահմանուած ըստ Ստատու Քվոյի, քանի որ նրանք եկեղեցական թափօրի իրաւունք չունեն: Նրանց հասնում էր թափօրի միայն մէկ երրորդ մասը: Աղմուկը շատ էր, շատ էր նաեւ ծուխը… Վարդանը տեսաւ Տէր Դանիիլին՝ վառուած մօրուքով. նա գլխահակ կանգնել էր Բոլորաշէնի դիմաց՝ Կաթոլիկոնի մուտքի առջեւ. նրա մոմերը մարուած էին… Վարդանն ուզում էր մօտենալ նրան, երբ յանկարծ տեսաւ մի օրիորդի՝ կրծքին նոյնպիսի խաչ, ինչպիսին իրենն էր… Նա չէր կարողանում հաւատալ. մտածում էր, որ իրեն թուացել է, ինչպէս՝ ոստիկանի դէպքում… Բայց ո՛չ. նա մէկ անգամ էլ նկատեց օրիորդին՝ խաչով… Նա գնում էր դէպի ելքը… Ինքը, սակայն, մարդկանց բազմութեան պատճառով չկարողացաւ անցնել օրիորդի հետեւից…

— Աստուա՛ծ իմ, ի՞նչ էր դա: Ո՞վ է նա, որտեղի՞ց նրան նոյն խաչը, իսկ զուգէ ինձ թուացել է:

15:30–ին՝ թափօրի աւարտից յետոյ, հոգեւորականութիւնը, ճեմարանականները եւ հաւատացեալները Նուրհան Սրբազանի գլխաւորութեամբ ուղեւորուեցին տուն: Հայր Բագրատը վառուող մոմով յատուկ կանթեղ էր տանում: Շուկայից դուրս գալիս թափօրը դիմաւորեցին ժողովուրդը եւ հայ սկաուտները՝ շքահանդէսային համազգեստներով: Սկաուտները «Լոյսը» ողջունեցին թմբուկների համազարկով: Ճեմարանականների երգեցողութեան եւ թմբուկների համազարկի ներքոյ բոլորը հասան Սրբոց Յակոբեանց տաճար: Սկաուտներն ուղղուեցին վանքի մեծ բակ եւ այնտեղ աւարտեցին իրենց յաղթական երթը՝ ցուցադրելով շքերթի արուեստը…

Տաճարում բոլորին սպասում էր Պատրիարքը... Կարճ ընդմիջումից յետոյ, պէտք է սկսուէր Աւագ Շաբաթուայ ժամերգութիւնն ու Ճրագալոյցի Պատարագը…

Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցում Պատարագը պէտք է սկսուէր 16:30-ին: Հայր Վարդանն ուղղուեց իր սենեակ, որպէսզի պատրաստի Պատարագի նշխարքը՝ խնդրելով Վարդանին, որ եկեղեցում օգնի իրեն, երբ ինքը վերջացնի նշխարք թխելը:

Եկեղեցու գաւթում՝ մեջտեղում՝ սեղանիկին, զատկական ձուերով խոր սկուտեղ էր դրուած:

— Դա օրհնելու համար է, Պատարագից յետոյ կ’օրհնենք, Վարդա՛ն, իսկ ինչո՞ւ ես այդպէս տխուր:

— Ամէն ինչ կարգին է, Հա՛յր Վարդան, հասկանո՞ւմ էք, այսօր Յարութեան տաճարում մի օրիորդի տեսայ՝ նոյնպիսի խաչ կրծքին, ինչպիսին իմն է: Դուք պատկերացնո՞ւմ էք:

— Ամէն ինչ կարող է լինել. անքննելի են Աստծու ճանապարհները:

— Բայց նրան տեսադաշտիցս կորցրի եւ այլեւս չտեսայ:

— Եթէ դա Տիրոջ կամքն է, շուտով նրան կը հանդիպես, մի՛ տխրիր…

— Տա՛ Աստուած:

Վարդանն օգնում էր Հայր Վարդանին՝ նախապատրաստուելու Պատարագին, մինչեւ եկան ճեմարանականները… Ժողովուրդն արդէն հաւաքւում էր…

Պատարագ էր մատուցում Հայր Վարդանը: Ժողովուրդը շատ էր. ուխտաւորներ՝ Հայաստանից, Ռուսաստանից եւ տեղի հայեր... Երկու ճեմարանականների հետ երգում էր նաեւ ողջ ժողովուրդը... Նոյնիսկ Վարդանն էր ձայնակցում՝ «Տէ՜ր, ողորմեա՜», եւ նրան թւում էր, որ իրենց ձայնակցում են նաեւ հրեշտակները: Բայց դա ոչ միայն Վարդանը, այլեւ բոլոր ներկաներն էին զգում, որ երեւում էր նրանց գորովալից դէմքերից եւ երանութեամբ լցուած փայլող աչքերից…

Քարոզից յետոյ Հայր Վարդանը բոլոր հաղորդուել ցանկացողներին հրաւիրեց ընդհանուր խոստովանութեան: Ամբողջ եկեղեցին ծնկի իջաւ... Հաղորդւում էին համարեայ բոլորը…

Հաղորդուելուց յետոյ Վարդանը արտասուեց. դրանք ուրախութեան եւ Աստծուն ուղղուած երախտագիտութեան արցունքներ էին՝ իր մեղաւոր անձի նկատմամբ Նրա գթասրտութեան համար…

Պատարագից յետոյ բոլորը գաւիթ դուրս եկան, որպէսզի օրհնեն զատկական ձուերը... Բոլորը միասին երգում էին՝ Ամէ՜ն, Ալէլո՜ւիա, Ալէլո՜ւիա, Ալէլո՜ւիա:

Հայր Վարդանը, օրհնելով ձուերը, սկսեց բաժանել դրանք... Բոլորը միմեանց շնորհաւորում էին՝ **Քրիստո՜ս Յարեաւ ի մեռելոց**: Տիրում էր զատկական ուրախութիւն եւ Քրիստոսի Յարութեան ցնծութիւն: Ժողովուրդը սկսեց ցրուել. բոլորին ընտանեկան ընթրիք էր սպասում…

Եւ այդ պահին Վարդանը նկատեց այն օրիորդին, որին տեսել էր Յարութեան Տաճարում: Եթէ նրա դէմքը չտեսնէր, չէր էլ ճանաչի. նա այլ հագուստով էր, աւելի նրբաճաշակ եւ փօնական, բայց խաչը չնկատեց: Վարդանը չէր համբերում, որ հետը խօսի... Նա արդէն դուրս էր գալիս եկեղեցուց, երբ Վարդանը մօտեցաւ եւ դիմեց նրան անգլերէն.

— Ներեցէ՛ք, իսկ Դուք այսօր եղե՞լ էք Յարութեան Տաճարում:

— Այո՛:

— Չգիտեմ՝ ինչ ասեմ... Կարո՞ղ էք ինձ ցոյց տալ Ձեր խաչը:

Օրիորդը հարցական հայացքով նայում էր Վարդանին եւ անգամ շիկնեց... Նարօտից կախուած խաչը ծածկուած էր գլխաշորով…

— Ահա՛:

— Իսկ ի՞նչ է գրուած հակառակ կողմում: Ցո՛յց փուէք, խնդրեմ:

Վարդանը վստահ էր, որ այնտեղ գրութիւն կայ... Օրիորդը չէր հասկանում, թէ ինչ է կատարւում, սակայն շրջելով խաչը՝ կարդաց. «**ԱՍՏՈՒԱ՛Ծ, ՊԱՀԵԱ՛ ՋՇՈՒՇԱՆԻԿ**»:

— Ձեր անունը Շուշանի՞կ է:

— Այո՛, իսկ Դուք որտեղի՞ց գիտէք անունս:

— Գրուած է չէ՞ խաչին:

— Բայց կարող է…

— Իմ անունը Վարդան է, եւ ահա իմ խաչը՝ նոյն գրութեամբ՝ «**ԱՍՏՈՒԱ՛Ծ, ՊԱՀԵԱ՛ ՋՎԱՐԴԱՆ**». սա իմ մեծ պապի՝ Վարդանի խաչն է:

Վարդանը ցոյց փուեց իր խաչը՝ գրութեամբ: Շուշանիկը շփոթմունքից արտասուեց… Նրանց մօտեցաւ Հայր Վարդանը…

— Ի՞նչ է պատահել քեզ, Շուշանի՛կ: Վարդա՛ն, ի՞նչ է եղել:

— Հա՛յր Վարդան, Հա՛յր Վարդան, չէք հաւատայ: Ես գտայ Տէր–Սարգսեան ընտանիքին... Գտայ այնտեղ, որտեղ չէի էլ մտածում գտնել:

— Վարդա՞ն:

— Հա՛յր Վարդան, ես գտայ, աւելի ճիշտ՝ իմ խաչը գտաւ:

— Դէ՛հ, փա՜ռք Աստծու: Շուշանի՛կ, ասում էի չէ՞, որ Տէրը կը լսի քո աղօթքները: Վարդա՛ն, իսկ քեզ ի՞նչ էի ասում:

Վարդանը եւ Շուշանիկը շողում էին ուրախութիւնից: Հայր Վարդանը Շուշանիկի հետ խօսում էր հայերէն, Վարդանի հետ՝ ռուսերէն:

— Հա՛յր Վարդան, այսօր մեզ կայցելէք, այնպես չէ՞:

— Այո՛, ժամը եօթին, ինչպէս եւ պայմանաւորուել էինք:

— Եթէ խնդրեմ, կարո՞ղ էք Վարդանին էլ բերել:

— Ինքդ էլ հրաւիրի՛ր նրան:

— Խնդրում եմ: Ես տուն վազեմ: Աստուա՛ծ ձեզ օգնական:

— Աստուա՛ծ քեզ պահապան:

## ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԱՐԾԻՒՆԵՐԸ

Շուշանիկը վազեց տուն. նա չէր համբերում, թէ երբ է պատմելու ծնողներին, որոնք իրենից փոքր-ինչ վաղ էին տուն վերադարձել, եւ պապիկին, որ հիւանդ էր եւ տանն էր մնացել…

Ուխտաւորները սպասում էին Հայր Վարդանին եւ Վարդանին սեղանատանը… Հայր Վարդանն օրհնեց սեղանը, մաղթեց ամենայն բարիք եւ նորից շնորհաւորեց Քրիստոսի Յարութեան կապակցութեամբ: Նա զգուշացրեց Վարդանին, որ վերջինս կուշտ չուտի, քանի որ հրաւիրուած են Շուշանիկենց տուն…

Շուշանիկն ապրում էր Սրբոց Հրեշտակապետաց վանքից մի քանի քայլ հեռու: Այս տարի նրա ընտանիքը ընտանեկան զատկական ընթրիքի էր հրաւիրել Հայր Վարդանին. վերջինս պէտք է հաղորդութիւն տար Շուշանիկի պապիկին եւ օրհնէր տունը…

Հայր Վարդանին եւ Վարդանին դիմաւորեցին Շուշանիկի ծնողները՝ Աբգար եւ Հռիփսիմէ Գրիգորեանները: Հռիփսիմէն, տեսնելով Վարդանին, արտասուեց եւ շատ ամուր գրկեց նրան: Վարդանը նոյնպէս չդիմացաւ եւ արտասուեց… Նրանց տարան ճաշասենեակ, որտեղ զատկական տօնական սեղան էր զգուած, սեղանի մօտ հաշմանդամի սայլակին նստած էր Շուշանիկի պապիկը՝ Միքայէլ Գէորգեանը: Նա 84 տարեկան էր. կնոջ՝ Աննայի մահուանից յետոյ նրա ոտքերն անզգայացել էին, եւ այդ օրուանից նա ապրում էր աղջկայ մօտ:

— Հայրի՛կ, հայրի՛կ, տե՛ս, թէ ում է նման Վարդանը: Նա քո Շուշանիկ տատի եղբօր պատճէնն է: Շուշանիկն ինձ ասում էր, իսկ ես չէի հաւատում… Աստուա՛ծ իմ, չի կարող պատահել:

— Մօտեցի՛ր ինձ, տղա՛ս, թո՛յլ տուր քեզ գրկել:

Միքայէլը նոյնպես շատ ամուր գրկեց Վարդանին եւ արտասուեց. նա չէր ուզում բաց թողնել Վարդանին: Վերջինս չէր հասկանում, թէ ինչ է կատարւում. ամէն ինչ այնպէս արագ տեղի ունեցաւ. նրան թւում էր, որ այդ մարդկանց ճանաչում էր ամբողջ կեանքում:

— Պապի՛կ, հանգի՛ստ թող Վարդանին, թէ չէ կը խեղդես: Աւելի լաւ է, թող նայի այս լուսանկարին:

Լուսանկարը ձեռքին՝ սենեակ մտաւ Շուշանիկը, որին տուն մտնելու առաջին իսկ րոպէից փնտռում էր Վարդանը: Հին լուսանկարին հայկական ընտանիք էր: Ընտանիքի հայրը

լանջախաչով քահանայ էր. նա նստած էր կնոջ հետ, եւ նրանց ձեռքերին մէկական երեխայ կար. կրտսեր աղջիկը նստած էր մօր ծնկներին, իսկ աւագ տղան կանգնած էր հօր կողքին:

Սկզբում Վարդանը չնկատեց, որ քահանան եւ ինքը նման են, քանի որ Շուշանիկին նայելուց դեռ չէր կշտացել եւ գերուած էր նրա գեղեցկութեամբ:

Թարգմանութեան գործին լծուեց Հայր Վարդանը: Շուշանիկը հարցրեց Վարդանին.

— Վարդա՛ն, ու՞մ է նման քահանան:

— Աստուա՛ծ իմ, ո՞վ է նա: Չէ՞ որ դա ես եմ կամ…

— Սա քո մեծ պապն է՝ Տէր Վարդան Տէր-Սարգսեանը, սա նրա կինն է՝ գեղեցկուհի Նեկտարը, աւագ որդին՝ Կարապետը, միջնեկը՝ Աւետիսը, իսկ դուստրը՝ Հռիփսիմէն…

— Իմ մեծ պապը քահանա՞յ էր:

— Այո՛:

— Խօսակցութիւնները՝ յետոյ. ես պէտք է հաղորդութիւն տամ Միքայէլին… Դեռ կը հասցնէք զրուցել…

Հայր Վարդանը հաղորդութիւն տուեց Միքայէլին, յետոյ օրհնեց տունը եւ սեղանը, որից յետոյ բոլորը սեղան նստեցին… Վարդանն ամբողջ ժամանակ չէր կարողանում հաւատալ: Նրան թւում՝ դա երկարատեւ երազ է, որը նա տեսնում է աշխատանքի չգնալու օրուանից… Բոլորն էլ չէին համբերում, թէ երբ են ամէն ինչ իմանալու մէկը միւսի մասին… Բայց յատկապէս Վարդանը. մի կողմից՝ նա դեռ լիովին չէր գիտակցել իրավիճակը, իսկ միւս կողմից՝ անընդհատ մտածում էր Շուշանիկի մասին…

Խօսակցութիւնը սկսեց Միքայէլը.

— Դէ՛, Վարդա՛ն, պատմի՛ր քո, ընտանիքիդ մասին:

— Դէ՛, ես ամէն ինչ չէ, որ գիտեմ…

— Դէ՛, ինչ գիտես, այն էլ պատմի՛ր: Ես Նեկտարից եւ Յակոբից լուրեր չունեմ արդէն 1947 թուականից, այն ժամանակուանից, երբ նրանք լքեցին Երուսաղէմը եւ ուղեւորուեցին Հայաստան…

— Ուրեմն, նրանք Հայաստան են եկել 1947 թուականի՞ն:

— Այո՛, աւելի ճիշտ՝ մեկնել են «**Պօբեդա**» նաւով, իսկ յետոյ պէտք է գնացքով հասնէին… Դէ՛ լաւ, նախ դո՛ւ պատմիր, յետոյ՝ մենք:

Վարդանը պատմեց այն ամէնը, ինչ մօրից էր իմացել: Նոյնիսկ այն, թէ ինչպէս է ուղղափառութիւն ընդունել, ինչպէս է ընկել Երուսաղէմ, իր եւ Հայր Վարդանի զրոյցների մասին… Բայց այժմ նա ամէնից շատ էր ուզում իմանալ ամէն ինչ: Շուշանիկը որոշեց պատմել, քանի որ գիրք էր գրում ընտանիքի մասին… Նրա ձեռքի տակ մի մեծ ձեռագիր տետր էր…

— Մեր արմատները, ինչպէս դու գիտես, Վանից են: Տէր Աւետիս Տէր-Սարգսեանը մի որդի ունէր՝ Տէր Կարապետը, որը հօր նման քահանայ էր դարձել: Նա Վանում Սրբոց Առաքելոց եկեղեցու քահանան էր եւ բնակւում էր եկեղեցուն կից: Ամուսնացել էր դարձեալ ծնունդով Վանից քահանայի դստեր հետ. անունը՝ Աղաւնի: Նրանք երեք զաւակ ունէին. աւագը՝ Աւետիսը, ծնուել էր 1878 թուականին, դուստրը՝ Շուշանիկը, ծնուել էր 1883 թուականին, իսկ Վարդանը՝ 1885 թուականին:

— Վարդանն իմ մեծ պա՞պն է:

— Այո՛, բայց մինչ նրանց մասին իմ պատմութիւնը շարունակելը պատմեմ Վանի, քաղաքի կեանքի մասին, որպէսզի քեզ ամէն ինչ հասկանալի լինի, եւ որպէսզի իմանաս, թէ որտեղից են արմատներդ…

Վանն աշխարհի հնագոյն քաղաքներից է եւ Մեծ Հայքի տասներկու մայրաքաղաքներից մէկը: Վանը նաեւ Վասպուրականի իշխանութեան մայրաքաղաքն էր, իսկ յետոյ՝ նաեւ Վասպուրականի թագաւորութեան…

X-XI դարերում Վասպուրականի թագաւորութիւնում կար 10 քաղաք, 4 հազար գիւղ, 72 ամրոց, 115 վանք. երկիրը շատ խիտ էր բնակեցուած: Վասպուրականի թագաւորութիւնով էր անցնում կարեւոր առեւտրական քարաւանային ճանապարհի հարաւային ճիւղը: Վասպուրականի թագաւորութիւնում զարգացած էին արհեստագործութիւնը եւ առեւտուրը: Գագիկ Արծրունու թագաւորութեան օրօք (908-943 թթ.) մեծ շինարարական աշխատանքներ էին տարւում Ոստան, Աղթամար, Վան քաղաքներում: Ջգալիօրէն զարգացած էր մշակոյթը. խոշորագոյն ներկայացուցիչներն էին Մանուէլ ճարտարապետը եւ Սուրբ Գրիգոր Նարեկացին:

— Ուրեմն «Մատեան Ողբերգութեան» հեղինակ Սուրբ Նարեկացի՞ն էլ վանեցի էր:

— Այո՛, իհարկէ, եւ ոչ միայն նա. անգամ իմ սիրելի Սուրբ Տաթեւացին, սակայն սրա մասին մէկ ուրիշ անգամ…

1016 թուականից սկսած՝ Վասպուրականի թագաւորութիւնը ենթարկւում է արեւելքից եկած թրքական ցեղերի հարձակումներին:

Բաւարար ուժեր չգտնելով դիմակայելու քոչւորների ասպատակութիւններին՝ Վասպուրականի վերջին թագաւոր Սենեքերիմ Արծրունին Բիւզանդիայի կայսր Բարսեղ II-ի առաջարկութեամբ 1021 թուականին ստորագրում է իր թագաւորութիւնը կայսրութեանը փոխանցելու պայմանագիր: Փոխարէնը նա ստանում է Սեբաստիա քաղաքը եւ նահանգը, որտեղ էլ վերաբնակեցնում է 70-80 հազար իր հպատակներին, այդ թւում նաեւ Վանի բնակչութեան մի մասին: Այդպիսով, Վանի թագաւորութիւնը դադարում է անկախ գոյութիւն ունենալուց: 1071 թուականին՝ Մանազկերտի մօտ Բիւզանդիայի եւ Բագրատունիների թագաւորութեան դաշնակից բանակի պարտութիւնից յետոյ, Վասպուրականը մտնում է սելջուկների կայսրութեան կազմի մէջ:

Վանը յայտնի է իր անառիկ բերդով: XII-XIII դարերում արաբ աշխարհագիր Իբն ալ Ասիրը նկարագրում է Վանի բերդը իբրեւ խոշորագոյններից եւ անառիկներից մէկը: Բայց անգամ բերդի պարիսպների պաշտպանութեան ներքոյ չի ապահովւում քաղաքի խաղաղ կեանքը: Իրար են յաջորդում սելջուկների, մոնղոլ–թաթարների, պարսիկների ասպատակութիւնները: 1387 թուականին վանեցիները 26 օր ու գիշեր արիաբար պաշտպանւում էին Լենկ Թեմուրի զօրքերից: Ի վերջոյ, զաւթիչները կարողանում են քաղաք սողոսկել: Բնակիչներին իրար են կապում եւ բերդի բարձր պարիսպներից ցած նետում: Գրիգոր Խլաթեցու չափածոյ յիշատակարանի վկայութեամբ զոհերն այնքան շատ են լինում, որ վերջին նետուածներն ընկնում են դիակների կոյտերի վրայ եւ ողջ մնում: Ընդհանուր առմամբ սպանւում է եօթ հազար տղամարդ. կանայք եւ երեխաները գերի են ընկնում:

1424 թուականին յիսուն օր քաղաքը պաշարում է ղարա կոյիւնլու ցեղի առաջնորդ Իսկանդէրը՝ այդպէս էլ չկարողանալով փիրել քաղաքին: Միայն յաջորդ գարնանը՝ նոր պաշարման ժամանակ է նա յաջողութեան հասնում:

Միմեանց յաջորդող զաւթիչները չեն կարողանում արմատախիլ անել հայերի՝ անկախութիւնը վերականգնելու ձըգտումը: Հայրենիքի ազատութեան համար պայքարը ձգւում է դարեդար: Գաղթերի եւ կոտորածների ժամանակ ոչնչացւում

են բազմաթիւ ձեռագիր գրքեր՝ փարեգրութիւններով եւ յիշատակարաններով. մեր ժողովրդի բազում հերոսական ճակատամարտերի մասին վկայութիւններ համարեայ չեն մնացել:

XVI-XVII դարերում՝ Իրանի եւ Օսմանեան կայսրութեան միջեւ չընդհատւող պատերազմների ընթացքում, Վանը բազմիցս ձեռքից ձեռք է անցում: 1533 թուականին այն գրաւում են թուրքերը, բայց շուտով պարսիկներն են պաշարում քաղաքը, որտեղ սովից ու սրից զոհւում է 16 հազար մարդ: 1548 թուականին թուրքերն այնպիսի կարեւորութիւն են տալիս Վանը կրկին գրաւելուն, որ Սուլեյման Փառահեղ սուլթանը շտապում է այդ մասին գրաւոր տեղեկացնել Ֆրանսիայի թագաւորին: Նամակում նա Վանի բերդը անուանում է «անխորտակելի», «երկինք խոյացող»: Վանը կառուցող հայ շինարարների հանճարն ապշեցրել է նաեւ XVII դարի թուրք պատմագիր Չելեբիին: Նրա նկարագրութիւնից կարելի է պատկերացնել, թէ ինչպիսի տեսք է ունեցել Վանը մինչեւ մեծ երկրաշարժը. «*Քաղաքն ունի ներքին և արտաքին պարիսպներ: Ներքին պարիսպն արևմտեան կողմից է՝ բարձր և զառիվայր ժայռին. նրա մի կողմում քաղաքն է, միւսում՝ ամրացուած բերդը... Երբ մեծն Թեմուրը գրաւում է Վանը, նա իր էմիրներից մէկին յանձնարարում է աւերել այն: Տարբեր միջոցներով և ամէն տեսակի ջանքերով ցանկանում են կատարել այդ հրամանը, բայց չեն կարողանում: Անկարող լինելով խախտել բերդի՝ ժայռին յար և նման քարէ հիմքը, բավարարւում են՝ յետագայում կառուցուած մի քանի աշտարակներ և պատնէշներ ոչնչացնելով: Այդ աւերումները չեն խախտում Վանի բերդի ամրութիւնը: Սրանից կարելի է եզրակացնել, թէ ինչ աստիճանի ամուր էին նրա պարիսպները*»:

Եւ այն, ինչ չեն կարողանում անել բարբարոսները, իրականացնում է 1648 թուականի մեծ երկրաշարժը: Փլւում են բերդի պարիսպները, քանդւում են քաղաքի եւ շրջակայքի բոլոր եկեղեցիները, շատ տներ, պալատներ եւ շինութիւններ, դրանց աւերակների տակ զոհւում են շատ մարդիկ եւ կենդանիներ: Բոլոր շինութիւնները, եկեղեցիները, վանքերը վերկանգնւում են սեփական ուժերով…

Վանեցի հայերը երկար են դիմանում թուրք եւ քուրդ աւազակներին, որոնք թալանում եւ սպանում են Վանի քահանաներին եւ բնակիչներին: Շատ վանեցի իշխաններ զինուած դիմադրութիւն են ցոյց տալիս թուրքերին եւ քրդերին եւ յաճախ

անհաւասար մարտերում յաղթանակներ են տանում: Վասպուրականի քաջ որդիների մասին իբրեւ ականատես գրում է Գ.Սրուանձտեանը. «...*Հայն իր մանկութիւնից մինչ գերեզմանը մէկ ուսի վրայ դրած ունէր բահը, միւսին՝ հրացան. մէկով իր գործը կը գործէր, միւսով՝ իր թշնամին կը հալածէր. մէկ ձեռքը կը բռնէր մանգաղ, միւսը՝ սուր. մէկով իր հունձը կը հնձէր, միւսով իր հնձածները կը պաշտպանէր. ու այսպէս կ՚ապրէր*»:

Վասպուրականցիների ազատատենչ հոգին ընկճելու, զինուած դիմադրութեան հնարաւորութիւնից զրկելու, իշխանական հարստութիւնը արմատախիլ անելու համար Օսմանեան կայսրութիւնը հայերի դէմ է ուղղում թուրքերի եւ քրդերի թալանչի բնազդները, հետապնդում եւ ճնշում է հայ բնակչութեանը՝ դիմելով ամենադաժան եւ բարբարոսական միջոցների: Թրքական անտանելի լուծը Վանից գաղթի էր հարկադրում ոչ միայն նշանաւոր հայերի, այլեւ բազում մանր արհեստաւորների: Նրանց մի մասն այդպէս էլ պանդուխտ մեռնում է օտար ափերում:

Չնայած բոլոր հալածանքներին՝ XIX դարի երկրորդ կէսին Վանում աշխուժանում են առեւտուրը եւ մշակոյթը, կրկին վերածնւում են ազգային–ազատագրական գաղափարները: Մեծ մասամբ սա պայմանաւորւում է Խրիմեան Հայրիկի, նրա հետ նաեւ այլ վանեցիների վերադարձով:

— Խրիմեան Հայրի՞կ, իսկ ո՞վ է նա. ինչ–որ ծանօթ անուն է:

— Նա ծնուել է 1820 թուականին Վանում, տեղափոխուել Կոստանդնուպոլիս: 1851 թուականին, Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքի կարգադրութիւնը կատարելով, ուղեւորւում է Կիլիկիա, որտեղ ծանօթանալով տեղի հայերի կեանքին՝ ուսումնասիրում է նրանց կենցաղը եւ աջակցում նրանց կրթութեան կազմակերպմանը: 1854 թուականին նրան շնորհւում է վարդապետի հոգեւոր աստիճան:
1856 թուականին, վերադառնալով Վան, նա հաստատւում է Վարագայ վանքի վանահայր: 1857 թուականին բացում է գիշերօթիկ-ճեմարան, որի շրջանաւարտներից շատերը յետագայում դառնում են մշակոյթի գործիչներ կամ հերոսմարտիկներ: 1858 թուականին սկսում է հրատարակել Արեւմտեան Հայաստանի տարածքում առաջին հայ շաբաթաթերթը՝ «Արծուի Վասպուրական»: Նրա շուրջն է համախմբւում մտաւորականութիւնը, որն ակտիւօրէն գործակ-

ցում է շաբաթաթերթի աշխատանքներին, տարածում հայրենասիրական գաղափարներ՝ նպաստելով ազգային ինքնագիտակցութեան վերածննդին:

1860 թուականին այցելում է Արեւելեան Հայաստան, որտեղ ծանօթանում է տեղի ժողովրդի կեանքին եւ կենցաղին: 1862 թուականին վարելով պատմական Հայաստանի Տարօն գաւառի (այն Վանայ լճից արեւմուտք է) հոգեւոր առաջնորդի պաշտօնը եւ դառնալով Սուրբ Կարապետ վանքի վանահայր՝ նա ստեղծում է «Արծուիկ Տարօնոյ» թերթը եւ նոր ճեմարան՝ վերայանձնելով ղեկավարութիւնը Գ. Սրուանձտեանին: Բազմիցս այցելելով Տարօն՝ Խրիմեան Հայրիկը մեծ ջանքեր է գործադրում, որպէսզի սահմանափակուի քուրդ եւ թուրք տէրերի հարստացումն ի հաշիւ հայ բնակչութեան: Օգտագործելով իր ողջ իշխանութիւնը՝ Խրիմեանը փորձում է թեթեւացնել հայ գիւղացու դժուար կացութիւնը: Նրա անունը Մկրտիչ էր, բայց բարութեան եւ հոգատարութեան համար ժողովուրդը նրան կոչում էր՝ Հայրիկ: 1869-1873 թթ. Կոստանդնուպոլսի հայերի Պատրիարքն էր: 1892 թուականին դառնում է Ամենայն Հայոց Կաթողիկոս. մահանում է 1907 թուականին:

Յայտնի են Խրիմեան Հայրիկի՝ 1878 թուականի Բեռլինի վեհաժողովը հարիսա ուտելու հետ համեմատելու բառերը: Խրիմեանն ասում էր, որ մեծ տէրութիւններն ունեն երկաթեայ շերեփներ, որոնցով հեշտութեամբ վերցնում են իրենց հասանելիքը, իսկ ինքը, ի հակադրութիւն նրանց, չի կարողանում վերցնել իր մասը, քանի որ իր շերեփը թղթից էր, եւ մնաց հարիսայի մէջ: Այս ամէնից յետոյ Խրիմեան Հայրիկը հայ ժողովրդին կոչ է անում զինուելու եւ ինքնուրոյն պայքարելու իր ապագայի համար: Տեսնո՞ւմ ես, թէ ինչ վանեցիներ են եղել: 1860-ական թթ. սկզբին հայերի հալածանքը սաստկանում է: Պատասխանը 1862 թուականի զինուած գործողութիւնն էր: Թուրքերը բաց չեն թողնում կոտորածի եւ թալանի առիթները, եւ ահա նոր պատրուակ է ստեղծւում: Թաղման թափօրների ժամանակ քրիստոնեաներին թոյլ չէր տրւում հանգուցեալի առջեւից խաչ եւ խաչվառ տանել: Բայց Վանի հայերը չեն ենթարկւում այդ արգելքին: Տեղացի թուրքերը դիմում են Վանի փաշային՝ կոտորածի սպառնալիքով պահանջելով ճնշել հայերին, արգելել ազգային սովորոյթներով թաղման թափօրները: Քիչ անց մահանում է ինչպէս փաշան, այնպէս էլ տեղացի հայ հարուստներից մէկը: Թուրքերը թաղման ժամանակ յարձակւում են թափօրի վրայ, ծեծկռտուք է

սկսւում, այնուհետեւ՝ հրաձգութիւն: Վանի եւ շրջակայքի հայերը, զէնքը ձեռքներին, պաշտպանում են թաղման մասնակիցներին: Ժամանակին թերթերը գրում էին, որ բերդում մարտ է բռնկւում, եւ այն մնում է հայերի ձեռքում, քանի որ թուային գերակշռութիւնը նրանցն էր: Տասը տարի անց՝ 1872 թուականին, տեղացի հայրենասէրները կազմակերպում են «Միութիւն ի փրկութիւն» գաղտնի ընկերութիւնը: 1877 թուականին, երբ սկսւում է ռուս–թրքական պատերազմը, Վանը լցւում է թուրք եւ քուրդ զինուած դասալիքներով: Նրանք չեն ձգտում ռազմաճակատ մեկնել՝ գերադասելով թալանել եւ սպանել խաղաղ բնակիչներին: Այդ օրերին Օսմանեան կառավարութիւնը թրքական բանակի ծախսերը հոգալու համար Վանի հայերից պահանջում է խոշոր դրամական միջոցներ՝ անամօթաբար յայտարարելով, որ իսլամի զօրքերը պէտք է ռազմաճակատ գնան՝ պաշտպանելու նաեւ նրանց խաղաղութիւնը, ունեցուածքն ու կեանքը: Վանի հայերին այդպէս շորթելով՝ ստիպում են հսկայական գումարներ վճարել, սակայն դրանով չեն սահմանափակւում:

Հայ վաճառականութեանը մահացու հարուած հասցնելու նպատակ էր դրուած՝ թուրք մանր առեւտրականներին մրցակցութիւնից ազատելու համար: Դրա համար էլ հրկիզումներ եւ թալան է կազմակերպւում Վանի նշանաւոր շուկայում՝ զինուորների, ոստիկանների եւ քրիստոնեաներին ատող տեղացի խառնամբոխի մասնակցութեամբ: Վանեցի յայտնի գործիչ Արմենակ Եկարեանը այս իրադարձութեան մասին մանրամասնում է, որ հետզհետէ պարզւում է՝ դժբախտութիւնը պատահական չէր, այլ իշխանութիւնների մանրազնին պլանաւորածը՝ հայկական փարրի բարեկեցութիւնը վնասելու նպատակով, եւ դա յաջողւում է, քանի որ հրկիզւում է ոչ միայն շուկան՝ խանութներով եւ կրպակներով, այլեւ հայ առեւտրական դասի՝ պահեստների ողջ ունեցուածքը: Կրակի բոցերում այրւում են համարեայ երկու հազար արհեստանոց, խանութ եւ կրպակ, նիւթական վնասը կազմում է մօտ տասը միլիոն օսմանեան ոսկի, թէեւ ճշգրիտ գումարը հաշուարկելը շատ դժուար էր: Հայերը բողոքով դիմում են՝ վնասը հատուցելու համար, սակայն երկրում, որտեղ երաշխաւորուած չէր անգամ կեանքը, միամտութիւն կը լինէր պահանջել գոյքի ապահովութիւն: Վանի հրդեհից յետոյ բազմաթիւ ընչազուրկ հայեր մեկնում են Կոստանդնուպոլիս՝ աշխատանք փնտռելու: 1877 թուականին Կոստանդնուպոլսում բնակւում էր 20 հազար

վանեցի պանդուխտ: Կոստանդնուպոլսի Ազգային Ժողովարա-նի փուեալներով 1877 թուականի յունիսին Վանի բնակիչները եւ Վասպուրականի միւս հայերը թրքական բանակի ծախսերի համար վճարել են 230 հազար ոսկի, 1 միլիոն 377 հազար դուրուշ՝ չհաշուած պարէնը, հագուստը, ձիերը, բեռնակիր եւ ընտանի կենդանիները: Եւ այս ամէնը միայն պատերազմի սկզբում: Պատերազմը բերում է անասելի զրկանքներ, աղքատութիւն եւ սով: Վանում կուտակւում է 66 հազար քաղցած մարդ, որոնցից շատերը մահանում են մթերքի, բժիշկների եւ դեղամիջոցների պակասի պատճառով: Մկրտիչ Խրիմեանի ջանքերով ստեղծւում է «Սովեալներուն օգնութեան կոմիտէ»: Վանեցիներին օգնութեան է հասնում նշանաւոր գրող, մասնագիտութեամբ բժիշկ Ծերենցը: Այստեղ է ուղարկւում Կովկասի հայաբնակ շրջանների օգնութիւնը: Պատերազմից յետոյ՝ 1878 թուականին, Վանում ստեղծւում է «Սեւ խաչ» կազմակերպութիւնը. նպատակ է դրւում բնակչու-թեան շրջանում ինքնապաշտպանութեան ոգի տարածել, որպէսզի նա դառնայ իր իրաւունքների տէրը եւ մարդավայել ապրի: Երբ պատերազմից վերադարձող թուրքերը եւ քրդերը սկսում են վաճառել իրենց զէնքը, «Սեւ խաչը» եւ տեղի հայութիւնը որոշում են զինուել: Այդ տարիներին Վանում ստեղծւում է նաեւ «Զինակիր» միութիւնը, որի անդամները երիտասարդութեանը ռազմական գործ են ուսուցանում: 1870-80-ական թթ. Վասպուրականի լեռներում արդէն լսւում են ազատամարտիկների առաջին կրակոցների արձագանքները: Որոշ վանեցի հայեր 1880-ական թթ. պատրաստւում էին գրաւել քաղաքային բերդը եւ զինաթափել կայազօրը: Սակայն Խրիմեանի եւ միւս յարգարժան գործիչների միջամտութեամբ հրաժարւում են այդ վտանգաւոր ծրագրից: Դեռեւս 1820-ական թթ. Վանում Յակոբ Գարասեֆերեանի ջանքերով դպրոց է բացւում. քսան տարի յետոյ քաղաքում կար արդէն վեց ուսումնական հաստատութիւն: 1860-ական թթ. տեղի են ունենում առաջին թատերական ներկայացումները: 1863 թուականին ստեղծուած «Գինիի սահմանափակող գործածու-մը միութիւնը» պայքարում է հարբեցողութեան դէմ, «Կրթու-թեան օգուտին միութիւնը» (1865թ.) նպատակ ունէր օգնելու դպրոցի աշխատանքներին, գրավաճառութիւն կազմակերպե-լուն, հաւաքելու հազուագիւտ հրատարակութիւնները, հիմ-նելու ազգային թանգարան: Վարագայ վանքում գրքեր են հրա-տարակւում:

Վանի կրթական օջախները 1870-1880-ական թթ. աւելի են աշխուժացնում իրենց գործունէութիւնը՝ աղջիկների Սանդխտեան դպրոց, Հայկազեան վարժարան, Մ. Փորթուգալեանի հիմնած ուսուցչական ճեմարան, իսկ այն փակելուց յետոյ՝ «Կեդրոնական» վարժարան: Խրիմեան Հայրիկի նախաձեռնութեամբ Վարագայ վանքում բացուած Հողագործական վարժարանը նպատակ ունէր երիտասարդութեանը ծանօթացնելու հողագործութեան առաջաւոր մեթոդներին եւ գիւղատնտեսական մեքենաներին. հեռաւոր Մանչեստրից հայերը վարժարանին են նուիրում մեխանիկական հնձիչ: Լայն տարածում են գտնում նաեւ կիրակնօրեայ դասերը, որոնց ժամանակ մեծահասակներին գրագիտութիւն են սովորեցնում: Ամենայայտնի եւ շնորհալի վանեցի մանկավարժ, եռանդուն կազմակերպիչ Համբարձում Երամեանը բացում է մասնաւոր միջնակարգ դպրոց: Դարավերջին քաղաքում կար 12, իսկ ամբողջ նահանգում՝ 120 հայկական դպրոց:

1880-ական թթ. սաստկանում են հայ մշակոյթի հետապնդումները. փակւում են մի շարք թերթեր, արգելւում են գրքեր, ձերբակալւում են մտաւորականութեան բազմաթիւ ներկայացուցիչներ: 1886թ. իշխանութիւնները Վանում փակում են համարեայ բոլոր դպրոցները, դասաւանդողները ենթարկւում են հալածանքների: Շատերին անհիմն կասկածներով վտարում են Վանից, հայկական թաղամասի խորհուրդը ցրւում է, իսկ նորն ընտրել արգելւում են:

Հասկանո՞ւմ ես, Վարդա՛ն, այն, ինչ գրում եմ, չափազանց կարեւոր է, որ մարդիկ գիտակցեն, որ 1915թ. Հայոց Եղեռնը սովորական պատահականութիւն չէր: Դա թուրքերի քաղաքականութիւնն էր, որոնք շատ տարիներ առաջ արդէն լուծել էին հայկական հարցը՝ ոչ մի հայի կենդանի չթողնել: Անձամբ ինձ համար թուրքերի քաղաքականութիւնը XIXդ. եւ XXդ. երբեք չի փոխուել, փոխուել են իշխողները, չեմ խօսում նաեւ մեր ժամանակների մասին…

— Ուշադիր լսում եմ. ուզում եմ այդ ամէնն իմանալ: Խնդրում եմ՝ շարունակես, եթէ չես յոգնել:

— Մեծագոյն սիրով. երբեք չեմ յոգնում, երբ խօսում եմ մեր Եղեռնից. մարդիկ պէտք է իմանան ճշմարտութիւնը: Շուտով՝ Բեռլինի վեհաժողովի աւարտից յետոյ՝ 1878 թուականին, պարզ է դառնում, որ Աբդուլ Համիդ II սուլթանը մտադիր է Արեւմտեան Հայաստանում ինչ-որ բարենորոգումներ

իրականացնել: Աւելին, առաւելապէս հայերով եւ այլ քրիս-տոնեաներով բնակեցուած փարածքները մասսայաբար վերա-բնակեցւում են Բալկաններից եւ Կովկասից բերուած մուսուլ-մաններով, քրդերով: Տարեցփարի աւելանում են հայ բնակ-չութիւնից հարկող փուրքերը: Յաճախակի, հաւաքելով հար-կերը, թուրք պաշփօնեաները մի քանի օրից վերադառնում են նոյն գիւղը եւ, սպառնալով ձերբակալութիւններով եւ կփփանք-ներով, կրկին շորթում են արդէն վճարուած հարկը: Հայ գիւղա-ցիները պարփաւոր էին ձմեռելու ընդունել մուսուլման-քոչւոր-ներին, փարին մի քանի օր օթեւանելու ընդունել կառավա-րական պաշփօնեաներին՝ նրանց ուղեկցող բոլոր անձանցով, անվճար կափարել ճանապարհային աշխափանքներ: Միւս կողմից թրքական իշխանութիւնների ներկայացուցիչները փեղերում համարեայ ոչինչ չէին անում քրդերի և չերքեզների յարձակումներից հայերին պաշփպանելու համար, իսկ յաճախ հենց իրենք էին կանգնած լինում հայկական գիւղերն ասպափակողների թիկունքին: 1894 թուականի սկզբին հայերը նորից հարց են յարուցում՝ Բեռլինի վեհաժողովի 61-րդ յօդուածն իրականացնելու մասին, որի համար առիթ է լինում նոյն փարի Սասունի հայերի ապսփամբութիւնը: Ապսփամբու-թիւնը ծագում է թրքական իշխանութիւնների՝ Սասունի կիսաինքնավար կարգավիճակը վերացնելու փորձերից, այլեւ իշխանութիւնների հրահրած հայ-քրդական բախումներից: Թրքական զօրքերով եւ քրդական ջոկափներով ապսփամբու-թիւնը ճնշելիս ոչնչացւում է աւելի քան 10000 հայ: 1895 թ. մայիսի 11-ին մեծ փէրութիւնների դեսպանները Աբդուլ Համիդ II սուլթանից պահանջում են բարենորոգումներ իրականաց-նել, որ յայփնի են իբրեւ *«Մայիսեան Բարենորոգումներ»*, հայերին յարձակումներից եւ թալանից պաշփպանելու նպափակով: Սուլթանը, ինչպէս միշփ, չի շփապում կափարել դեսպանների պահանջները: 1895 թ. սեպփեմբերի 18-ին թրքական Բաբ Ալի մայրաքաղաքի շրջանում (այսփեղ էր փեղակայուած սուլթանի աթոռանիսփը) փեղի ունեցած ցոյցից յեփոյ ժամանակաշրջանը համընկնում է հայկական ջարդերի գագաթնակէփին: Ցոյցի ժամանակ հնչում են *«Մայիսեան Բարենորոգումներ»* իրականացնելու պահանջներ: Թուրք ոսփիկանութիւնը, զօրքը եւ թուրք խառնամբոխը յարձակւում են ցուցարարների վրայ. այդ օրը Կոսփանդնուպոլսում սպանւում է 2000 հայ: Կոսփանդնուպոլսի ջարդը գաւառներում կոփորածի ազդանշան է դառնում: 1895 թ. սեպփեմբեր-

նոյեմբեր ամիսներին հայերի մասսայական ջարդեր են տեղի ունենում Տրապիզոնում, Դերջանում, Բաբերդում, Երզնկայում, Քղիում, Չարսանջակում, Բաղեշում, Ուրֆայում, Կարինում, Մալաթիայում, Խարբերդում, Ակնում, Դիարբեքիրում, Սեբաստիայում եւ այլ վայրերում: 1896 թ. օգոստոսի 14-16-ը հայերի նոր ջարդ է տեղի ունենում Կոստանդնուպոլսում, որի ժամանակ սպանւում է 100.00 հայ:

Հայկական ջարդերն իրականացնում են թրքական կանոնաւոր բանակը, «*Համիդիէ*» ջոկատները, ոստիկանութիւնը, թուրք եւ քուրդ խառնամբոխը՝ ցուցաբերելով ծայրայեղ դաժանութիւն: Որոշ վայրերում հայերն ինքնապաշտպանութեան են դիմում: 1895 թ. սեպտեմբերին ապստամբում է Զեյթունը: 1895 թ. հոկտեմբերին՝ Մարաշի հայկական ջարդերից յետոյ, թրքական բանակը (50-60 հազար ասկեար) շարժւում է Զեյթուն: Զեյթունցիները 6 հազար մարտիկ՝ իշխան Ղազար Շովրոեանի եւ Աղասի Թուրսարգսեանի գլխաւորութեամբ, երկու ամսից աւելի յամառ դիմադրութիւն են ցոյց տալիս թուրքերին՝ ետ մղելով նրանց գրոհները: Չկարողանալով փրել Զեյթունին՝ թրքական կառավարութիւնը հարկադրուած է լինում Զեյթուն ուղարկելու վեց օտարերկրեայ հիւպատոսների՝ պաշտպանւողների հետ բանակցութիւններ վարելու համար: Համաձայնութիւն է կնքւում, ըստ որի՝ թրքական բանակը լքում է գաւառը, ապստամբներին ներում է շնորհւում, նշանակւում է քրիստոնեայ կառավարիչ, իսկ բնակչութիւնը հինգ տարով ազատւում է հարկերից…

— Իսկ ի՞նչ էր կատարւում Վանում:

— 1896 թուականին Օսմանեան կայսրութիւնը որոշում է ամբողջովին բնաջնջել Վասպուրականի հայ բնակչութիւնը: Այդ որոշումն այնքան հրէշաւոր էր, որ դրան չեն հաւատում ոչ միայն ժողովուրդը՝ այլեւ հոգեւորականութիւնը: Մինչ այդ՝ 1896 թուականի գարնանը, իշխանութեան ներկայացուցիչները այցելում են Վասպուրականի քրդերին եւ նրանց լարումգրգռում են հայերի դէմ: Սկսւում են կողոպուտներ, սպանութիւններ, հրկիզումներ: Ժողովուրդը համբերութեամբ տանում է այդ յարձակումները՝ վախենալով առաւել գազանութիւններից: Քրդերին ոչ մի դիմադրութիւն ցոյց չի տրւում: Տարբեր քաղաքական կուսակցութիւնների շատ ղեկավարներ չեն էլ կասկածում, որ գոյութիւն ունի հայերին համակարգուած բնաջնջելու՝ սուլթանի յատուկ հրաման, եւ կարծում են, որ աւազակային

յարձակումները միայն տեղական եւ ժամանակաւոր բնոյթ ունեն:

Յունիսի երկուսի լոյս երեքի գիշերը քաղաքում փոխհրաձգութիւն է լինում թուրք զինուորականների եւ քուրդ մաքսանենգների միջեւ, որոնք Պարսկաստանից աղ էին տեղափոխում: Թուրք հարիւրապետ է սպանւում: Մեղքը բարդում են հայերի վրայ: Երկուշաբթի օրը՝ վաղ առաւօտեան, այդ սպայի դիակը փողոցներով տանելով՝ ժողովրդին վրէժխնդրութեան կոչ են անում: Հենց այդ օրն էլ մզկիթներում հաւաքում են քաղաքի մուսուլման բնակիչներին, որոնց իշխանութեան ներկայացուցիչները լարում-գրգռում են հայերի դէմ:

Օրուայ կէսին լարուածութիւնը հասնում է գագաթնակէտին. քրդերը որոշում են Վանում մասսայական կոտորած սկսել եւ յարձակւում են Վան քաղաքի Այգեստան հայկական շրջանի վրայ, այրում այն եւ սկսում են անգթօրէն սպանել կանանց եւ երեխաներին: Հայերը փախչում են քաղաքից: Նրանց մի մասը «ապաստան» է գտնում Թեմուր Ջաղէ Հարեբայ փաշայի մօտ, որը, շատ չանցած, հրամայում է սպանել բոլորին, ովքեր, փրկութիւն որոնելով, եկել էին իր մօտ:

— Իսկ որտե՞ղ էին մերոնք:

— Մեր նախնին՝ Տէր Կարապետ քահանան, հաւանաբար կանխազգալով այս ամէնը, մօտաւորապէս մայիսի սկզբին տասնմէկամեայ Վարդանին եւ տասերեքամեայ Շուշանիկին, տասնութամեայ աւագ որդու՝ Աւետիսի հետ ուղարկում է Կտուց անապատ, որտեղ վանահայր էր նրա ազգական վարդապետ Ստեփան Աղազարեանը՝ այդպիսով նրանց փրկելով մահից... Աւետիսը վերադառնում է Վան եւ մասնակցում քաղաքի պաշտպանութեանը:

Յաջողութիւնից եւ դիմադրութեան բացակայութիւնից արբեցած՝ մուսուլմանների ամբոխը ուղղւում է քաղաքի ծայրամասեր՝ այնտեղ ոչնչացնելով եկեղեցիներում պատըսպարուած բոլոր հայերին... Այստեղ էլ հենց զոհւում են Տէր Կարապետը եւ նրա կինը՝ Աղաւնին. շատ ծխականների հետ նրանց ողջ-ողջ այրում են Սրբոց Առաքելոց եկեղեցում: Ծխականների մեջ էր Սրբոց Առաքելոց վանքի մեկենաս, ոսկերիչ, Տէր Կարապետի շատ մօտ ընկեր Բաղդասար Յովհաննիսեանի ընտանիքը: Նրա հետ էր կինը՝ Մարիամը, նրանց ութամեայ որդին՝ Գասպարը, եւ վեցամեայ որդին՝ Մել-

քոնը: Իսկ Նեկտարը՝ նրանց կրտսեր դուստրն էր. նա այն ժամանակ չորս տարեկան էր:

— Նեկտարն իմ մեծ տա՛տն է:

— Հենց նա:

— Բայց ինչպէ՞ս է նա փրկւում:

— Հրաշքով էլ փրկւում է. երբ թուրքերը եւ քրդերը բոլորին փակում են եկեղեցում, նրան՝ փոքրիկին, չեն էլ նկատում: Քիչ անց մօտ են վազում Աւետիսն ու նրա ընկեր Արամ Աւետիսեանը՝ Մարիամի եղբայրը, դէ՛, նաեւ Նեկտարի մօրեղբայրը: Նա եւ Աւետիսը հասակակիցներ էին: Նեկտարին գտնում են եկեղեցուց ոչ հեռու՝ իրենց տան բակում. փարթամ խոտերի մէջ խաղալիս է լինում Վանայ կատուի հետ:

— Վանայ կատո՞ւ. դա ի՞նչ կատու է:

— Դա բացառիկ եւ հազուագիւտ հայկական կատուի ցեղատեսակ է, միւս կատուներից տարբերւում է նրանով, որ սիրում է լողալ. նա Վանայ լճում ձուկ է որսում: Որպէս կանոն՝ նրա աչքերը տարբեր գոյների են, մէկը՝ կապոյտ, միւսը՝ սաթի գոյնի, կանաչին մօտ:

Հայոց Եղեռնից յետոյ՝ 1915-1922 թթ., երբեմնի հայկական գիւղերում բնակւում են քրդեր, իսկ կատուները տան կահկարասիի հետ բաժին են ընկնում նոր տէրերին: Ութսունականների սկզբին՝ քրդական ապստամբութիւնների ժամանակ, երբ ոչնչացւում են ամբողջական քրդական գիւղեր, Օսմանեան կայսրութիւնում անողոքաբար ոչնչացւում է Վանայ կատուների մեծ մասը: Առիթն այն էր, որ քրդերը մեծարում էին Վանայ կատուներին՝ արժանանալով թուրքերի իւրայատուկ բացասական վերաբերմունքին: Այսպէս, մշակոյթի նախարարն ութսունական թուականների սկզբին կոչ էր անում ոչնչացնել Վանայ կատուներին՝ իբրեւ քրդական մշակոյթի մաս: Եւ միայն XX դարի ութսունականների վերջին՝ Եւրոպայից եւ Ամերիկայից յետոյ, Թուրքիայում գնահատում են այս ցեղատեսակը եւ սկսում այն վերականգնելու աշխատանքները: Նոյնիսկ Վանում՝ տեղի համալսարանին կից, ստեղծում են Վանայ կատուների մի ամբողջ ինստիտուտ: Այդ նպատակով Թուրքիայով մէկ հաւաքում են նմանատիպ սպիտակ կատուների, գուցէ եւ արտասահմանից են բերում ազնուացեղ Վանայ կատուների: Սպիտակ Վանայ կատուների համար թուրքերն այգիներում կառուցում են յատուկ ոչ մեծ տներ. չէ՞ որ նրանք մեծ արժէք են

ներկայացնում, բայց եւ այնպէս կապուները չեն կարող ապրել մուսուլմանների փանը:

— Ի՞նչ գազաններ են: Իրօք, թուրքը թուրք է. դա նրանց արեան մէջ է:

— Այո՛, դու իրաւացի ես. նրանք ոչինչ իրենցը չունէին, ողջ հայկական մշակոյթն իրենցը դարձրին, իսկ հիմա հպարտանում են Վանայ կապուով…Դէ՛ լաւ, շարունակենք… Ի դէպ, հենց Բաղդասարն է Տէր Կարապետի պապուէրով երեխաների ծնուելու ժամանակ երեք խաչ պատրաստում՝ գրութիւններով… Այս ամէնի մէջ ես տեսնում եմ մեր ընտանիքի նկատմամբ Աստծու նախախնամութիւնը:

— Լիովին համաձայն եմ, Շուշանի՛կ: Փա՛ռք Աստծու, շարունակի՛ր խնդրեմ:

— Եւ ահա, երբ պարզ են դառնում սուլթանի՝ չարանենգ մտադրութիւններն ու ջարդի պատկերը, եւ կասկածներ այլեւս չեն լինում, հայերը որոշում են դիմել ինքնապաշտպանութեան՝ իբրեւ փրկութեան միակ ճանապարհի: Ինքնապաշտպանութեան զինւորները բաժանւում են 35 խմբի եւ տեղակայւում Այգեստանի տարբեր կէտերում, որտեղից քրդերը իրականացնում են իրենց ներխուժումները: Յունիսի չորսի վաղ առաւօտեան զինուած մուսուլմանների ամբոխը փորձում է ներխուժել քաղաք՝ շարունակելու կոտորածը, բայց հայկական ջոկատները ետ են մղում նրանց, եւ թշնամին առաջին կորուստներն է կրում: Այս խմբերում են կռւում նաեւ Աւետիսն ու Արամը: Ինքնապաշտպանութեան կազմակերպիչներից եւ ղեկավարներից էր Արամի ազգական Մկրտիչ Աւետիսեանը՝ հայերի առաջին «*Արմէնական*» կուսակցութեան հիմնադիրը: Ինքնապաշտպանութեան զինւորներն արագօրէն փոխում են իրենց հագուստը. հրամանատարները դնում են կաշուէ փափախներ՝ ասեղնագործուած կարմիր խաչերով, իսկ զինւորների խաչերը ասեղնագործուած էին թեզանիքներին: Ի դէպ, խաչերը ձեռքներին էին կռւում նաեւ մեր հայրենակիցները Արցախում, երբ, ինչպէս մեր նախնիները, պաշտպանում էին իրենց անկախութիւնը: Ասում էիր, որ քո Աւետիս հօրեղբայրը զոհուել է Արցախում ընկերոջը փրկելիս:

— Այո՛:

— Այնպէս, ինչպէս եւ Աւետիսն է զոհւում վիրաւոր ընկերոջը՝ Արամին փրկելիս: Եթէ մերոնք միանգամից սկսէին պաշտպանութիւնը, այդքան զոհեր չէին լինի:

— Իսկ շա՞տ հայեր են զոհւում:

— Համարեայ հազար հայ միայն Վանում, թալանւում է 1514 հայկական տուն, Սուրբ Սահակ եւ Սրբոց Առաքելոց եկեղեցիները՝ հրկիզւում…

— Իսկ ի՞նչ է լինում յետոյ:

— Մերոնք ինքնապաշտպանւում են արիաբար: Ցաւօք, բոլորը չէ, որ զէնք ունէին: Կռւում են անգամ կանայք եւ երեխաները: Շուտով թուրքերը, հասկանալով, որ չեն կարող զէնքով ընկճել հայերին, զինադադար են խնդրում: Անգլիայի հիւպատոսի օգնութեամբ պահանջում են յանձնել զէնքը եւ ինքնապաշտպանութեան փասը ղեկավարներին, բայց վանեցիները չեն համաձայնում: Այդ ժամանակ թուրքերը հրետանային կրակ են բացում Այգեստանի ուղղութեամբ…

Ինքնապաշտպանութեան խորհուրդը որոշում է բանակցություններ սկսել … Յունիսի 8-ին Վանի 1500 զինուած եւ հասարակ բնակիչներ, յետագայում նրանց են միանում շրջակայքի 700 բնակիչներ՝ Մկրտիչ Աւետիսեանի գլխաւորութեամբ, շարժւում են Վարագայ լեռների կողմը: Թուրքերը երաշխաւորում են նրանց անվտանգ անցումը Պարսկաստան… Նրանց դիմաւորում են Վարագայ վանքում, որտեղ կերակրում են եւ օգնում վիրաւորներին: Պատարագ է մատուցւում, բոլորը հաղորդութիւն են ստանում, իսկ յետոյ՝ առաջ շարժւում: Արամն իր զարմուհու՝ Նեկտարի հետ մնում է վանքում, որովհետեւ ծանր վիրաւոր էր և չէր կարող շարժուել, առաւել եւս՝ փոքր աղջնակի հետ:

Պարսկաստանի ճանապարհին՝ Սուրբ Բարդուղիմէոս վանքի մօտ, թուրքերը յարձակւում են Վանի պաշտպանների վրայ. ողջ է մնում միայն երեսուն մարդ, որոնք էլ Պարսկաստան են հասնում… Այսպիսով, ջարդերի ժամանակ, որ յայտնի են կազմակերպչի՝ սուլթան Համիդի անունով՝ «**համիդեան ջարդեր**», զոհւում է մօտ 300.000 հայ…

Շուտով՝ մի քանի ամիս անց, Վարագայ վանքի վանահայր է նշանակւում Հայր Ստեփան Աղազարեանը, որն այնտեղ է գալիս Վարդանի եւ Շուշանիկի հետ: Երեք տարի յետոյ Արամն ամուսնանում է Շուշանիկի հետ, եւ նրանք Նեկտարի հետ տեղափոխւում են Վան, իսկ Վարդանը մնում է վանքի ճեմարանում…

1900 թուականին Վանում ծնւում է նրանց դուստրը՝ Զաբէլը, պապիկիս մայրը եւ իմ մեծ տատը: Նրանք ունենում են

նաեւ երկու որդի. Երեմիա՝ ծնուած 1910 թուականին, եւ Սեդրաք՝ ծնուած 1912 թուականին:

Վարդանը, աւարտելով ճեմարանը, որոշում է այցելել քրոջ ընտանիքին եւ այնտեղ սիրահարւում է գեղեցկուհի Նեկտարին, որը տասնհինգ տարեկան էր, իսկ ինքն արդէն՝ քսաներկու: Այդ նոյն 1907 թուականին նրանք ամուսնանում են... 1908 թուականին ծնւում է առաջնեկը՝ Կարապետը, 1910-ին՝ Աւետիսը, իսկ 1912-ին՝ Հռիփսիմէն:

— Ուրեմն Յակոբ պապս իր երեխաներին այդպէս էլ անուանել է՝ ի յիշատակ եղբայրների եւ քոյրերի, որոնց չէր էլ տեսել: Աստուա՜ծ իմ:

— Այո՛, հենց այդպէս է:

— Շուշանի՛կ, ա՛յ դու ամէն ինչ գիտես, իսկ ինչո՞ւ մենք չգիտէինք, ինչո՞ւ մեզ ոչ ոք չէր ասում այդ մասին:

— Ինձ թւում է, որ սովետների ժամանակ մարդիկ վախենում էին բարձրաձայն խօսել այդ մասին: Ա՛յ, տեսնում ես, ձեր ազգանունը Տէր-Սարգսեան է եղել, իսկ դուք գրում էք Սարգսեան: Հնարաւոր է, որ Նեկտարն ու Յակոբը, գալով Հայաստան, փոխել են ազգանունը, քանի որ Տէր մասնիկը ցոյց է տալիս, որ քահանայի ընտանիք է: Եւ դու էլ հասկանում ես, թէ սովետների ժամանակ ինչ կար:

— Այո՛, այդպէս է, բայց հենց տուն վերադառնամ, առաջին հերթին կը զբաղուեմ իմ ազգանունով:

— Կեցցե՛ս:

— Իսկ ի՞նչ է լինում յետոյ:

— 1910 թուականին Հայր Ստեփանին ձեռնադրում են եպիսկոպոս, իսկ նա էլ յետոյ քահանայ է կարգում Վարդանին՝ նոյն անունով:

Տարիներ են թռչում. Վանը, հասցնելով բուժել իր վէրքերը, վերստին դառնում է Արեւմտեան Հայաստանի գեղեցկագոյն քաղաքներից մէկը: 1904 թուականին «Մուրճ» պարբերականը յայտնում է, որ միայն Կոստանդնուպոլսում աշխատող հայերը հայրենիք են ուղարկում 80 հազար լիրա տող՝ չհաշուած ուղարկւող ապրանքները: Հինգ հարիւր հազար լիրա ուղարկում էին նրանք, ովքեր աշխատելու էին մեկնել Կովկաս, Բուլղարիա, Ամերիկա: «Մասիս»-ի, «Մշակ»-ի թղթակիցների հաշուարկներով վանեցի աշխատաւորները դրսում վաստակում էին ընդհանուր առմամբ տարին մէկ միլիոն լիրա: Այդ պատճառով էլ Վանը ոչ միայն ակտիւօրէն վերակառուցւում էր,

այսպեղ նաեւ աշխուժանում էր մշակութա-կրթական կեանքը: 1903 թուականին քաղաքում կար 25 դպրոց. 10-ը՝ հայկական, 9-ը՝ ֆրանսիական, եւ 6-ը՝ ամերիկեան, ամէն մէկում կից՝ գրադարան: Ամենամեծ հանրային գրադարան-ընթերցասրահը կոչւում էր «Ազատութեան Լոյս»: Տարբեր ժամանակներում Վանի տպագրատներում հրապարակւում է ընդհանուր առմամբ հայերէն 24 թերթ…

— Իսկ ինչպէ՞ս սկսուեց Հայոց Եղեռնը, եւ ինչո՞ւ հենց ապրիլի 24-ն է ընդունուած համարել զոհերի յիշատակի օր:

— 1914 թուականի հոկտեմբերի 29-ին Օսմանեան կայսրութիւնը Առաջին համաշխարհային պատերազմին մասնակցում է իբրեւ Գերմանիայի դաշնակից. թուրքերի ռազմական նաւերը գերմանացի սպաների հրամանատարութեամբ անսպասելի յարձակում են գործում Օդեսայի վրայ: Ի պատասխան՝ նոյեմբերի 2-ին Ռուսաստանը պատերազմ է յայտարարում Օսմանեան կայսրութեանը…

Հայ բնակչութեան վիճակը Օսմանեան կայսրութիւնում օրեցօր վատթարանում էր. թրքական կառավարութիւնը հայերին մեղադրում էր ապստամբութեան փորձ նախապատրաստելու համար՝ բնականաբար առանց որեւէ փաստ ներկայացնելու: Այն ժամանակ, երբ Կարմիր կիսալուսնի թըրքական ընկերութիւնը հայերի կամաւոր նուիրատուութիւններով հոսպիտալներ է կառուցում թրքական բանակի համար, զինուորական զօրամասերում անցկացւում են առանձին հայ զինծառայողների ցուցադրական մահապատիժներ: Բանակ զօրակոչուած շատ հայեր ուղարկւում են յատուկ աշխատանքային գումարտակներ եւ յետագայում ոչնչացւում են:

1914 թուականի դեկտեմբերի սկզբին թուրքերը յարձակւում են սկսում կովկասեան ճակատում, սակայն ջախջախիչ պարտութիւն են կրում եւ հարկադրուած նահանջում. կորուստները կազմում են 90000-ից 70000 մարդ: Նահանջող թրքական զօրքերը, որոնց միանում են նաեւ զինուած քուրդ հրոսակները եւ մուսուլման խառնամբոխը, հայերի «անհաւատարմութեան» եւ ռուսներին համակրելու պատրուակով անզթօրէն կողոպտում են հայերին, թալանում նրանց ունեցուածքը, աւերում հայկական գիւղերը: Միաժամանակ ամբողջ երկրով շարունակւում են յայտնի հայերի ձերբակալութիւնները, հայկական գիւղերի վրայ յարձակումները:

1915 թուականի գարնանը հայերի զինաթափումը մեծ թափով է ընթանում, իսկ այդ ժամանակ Կոստանդնուպոլսում սկսւում են անուանի հայերի՝ մտաւորականների, գործարարների, քաղաքական եւ կրօնական գործիչների, մանկավարժների, լրագրողների մասսայական ձերբակալութիւններ: Միայն լոյս ապրիլի 24-ի գիշերը մայրաքաղաքում ձերբակալւում է 250, շաբաթուայ ընթացքում՝ 800-ից աւելի մարդ: Շատերը յետագայում սպանւում են բանտերում եւ աքսորի ճանապարհին: Զուգահեռաբար ամբողջ երկրով շարունակւում են հայ նշանաւոր անձանց ձերբակալութիւններն ու ոչնչացումը: Այդ պատճառով էլ ընդունուած է ապրիլի 24-ը համարել ցեղասպանութեան յիշատակի օր, որովհետեւ դա ոչ միայն ժողովրդի ցեղասպանութիւն էր, քանի որ նրանք քրիստոնեայ էին, այլ նաեւ մշակութային, այսինքն՝ ի դէմս հայ մտաւորականութեան՝ ոչնչացւում էին հնագոյն ժողովրդի մշակոյթն ու պատմութիւնը: Վանի վիլայեթի մի շարք գաւառներում՝ Շատախում, Հայոց ձորում, Արճեշում, Թիմարում, Ալջաւազում եւ այլուր, հայերը դիմում են ինքնապաշտպանութեան՝ յամառ կռիւներ մղելով ջարդարարների դէմ: Առաւել նշանակալից էր Վանի՝ մօտ մէկ ամիս շարունակւող ինքնապաշտպանութիւնը: Պատերազմի նախօրէին Վանում ապրում էր 41 հազար մարդ, որոնցից 23 հազարը՝ հայ, միւսները՝ մուսուլմաններ, հիմնականում՝ թուրքեր: Քաղաքը բաժանւում էր երկու մասի՝ Այգեստան եւ Քաղաքամէջ. հայերի հիմնական մասը՝ մօտ 20 հազարը, բնակւում էր Այգեստանում: Քաղաքի այդ հատուածները տեղակայուած էին իրարից 5-6 կմ հեռաւորութեամբ. նրանց միջեւ ընկած տարածքում բնակւում էին թուրքեր:

1915 թուականի ապրիլին Վանում հաւաքւում է աւելի քան 70 հազար հայ, որոնք այստեղ են փոխադրւում թուրքերի յարձակումներին ենթարկուած շրջակայ գիւղերից: Պատրաստուելով իրականացնել Վանի հայ բնակչութիւնը բնաջնջելու հրէշաւոր ծրագիրը՝ թրքական կառավարութիւնը Վանի նահանգապետ է նշանակում իր դաժանութեամբ եւ հայատեացութեամբ յայտնի Ջեւդետ բեյին, որն ինքնավստահաբար խոստանում է քանչորս ժամում ճնշել դիմադրութիւնը: Նա, օգնական ուժեր ստանալով Էրզրումից, սկսում է նախապատրաստուել յարձակման: Պաշտպաններին յաջողւում է իրարից անջատել քաղաքի Այգեստան եւ Քաղաքամէջ շրջանները, որոնց միջեւ սեպի նման խրուած էր թրքական թաղամասը: Ապրիլի չորսից երկու շրջանների միջեւ կապն ընդհատ-

ւում է. Քաղաքամէջի՝ մօտ երեք հազար բնակիչներ որոշում են պաշտպանուել իրենց ուժերով: Դա քաղաքի կարեւորագոյն շրջանն էր. այստեղ էին գտնւում նահանգապետի նստավայրի շէնքը, քաղաքային ոստիկանութիւնը, նաեւ դպրանը, բանտը, փոստն ու հեռագրատունը, զօրանոցն ու զինուորական պահեստները: Ապրիլի հինգին ստեղծւում է Քաղաքամէջի Զինուորական մարմինը. այն զինում եւ տեղի բնակչութիւնից մարտիկներ է նախապատրաստում: Նրանք ձեռքի տակ ունէին ընդամէնը 101 հրացան եւ 90 մաուզեր, 120 որսորդական հրացան եւ փոքր տրամաչափի ատրճանակներ: Այս սպառազինութեամբ պէտք էր դիմակայել թշնամու հրետանուն: Ամբողջ Վանի ինքնապաշտպանութիւնը ղեկավարելու համար ստեղծւում է միասնական զինուորական մարմին՝ «**Վանի հայ ինքնապաշտպանութեան զինուորական մարմին**»-ը, որի կազմում էին՝ Արմենակ Եկարեանը, Արամ Մանուկեանը, Կայծակ Առաքելը, Բուլղարացի Գրիգորը, Գաբրիէլ Սեմերջեանը, Հրանտ Գալիկեանը եւ Փանոս Թերլեմեզեանը: Ստեղծւում են նաեւ պարէնով ապահովելու եւ այն բաշխելու, բժշկական օգնութեան ծառայութիւններ: Պրոֆեսոր Միքայէլ Մինասեանի ղեկավարութեամբ զինագործական արհեստանոցը պատրաստում էր ծխատու եւ անծուխ վառօդ, փամփուշտներ: Զինագործական աշխատանքների ընդհանուր ղեկավար Բուլղարացի Գրիգորին անգամ յաջողւում է թնդանօթներ ձուլել: Մարտերի ժամանակ հրատարակւում էր «Աշխատանք» թերթը: Իսկ կանանց միութիւնը հիմնականում զբաղւում էր զինուորների համար հագուստ կարելով եւ սնունդ պատրաստելով: Սպառնացող վտանգի առջեւ համախմբւում են հայկական տարբեր քաղաքական կուսակցութիւնների ներկայացուցիչները: Հակառակորդի գերազանցող ուժերի դէմ՝ կանոնաւոր բանակի 12 հազար զինուոր, աւազակային հրոսակախմբերի մեծ քանակութիւն, 12 հրետանային հրանօթ, Վանայ լճի նաւեր, Վանի պաշտպանները տնօրինում էին ոչ աւելի, քան 1500 մարտիկ, որոնք ունէին ընդամէնը 505 հրացան եւ 750 մաուզեր՝ փամփուշտների ոչ մեծ պաշարով: Ինքնապաշտպանութեան զինուորական մարմինը կարգադրում է զինամթերքը շրջահայեացօրէն օգտագործել՝ «կրակել միայն վստահաբար»: Այգեստանը բաժանւում է 5 պաշտպանական շրջանների, որոնցում կառուցւում են 73 դիրքեր: Ինքնապաշտպանութիւնը սկըսւում է ապրիլի 7-ին, երբ թուրք զինուորները գնդակոծում են Շուշանց գիւղից Այգեստան գնացող հայ կանանց. հայերը

պատասխան կրակ են բացում, որից յետոյ սկսւում է թուրքերի ընդհանուր յարձակումը Այգեստանի եւ Քաղաքամէջի վրայ: Երկու շրջաններն էլ ենթարկւում են հրետանային հրետակոծման՝ զգալի աւերածութիւններ պատճառելով: Բայց հայերը յանկարծակիի չեն գալիս. նրանց յաջողւում է ոչ միայն ետ մղել թուրքերի առաջին գրոհը, այլեւ գրաւել որոշ դիրքեր, պայթեցնել թրքական զինապահեստը, ոստիկանութեան վարչական շէնքը եւ այլն: Քաջասիրտ քաղաքացիները, արհեստաւորները, աշակերտները, բանուորները, կատաղի մղումով զինուած, դուրս են գալիս թշնամու դէմ եւ հերոսաբար կռւում ողջ օրը: Թշնամուն յաջողութեամբ դիմադրելու համար անհրաժեշտ էր խիստ կարգապահութիւն: Ստեղծւում են նաեւ ոստիկանութեան վարչութիւն՝ 50 աշխատակիցներով, դատարանով եւ բանտով, մատակարարման, սովեալներին եւ փախստականներին օգնելու յանձնախմբեր, «Հայկական Կարմիր Խաչ»-ն ունէր իր հիւանդանոցը, բժիշկներ, բոյժքոյրեր եւ դեղագործներ, «Ամրաշէն» խումբը՝ 500 աշխատողներով, վերականգնում է հրետանային կրակով աւերուած դիրքերը, նոր խրամատներ ու խրամներ փորում: Խմբի որոշ մասնագէտներ կարողանում են ստորգետնեայ անցքեր փորել մինչեւ թշնամու դիրքերը, եւ «հրկիզող» մարտիկները հրկիզումներ եւ պայթեցումներ են իրականացնում: Հերոսական պաշտպանութեան ականատեսների վկայութեամբ «Ամրաշէն» խմբի անդամները մշտապէս առաջին շարքերում էին, նրանց կորուստները հաւասարւում էին մարտնչողների կորուստներին: Ինքնապաշտպանութեան մասնակիցներից Ա. Պողարեանը, խորհրդածելով այդ օրերի մասին, գրում է, որ նա, ով չի տեսել Այգեստանը եւ չի եղել այնտեղ ապրիլեան օրերին, չի կարող պատկերացնել բաց դաշտում փռուած, ոչնչով չպարսպուած պտղատու եւ ոչ պտղատու տնկիների իսկական անտառ: Այդ անտառում մոռացուած-կորած հողէ եւ փայտէ տները յանկարծ ինչ-որ կախարդանքով դառնում են իսկական միջնաբերդ: Այդ հրաշքը բացատրւում է տեղի բնակիչների դիմադրութեան աննկուն ոգով եւ գաւառի նոյնազգի, եթէ չհաշուենք ծայրամասերը բնակչութեամբ, որը հաշվւում էր 20 հազար հայ: Ա. Պողարեանի կարծիքով կարելի՞ է արդեօք Արեւմտեան Հայաստանում գտնել մէկ ուրիշ այսպիսի անկիւն, որտեղ հայութիւնն այդքան սերտ եւ կազմակերպուած ապրէր… Խիտ բնակութիւն հաստատած այդ ժողովուրդն անխախտ սիրով էր կապուած հայրական եւ պապենական տնտեսութիւններին եւ դարերի

ընթացքում թոյլ չէր տալիս ոչ մի թրքական ընտանիքի ներթափանցելու իր սուրբ օջախը: Միասնական կամքով եւ միասնական սրտով նա ոտքի է կանգնում՝ Այգեստանը դարձնելով անառիկ ամրոց:

Վանի ինքնապաշտպանութեան ղեկավարներից նկարիչ Փանոս Թերլեմեզեանը իր յուշերում գրում է, որ վանեցիները «...*կռուէին եղունգներով, ատրճանակներով, որսի հրացաններով և կը դիմադրէին կրուպպի թնդանօթներուն, որովհետև հաւատքն իրենց կուրծքերէն բրոնզի պատնէշներ կերտեց: Ես տեսած եմ, թէ ինչպէս չորս-հինգ տարեկան մանուկները գետինէն հաւաքում և մեզի էին բերում թշնամական գնդակները*»:

Պահպանուել են ականատեսների նկարագրութիւնները, թէ ինչպէս 10-15 տարեկան դպրոցականները՝ մօտ յիսուն հոգի, նետւում էին դէպի փողոց ընկնող արկերը, վայրկենաբար վնասազերծում դրանք՝ դուրս քաշելով պատրոյգները, եւ վառօդը յանձնում զինուորականներին: Սովորողներից կազմուած «Փանփար» փողային նուագախումբը թեժ մարտի ժամանակ ժողովրդական երգեր էր կատարում՝ ոգեւորելով մարտիկներին: Վանի երեխաները նաեւ կապաւորի դեր էին կատարում ղեկավար կենտրոնի եւ առաջապահ դիրքերի միջեւ: Նրանց միւս հասակակիցները, վառելանիւթով թաթախուած լաթերով գաղտագողի սողոսկելով թուրքերի զաւթած փները, հրկիզում էին դրանք եւ հարկադրում թշնամու զինուորներին դուրս վազելու եւ հայ մարտիկների ձեռքն ընկնելու:

Աւանցի բնակիչ Խ. Բաբայեանը, որին թուրքերը ստիպում են իրենց միւս ափ փոխադրել, Վանի նաւահանգստում խորտակում է իր երկու նաւերը՝ զինուորներով, իսկ ինքը՝ լողալով վերադառնում հայրենի գիւղ: Քաջութեամբ աչքի են ընկնում Վանի նաեւ միւս պաշտպանները. շատերը պարգեւատրւում են «Զինուորական Մարմին»–ի հաստատած «*Պատւոյ խաչ*» շքանշանով:

Չկարողանալով ընկճել հերոսական վանեցիների դիմադրութիւնը՝ թրքական հրամանատարութիւնն օգնութեան է կանչում քուրդ հրոսակախմբերին, որոնց Ջեւդետը խոստանում է ամբողջ աւարը: Հայկական արեամբ շաղախուած հարըստութիւնը ձեռք գցելու յոյսով Վանը գրոհում են նոյնիսկ բիթլիսցի քրդերը, որոնց ոգին բարձրացնելու համար համոզում են, որ հայերի գնդակները չեն կարող խոցել իսկական

հաւապացեալ մուսուլմաններին: Այդ հինգ հարիւր կողոպտիչ-ները, 44 հայերի դէմ մղած առաջին իսկ մարտում հանդիպելով յամառ դիմադրութեան, ջախջախւում են եւ խելքները կորցրած փախչում: Վանի անյաջող պաշարումից գազազած Ջեւդետն իր զայրոյթը թափում է շրջակայ հայկական գիւղերի կանանց եւ երեխաների վրայ: Թուրքերն այստեղ լիովին ցուցադրում են իրենց «քաջութիւնը»՝ կոտորելով անպաշտպան բնակչութիւնը: Դահիճները՝ Չերքեզ Ահմեդի գլխաւորութեամբ, գիւղերում այնպիսի արիւնալի խնջոյք են սարքում, որ ականատեսի վկայութեամբ՝ նոյնիսկ քրդերն են սարսափում՝ այդ դիւային բարբարոսութիւնը տեսնելով: Զոհւում է մօտ 24 հազար հայ, թալանւում եւ հրկիզւում է աւելի քան 100 գիւղ: Դէ՛հ, յետոյ գնա՛ ու մի՛ հաւատա պապիս խօսքին, որ թուրքը մնում է թուրք: Ահա՛, այդ թուրքերի ժառանգներ են համարեայ եօթանասուն տարի յետոյ կրկնում նոյնը, երբ 1988 թուականին ադրբեջա-նական Բաքւում եւ Սումգայիթում հայերի ցեղասպանութիւն են իրականացնում…

Մինչեւ ապրիլի 10-ը թուրքերի գրոհներն անկազմա-կերպ են լինում, բայց եւ վերախմբաւորելով ուժերը՝ հրետանու աջակցութեամբ թշնամին գրոհում է մի քանի օր շարունակ՝ չհասնելով, սակայն, էական յաջողութեան: Ապրիլի 13-16-ը թուրքերն ակտիւ գործողութիւններ չեն ձեռնարկում եւ սահմանափակւում են միայն հրետանային գնդակոծումներով՝ արձակելով օրը մօտ 250-300 արկ: Նոյնիսկ գերմանացի սպայ Ռաֆայէլ դե Նոհալես-Մենդեսի օգնութիւնը արդիւնքի չի յանգեցնում. նա «**Չորս Տարի Կիսալուսնի Ներքոյ**» գրքում արժանին է մատուցում Վանի պաշտպաններին եւ անգամ անհծում է իրեն՝ իր հաւատակիցների դէմ պատերազմին մասնակցելու համար. «*Դա տեղ-տեղ ձեռնամարտի վերածուող անվերջանալի մարտ էր: Այստեղ ոչ ոք գթութիւն չէր աղերսում, և ոչ ոք ոչ ոքի չէր խնայում: Ո՛չ քրիստոնեան, ո՛չ մուսուլմանը գերութիւնից չէին վերադառնում: Գերուն փրկելն այն օրերին նոյնպէս անհնար էր, ինչպէս քաղցած վագրից աւարը խլելը: Իմ մարդկանց բուռն ձգտումն այնքան ուժեղ էր, որ երբեմն ես հրամայում էի հրետանին տեղակայել տներում, որպէսզի քանդուեն մեզ հարևան շէնքերից բաժանող պատերը: Իսկ երբ գրաւում էինք այդ պատերը, հրկիզում էինք, որպէսզի մեր հակառակորդները գիշերուայ ընթացքում չկարողանային վերականգնել դրանք: Ահա միայն այսպէս՝ խանձուած մազերով, վառօդից և ծխից կեղտոտուած դէմքերով, հրետանային արկերի*

*պայթիւններից և դիմահար կրակոցներից կիսախլացած՝ մենք կարողանում էինք դանդաղ, անասելի զոհերի գնով շարժուել դէպի այդ յամառ քաղաքի կենտրոնը, որտեղ հայերը իրենց տների այրուող աւերակների մէջ շարունակում էին կատաղի պաշտպանուել՝ մինչև վերջին շունչը պայքարելով ազատ Հայաստանի և քրիստոնէական հաւատքի յաղթանակի համար…*

*…Հայերից շատերը լաւ զինուած էին, շատերը մաուզերներ ունէին, որոնք կարճ հեռաւորութիւնից կրակելիս թշնամուն սարսափի էին մատնում: Դրանց ազդեցութիւնը կարելի էր համեմատել միայն գնդացիրների հետ, որովհետև փոխանակ կրակեն գնդակ գնդակի ետևից, հայերը գործնականօրէն համարեայ միաժամանակ չորս, հինգ, վեց գնդակ էին ուղարկում միևնոյն նպատակակէտին: Դրանից բացի նրանք յայտնագործել էին հորատիչի նման ինչ-որ բան, որով արագօրէն կարողանում էին անցքեր բացել շէնքերի կաւէ պատերի մէջ: Իբրև արդիւնք՝ հենց որ նրանցից նուաճում էինք ինչ-որ դիրք, նրանք, ակնթարթօրէն բացուած նոր անցքերից մեզ վրայ ուղղելով ատրճանակները, մահ էին տարածում մեր մէջ, մինչ կը հասկանայինք, թէ ինչ է կատարւում…*

*Իսկ ես էլ անիծում էի այն ժամը, երբ դաժան ճակատագիրն ինձ վերածեց իմ հաւատակիցների դահճի*»:

Միայն Նոհալեսի հրամանով Վանի ուղղութեամբ արձակւում է 16 հազար արկ եւ ռռնակ…

Արդէն մայիսի 3-ին՝ մարտերը սկսելուց յետոյ, առաջին անգամ հանդիպում են Այգեստանի եւ Քաղաքամէջի հերոսները: Իսկ երկու օրից՝ մայիսի 5-ի երեկոյեան, քաղաք են մտնում հայկական կամաւորական հեծելազօրային միաւորումները: Եւ միայն յաջորդ օրն են մօտենում ռուսական զօրքերը. նրանց անձնակազմում եւս քիչ չէին հայերը: Մայիսի 7-ին Վանի ինքնապաշտպանութեան ղեկավարներից Արամ Մանուկեանը նշանակւում է ժամանակաւոր նահանգապետ: Յաջորդ օրը դիմելով Վասպուրականի բնակիչներին՝ նա նոր իշխանութեան շուրջը համախմբուելու կոչ է անում: Մէկամսեայ մարտերի ընթացքում թրքական զօրքերը լուրջ կորուստներ են կրում՝ մօտ մէկ հազար սպանուած, հայերի կորուստը՝ մօտ 350 մարդ, որոնց զգալի մասը՝ Վանի խաղաղ բնակիչներ: Վանի ինքնապաշտպանութիւնը անխուսափելի կոտորածից փրկում է տասնեակ հազարաւոր վասպուրականցիների, որոնք ապաստանել էին Վանում: Վանի պաշտպանների անձնազոհու-

թիւնը եւ հերոսութիւնը քաջալերող օրինակ էին միւս վայրերի հայերի համար:

Շատ կարճ ժամանակամիջոցում նոր իշխանութիւնը ակտիւ գործունէութիւն է ծաւալում, սակայն առանց կողմնակի օգնութեան դժուար կը լինէր կերակրել եւ հիւանդութիւններից բուժել աւերուած գիւղերի հազարաւոր բնակիչների, որոնցից շատերը ապաստան էին գտել քաղաքում: Մայիսի 28-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ V-ին ուղղուած նամակում Արամ Մանուկեանը նկարագրում է իրավիճակի ողջ ծանրութիւնը եւ, օգնութեան խնդրանքով դիմելով Կովկասի հայութեանը, գրում է, որ բոլոր գիւղերն աւերուած եւ հըրկիզուած են: Թալանուած են ողջ անասունը, տնային իրեղէնը, գիւղատնտեսական աշխատանքի գործիքները: Երկու ամսուայ ընթացքում շատ մարդիկ անազատութեան մէջ են կամ թաքնւում են սարերում՝ սնուելով խոտով, եւ այդ պատճառով էլ տառապում են ծանր հիւանդութիւններից՝ տիֆից եւ հատ-կապէս թանչից (դիզենտերիայից): Երեխաների շրջանում մա-հացութիւնը շատ բարձր է մնում: Անհնար է վերսկսել գիւղա-տնտեսական աշխատանքները եւ վերականգնել կացարան-ները, քանի որ սարերում ապրող քրդերը հայերին հանգիստ չեն թողնում… Նա նշում է, որ եթէ Կովկասից օգնութիւնը անյապաղ չհասնի, թուրքերի գործը բարեյաջող կ'աւարտեն անիշխանութիւնն ու վարակիչ հիւանդութիւնները… Ուստի Արամ Մանուկեանը խնդրում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ դիմելու ուր որ հարկ է, որպէսզի վերջ դրուի հայ գիւղացիու-թեան կողոպուտին եւ զինաթափմանը, որ իրականացնում են կազակները, ինչպէս՝ հրամանների համաձայն, այնպէս էլ անձամբ, որովհետեւ յաճախ նրանք մտնում են գիւղ, խլում ամբողջ հացը, քշում–տանում են ոչխարները եւ խոշոր եղջերաւոր անասունը: Նա կարեւորում է, որ ջանքեր գործա-դրուեն, որպէսզի արագագոյնս դադարեցուի այս ամէնը, որովհետեւ չեն խղճում անգամ վանքապատկան անասունը, եւ եզրափակելով յաւելում, որ մի քանի օր առաջ ամբողջ քաղաքի աչքի առջեւ քշել–տարել են Վարագայ վանքի նախիրը…

Վանի նոր իշխանութիւնները ակտիւօրէն ձեռնամուխ են լինում աւերուած քաղաքը վերականգնելուն: Վերանորոգ-ւում են ճանապարհները եւ կամուրջները, լցւում են ականափո-սերը: Կրկին աշխուժանում է քաղաքային կեանքը: Սկսում են աշխատել արհեստանոցները, խանութները, շուկան, հացի փռերը եւ այլն:

Հայերը, վերադառնալով լքուած գիւղերը, ստեղծում են զինուած ջոկատներ՝ թուրքերի եւ քրդերի յարձակումներից պաշտպանուելու համար, ստանում են հազարաւոր գերանդի-ներ եւ աշխատանքային այլ գործիքներ՝ իբրեւ դաշտային աշխատանքների օգնութիւն: Վանի կանանց բարեգործական միութեանը կից ստեղծւում է մարմին՝ գաւառներից հաւաքուած որբերի խնամակալութեան համար. նրանց ուղարկում են որբանոցներ:

Կարճ ժամանակամիջոցում Վան–Վասպուրականի հայութիւնը ոտքի է կանգնում, սակայն, ցաւօք, ինքնավարու-թիւնը տեւում է ընդամէնը 70 օր: Արեւմտեան Հայաստանի անկախութեան վերականգնումը հակասում էր Ռուսական կայսրութեան շահերին: Ռուսական բանակի յանկարծակի նա-հանջը թուրքերին հնարաւորութիւն է ընձեռում համախմբելու ուժերը եւ հակայարձակման անցնելու՝ ոչնչացնելով փրկուած հայկական բնակավայրերը: Նահանջող ռուսական բանակի հետ ճանապարհ է ընկնում Վասպուրականի հայութիւնը. դատարկւում է մեր ժողովրդի հինգհազարամեայ բնօրրանը: Անպաշտպան քաղաք են մտնում թուրքերը…

Շատ չանցած՝ ռուսական բանակը կրկին գրաւում է քա-ղաքը, բայց այն արդէն «*քաղաք–ուրուական*» էր: Աւերուած հայրենիք է վերադառնում փախստականների միայն մի մասը: Բայց եւ այնպէս սկսում են աշխուժացնել քաղաքը եւ գիւղերը, աւերակներից դանդաղօրէն վերականգնել տները: Ջրաղաց-ները վերստին ցորեն են աղում, սարերում կրկին հնչում է հայ գիւղացու զիլ ձայնը: Առագաստանաւերը սկսում են ակօսել Վանայ լճի երկնագոյն մակերեւոյթը: Ձկնորսները նորոգում են ցանցերը, իրար են հետեւում հարսանիքներն ու ծնունդները, մահերն ու թաղումները: Վան–Վասպուրական է վերադառնում մօտ 30000 հայ՝ յոյսով, որ այլեւս հարկադրուած չեն լինելու լքել հայրենի բնօրրանը: Ռուսական զօրքերը եւ հայ կամաւորա-կանները յուսալիօրէն պաշտպանում էին Վասպուրական աշխարհի սահմանները, թուրքերը շարունակում էին նահան-ջել: Ռուսաստանում իշխանութեան է գալիս Ժամանակաւոր կառավարութիւնը՝ ի հակադրութիւն ցարիզմի՝ ունակ աջակցելու հայերի ազգային յոյսերի իրականացմանը: Յաղթանակը մօտենում է. թւում է՝ մի փոքր էլ, եւ Արեւմտեան Հայաստանը կ'ազատագրուի, կ'իրականանայ դարաւոր երազանքը՝ յանուն որի հայ ժողովուրդը անասելի արհա-ւիրքներ էր կրել: 1917 թուականի Հոկտեմբերեան յեղաշրջումը

ոպքից գլուխ շրջելով փոխում է ամէն ինչ: Ռուսական բանակը հապճեպ լքում է ճակատը: Հաղորդակցութեան շատ ճանապարհներ չեն գործում, եւ գերմանական ճակատում կռուող 200 հազար հայերի վերադարձի յոյսով՝ ոչ բազմաքանակ հայ կամաւորականները հարկադրուած են լինում պաշտպանելու հազարաւոր կիլոմետրեր ձգուող ռազմաճակատի գիծը:

Օգտուելով անկարգութիւններից եւ խառնակչութիւնից՝ թուրքերը յարձակման են անցնում՝ գրաւելով նորանոր քաղաքներ: Նրանց ձեռքն են ընկնում ռուսական բանակի պարէնի եւ զինամթերքի հսկայական պաշարներ: Սպանդի են ենթարկւում վերջերս հայրենի օջախներ վերադարձած հայերը:

Ռուսական զօրքերի հեռանալուց յետոյ Վանում կազմակերպւում է տեղական իշխանութիւն՝ «**Վասպուրականի Իշխանութիւն**»-ը: Կառավարութեան կազմի մէջ են մտնում 1915 թուականի ինքնապաշտպանութեան հերոսները, ղեկավար է ընտրւում Կոստի Համբարձումեանը: Ստեղծւում են բաժիններ՝ ներքին (Գրիգոր Բուլղարացի), ֆինանսական (Սամուէլ Մեսրոպեան), առողջապահութեան (բժիշկ Տէր–Մեսրոպեան), հոգաբարձական (Ջաւէն Կորկոտեան) եւ գիւղատնտեսական (Արմենակ Մաքսապետեան), որոնք եռանդուն գործունէութիւն են ծաւալում 39.300 քկմ հսկայական տարածքում՝ պաշտպանելով հայ ժողովրդին եւ կարգաւորելով նրա քաղաքական–տնտեսական կեանքը: 25-30 տարեկան զօրակոչային տարիքի տղամարդկանցից ստեղծւում է երկու գունդ, ամէն մէկում՝ հազարական մարդ, այդ թւում՝ երկու հարիւր հեծեալ: Նորաստեղծ զօրամասերը անմիջապէս ուղարկւում են՝ նահանգի սահմանները պաշտպանելու: Սպայական կազմի անբաւարարութեան պատճառով Վանում բացւում է «Սպայական Ուսումնարան»: Փորձառու սպաները չորս ամսուայ ընթացքում պէտք է ռազմական գիտելիքներ ուսուցանէին 30 ընտրուած զինուորների՝ ստորաբաժանումները հրամանատարներով համալրելու համար: Ստեղծւում է նաեւ ոստիկանութիւն…

Գիւղատնտեսական կեանքը կարգի բերելու համար գոյքի եւ պարէնամթերքի պաշարների գոյքագրում է անցկացւում: Պարսկաստանից ձեռք է բերւում ցորեն, պարէն, անասուն: Շրջանի ներքին կեանքը կարգաւորելու համար ընդունւում են մի շարք օրէնքներ եւ կարգադրութիւններ: Շրջանառու-

թեան մէջ են դրւում դրամանիշներ՝ յիսուն ռուբլի անուանական արժէքով՝ «ներքին սպառման չեկ» անուանումով: Շրջանում մնացած թրքական զինուած ջոկատները վտարելու համար ձեռնարկւում են անգամ նաւերի կիրառմամբ յարձակողական արշաւախմբեր: Արծկէում թրքական ճամբարի վրայ յարձակման ժամանակ անձնակազմի մի մասը երկու նաւ է նստում, իսկ հեծեալները փեղ են հասնում ցամաքային ճանապարհով: 1918 թուականի փեփրուարի 13–ին գրաւելով Արծկէն՝ հայկական զօրամասերը յաջորդ օրը Խլաթում մարտի են բռնւում թըրքական զօրամասերի հեփ, գնդակոծում դրանք նաւային թնդանօթներով եւ վերադառնում Վան:

Բայց եւ այնպէս ռազմաճակատից օրեցօր նորանոր փխուր լուրեր են հասնում: Փեփրուարի 26–ին հայկական ջոկատները աններելիօրէն թոյլ են փալիս թուրքերին գրաւել Կարինը (Էրզրում): Կարինի անկումն առաջացնում է Վանի բնակիչների զարմանքն ու զայրոյթը: Իրավիճակն աւելի է բարդանում մարտի 3-ին Բրեսփ–Լիփովսկի պայմանագրի կնքումով, որով Սովեփական Ռուսաստանը Օսմանեան կայսրութեանն է զիջում անգամ Կարսն ու Արդահանը: Ռազմաճակատի գիծը աւելի է հեռանում, թրքական օղակը սեղմւում է, եւ Վասպուրականը յայտնւում է շրջափակման վտանգի առջեւ: Անհեփանում է կողմնակի աջակցութեան չնչին յոյսն անգամ. Ազգային խորհրդի միակ օգնութիւնը 60 հեծեալների ջոկատն ու աննշան 80 հազար դրամ գումարն էին: Արեւելեան Հայաստանը նոյնպէս պատրաստւում է կենաց եւ մահու պայքարի. ամենաքիչը երկու ամսից թրքական բանակը «դափապարփուած էր» մօփենալու Երեւանի մափոյցներին: Երբ մարփին հայկական հինգերորդ գնդի 400 զինուորներ Վասպուրականից գնում են հայրենի վայրեր, յոյս այլեւս չէր մնում: 1918 թուականի մարփի 28–ին Վասպուրականի իշխանութիւնները ողջ բնակչութիւնը փարհանելու հրաման են փալիս: Համարեայ 30 հազար մարդ՝ գերազանցապէս խաղաղ բնակիչներ, անվերջանալի, անընդհափ մարփերով ձիւնապափ լեռներով եւ կիրճերով դուրս են գալիս շրջափակումից: Պարզւում է սակայն, որ փակ է հիւսիս փանող ճանապարհը: Որոշւում է կայացւում շարժուելու Պարսկաստան: Ուրմիայի մօփ վասպուրականցիներին են միանում Սալմասփի հայերն ու ասորիները: Փորձելով օգնութեան հասնել նրանց՝ Անդրանիկն իր փոքրաթիւ ջոկափով յունիսին յարձակում է ձեռնարկում Սալմասփի ուղղութեամբ, սակայն Խոյի մօփակայքում չորրորդ

թրքական բանակի գլխաւոր ուժերի դէմ մղած մի քանի մարտերից յետոյ հարկադրուած նահանջում է: Յուլիսին 20000 հայ փախստականներ, գիշերուզօր մարտնչելով, լքում են Ուրմիան: Մարտերից մէկի ժամանակ զոհւում են Վանի կառավարութեան ղեկավար Կոստի Համբարձումեանը եւ Յովհաննէս Թումանեանի որդին՝ Արտաւազդը: Կորսւում են Վանի հայկական իշխանութիւնների կարեւոր արխիւները, որոնք հնարաւորութիւն կ'ընձեռէին շարադրելու նրանց գործունէութեան հերոսական եւ ողբերգական պատմութիւնն ու շրջափակումը ճեղքելը:

Ի վերջոյ, օգոստոսին փախստականները մարտերով հասնում են Համադան, որն անգլիացիների ձեռքում էր: Փախստականների հետ սերտօրէն կապուած՝ Իրաքում անգլիական իշխանութիւնների աշխատակից Ստեֆֆորդի տուեալներով Վանը լքելու ամբողջ ճանապարհին զոհւում է 17 հազար հայ եւ ասորի, նաեւ 10 հազարը գերի է ընկնում տեղական ցեղերին. տղամարդիկ մեծաւ մասամբ սպանւում են, իսկ երեխաները եւ կանայք՝ վաճառւում գիւղերի: Միայն 1918 թուականի նոյեմբերին են փախստականներն իմանում Հայաստանի՝ մայիսի 28-ին հռչակուած անկախութեան մասին:

— Աստուա՛ծ իմ, Շուշանի՛կ, իսկ ի՞նչ է լինում մերոնց հետ. ոչինչ չես ասում:

— Վարդա՛ն, չէի կարող քեզ չպատմել Վանի հերոսամարտի մասին... Դէ՛, ինչ ասեմ մերոնց մասին... Բնականաբար նրանք էլ իրենց լուման են ներդնում Վանի պաշտպանութեան ժամանակ... Բայց երբ ռուսները առաջին անգամ լքում են Վանը, նրանց հետ են լինում մերոնք՝ Տէր Վարդանը՝ կնոջ եւ երեխաների հետ, ինչպէս նաեւ Արամն ու Շուշանիկը՝ երեխաներով… Շատ վանեցիների հետ նրանք շարժւում են Պարսկաստան... Ճանապարհին ընտանիքը պաշտպանելիս զոհւում է Արամը, չդիմանալով ճանապարհին, սովին եւ դժուարութիւններին՝ զոհւում են բոլոր երեխաները՝ Երեմիան եւ Սեդրաքը, Արամի և Շուշանիկի երկու որդիները, Նեկտարի եւ Տէր Վարդանի երեք երեխաները՝ Կարապետը, Աւետիսը եւ Հռիփսիմէն: Երեք տարուայ թափառումներից յետոյ, հազիւ կենդանի, Բաղդադ են հասնում Տէր Վարդանը, Նեկտարն ու Շուշանիկը՝ աւագ դստեր՝ Զաբէլի հետ: Բաղդադում նրանք հանդիպում են քահանայ Տէր Յովհաննէս Սիմոնեանին, որը Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) աջակցու-

թեամբ հաւաքում էր վանեցի որբերին: Տիկնոջ եւ քրոջ հետ Տէր Վարդանն օգնում է Տէր Յովհաննէսին: Հաւաքում են մօտ 800 որբ եւ միւս փախստականների հետ տեղափոխւում Երուսաղէմ…

Երուսաղէմում աղջիկներին տեղաւորում են յունական Խաչավանքում, իսկ տղաներին՝ Սրբոց Յակոբեանց վանքում... Որբանոցը կոչւում է «Արարատեան»... Տէր–Սարգսեան ընտանիքը մասնակցում է որբերի դաստիարակութեանը... Եւ այս ամէնը Բարեգործական Միութեան նիւթական աջակցութեամբ…

1922 թուականին քսաներկու տարեկան Ջաբէլը՝ Շուշանիկի դուստրը, ամուսնանում է տեղացի լուսանկարիչ հայ քաղաքացի Խաչիկ Գէորգեանի հետ…

— Քաղաքացի՛, Խաչի՛կ. ի՞նչ են նշանակում այս անունները:

— Քաղաքացին քաղաքում ապրողն է. դրանք հիմնականում Կիլիկիայի հայերն են, որ Սուրբ Երկիր են եկել դեռեւս XI– XII դարերում եւ հաստատուել այստեղ, բայց յետագայում էլի են եկել... Օրինակ՝ Խաչիկի նախնիները չորս հարիւր տարի առաջ են եկել Էրզրումից... Իսկ Խաչիկը խաչ բառից է, խաչիկ՝ փոքր խաչ:

— Իսկ ես չգիտէի: Ռուսաստանում ազգայնականները, որպէսզի վիրաւորեն հայերին կամ կովկասցի մուսուլմաններին անուանում են խաչիկներ: Այս բառը Ռուսաստանում հնչում է իբրեւ նուաստացնող…

— Դա տգիտութիւնից է:

— Բնականաբար. եթէ իմաստն ըմբռնէին…

— Խաչիկն ու Ջաբէլը երեխաներ չունէին, եւ միայն 5 տարի յետոյ, շնորհիւ Սրբոց Հրեշտակապետաց վանքի հրաշագործ ձիթապտուղների, նրանք 1927 թուականին երկուորեակներ են ունենում եւ նրանց անուանում են Միքայէլ եւ Գաբրիէլ՝ ի պատիւ Հրեշտակապետերի: Նոյն տարում Տէր Վարդանն ու Նեկտարն են որդի ունենում, որին էլ, ի պատիւ Սուրբ Յակոբի, անուանում են Յակոբ:

Որբանոցից դուրս գալիս շատ տղաների յանձնում են քաղաքացի ընտանիքներին, որոնք նրանց արհեստ են սովորեցնում, իսկ աղջիկներին վերցնում են աւելի ունեւոր ընտանիքները:

Քանի որ չգիտէին նրանց ծննդեան օրերը, բոլորի ծննդեան օրերը նշում են միեւնոյն օրը՝ Սրբոց Վարդանանց տօնին, եւ տօնի առիթով հարիսա են եփում:

Վանեցի շատ որբեր ամուսնանում են հենց վանեցիների հետ: Եւ քանի որ Պատրիարքութիւնը, որբերից բացի, ապաստան էր տուել նաեւ փախստական ընտանիքների, կացարաններին առնչւող դժուարութիւններ կային: Ցաւօք, այն ժամանակ շատ փախստական ընտանիքներ յանուն հացի եւ կացարանի կաթոլիկ են դառնում: Սակայն երիտասարդ վանեցի ընտանիքները մնում են Հայ Եկեղեցու հաւատարիմ զաւակներ: Այսպէս, այդպիսի շատ ընտանիքներ տեղափոխւում են Եաֆա եւ Հայֆա, որտեղ, շնորհիւ աշխատասիրութեան եւ խելքի, ժամանակակից լեզուով ասած՝ ոչ միայն իրենց բիզնեսն են հիմնում, այլեւ կարճ ժամանակ անց աշխատողներ են վարձում. Նրանք երբեք չեն մոռանում եկեղեցին, օգնում են՝ ինչով կարողանում են…

1924 թուականին որբանոցը փակւում է, եւ որբուկներին ուղարկում են Կիպրոս՝ Մելքոնեան եղբայրների նոր որբանոց, որտեղ նոյնպէս տարբեր վայրերից որբ երեխաների են հաւաքում: Այդպիսին էր Բարեգործական Միութեան քաղաքականութիւնը: Շուտով այդ որբանոցը դառնում է «**Մելքոնեան**» Վարժարան, որտեղից որբ երեխաներին, որոնք, լաւ կրթութիւն ստանալով, հիմնականում մանկավարժներ են դառնում, ուղարկում են հայկական գաղթօջախներ… Վանեցի որբերի մի մասին ուղարկում են Սովետական Հայաստան: Որբերից ոմանք ընդունւում են Պատրիարքութեան Ժառանգաւորաց Վարժարան: Վարժարանի վանեցի որբերից են ապագայ Սրբազաններ՝ Արքեպիսկոպոս Սիոն Մանուկեանը (մահացել է Էջմիածնում), Արքեպիսկոպոս Զգօն Ցակոբեանը (մահացել է Ամերիկայում), Արքեպիսկոպոս Սերովբէ Մանուկեանը (մահացել է Փարիզում), Պատրիարքութեան Լուսարարապետ Արքեպիսկոպոս Հայրիկ Ասլանեանը (մահացել է Երուսաղէմում), Արքեպիսկոպոս Հայկազուն Աբրահամեանը եւ Երուսաղէմի Պատրիարք Արքեպիսկոպոս Եղիշէ Տէրտէրեանը (մահացել են Երուսաղէմում): Իսկ ոմանց էլ ուղարկում են Եթովպիա:

— Ինչպէ՞ս թէ Եթովպիա. ի՞նչ կապ ունի Եթովպիան:

— 1924 թուականին Երուսաղէմ է գալիս երաժիշտ եւ երգահան, Կոմիտաս վարդապետի աշակերտ, երաժշտութեան

ուսուցիչ Գէորգ Նալբանդեանը, որը դասաւանդել սկսել էր դեռեւս Զէյթունում եւ Քիլիսում, եւ Եղեռնից յետոյ փոխադրւում է Հալէպ: Երուսաղէմում նա սկսում է աշխատել վանեցի որբ երեխաների հետ…

Շուտով Նալբանդեանը որբանոցի սաներից ստեղծում է «**Փանփար**» փողային նուագախումբը, որն արդէն կարողանում է ելոյթներ ունենալ հասարակութեան առջեւ: Նուագախումբը նոյն անունն ունէր, ինչ այն մէկը՝ Վանում:

Նոյն 1924 թուականին Երուսաղէմ է այցելում Եթովպիայի Հայլէ Սելասսիէ կայսրը, որը Երուսաղէմում մասնակցում է հայկական եկեղեցական փոնախմբութեանը, որի ժամանակ բարձրաստիճան հիւրի առջեւ նաեւ ելոյթ է ունենում Նալբանդեանի փողային նուագախումբը: Կայսրն այնքան է հաւանում կատարումը, որ հայոց Պատրիարքին խնդրում է իրեն նուիրել ամբողջ նուագախումբը: Պատրիարքը չի կարողանում մերժել օգոստոսափառ հիւրին: Եւ այդ ժամանակ Հայլէ Սելասսիէն որդեգրում է բոլոր երաժիշտներին՝ քառասուն երեխաների, եւ իր հետ տանում Ադիս Աբեբա: Բնականաբար իր հետ է տանում նաեւ Գէորգ Նալբանդեանին: Նուագախումբն այդպէս էլ անուանում են՝ «*Արփա Լիչոչ*»՝ «**Քառասուն Երեխայ**»: Նալբանդեանն այնտեղ մի քանի նուագախումբ է ստեղծում, այլեւ գրում է երկրի օրհներգը:

— Որտեղ ասես, որ հայ չկայ:

— Դէ՛հ, Եթովպիայում հայեր կային դեռեւս VII դարից… Այսօր Եթովպիայում գործում է հայկական ազգային «Գեւորկով» լիցեյը, որին կից կան մանկապարտէզ եւ տարրական դասարաններ: Լիցեյում դասաւանդւում են հայոց լեզու, հայոց պատմութիւն, աշխարհագրութիւն, կրօն, ամհարերէն՝ Եթովպիայի պետական լեզուն, անգլերէն, ֆրանսերէն:

— Իսկ յետո՞յ:

— Իսկ յետոյ՝ 1929 թուականին, Երուսաղէմում բացւում է Սրբոց Թարգմանչաց երկսեռ Վարժարանը, որտեղ ուսանում են Յակոբը, Միքայէլը եւ Գաբրիէլը: Ծնողներս եւ ես նոյնպէս այդ դպրոցն ենք աւարտել… 1942 թուականին մահանում է Տէր Վարդանը…

— Իսկ ի՞նչ է, նա հիւա՞նդ էր:

— Ո՛չ, առողջ էր, բայց նրան հանգիստ չէր տալիս Հայրենիքի կարօտը, շատ էր ուզում տեսնել ազատ, թուրքերից

ազատ Հայաստանը… Անգամ պատրաստ էր մեկնել Սովետական Հայաստան: Մահուան մահճում Նեկտարին խնդրում է, որ նա հնարաւորութեան դէպքում որդու հետ մեկնի Հայաստան… Երեք տարի յետոյ մահանում է նաեւ Շուշանիկը. նա յաճախ էր հիւանդանում. Վանից Երուսաղէմ ճամբորդութիւնը խաթարել էր նրա առողջութիւնը…

— Իսկ նրանք որտե՞ղ են թաղուած:

— Այստեղ՝ Երուսաղէմում՝ հայկական գերեզմանատանը՝ Սուրբ Փրկիչ վանքում… Նրանք հանգչում են կողք կողքի…

— Իսկ գիտե՞ս, Շուշանի՛կ, Աւագ Հինգշաբթի, երբ թափօրն ուղղուեց այդ վանք, ինչ-որ բան ինձ մղում էր այդ գերեզմանատուն, ինչ-որ մէկը կանչում էր ինձ, բայց ես չէի հասկանում… Աստուա՜ծ իմ:

— Ա՜յ, տեսնո՞ւմ ես. հոգին ամէն ինչ զգում է եւ ձգտում է իր արմատներին:

— Փա՛ռք Տիրոջը: Իսկ կարելի՞ է վաղն այցելել նրանց:

— Անպայման, Պատարագից յետոյ կը գնանք:

— Ների՛ր, երբեմն քեզ հարցերով ընդհատում եմ եւ թեման փոխում: Պարզապէս շատ եմ ուզում ամէն ինչ իմանալ, ուզում եմ ձեռքիցս բաց թողածը ետ բերել: Նոյնիսկ մեր Հայր Վարդանին յոգնեցրինք:

— Ի՞նչ ես ասում, Վարդա՛ն, իմ պարտքն է օգնել ձեզ՝ վերագտնելու կորցրածը: Լսելով ձեր խօսակցութիւնը՝ ինքս եմ դառնում այն իրադարձութիւնների մասնակիցը, որովհետեւ արմատներս Վանից են, բայց, ցաւօք, ոչինչ չգիտեմ… Այնպէս որ շնորհակալ եմ այս երեկոյի համար: Աստուա՛ծ ձեզ պահապան: Շարունակի՛ր, Շուշանի՛կ:

— Հասկանում եմ Ձեզ, Հա՛յր Վարդան, եւ քեզ, Վարդա՛ն: Ես էլ եմ ուրախ, որ կարող եմ ինչ-որ բանով օգտակար լինել:

1939 թուականին տասներկու տարեկանում Յակոբը, Միքայէլն ու Գաբրիէլը աւարտում են դպրոցը. դպրոցն այն ժամանակ վեցամեայ էր, տարրական կրթութիւն էին ստանում, իսկ յետոյ գնում էին արհեստ սովորելու, կամ էլ՝ «Մելքոնեան» վարժարան: Երեք ընկերներին ուղարկում են վարպետ Աբգարի մօտ՝ ոսկերչական արուեստ սովորելու: Վարպետ Աբգարը յայտնի ոսկերիչ էր…

— Իսկ ես անգամ տեսել եմ Յակոբ պապի աշխատանքները. նա դրանք մօրս համար է ստեղծել, իսկ մայրս էլ

Նեկտար մայրիկի խնդրանքով պահում է իր հարսի՝ ապագայ կնոջս համար…

— Տեսնենք՝ ում կը ժպտայ բախտը:

Շուշանիկն ու Վարդանը շիկնեցին եւ խոնարհեցին աչքերն այնպէս, որ նկատեցին անգամ Հայր Վարդանն ու Հռիփսիմէն: Նրանք միմեանց նայեցին եւ ժպտացին… Շուշանիկը, փոքր-ինչ շփոթուած, շարունակեց…

— Այդպէս թռչում են տարիներ, եւ ահա լուր է հասնում, որ Հայաստան ընկնելու հնարաւորութիւն կայ… Սովետական Միութիւնից այդ նպատակով նոյնիսկ ժամանում է «**Պոբեդա**» շոգենաւը: Հայրենադարձութիւնը նախաձեռնողը Հայաստանի կոմկուսի քարտուղար Գրիգոր Յարութիւնեանն էր: Դեռ այն ժամանակ, երբ սովետական զօրքերը Բեռլինի մատոյցներում էին, նա դիմում է Ստալինին՝ առաջարկելով Անկարայից պահանջել գրաւուած հայկական տարածքները: Ստալինը հաւանութիւն է տալիս նախաձեռնութեանը: ՍՍՀՄ-ը չեղեալ է յայտարարում սովետա–թրքական խաղաղութեան պայմանագիրը եւ Անկարային է ներկայացնում Կարսն ու Արդահանը վերադարձնելու վերջնագիր: Թուրքերը մերժում են, սակայն միաժամանակ սկսում են սահմանամերձ շրջաններից տարհանել բնակչութիւնը եւ ունեցուածքը: Սովետական բանակը սահմանին է կենտրոնացնում խոշոր զինուորական ստորաբաժանումներ եւ սկսում է նախապատրաստուել արեւմտահայկական հողերն ազատագրելու գործողութեանը… Սակայն, ցաւօք, ամերիկեան քաղաքականութեան պատճառով դա տեղի չի ունենում:

Արեւմտեան Հայաստանի հողերը միակցելու խնդրի հետ միաժամանակ Յարութիւնեանը Կրեմլում արծարծում է նաեւ արտասահմանի հայերի հայրենադարձութեան հարցը: Ստալինն այս հարցում էլ է նրան աջակցում: 1946 թուականի փետրուարի 22-ին նա ստորագրում է հայրենադարձութեան մասին պատմական փաստաթուղթը: Այդ լուրը թռչում–հասնում է Երուսաղէմ… Բոլոր հայերը յոյս էին փայփայում, որ մեր հողերը ազատագրուելու են, եւ իրենք վերադառնալու են պատմական հայրենիք: Եւ հայրենիք են ձգւում հայրենադարձների քարաւաններ՝ Իրանից, Սիրիայից, Լիբանանից, Պաղեստինից, Յունաստանից, Ֆրանսիայից, ԱՄՆ-ից…

1947 թուականի փետրուարի 23-ին Երուսաղէմի Պատրիարք Կիւրեղ Իսրայէլեանը, Լուսարարապետ Եղիշէ Տէրտէր-

եանը, Թարգման Հայրիկ վարդապետ Ասլանեանը եւ Միռոն վարդապետ Կրճիկեանը ուղեւորւում են Հայֆա, որպէսզի օրհնեն հայրենիք մեկնող իրենց զաւակներին: Հայֆայի նաւահանգստում նրանց են դիմաւորում Բեյրութում սովետական դեսպանութեան քարտուղար Պ. Խեննկիւլովը եւ հայրենադարձութեան յանձնաժողովի անդամները: Բոլորը միասին՝ «Պօբեդա» նաւում արդէն իրենց տեղերը զբաղեցրած հայրենիք վերադարձող հայերի ծափահարութիւնների ներքոյ ուղղւում են նաւապետի նաւախուց, որը ճաշկերոյթ էր կազմակերպել ի պատիւ Պատրիարքի: Պատրիարքը հայերի անունից շնորհակալութիւն է յայտնում հայրենադարձութեան բոլոր կազմակերպիչներին եւ արաբ ժողովրդին, որն այս տարիներին ընդունել է հայերին... Առողջութիւն է մաղթում հայ եւ ռուս ժողովուրդներին եւ նրանց առաջնորդներին, այլեւ օրհնում է նաւապետի ճանապարհը: Յետոյ Պատրիարքն օրհնում է նաւը եւ հայրենադարձներին՝ բոլորին ցօղելով վարդաջրով... Նա յորդորով դիմում է բոլոր հայրենադարձներին՝ խնդրելով, որ լինեն Սովետական Հայաստանի բարեխիղճ, աշխատասէր քաղաքացիներ ...

Երեկոյեան հինգին նաւը մեկնում է Հայֆայից՝ իր հետ տանելով 4000 հայերի Իրաքից, Բեյրութից եւ Պաղեստինից: Նրանց թւում էին Նեկտարը եւ նրա Յակոբ որդին: Այդ ժամանակուանից նրանց մասին ոչինչ յայտնի չէ: Գիտէինք միայն, որ Նեկտարն ուզում էր հաստատուել Էջմիածնում, այդպէս էլ լինում է, ինչպէս եւ դու պատմեցիր...

— Իսկ ինչո՞ւ Զաբէլի ընտանիքը չի ուղեւորւում նրանց հետ...

— Նրանք որոշում են յետոյ ուղեւորուել, քանի որ մի այլ նաւ էլ պէտք է լինէր, բայց այդ նաւն այդպէս էլ չի ժամանում... Դէ՛, նաեւ լուրերի էին սպասում Նեկտարից... Շուտով սկսւում է արաբների եւ հրեաների միջեւ պատերազմը...

1948 թուականի մայիսի 14-ի կէսգիշերին աւարտւում է Պաղեստինի բրիտանական մանդատի գործողութեան ժամկէտը, Սրբոց Յակոբեանց հայկական վանքը ասես սահման է դառնում արաբների ու հրեաների միջեւ: Վանքի տարածքն անընդհատ ռմբահարւում եւ գնդակոծւում է... Մարտեր են ընթանում ամէն տան ու հողակտորի համար... Պատրիարքը հարկադրուած ապաստան է տալիս 3000 հայ փախստական-

ների՝ ամբողջ Երուսաղէմից եւ Եաֆայից: Դրա համար էլ Կիւրեղ Պատրիարքը ստեղծում է յանձնաժողովներ: Վանեցի Հայրիկ վարդապետի ղեկավարութեամբ Կարգապահական յանձնաժողովը հետեւում էր վանքի ներքին կարգապահութեա-նը, կազմակերպում վանքի պաշտպանութիւնը, ինչպէս նաեւ մարում հրդեհները… Այդ յանձնաժողովում էին նաեւ Միքայէլն ու Գաբրիէլը: Պարենային յանձնաժողովը պատրաստում եւ բաշխում էր սնունդը: Եւ առողջապահական յանձնաժողովը, որն օգնում էր վիրաւորներին, որոնց թիւը հասնում էր մի քանի հարիւրի: Ռմբահարումներից եւ պատահական գնդակներից զոհուածների թիւը առնուազն երկու տասնեակ էր: Ռմբահա-րումների ժամանակ ժողովուրդը թաքնւում էր Սրբոց Յակո-բեանց տաճարում՝ հաւատալով, որ Սուրբ Յակոբները կը պաշտպանեն իրենց: Հետաքրքիր է, որ ոչ մի ռումբ չի ընկնում տաճարի վրայ: Բազում, անգամ հրեայ եւ արաբ վկաներ են լինում, որ տեսնում են սպիտակ հանդերձներով ծերունիների, որոնք ռմբահարումների ժամանակ տաճարից հեռու էին նետում ռումբերը:

Այդ ռմբահարումներից մէկի ժամանակ՝ վիրաւորին փրկելիս, զոհւում է Գաբրիէլը: Ջաբէլը, ինչպէս յետագայում նա պատմել էր մօրս, նոյն վախն ու յուզմունքն է ապրում, ինչպէս եւ 1915 թուականին՝ Վանը ռմբահարելիս: Այդ պատճառով էլ զարմանալի չէ, որ շատ վանեցիներ, եւ ոչ միայն նրանք, լքում են Երուսաղէմը, Եաֆան եւ տեղափոխւում են Յորդանան, իսկ յետոյ էլ շատերը՝ Ամերիկա եւ Աւստրալիա: 1948-1967 թթ. հայերին թաղում էին Պատրիարքութեան տարածքում, քանի որ Սուրբ Փրկիչ վանքը եւ գերեմանատունը իրեական բանակի հսկողութեան ներքոյ էին…

1960 թուականին Միքայէլ պապն ամուսնանում է Աննա Յակոբեանի հետ, իսկ 1961 թուականին ծնւում է մայրս՝ Հռիփսիմէն: 1976 թուականին նրան, իբրեւ գերազանցիկի, հնարաւորութիւն է ընձեռւում մեկնելու Հայաստան: Սփիւռքի կոմիտէն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան աջակ-ցութեամբ Հայաստանում ճամբար է կազմակերպում Սփիւռքի հայերի համար: Այդպէս մայրիկն ամառային արձակուրդին Յորդանանով մեկնում է Հայաստան՝ Կիրովականի Արտէկ ճամբար: Սիրահարուելով Հայաստանին՝ 1979 թուականին նա ընդունւում է Երեւանի Պետական Համալսարանի բանասիրա-կան ֆակուլտետի հայոց լեզուի եւ գրականութեան բաժին:

Մինչ օրս դասաւանդում է Սրբոց Թարգմանչաց Եկրորդական Վարժարանում…

1987–ին ամուսնանում է հօրս՝ Աբգար Վարդանեանի հետ, իսկ մէկ փարի յետոյ լոյս աշխարհ եմ գալիս ես... Զաբէլի թախանձալից խնդրանքով ինձ անուանում են Շուշանիկ՝ ի յիշատակ իր մօր:

— Նա ո՞ղջ էր:

— Այո՛, մահանում է 1995 թուականին: Ես եօթ տարեկան էի եւ շատ լաւ եմ յիշում՝ ինձ կանչեց, օրհնեց իր խաչով, որը կրծքին էր: Այդ խաչը, որ դու տեսել ես, կախեց իմ կրծքին եւ ասաց, որ ինքն ու իմ մայրը չեն կարողացել գտնել Նեկտարին ու Յակոբին, եւ խնդրեց ինձ, որ ես գտնեմ նրանց, եւ որ այդ խաչը կ'օգնի ինձ գտնել նրանց... Յետոյ նա պառկեց եւ այլեւս չարթնացաւ:

Յետոյ, ինչպէս մայրս է պատմում, Հայաստանում սովորելու տարիներին Զաբէլի խնդրանքով փնտռել է ձեզ, բայց չի գտել: Իսկ երկրաշարժի ժամանակ Լենինականից այստեղ՝ Իսրայէլ են բերում 67 վիրաւորի եւ երկու ուղեկցող բժիշկների. մայրիկն է կազմակերպում նրանց դիմաւորումն օդանաւակայանում: Ներկայ է լինում համարեայ ամբողջ համայնքը, անգամ Զաբէլն է գալիս, եւ այնպիսի տպաւորութիւն էր, որ նա վիրաւորների մէջ փնտռում էր հարազատներին: Նա զգում էր, որ իր հարազատներն էլ են այնտեղ: Նոյնիսկ չնայելով իր տարիքին՝ մայրիկի հետ մի քանի օր հիւանդանոցում է մնում: Օգնում են հիւանդներին, կերակրում իրենց ձեռքով: Զաբէլն ասում էր, որ գուցէ իր հարազատները ինչ–որ տեղ օգնութեան կարիք ունեն... Անգամ մայրիկը զայրանում է վրան, թէ իբր ինչ գիտես, որ նրանք Լենինականում են... Նա բոլորին հարցուփորձ էր անում Նեկտարի եւ Յակոբի մասին: Այդ հիւանդների համար Երուսաղէմի համայնքը մայրիկի աջակցութեամբ գումար է հաւաքում, եւ իւրաքանչիւրին հագուստով եւ այլ իրերով ծանրոց են տալիս…

Նոյնիսկ Արցախի պատերազմի ժամանակ Զաբէլը լուրերի էր սպասում ռազմաճակատից... Միշտ հարցնում էր... Միայն հիմա՝ քո պատմածից յետոյ եմ հասկանում, որ Զաբէլը հոգում ամէն ինչ զգում էր: Աստուա՜ծ իմ, անգամ 1982 թուականի յունուարի 6–ին նա, չգիտես ինչու, ոչ մէկին չասելով, գնում է գերեզմանատուն... Նա երկար ժամանակ չկար… Մայրիկն ասում է, որ նրան երկար են փնտռում, քիչ է մնում՝ ոստիկա-

նութիւն դիմեն: Իսկ նա գալիս է չափազանց փխուր եւ մի քանի օր ոչինչ չի խօսում…

— Շուշանի՛կ, հենց այդ փարի եւ այդ օրը մահանում է Նեկփարը:

— Ես էլ հենց դա եմ ասում. այդ մարդիկ սուրբ էին: Տէ՛ր, հանգստութիւ՛ն փուր նրանց հոգիներին:

— Ամէ՜ն: Գուցէ հենց նրանց աղօթքներով ենք մենք հանդիպել: Ես արդէն ոչնչից չեմ զարմանում:

— Ես՝ նոյնպէս:

— Շուշանի՛կ, իսկ քո մասին ի՞նչ կը պապմես:

— Դէ՛, ի՞նչ պապմեմ իմ մասին: Ես մայրիկիս նման սիրահարուած էի Հայասպանին: Նրա եւ հայրիկիս հեփ մի քանի անգամ եղել եմ Հայասպանում: 2006 թուականին ըն- դունուել եմ Երեւանի Պեփական Համալսարանի պապմութեան ֆակուլփեփ: Դեռ դպրոցից սիրել եմ պապմութիւն: Երազում եմ գիրք գրել՝ մեր ընփանիքի պապմութիւնը: Ինքս էլ եմ փնփռել ձեզ, երբ Հայասպանում էի:

— Իսկ ապագայ գիրքը վերնագիր ունի՞:

— Ցաւօք, չեմ կարողանում գփնել…

— Արի անուանենք այն «**Երկու Խաչերի Ճանապարհ**»:

— «**Երկու Խաչերի Ճանապա՞րհ**», իսկ ի՞նչ է, շափ գեղեցիկ է: Վարդա՛ն, ահա թէ ինչ եմ մփածում:

Շուշանիկն ուրախութիւնից նոյնիսկ աթոռից ցափկեց, նրա աչքերը փայլում էին…

— Շուշանի՛կ, քեզ ի՞նչ պափահեց:

— Վարդա՛ն, մի միփք ծագեց, եթէ, իհարկէ, Հայր Վար- դանը մեզ օգնի: Ի՞նչ կասեք, Հա՛յր Վարդան:

— Շուշանի՛կ, ինքդ հնարում ես, ինքդ մփածում, իսկ մեզ մնում է կռահել. դա քո փարերքն է, այնպէս որ պապմի՛ր:

— Վարդանը թող գրի իր ընփանիքի պապմութիւնը՝ սկսելով Նեկփարից եւ Ցակոբից, երբ նրանք Հայասպան են գալիս եւ մինչ այն պահը, երբ ինքը յայփնւում է Երուսաղէմում, իսկ ես կ'աւարփեմ իմ պապմութիւնը: Նա թող գրի ռուսերէն, իսկ ես՝ հայերէն…

— Իսկ ինձ բաժին կ'ընկնի թարգմանե՛լը:

— Դէ՛, եթէ համաձայնէք, Հա՛յր Վարդան:

— Իհարկէ, կը համաձայնեմ, իսկ ի՞նչ կ'ասի Վարդանը:

— Շուշանի՛կ, բայց դու կարդում ես իմ մտքերը. ամբողջ ժամանակ, երբ դու պատմում էիր, գլխումս մի միտք էր պտտւում, որ պէտք է գիրք գրեմ ընտանիքիս մասին: Այնպէս որ ես կողմ եմ:

— Սիրելինե՛րս, ես պէտք է գնամ, արդէն ուշ է. մի ժամ քնեմ, իսկ յետոյ գնում ենք Յարութեան տաճար: Գիշերը՝ 2:30-ին, ժամերգութիւն ունենք մինչ առաւօտ…

— Հա՛յր Վարդան, իսկ ե՞րբ է սկսւում Պատարագը Գեթսեմանիին:

— Առաւօտեան եօթին եւ աւարտւում՝ ինն անց կէսին…

— Իսկ մենք կը հասցնե՞նք յետոյ գերեզմանատուն գնալ: Թէ չէ ես վաղը՝ 18:00-ին, պէտք է օդանաւակայանում լինեմ:

— Վաղը մեկնո՞ւմ ես:

— Ցաւօք, այո՛, Շուշանի՛կ, բայց ես անպայման կը վերադառնամ. ուզում եմ նաեւ ծնողներիս բերել: Հա՛յր Վարդան, իսկ կարելի՞ է գերեզմանատանը հոգեհանգստեան պաշտօն կատարել Տէր-Սարգսեան ամբողջ ընտանիքի համար:

— Իհարկէ, ես ձեզ հետ կը գամ:

— Տէ՛րը փրկի: Մի բան էլ. ուզում եմ խոստովանել, որ վաղը ծննդեանս օրն է:

— Ի՜նչ ես ասում: Այդպիսի օր՝ ցեղասպանութեան յիշատակ եւ Զատիկ: Ա՛յ քեզ նուէր:

— Այո՛, ինձ՝ նուաստիս համար մեծ նուէր է: Եթէ ես ժամանակին իմանայի արմատներս, չէի դաւաճանի իմ ժողովրդին եւ Եկեղեցուն: Այն ժամանակ եւ մինչ Երուսաղէմ գալս ամէն ինչի համար մեղադրում էի Կարապետ հօրս, թէ իբր նա ոչինչ չի պատմել մեր ընտանիքի, ժողովրդի եւ Եկեղեցու մասին… Բայց հիմա հասկանում եմ, որ դա իմ մեղքն էլ է եղել, որովհետեւ չեմ հետաքրքրուել, անտարբեր եմ եղել… Եւ անգամ ենթագիտակցօրէն, գուցէ եւ միտումնաւոր եմ ուղղափառութիւն ընդունել՝ ի հեճուկս հայրիկի…

— Գուցէ դեռ ժամանակը չէ՞ր:

— Ո՛չ, Շուշանի՛կ, ժամանակ միշտ կայ. ա՛յ ռուս ընկերս՝ Կոլեան, ինձանից լաւ գիտի հայերի, պատմութեան եւ Եկեղեցու մասին, նոյնիսկ ուզում է մկրտուել Էջմիածնում, ուզում է ամուսնանալ միայն հայուհու հետ: Էլ չեմ խօսում մօրս մասին, որը ռուս է, բայց հոգով շատ աւելի հայ, քան ես: Եթէ ես ժա-

մանակին փնտռէի եւ հետաքրքրուէի, ապա հաւանաբար վա-դուց գտած լինէի ձեզ… Հա՛յր Վարդան, իսկ Տէրն ինձ կը ների՞:

— Կը ների, Վարդա՛ն. գլխաւորն արդէն գիտակցել ես:

— Իսկ կը ներե՞ն արդեօք նախնիներս:

— Իհարկէ կը ներեն. ինքդ էիր ասում, որ մենք նրանց աղօթքներով ենք հանդիպել: Ինչպէ՛ս կարող են քեզ չներել:

— Ես մի խնդրանք էլ ունեմ: Մայրս միշտ, ինչպէս նրան սովորեցրել է Նեկտար մայրիկը, յանուն հանգուցեալների հոգու՝ գաթայ է բաժանել: Ահա ուզում եմ գնել կամ ինչ-որ բան պատուիրել: Ի՞նչ խորհուրդ կը տաք:

— Կարելի է տեղական քաղցրաւենիք պատուիրել ճե-մարանականների համար, որ ընթրիքին բաժանեն:

— Այդ դէպքում ես գումար թողնեմ, դուք կ՚ազմա-կերպէք:

— Ուրախութեամբ…

Հայր Վարդանը հրաժեշտ տուեց եւ արդէն հեռանում էր, երբ Հռիփսիմէն տան շեմին հարցրեց նրան.

— Հա՛յր Վարդան, անհանգստանում եմ մեր երիտա-սարդների համար: Ինձ թւում է, որ նրանք սիրահարուած են եւ շատ լրջօրէն:

— Ես էլ եմ նկատել. առաջին իսկ րոպէից նրանք աչք չեն կտրում միմեանցից:

— Նրանք ազգականներ են, յանկարծ…

— Մի՛ մտահոգուիր, Հռիփսիմէ՛, մեզանում կարելի է մինչեւ եօթը պորտը, իսկ նրանք միմեանցից աւելի հեռու են քան եօթը, այնպէս որ աղօթի՛ր, թող ամէն ինչ Աստծու կամքով լինի: Իսկ եթէ մի բան, ես պատրաստ եմ նրանց պսակադրել: Դէ՛, ժամանակն է:

— Հանգստացրիր ինձ: Աստուա՛ծ օգնական:

— Աստուա՛ծ պահապան:

Այն ժամանակ, երբ Հռիփսիմէն եւ հայր Վարդանը խօ-սում էին տան շեմին, Վարդանն ու Շուշանիկը մենակ էին մնա-ցել… Նրանց թարգմանիչ պէտք չէր. նրանք կարողացան իրենց զգացմունքներն արտայայտել անգլերէն…

— Վարդա՛ն, ես կը կարօտեմ:

— Շուշանի՛կ, ես կը վերադառնամ քո ետեւից: Եւ ար-դէն առանց քեզ այստեղից չեմ հեռանայ…

— Վարդա՛ն, ժամանակն է, գնանք…

Շուշանիկն ու Հռիփսիմէն որոշեցին, որ գերեզմանատնից վերադառնալուց յետոյ կը նշեն Վարդանի ծննդեան օրը: Իսկ յետոյ իրենք էլ նրան օդանաւակայան կը տանեն… Շուշանիկը նոյնիսկ գիշերը փորթ թխեց…

Առաւօտեան եօթին մօտ Վարդանը Շուշանիկի ընտանիքի հետ Յարութեան տաճարում էր: Պատարագին մասնակցեցին եւ հաղորդութիւն ստացան… Մի կողմից՝ Վարդանը զղջում էր եւ աղօթում էր հանգուցեալների համար, իսկ միւս կողմից՝ շնորհակալութիւն էր յայտնում Տիրոջը այն գթասրտութեան համար, որին իր նուաստ անձն արժանացաւ Երուսաղէմում: Նրան անգամ չզարմացրեց, որ հայկական Պատարագին հայերից բացի հաղորդութիւն ստացան ուղղափառ եւ կաթոլիկ արաբները, կային կաթոլիկ եւրոպացիներ եւ նոյնիսկ շատ ռուս ուխտաւորներ, որոնք չէին կարողացել գալ գիշերուայ յունական Պատարագին: Ընդհակառակը, նա շատ ուրախ էր, որ իր Եկեղեցին նեղ ազգային չէ, ինչպէս ոմանք են կարծում, այլ գրկաբաց ընդունում է քրիստոնեաներին՝ Քրիստոսի սիրոյ մէջ: Վարդանն արդէն հասկանում էր, որ քրիստոնեաների ողջ խնդիրը հենց Քրիստոսի սիրոյ ցամաքելն է: Եթէ սէր լինէր, եւ քրիստոնեայ պետութիւնները օգնէին հայերին, եւ ոչ թէ նայէին, թէ ինչպէս են սպանում իրենց հաւատակիցներին, ապա չէր լինի Հայոց Եղեռնը... Եւ չնայած այս ամէնին՝ տաճարում տիրում էր սէր եւ զատկական շնորհը: Տաճարում հայերէն հնչում էր՝ **Քրիստո՛ս յարեաւ ի մեռելոց**…

Վարդանը Շուշանիկի ընտանիքի, Հայր Վարդանի եւ սարկաւագ Սարգսի հետ Պատարագից յետոյ ուղղուեց հայկական գերեզմանատուն: Ինչքան մօտենում էին Տէր Վարդանի եւ Շուշանիկի շիրիմներին, այնքան Վարդանի սիրտն աւելի ուժգին էր բաբախում… Մինչ Հայր Վարդանը հոգեհանգստեան պաշտօն էր կատարում եւ իր աղօթքում արտասանում Տէր-Սարգսեան ընտանիքի հանգուցեալների անունները, Վարդանը հենց նրանցից էլ ներողութիւն էր հայցում… Իսկ Տէր Վարդանի շիրմին անգամ խոստացաւ՝ «**Ես հայ եմ, հայ էլ կը մեռնեմ**»…

Վարդանն ու Շուշանիկը որոշեցին մնալ գերեզմանատանը եւ դիտել հայերի շիրմաքարերը… Վանեցի, Սեբաստացի, Մարաշցի, Ուրֆացի, Մալաթիացի, Ադանացի, Կեսարացի, Պոլսեցի, Խարբերդցի, Զեյթունցի, Կարսեցի, Էրզրումցի, Տիգրանակերտցի եւ Երուսաղէմցի…

Երկու թռչուն էին սաւառնում Վանի, Սեբաստիայի, Մարաշի, Ուրֆայի, Մալաթիայի, Ադանայի, Կեսարիայի, Կոստանդնուպոլսի, Խարբերդի, Զեյթունի, Կարսի, Էրզրումի, Տիգրանակերտի եւ Երուսաղէմի վրայ… Ո՜չ, դրանք Նոյի աղաւնիները չեն, եւ ոչ էլ անգամ աւետաբեր կռունկներ, այլ Վասպուրականի արծիւները՝ միշտ պատրաստ ամէն տեսակի գիշատիչներից պաշտպանելու իրենց բոյնը…

Վարդանը եւ Շուշանիկը կանգնել էին իրենց նախնիների՝ Տէր Վարդանի եւ Շուշանիկի շիրմաքարերի առջեւ…

Վարդանը Շուշանիկից խնդրեց նրա հեռախօսը. իր հեռախօսի մարտկոցը լիցքաթափուել էր: Նա զանգահարեց հօրը.

— Պա՛պ ջան:

— Վարդա՞ն:

— Այո՛, ես եմ: Պա՛պ, ների՛ր ինձ ամէն ինչի համար: Ես քեզ եւ մայրիկին շատ եմ սիրում:

— Մենք էլ քեզ ենք սիրում, սիրելի՛ս:

— Պա՛պ, ես գտայ Վարդանին…

**Փառք, պատիւ եւ երկրպագութիւն Ամենասուրբ Երրորդութեանը՝ Հօր եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն, որ իր բարեհաճութեամբ հնարաւորութիւն ընձեռեց մեր նուաստ անձին՝ հրապարակելու սոյն գիրքը՝ ի փառս Իր մեծ ողորմածութեան եւ ի փրկութիւն ու ի նպաստ Հայ Եկեղեցու մանուկների: Յիշեցէ՛ք ձեր աղօթքներում բոլոր նրանց, ովքեր սոյն գիրքը հրապարակելու պատճառ դարձան: Մեզ յիշողներին կը յիշի Տէր Աստուած Յիսուս Քրիստոս: Ամէ՛ն:**

**ՎԵՐՋ**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ........................................ 3
Ո՞Վ ԵՄ ԵՍ........................................................ 5
«ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ».................... 35
ԵՐՈՒՍԱՂԷՄ..................................................... 60
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԱՐԾԻՒՆԵՐԸ............................ 178
ՅԱՒԵԼՈՒԱԾ...................................................... 221

## Աղբիւրներ եւ գրականութիւն

1. Иеромонах Гевонд, Размышления на тему Халкидона. Армянское достояние на Святой Земле, Иерусалим, 2009 г.
2. Տ. Մկրտիչեան, «Գանձեր Վասպուրականի», հ. 1, Պոստոն, 1966 թ:
3. Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի «ՍԻՈՆ» ամսագիր, Երուասաղէմ, 1947-48 թթ.:
4. Տ. Սաւալանեանց, Պատմութիւն Երուսաղէմի, Երուսաաղէմ, 1931 թ.:
5. Մկրտիչ Եպս. Աղաւնունի, Հայկական Հին Վանքեր եւ Եկեղեցիներ Սուրբ Երկրի Մէջ, Երուասաղէմ, 1931 թ.:

**www.aniv.ru**
**www.genocide.ru**
**www.wikipedia.org**



Վանի պաշպանութիւնը 1886 թ.



Վանի պաշպանութիւնը
1915 թ.



Վանի ռմբահարումը 1915 թ.



Վարագայ վանք



Ռաֆայէլ
դէ Նոհալես-Մենդեսա



Վանեցի որբերը Երուսաղէմում



Վանեցի որբերը
ճեմարանականների թւում



Վանեցի որբ աղջիկները



Վանեցի որբերի «Ֆանֆար»
փողային նուագախումբը





**28 հոկտեմբեր 1947 թ. Հայֆայի նաւահանգստում «Պօբեդա» շոգենաւը**



**Վանքի պահակախումբը 1948 թ.**



**1992 թ. Մայիս. Ազատագրուած Շուշի քաղաքը**



**Ծիծեռնակաբերդ. Յուշարձան Եղեռնի զոհերին Երեւանում**

**Գերեզմանների բակը, որտեղ գտնուեց Հեղինէ Թագուհու քարապապանը**







**Պեղումներ Հեղինէ Թագուհու պալատում**



**Հեղինէ Թագուհու քարապապանը**




**Փողոց Երուսաղէմում ի պատիւ Հեղինէ Թագուհու**



Սբ. Գրիգոր Լուսաւորչի
եկեղեցի



Սրբապատկեր՝ Սբ. Գրիգոր
Լուսաւորիչ (կենտրոնում), Տրդատ եւ
Աշխէն, Աբգար եւ Հեղինէ (ձախից)



Սբ. Գրիգոր Լուսաւորիչ
եկեղեցւոյ պատը՝ խաչերով



Սբ. Սահակ Կաթողիկոս եւ թոռը՝
Սբ. Վարդան Մամիկոնեան



Սբ. Վարդան եկեղեցի



**Գրիգոր Շղթայակիր**
**Պապրիարքի Խաչերը**



**Թափոր Աւագ Հինգշաբթի**








**ԼՈՅՍ 2011 թ.**










**Սուրբ Հրեշտակապետաց
Վանք**





**Զատկական Պատարագ Տիրոջ Գերեզմանին, Ապրիլ 24**



**Վանեցի, Սեբաստացի, Մարաշցի, Ուրֆացի, Մալաթիացի,**
**Ադանացի, Կեսարացի, Պոլսեցի, Խարբերդցի, Զեյթունցի, Կարսեցի,**
**Էրզրումցի, Տիգրանակերտցի, Երուսաղէմցի…**

